ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՄԱՅԻՍ 2019

Լիահոնա

Գերագույն Համաժողովի Ելույթները

Նախագահ Նելսոնը խրախուսում է ընտանիքներին **ձգտել վեհացման:**

Կանչվել են նոր Յոթանասունականներ և Կիրակնօրյա Դպրոցի նոր Գերագույն Նախագահություն:

Հայտարարվել է ութ նոր տաճարների կառուցման և ռահվիրաների ժամանակաշրջանի տաճարների վերակառուցման մասին:

«Ավելի քան 2000 տարի առաջ մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, ծառայություն մատուցեց աշխարհին՝ հիմնելով Իր Եկեղեցին և Իր ավետարանը։ Նա կանչեց Առաքյալներ և տվեց նրանց պատգամ. «Որեմն գնացեք՝ բոլոր ազգերը աշակերտեցեք» [Մատթեոս 28.19]։ Մեր օրերում Տիրոջ Եկեղեցին վերականգնվեց։ Փրկիչը կանգնած է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու գլխավերևում։ Որպես Հիսուս Քրիստոսի ժամանակակից Առաքյալներ՝ մենք այսօր հղում ենք նույն ուղերձը, որը շատ տարիներ առաջ հղել են Առաքյալները, այն է՝ որ Աստված ապրում է և որ Հիսուսը Քրիստոսն է»։

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն, մարտ ամսին Հռոմ Իտալիա տաճարի նվիրագործման արարողության ժամանակ

ՄՈՒՏՔԻ ԿԵՏՐՈՆԻ ԱՌԵԼՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԻ ԴԻՄՈՒՄԸ ՀԵՎ ՏԱՃԱՐԻ ՆՎԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄՈՒՏՔԻ ՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն, մայիս 2019

Հատոր 20 • Համար 2

Շաբաթ առավոտյան նիստ

6 **Ինչպե՞ս կարող եմ հասկանալ**
Երեց Ուլիսես Սոարես

9 **Զգոնությունն ի հակադրություն անլուրջ վերաբերմունքի**
Բեքի Քրեյվեն

11 **Աղոթքների պատասխանը**
Երեց Բրուք Պ. Հեյլս

15 **Միսիոներական աշխատանք. կիսելով այն, ինչ կա Ձեր սրտում**
Երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆ

19 **Ինչպես Նա ծառայեց**
Եպիսկոպոս Վ. Քրիստոֆեր Վադել

22 **Տուն, որտեղ Տիրոջ Հոգին է բնակվում**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

Շաբաթ ցերեկային նիստ

26 **Եկեղեցու պաշտոնյաների հաստատում**
Նախագահ Դալլին Հ. Օուքս

27 **Եկեղեցու աուդիտի բաժնի հաշվետվություն, 2018**
Քեվին Ռ. Յերգենսեն

28 **Հիսուս Քրիստոսի ճշմարիտ, մաքուր և պարզ ավետարանը**
Նախագահ Մ. Ռասսել Բալլարդ

31 **Գիտելիք փնտրել Հոգով**
Երեց Մաթիաս Հելդ

34 **Հավատքի աչքը**
Երեց Նիլ Լ. Անդերսեն

38 **Սնվեք Քրիստոսի խոսքերով**
Երեց Տակաշի Վադա

41 **Լսել Նրա ձայնը**
Երեց Դեյվիդ Փ. Հոմեր

44 **Ահա՛ Աստծո Գառը**
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Քահանայության գերագույն նիստ

47 **Քահանայության ձեր աշխատանքային գծատետրը**
Երեց Գարի Ի. Սթիվենսոն

51 **Քվորում. պատկանելության խումբ**
Երեց Քարլ Բ. Քուք

54 **Նայեք առ Հիսուս Քրիստոս**
Երեց Քիմ Բ. Քլարկ

58 **Աջակցող հավատքի զորությունը**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

60 **Ինչի՞ կհանգեցնեն մեր ընտրությունները**
Նախագահ Դալլին Հ. Օուքս

67 **Մենք կարող ենք ավելի լավ գործել և ավելի լավը լինել**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Կիրակի առավոտյան նիստ

70 **Օրհնությունները շատ են**
Երեց Դեյլ Գ. Ռենլանդ

73 **Քրիստոս. Լույսը, որ շողում է խավարում**
Շերոն Յուբենկ

76 **Մեծ սեր մեր Հոր զավակների հանդեպ**
Երեց Քվենթին Լ. Քուք

81 **Պատրաստվել Տիրոջ վերադարձին**
Երեց Թոդ Դ. Քրիստոֆերսոն

85 **Հիսուս Քրիստոսի Քավությունը**
Թեդ Ռ. Քալիսթեր

88 **«Ինձ հետևիր»**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Կիրակի ցերեկային նիստ

91 **Մաքրված ապաշխարությամբ**
Նախագահ Դալլին Հ. Օուքս

95 **Վարժեցնելով մեր հոգևոր մկանները**
Երեց Խուան Պաբլո Վիլար

97 **Բարի Հովիվ, Աստծո Գառ**
Երեց Ջերիթ Վ. Գոնգ

101 **Պատրաստվել ստանալու ամեն անհրաժեշտ բան**
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

105 **Աստծո անմիջական բարությունը**
Երեց Քայլ Ս. Մակքեյ

107 **Հոգևորության և պաշտպանության ամրոց կառուցեք**
Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ

111 **Ամփոփիչ ելույթ**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

64 **Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորները և Բարձրագույն Պաշտոնյաները**

112 **Վիճակագրական հաշվետվություն, 2018**

113 **Համաժողովի պատմությունների ցուցիչ**

114 **Եկեղեցու նորությունները**

127 **Եկ, հետևիր ինձ. սովորել գերագույն համաժողովի ելույթներից**

189-րդ ամենամյա գերագույն համաժողով

Շաբաթ առավոտ, 6 ապրիլի, 2019թ., Ընդհանուր նիստ
Վարող՝ Նախագահ Դալլին Հ. Օուքս
Բացման աղոթք՝ Երեց Սթիվեն Ե. Սնոու
Փակման աղոթք՝ Երեց Վիլֆորդ Վ. Անդերսեն:
Երաժշտությունը՝ Տաճարային Հրապարակի Թաբերնաքլի Երգչախումբը, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մյորֆի, երգեհոնահարներ՝ Ռիչարդ Էլիոթ և Էնդրյու Անսվոր. «Եկեք Ուրախանանք», *Օրհներգ* հմր. 32, “Press Forward, Saints,” *Hymns,* no. 81, arr. Wilberg; “There Is Sunshine in My Soul Today,” *Hymns,* no. 227, arr. Wilberg; «Փրկիչն իսրայելի», *Օրհներգ,* հմր. 5, “Dearest Children, God Is Near You,” *Hymns,* no. 96, arr. Wilberg; «Աստծո զավակն եմ», *Օրհներգ* հմր. 58, arr. Murphy; “Rejoice, the Lord Is King!” *Hymns*, no. 66, arr. Murphy.

Շաբաթ ցերեկ, 6 ապրիլի, 2019թ., Ընդհանուր նիստ
Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք՝ Երեց Բրենթ Հ. Նիլսոն
Փակման աղոթք՝ Լիզա Լ. Հարկնես
Երաժշտությունը՝Բրիգամ Յանգ Համալսարանի ուսանողների միացյալ երգչախումբը, խմբավարներ՝ Ռոզալինդ Հալի և Էնդրյու Քրեյնի, երգեհոնահարներ՝ Լինդա Մարգետս ու Բոնի Գուդլիֆ. “Come, O Thou King of Kings,” *Hymns,* no. 59, arr. Kasen; «Ես մնում եմ զարմացած», *Օրհներգ* հմր. 22, arr. Jessop; “Praise to the Lord, the Almighty,” *Hymns,* no. 72; “Jesus, Once of Humble Birth,” *Hymns,* no. 196, arr. Kasen; “Jesus, Lover of My Soul,” *Hymns,* no. 102, arr. Staheli.

Շաբաթ երեկո, 6 ապրիլի, 2019թ., Քահանայության գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Դալլին Հ. Օուքս
Բացման աղոթք՝ Երեց Զոն Ք. Փինգրի Կրտսեր
Փակման աղոթք՝ Երեց Բրայըն Ք. Թեյլոր
Երաժշտությունը՝ Յուտա տարածքի, Լեյթոն ցցերի երիտասարդ տղաների Ահարոնյան քահանայության երգչախումբը, խմբավար՝ Ստեֆան Շանկ, երգեհոնահար՝ Բրայան Մաթիաս. “Guide Us, O Thou Great Jehovah,” *Hymns,* no. 83, arr. Wilberg; «Օրհնություններդ հաշվիր», *Օրհներգ* հմր. 8, arr. Kasen; “Hope of Israel,” *Hymns,* no. 259; “Beautiful Savior,” *Children’s Songbook,* 62, arr. Schank.

Կիրակի առավոտ, 7 ապրիլի, 2019թ., Ընդհանուր նիստ
Վարող՝ Նախագահ Դալլին Հ. Օուքս
Բացման աղոթք՝ Երեց Բրեդլի Դ. Ֆոսթեր
Փակման աղոթք՝ Ջին Բ. Բինգհեմ
Երաժշտությունը՝ Տաճարային Հրապարակի Թաբերնաքլի Երգչախումբը, խմբավար՝ Մաք Վիլբերգ, երգեհոնահարներ՝ Էնդրյու Անսվորթ և Բրայան Մաթիաս. “Sing Praise to Him,” *Hymns,* no. 70; «Աստծո Սրբեր», *Օրհներգ* հմր. 6, arr. Wilberg; “I Feel My Savior’s Love,” *Children’s Songbook,* 74, arr. Cardon; “Come, Ye Children of the Lord,” *Hymns,* no. 58; “O Thou Rock of Our Salvation,” *Hymns,* no. 258, arr. Wilberg; “Come, Follow Me,” *Hymns,* no. 116, arr. Wilberg.

Կիրակի ցերեկ, 7 ապրիլի, 2019թ., Ընդհանուր նիստ
Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք՝ Երեց Թանիելա Բ. Վակոլո
Փակման աղոթք՝ Երեց Կլաուդիո Ռ. Մ. Կոստա
Երաժշտությունը՝ Տաճարային Հրապարակի Թաբերնաքլի Երգչախումբը, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մյորֆի, երգեհոնահարներ՝ Բոնի Գուդլիֆ և Լինդա Մարգեթս. «Հաճելի է», *Օրհներգ* հմր. 13, arr. Murphy; “Come unto Jesus,” *Hymns,* no. 117, arr. Murphy; “Hark, All Ye Nations!” *Hymns,* no. 264; “I Know That My Savior Loves Me,” Creamer and Bell, arr. Murphy; «Ինձ հետ եղիր Դու միշտ» *Օրհներգ* հմր. 12, arr. Wilberg.

Համաժողովի ելույթները մատչելի են
Գերագույն համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են համացանցում՝ conference.Church ofJesusChrist.org կայքում, որտեղ կարող եք ընտրել լեզուն: Ելույթները մատչելի են նաև Gospel Library բջջային հավելվածում: Սովորաբար համաժողովից հետո վեց շաբաթվա ընթացքում անգլերեն լեզվով տեսագրությունները նույնպես մատչելի են բաշխման կենտրոններում: Գերագույն համաժողովի մասին նյութերը սահմանափակ կարողություններ ունեցող անդամների համար հասանելի ձևաչափերով առկա են disability.ChurchofJesusChrist.org կայքում:

Կազմի վրա
Առջևի կազմ. լուսանկարը՝ Լեսլի Նիլսոնի
Դարձերեսի կազմ. լուսանկարը՝ Մեթյու Ռեյերի

Համաժողովի լուսանկարները
Լուսանկարները Սոլթ Լեյք Սիթիում՝ Քոդի Բել, Ջանե Բինգհեմ, Մասոն Քոբերլի, Ռենդի Քոլիեր, Վեսթոն Քոլթոն, Էշլի Լարսեն, Լեսլի Նիլսոն, Մեթյու Ռեյեր և Քրիստինա Սմիթ:

ՄԱՅԻՍ 2019 ՀԱՏՈՐ 20 ՀԱՄԱՐ 2
ԱՊՐԻԼ 18605 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Հենրի Բ. Այրինգ

Տասներկու Առաքյալների Քվորում. Մ. Ռասսել Բալլարդ, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն, Ռոնալդ Ա. Ռասբանդ, Գարի Է. Սթիվենսոն, Դեյլ Գ. Ռենլանդ, Գերիթ Վ. Գոնգ, Ուլիսես Սոարես

Խմբագիր. Ռենդի Դ. Ֆանկ

Խորհրդատուներ. Բրայան Ք. Էշթոն, Ռանդալ Ք. Բաններթ, Բեքի Քրեյվեն, Շերոն Յուբենկ, Քրիստինա Բ. Ֆրանկո, Լարի Ս. Քաչեր, Երիք Վ. Կոպիչկե, Լին Գ. Որբինս

Գլխավոր տնօրեն. Ռիչարդ Ի. Հիթն
Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալան Ռ. Լոյբորգ
Գործարար ղեկավար. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Ադամ Ս. Օլսոն
Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար
Հրապարակման օգնական. Կամիլա Կասրիյոն
Գրողներ և խմբագրողներ. Մարիսա Դենինգ, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Գարեթ Հ. Գարֆ, Ջոն Ռայան Ջենսեն, Շառլոտ Լարկաբալ, Մայքլ Ռ. Մորիս, Էրիկ Բ. Մըրդոք, Սալի Ջոնսոն Օդեքիկ, Ջոշուա Ջ. Փերկի, Յան Փիսբորո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Մինդի Սելու, Լորի Ֆուլեր Սոսա, Չեյքել Ուորդլեյ, Մարիսա Վիդիսոն

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն
Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն
Ձևավորում. Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Պ. Անդրուս, Մենդի Բենթլի, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Դեյվիդ Գրին, Քոլլին Հինքլի, Էրից Պ. Ջոնսեն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մույ, Էմիլի Չիկո Ռեմինգտոն, Մարք Վ. Որբիսոն, Բրեդ Թիըր, Կ. Նիկոլ Վոլկենհորստ

Մտավոր սեփականության համակարգող. Քոլեթ Նեբեքեր Օն
Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Հրատարակում. Իռա Գլեն Անդեր, Ջուլի Բըրդեթ, Թոմաս Գ. Քրոնին, Բրայըն Վ. Գիջի, Գինսի Ջ. Նիլսոն, Մարիսա Մ. Սմիթ
Նախատպագրություն. Ջոշուա Դեննիս, Ամմոն Հարիս

Տպագրության տնօրեն. Ստիվեն Տ. Լյուիս
Բաշխման տնօրեն. Թրոյ Ռ. Բարքեր

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար այցելեք store.lds.org կամ դիմեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխի/ճյուղի ղեկավարին:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona,* Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլգարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորերեն, հաիթերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոերեն, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիներեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբերվում է ըստ լեզուների:)

© 2019 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Հեղինակային իրավունք. Եթե հատուկ նշված չէ, Լիահոնայի նյութերը կարելի է բազմացնել անձնական ոչ կոմերցիոն նպատակով օգտագործելու համար (այդ թվում Եկեղեցու կոչումների համար): Այդ իրավունքը կարող է ցանկացած ժամանակ սահմանափակվել: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սահմանափակումներ են նշված տվյալ աշխատանքի նկարագրական տողում: Հեղինակային իրավունքի հետ կապված հարցերը պետք է ուղղել. Intellectual Property Office, 50 E. North Temple St., L13, Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: May 2019 Vol. 20 No. 2. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 507.1.5.2). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

Խոսնակների ցուցիչ

Անդերսեն, Նիլ Լ., 34
Բալլարդ, Մ. Ռասսել, 28
Բեդնար, Դեյվիդ Ա., 101
Քալիսթեր, Թեդ Ռ., 85
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 81
Քլարկ, Քիմ Բ., 54
Քուք, Քարլ Բ., 51
Քուք, Քվենթին Լ., 76
Քրեյվեն, Բեքի, 9
Յուբենկ, Շերոն, 73
Այրինգ, Հենրի Բ., 22, 58
Գոնգ, Ջերիթ Վ., 97
Հեյլս, Բրուք Պ., 11
Հելդ, Մաթիաս, 31
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 44
Հոմեր, Դեյվիդ Պ., 41
Յերգենսեն, Քեվին Ռ., 27
Մակքեյ, Քայլ Ս., 105
Նելսոն, Ռասսել Մ., 67, 88, 111
Օուքս, Դալլին Հ., 26, 60, 91
Ռասբենդ, Ռոնալդ Ա., 107
Ռենլանդ, Դեյլ Գ., 70
Սոարես, Ուլիսես, 6
Սթիվենսոն, Գարի Ի., 47
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 15
Վիլար, Խուան Պաբլո, 95
Վադա, Տակաշի, 38
Վադել, Վ. Քրիստոֆեր, 19

Թեմաների ցուցիչ

Ահարոնյան Քահանայություն, 19, 47, 51
Ընդունում, 73
Ակտիվացում, 19
Ձախորդություն, 34, 73, 85
Քավություն, 44, 85, 91, 97
Օրինություններ, 70, 105
Մորմոնի Գիրք, 51, 81
Եղբայրություն, 51
Փոփոխություն, 67
Ընտրություններ, 60
Եկեղեցու ղեկավարներ, 58
Մխիթարություն, 105, Դարձ, 19, 31, 38
Քաջություն, 15
Ուխտեր, 9, 54, 73, 88, 101
Ազատում, 105
Աշակերտություն, 6, 9, 15, 28, 47, 54, 67, 107, 111
Աստվածային էություն, 60
Վեհացում, 88
Օրինակ, 6
Հավատք, 6, 22, 34, 58, 70, 95, 107
Ընտանիք, 34, 58, 76, 88
Ընտանեկան պատմություն, 76, 81
Հայրություն, 22, 58
Ընկերակցություն, 51
Ներում, 22
Հավաքում, 81, 97
Հայր Աստված, 11
Երջանկությունը, 9, 22
Սուրբ Հոգի, 22, 31, 38, 41
Տուն, 22, 101, 107
Հույս, 6, 91, 105
Անհատական արժանավորություն, 38
Ոգեշնչում, 31, 41
Հիսուս Քրիստոս, 6, 19, 22, 28, 34, 38, 44, 54, 67, 73, 81, 85, 88, 91, 95, 97, 101, 105, 107
Ջոզեֆ Սմիթ, 22, 85, 101
Ուրախություն, 28, 60, 88
Դատաստան, 91, 111
Բարություն, 105
Գիտելիք, 31, 41
Ուսուցում, 6, 28, 101
Քրիստոսի Լույսը, 73
Սեր, 11, 15, 22, 28, 58, 73, 76
Լրատվամիջոցներ, 76
Ողորմածություն, 91
Սպասավորություն, 19, 28, 54, 97
Հրաշքներ, 15
Միսիոներական աշխատանք, 15, 22, 51, 76, 95
Ինազանդություն, 70
Արարողություններ, 85, 88
Համբերություն, 70, 105
Խաղաղություն, 28
Ֆիզիկական մահ, 85
Փրկության ծրագիր, 60
Աղոթք, 11, 22, 58, 70
Նախապատրաստություն, 101, 107
Քահանայություն, 54, 58, 67
Քահանայության քվորումներ, 47, 51
Մարգարեներ, 34
Ապաշխարություն, 22, 67, 73, 85, 91
Հարություն, 81, 91
Հայտնություն, 31, 38, 41
Ակնածանք, 44
Հանգստության օր, 28
Հաղորդություն, 44
Զոհաբերություն, 60
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, 38
Երկրորդ Գալուստ, 81
Ծառայություն, 19
Հոգևոր մահ, 85
Հոգևորություն, 70, 47, 95, 107
Կիրակնօրյա Դպրոց, 101
Հաստատում, 58
Ուսուցում, 6, 28, 76
Տաճարներ, 22, 111
Տաճարային աշխատանք, 76, 81, 101
Գայթակղություն, 47
Վկայություն, 107
Ճշմարտություն, 34, 107

189-րդ ամենամյա գերագույն համաժողովի ամփոփում

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի՝ Եկեղեցու նախագահ հաստատվելուց հետո, մի քանի կարևոր փոփոխություններ են հայտարարվել գերագույն համաժողովի ժամանակ:

Այսպիսով, բնական էր, որ անդամները կարող էին ավելի շատ փոփոխություններ ակնկալել այս համաժողովի ընթացքում: Սակայն Եկեղեցու ղեկավարները կենտրոնացած էին մեկ ուրիշ փոփոխության վրա. փոփոխությունը, որ Փրկիչը կարող է առաջացնել յուրաքանչյուրիս ներսում:

Մարգարեի խնդրանքը

«Երբ Հիսուսն ինձ ու ձեզ խնդրում է «ապաշխարել» Նա հրավիրում է մեզ փոխվել»,- ասել է Նախագահ Նելսոնը:

«. . . Բացահայտեք, թե ինչն է *կանգնեցնում* ձեզ ապաշխարել: Իսկ հետո՝ փոխվե՛ք: Ապաշխարե՛ք: Մենք բոլորս կարող ենք ավելի լավ գործել և լինել ավելի լավը, քան՝ երբևէ»:

- Կարդացեք ապաշխարելու Նախագահ Նելսոնի չորս հրավերները (էջ 67):
- Որպեսզի ավելին իմանանք, թե ինչպես կարող ենք վայելել ապաշխարության օրհնությունները, կարդացեք հետևյալ ելույթները.
  – Նախագահ Դալլին Հ. Օուքս (էջ 91)
  – Նախագահ Հենրի Բ. Այրինգ (էջ 22)
  – Թադ Ռ. Քալիսթեր (էջ 85)

Փոփոխություններ Եկեղեցում

Ելույթ ունեցողներից շատերը խոսել են նախկինում հայտարարված փոփոխությունների մասին: Նախագահ Մ. Ռասսել Բալլարդը խրախուսել է մեզ չկորցնել «այդ փոփոխությունների հոգևոր նպատակները . . . ոգևորության մեջ, որն առաջացել է դրանց արդյունքում»:

- Կարդացեք Նախագահ Բալլարդի ավետարանի պարզ ճշմարտությունների վրա կենտրոնանալու հրավերը (էջ 28):
- Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդից սովորեք, թե ժողովի ժամանակացույցի փոփոխությունն ինչպես պետք է բարելավվի մեր ուշադրությունը հաղորդության վրա (էջ 44):
- Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի ելույթից կարող եք հասկանալ տնակենտրոն ուսուցման ցանկալի արդյունքը (էջ 101):
- Տես Նախագահ Նելսոնի կողմից Նախագահ հաստատվելուց հետո հայտարարված փոփոխությունների կրճատված ցանկը և մտածեք դրանց հոգևոր նպատակների մասին (էջ 121):

Նոր և վերանորոգված տաճարներ

Նախագահ Նելսոնը փակեց համաժողովը՝ հայտարարելով ութ նոր տաճարների և ռահվիրաների ժամանակաշրջանի տաճարների պլանավորված փոփոխությունների մասին Սակայն նա կարևորեց անձնական նորոգման անհրաժեշտությունը: «Թող որ մեր կյանքը նորոգենք Նրա հանդեպ մեր հավատքի և վստահության միջոցով»,- ասել է նա:

- Կարդացեք Նախագահ Նելսոնի ամփոփիչ ելույթը (էջ 111):
- Գտեք նոր տաճարների ցանկը (էջ 124):
- Իմացեք ավելին Սոլթ Լեյք Տաճարի ծրագրերի մասին՝ ChurchofJesusChrist.org/go/05194 կայքում: [Լեզուների ընտրության համար օգտագործեք՝ news.ChurchofJesusChrist.org կայքը:] ■



Շաբաթ առավոտյան նիստ

ԵՐԵՑ ՈՒԼԻՍԵՍ ՍՈԱՐԵՍ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ինչպե՞ս կարող եմ հասկանալ

Երբ մենք ջերմեռանդորեն, ի սրտե, հաստատապես և անկեղծորեն ձգտենք սովորել Հիսուս Քրիստոսի ավետարանը և ուսուցանել այն միմյանց, այդ ուսմունքները կարող են վերափոխել սրտերը:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ինչպիսի՜ մեծ ուրախություն է, որ կրկին կարող ենք միասին հավաքվել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու այս գերագույն համաժողովին՝ մեր սիրելի մարգարե Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի ղեկավարության ներքո: Ես վկայում եմ ձեզ, որ մենք արտոնություն կունենանք լսելու մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի ձայնը՝ այս համաժողովի ժամանակ մեր օրերի կարիքների մասին աղոթողների, երգողների և ելույթ ունեցողների միջոցով:

Ինչպես գրված է Գործք Առաքելոց գրքում, Փիլիպպոս ավետարանիչն ուսուցանեց ավետարանը մի եթովպացի նեքինիի, որը պատասխանատու էր Եթովպիայի թագուհու բոլոր գանձերի համար:[1] Երուսաղեմի երկրպագությունից վերադառնալիս նա կարդաց Եսայիայի գիրքը: Ենթարկվելով Հոգուն, Փիլիպպոսը մոտեցավ նրան և ասաց. «Հասկանո՞ւմ ես արդեօք կարդացածդ:

«Եվ [ներքինին] հարցրեց Ի՞նչպէս կ՚կարողանամ, եթէ մէկը չ՚առաջնորդէ ինձ. . . .

«Փիլիպպոսն էլ իր բերանը բացաւ, եւ այս գրքիցը սկսած՝ Յիսուսն աւետարանեց նորան»:[2]

Այս եթովպացի մարդու կողմից տրված հարցը հիշեցնում է, որ մենք բոլորս ունենք աստվածային պարտականություն՝ ուսում փնտրել և միմյանց ուսուցանել Հիսուս Քրիստոսի ավետարանը:[3] Իրականում, ավետարանն ուսուցանելու և սովորելու համատեքստում, երբեմն բոլորս նման ենք եթովպացի մարդուն. մենք հավատարիմ և ոգեշնչված ուսուցչի օգնության կարիքն ունենք, իսկ երբեմն մենք նման ենք Փիլիպպոսին. մենք կարիք ունենք ուսուցանելու և ամրապնդելու ուրիշներին իրենց դարձի մեջ:

Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանելու և սովորելու մեր նպատակը պետք է լինի՝ մեծացնել Աստծո, երջանկության Նրա աստվածային ծրագրի, Հիսուս Քրիստոսի և Նրա քավիչ զոհաբերության հանդեպ հավատքը և հասնել տևական դարձի: Նման մեծ հավատքը և դարձը կօգնեն մեզ կապել և պահել ուխտերն Աստծո հետ, դրանով իսկ ամրացնելով Հիսուսին հետևելու մեր ցանկությունը և առաջացնելով հոգևոր իրական վերափոխում մեր մեջ, այսինքն՝ վերափոխելով մեզ նոր ստեղծածի, ինչպես Պողոս Առաքյալն է ուսուցանել Կորնթացիներին ուղղված իր նամակում:[4] Այդ վերափոխման արդյունքում մենք կլինենք ավելի երջանիկ, ավելի արդյունավետ, կունենանք առողջ կյանք, և այն կօգնի մեզ պահպանել հավերժական հեռանկար: Արդյո՞ք դա հենց այն չէ, ինչ տեղի ունեցավ եթովպացի ներքինիի հետ, երբ նա սովորեց Փրկիչի մասին և դարձի եկավ դեպի Նրա ավետարանը: Սուրբ գրություններում ասվում է, որ նա «ուրախությամբ գնում էր իր ճանապարհը»:[5]

Ավետարանը սովորելու և այն ուրիշներին ուսուցանելու պատվիրանը նոր չէ. այն անընդհատ կրկնվել է մարդկության պատմության սկզբից

ի վեր:[6] Մի առանձին առիթով, երբ խոստումի երկիր մտնելուց առաջ Մովսեսն ու նրա ժողովուրդը Մովաբի դաշտերում էին, Տերը ներշնչեց նրան, որ իր ժողովրդին խրատի Տիրոջ կողմից ստացված կանոնները և ուխտերը սովորելու իրենց պատասխանատվության մասին և ուսուցանի դրանք իրենց սերունդներին,[7] որոնցից շատերն անձամբ չէին տեսել Կարմիր ծովի անցումը կամ Սինայ Սարի վրա տրված հայտնությունը:

Մովսեսը խրատեց իր ժողովրդին.

«Ով Իսրայէլ, լսիր այն կանոնները եւ դատաստանները որ ես ձեզ սովորեցնում եմ որ անէք, որպէս զի ողջ մնաք, եւ մտնէք ժառանգէք այն երկիրը որ ձեր հայրերի Եհովայ Աստուածը տալիս է ձեզ: . . .

. . . Քո որդիներին եւ որդկանցդ որդիներին սովորեցնես»:[8]

Ապա Մովսեսն ավարտեց՝ ասելով. «Եւ պահես նորա կանոններն ու պատուիրանքները, որոնք ես այսօր քեզ պատուիրում եմ, որ քեզ համար եւ քեզանից յետոյ քո որդկանց համար բարի լինի, եւ քո օրերը երկար լինեն այն երկրի վերայ՝ որ քո Եհովայ Աստուածը տալիս է քեզ ամեն ժամանակի համար»:[9]

Աստծո մարգարեներն անընդհատ ուսուցանել են, որ մենք պետք է մեր ընտանիքներին «դաստիարակենք Տիրոջ ուսմունքով և խրատով»[10] և «լույսի ու ճշմարտության մեջ»:[11] Նախագահ Նելսոնը վերջերս ասել է. «Մեր օրերի տարածված անբարոյականության և կախվածություն առաջացնող պոռնոգրաֆիայի պայմաններում ծնողներն ունեն սրբազան պատասխանատվություն, որպեսզի իրենց զավակներին ուսուցանեն իրենց կյանքում Աստծո [և Հիսուս Քրիստոսի] կարևորությունը»:[12]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մեր սիրելի մարգարեի նախազգուշացումը լրացուցիչ հիշեցում է մեր անհատական պատասխանատվության մասին՝ ձգտել սովորել և սովորեցնել մեր ընտանիքներին, որ կա Երկնային Հայր, ով սիրում է մեզ, և ով ստեղծել է երջանկության աստվածային ծրագիր Իր զավակների համար, որ Նրա Որդի Հիսուս Քրիստոսն աշխարհի Քավիչն է, և որ փրկությունը գալիս է Նրա անվան հանդեպ հավատից:[13] Մեր կյանքը պետք է հաստատված լինի մեր Քավիչի՝ Հիսուս Քրիստոսի վեմի վրա, որը կարող է մեզ օգնել, որպեսզի անհատապես և ընտանիքներով մեր սրտերում փորագրված ունենանք մեր հոգևոր տպավորությունները, որոնք կօգնեն մեզ համբերել հավատքով:[14]

Հնարավոր է, դուք հիշում եք, որ Հովհաննես Մկրտիչի երկու առաքյալները հետևեցին Հիսուս Քրիստոսին, երբ լսեցին Հովհաննեսին վկայություն բերելիս, որ Հիսուսն Աստծո Գառն է՝ Մեսսիան: Այդ բարի մարդիկ ընդունեցին «եկեք և տեսեք» Հիսուսի հրավերը[15] և մնացին նրա հետ այդ օրը: Նրանք եկան, որ իմանան, որ Հիսուսը Մեսիան է՝ Աստծո Որդին, և հետևեցին Նրան իրենց ողջ կյանքի ընթացքում:

Նմանապես, երբ մենք ընդունում ենք Փրկիչի հրավերը՝ «գալ և տեսնել», մենք պետք է ապրենք Նրանով, խորանանք սուրբ գրությունների մեջ, ուրախանանք Նրանով, սովորենք Նրա վարդապետությունը և ձգտենք ապրել այն ձևով, որով Նա է ապրել: Միայն այդ ժամանակ մենք կճանաչենք Նրան՝ Հիսուս Քրիստոսին, ու կճանաչենք Նրա ձայնը, իմանալով, որ երբ գանք դեպի Նա և հավատանք Նրան, մենք երբեք չենք սովի կամ ծարավի:[16] Մենք կկարողանանք ճշմարտությունը տարբերակել բոլոր ժամանակներում, ինչպես տեղի ունեցավ այն երկու աշակերտների հետ, ովքեր մնացին Հիսուսի հետ այդ օրը:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, դա պատահականորեն տեղի չի ունենում: Աստվածային ամենավեհ ազդեցություններին ենթարկվելը հեշտ բան չէ: Դա պահանջում է օգնություն խնդրել Աստծուց և սովորել, թե Հիսուս Քրիստոսի ավետարանն ինչպես դարձնել մեր կյանքի հիմնական մասը: Եթե մենք այդպես վարվենք, ես խոստանում եմ, որ Սուրբ Հոգու ազդեցությունը կհաստատի ճշմարտությունը մեր սրտերին և մտքերին և կվկայի դրա մասին,[17] ուսուցանելով բոլոր բաները:[18]

Եթովպացու հարցը, թե «ինչպե՞ս կարող եմ [հասկանալ], եթե մեկը չառաջնորդի ինձ», հատուկ նշանակություն ունի մեր անհատական պատասխանատվության համատեքստում՝ կիրառության մեջ դնելավետարանի սկզբունքները, որոնք սովորել ենք մեր կյանքում: Օրինակ, այդ եթովպացու դեպքում, նա գործեց ըստ այն ճշմարտության, որը սովորեց Փիլիպպոսից: Նա խնդրեց, որ մկրտվի: Նա իմացավ, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին էր:[19]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մեր գործերը պետք է արտացոլեն այն, ինչ մենք սովորում և ուսուցանում ենք: Մենք պետք է մեր հավատքը ցույց տանք մեր ապրելակերպի միջոցով: Լավագույն ուսուցիչը պետք է լավ օրինակ ծառայի: Ուսուցանելով ինչորբան, որը մենք իսկապես կիրառում ենք, կփոխի այն մարդկանց սրտերը, որոնց մենք ուսուցանում ենք: Եթե մենք ցանկանում ենք, որ մարդիկ՝ ընտանիքի անդամներ կամ ուրիշներ, ուրախությամբ գնահատեն սուրբ գրությունները և մեր օրերի ապրող մարգարեների ու առաքյալների ուսմունքները, նրանք պետք է տեսնեն, որ մեր հոգիները բերկրում են դրանցով: Նմանապես, եթե մենք ցանկանում ենք, որ նրանք իմանան, որ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը մարգարեն, տեսանողն ու հայտնողն է մեր օրերում, նրանք պետք է տեսնեն, որ մենք բարձրացնում ենք մեր ձեռքերը և հաստատում նրան, և հասկանան, որ մենք հետևում ենք նրա ոգեշնչված ուսմունքներին: Ինչպես ասվում է հայտնի ամերիկյան ասացվածքում. «Գործերը խոսքերից բարձր են խոսում»:

Միգուցե ձեզանից ոմանք այս պահին հարց են տալիս. «Երեց Սոարես, ես անհատապես և ընտանիքով այդ ամենն անում և հետևում եմ այդ օրինակին, բայց ցավոք, իմ ընկերներից կամ սիրելիներից ոմանք հեռացել են Տիրոջից: Ես ի՞նչ պիտի անեմ»: Նրանց համար, ովքեր այժմ տխրության, տառապանքի և, նույնիսկ, գուցե ափսոսանքի զգացողություններ ունեն, խնդրում եմ հիշեք, որ նրանք լիովին կորսված չեն, քանի որ Տերը գիտե նրանց տեղը և հետևում է նրանց: Հիշեք, որ նրանք նույնպես Նրա զավակներն են:

Դժվար է հասկանալ այն բոլոր պատճառները, թե ինչու են ոմանք ընտրել ուրիշ ճանապարհ: Լավագույն բանը, որ այս հանգամանքներում կարող ենք անել, հետևյալն է՝ պարզապես սիրել և ընդունել նրանց, աղոթել նրանց բարօրության համար և փնտրել Տիրոջ օգնությունը՝ իմանալու համար, թե ինչ անել և ասել: Անկեղծ ուրախացեք նրանց հաջողություններով, եղեք նրանց ընկերը և լավը փնտրեք նրանց մեջ: Մենք երբեք չպետք է հրաժարվենք նրանցից, այլ պահենք մեր հարաբերությունները: Երբեք մի մերժեք կամ սխալ քննադատեք նրանց: Պարզապես սիրեք նրանց: Անառակ որդու առակն ուսուցանում է մեզ, որ երբ զավակները հասկանում են իրենց ճշմարիտ վիճակը, նրանք հաճախ ցանկանում են տուն վերադառնալ: Եթե դա տեղի ունենա ձեր սիրելիների հետ, լցրեք ձեր սիրտը գթությամբ, վազեք նրանց մոտ, վզովն ընկեք և համբուրեք նրանց, ինչպես անառակ որդու հայրը վարվեց:[20]

Ի վերջո, ապրեք արժանավայել կյանքով, լավ օրինակ ծառայեք այն ամենի, ինչին հավատում եք, և ավելի մոտեցեք մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Նա գիտե և հասկանում է մեր խոր վշտերն ու ցավերը և Նա կօրհնի ձեր ջանքերն ու նվիրումը ձեր սիրելիներին, եթե ոչ այս, ապա հաջորդ կյանքում: Եղբայրնե՛ր և քույրե՛ր, միշտ հիշեք, որ հույսը ավետարանի ծրագրի կարևոր մասն է:

Եկեղեցում ծառայության երկար տարիների ընթացքում ես տեսել եմ հավատարիմ անդամների, ովքեր հետևողականորեն կիրառել են այդ սկզբունքներն իրենց կյանքում: Դա տեսել եմ մի միայնակ մոր կյանքում, ում ես կդիմեմ «Մերի» անունով: Ցավոք, Մերին անցավ ողբերգական ամուսնալուծության բոլոր փուլերով: Կյանքի այդ փուլում Մերին հասկացավ, որ ընտանիքին առնչվող ամենակարևոր որոշումները կլինեն հոգևոր որոշումները: Արդյո՞ք աղոթքը, սուրբ գրությունների ուսումնասիրությունը, ծոմապահությունը, եկեղեցի ու տաճար հաճախելը կշարունակեն կարևոր լինել նրա համար:

Մերին միշտ հավատարիմ է եղել, և իր կյանքի այդ վճռական պահին նա որոշեց շարունակել հավատարիմ մնալ այն ամենին, ինչին նա արդեն հավատում էր, որ ճշմարիտ է: Նա ուժ գտավ «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին» հռչակագրի մեջ, որը շատ հրաշալի սկզբունքներից բացի ուսուցանում է, որ «ծնողների սուրբ պարտականությունն է՝ դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում» և սովորեցնել նրանց, որ միշտ պահեն Աստծո պատվիրանները:[21] Նա անընդհատ պատասխաններ էր փնտրում Տիրոջից և ընտանեկան տարբեր միջոցառումների ժամանակ կիսվում դրանցով իր չորս երեխաների հետ: Նրանք հաճախ քննարկում էին ավետարանը և իրենց փորձառություններով ու վկայություններով կիսվում իրար հետ:

Չնայած իրենց վշտին, նրա երեխաները զարգացրել էին սեր Քրիստոսի ավետարանի նկատմամբ և ծառայելու ու ուրիշների հետ կիսվելու ցանկություն: Նրանցից երեքը հավատարմորեն ծառայել են լիաժամկետ միսիա, իսկ ամենակրտսերն այժմ ծառայում է Հարավային Ամերիկայում: Նրա ավագ դուստրը, ում ես լավ եմ ճանաչում, ով այժմ ամուսնացած է և ամուր է իր հավատքում, կիսվել է. «Ես երբեք չեմ զգացել, որ մայրս միայնակ է մեծացրել մեզ, քանի որ Տերը միշտ մեր տանն է եղել: Երբ մայրս բերում էր Նրա մասին իր վկայությունը, մենք անհատապես դիմում էինք Նրան մեր իսկ հարցերով: Ես շատ երախտապարտ եմ, որ նա ավետարանը կիրառելի է դարձրել մեր կյանքում:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, այս լավ մայրը կարողացավ իր տունը դարձնել հոգևոր կրթության կենտրոն: Եթովպացու հարցի նման, Մերին բազմիցս հարցրել է ինքն իրեն. «Ինչպե՞ս իմ երեխաները կսովորեն, եթե մայրը չառաջնորդի նրանց»:

Ավետարանի իմ սիրելի զուգընկերներ, ես վկայում եմ, որ եթե մենք ջերմեռանդորեն, ի սրտե, հաստատապես և անկեղծորեն ձգտենք սովորել Հիսուս Քրիստոսի ավետարանը և ուսուցանենք այն միմյանց անկեղծ մտքով և Հոգու ազդեցությամբ, այդ ուսմունքները կարող են վերափոխել մեր սրտերը և ոգեշնչել մեզ ապրել Աստծո ճշմարտությունների համաձայն:

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսն աշխարհի Փրկիչն է: Նա է Քավիչը և Նա ապրում է: Ես գիտեմ, որ Նա ղեկավարում է Իր Եկեղեցին Իր մարգարեների, տեսանողների ու հայտնողների միջոցով: Ես նաև վկայում եմ ձեզ, որ Աստված ապրում է, որ Նա սիրում է մեզ: Նա կամենում է, որ մենք բոլորս վերադառնանք Նրա ներկայությունը: Նա լսում է մեր աղոթքները: Ես բերում եմ այդ ճշմարտությունների մասին իմ վկայությունը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Գործք Առաքելոց 8.27:
2. Գործք Առաքելոց 8.30–31, 35
3. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.77–78, 118, 130.18–19, 131.6:
4. Տես Բ Կորնթացիս 5.17:
5. Գործք Առաքելոց 8.39
6. Տես Մովսես 6.52, 57–58, Երկրորդ Օրինաց 4.5, 14, 5.1, Վարդապետություն և Ուխտեր 43.8–9, 130.18–19, 136.32:
7. Տես Երկրորդ Օրինաց 4.10:
8. Երկրորդ Օրինաց 4.1, 9
9. Երկրորդ Օրինաց 4.40
10. Եփեսացիս 6.4, Ենովս 1.1
11. Վարդապետություն և Ուխտեր 93.40
12. Ռասսել Մ. Նելսոն, «Փրկություն և վեհացում», *Լիահոնա,* մայիս 2008, 9
13. Տես Մոսիա 3.9:
14. Տես Հելաման 5.12:
15. Տես Հովհաննես 1.38-39:
16. Տես Հովհաննես 6.35:
17. Տես Հովհաննես 16.13:
18. Տես Հովհաննես 14.26:
19. Տես Գործք Առաքելոց 8.37-38:
20. Տես Ղուկաս 15.20:
21. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2017, 145



ԲԵՔԻ ՔՐԵՅՎԵՆ
Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության Երկրորդ Խորհրդական

Զգոնությունն ի հակադրություն անլուրջ վերաբերմունքի

Մինչ աշխարհի ազդեցությունները ավելի ու ավելի են հակվում դեպի չարը, մենք պետք է մեր ողջ ջանասիրությամբ ձգտենք անսասան մնալ այն արահետի վրա, որը մեզ ապահովությամբ առաջնորդում է Փրկիչի մոտ:

Մի անգամ խանութի ապակու վրա ես տեսա մի պաստառ, որտեղ ասվում էր. «Երջանկություն. $15.00»: Ինձ այնքան հետաքրքրեց, թե որքան երջանկություն ես կարող էի գնել $15.00-ով, որ ես ներս մտա տեսնելու: Ես այնտեղ գտա բազմաթիվ էժանագին զարդեր և հուշանվերներ. դրանցից ոչ մեկը չէր կարող պարգևել ինձ այն երջանկությունը, որը ակնկալում էի պաստառի գրությունից: Տարիներ շարունակ ես բազմիցս մտածել եմ այդ պաստառի մասին, և թե որքան հեշտ կարելի է երջանկություն փնտրել էժանագին և ժամանակավոր առարկաների մեջ: Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մենք օրհնված ենք, որ գիտենք, թե ինչպես և որտեղ գտնել իրական երջանկությունը: Այն գտնվում է զգոնությամբ ավետարանով ապրելու մեջ, որը հաստատվել է մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի կողմից, և Նրան ավելի շատ նմանվելու ջանքերում:

Մենք մի թանկագին ընկեր ունենք, ով երկաթգծի ինժեներ է: Մի օր, երբ սլանում էր իր երթուղով, նա հեռվում նկատեց մի մեքենա, որ կանգնած էր գծերի վրա: Նա արագ հասկացավ, որ մեքենան խրվել էր և չէր կարողանում հատել երթուղին: Նա անմիջապես միացրեց գնացքի վթարային համակարգը, որը գործի դրեց յուրաքանչյուր վագոնի արգելակները, որոնք երեք քառորդով դանդաղեցրին գնացքի ընթացքը (1,2 կմ), որ տանում էր 6500 տոննա բեռ: Չկար ոչ մի ֆիզիկական հնարավորություն, որ գնացքը կկարողանար կանգ առնել նախքան մեքենայի հետ բախվելը, ինչն էլ տեղի ունեցավ: Բարեբախտաբար, մեքենայում գտնվող մարդիկ լսել էին գնացքի նախազգուշացնող սուլոցը և դուրս էին եկել մեքենայից նախքան բախումը: Մինչ ինժեները խոսում էր քննիչի հետ, զայրացած մի կին մոտեցավ նրանց: Նա գոռում էր, որ տեսել էր ողջ պատահարը և վկայում, որ ինժեները նույնիսկ չէր էլ փորձել փոխել իր ճանապարհը, որպեսզի չբախվեր մեքենային:

Ակնհայտ է, որ եթե ինժեները կարողանար փոխել իր ուղղությունը և խուսափեր այդ բախումից, գնացքը դուրս կգար գծերից և առաջ ընթանալով կորստի կմատնվեր: Բարեբախտաբար, երկաթգիծը գնացքի անիվներն ապահով պահում էր դեպի իրենց նպատակակետն ընթանալու ուղու վրա՝ անկախ ճանապարհին հանդիպած խոչընդոտներից: Բարեբախտաբար, մենք ևս գտնվում ենք մի երթուղու՝ ուխտի արահետի վրա, որը պարտավորվել ենք անցնել, երբ մկրտվել ենք որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ: Թեև մենք ճանապարհին կարող ենք ժամանակ առ ժամանակ հանդիպել խոչընդոտների, այս արահետը կօգնի մեզ առաջ շարժվել դեպի մեր փառապանծ հավերժական նպատակակետը, եթե մենք հաստատուն մնանք դրա վրա:

Կենաց ծառի տեսիլքը մեզ ցույց է տալիս, թե ինչպես կարող են ժամանակավոր ազդեցությունները շեղել մեզ ուխտի արահետից: Խորհեք այն մասին, որ երկաթյա ձողը և ուղիղ ու անձուկ արահետը կամ ուխտի արահետը, տանում են ուղիղ դեպի կենաց ծառը, որտեղ մեր Փրկիչի և Նրա Քավության շնորհիվ տրված բոլոր օրհնությունները հասանելի են հավատարիմներին: Տեսիլքում կար նաև գետ, որի ջրերը ներկայացնում են ապականված աշխարհը: Սուրբ գրությունները նկարագրում են, որ այդ գետը հոսում էր արահետի կողքով, սակայն անցնում էր ընդամենը ծառի մոտով, այլ ոչ թե տանում դրա մոտ: Աշխարհը լի է ուշադրությունը շեղող հանգամանքներով, որոնք կարող են գայթակղել նույնիսկ ընտրյալներին, որոնց պատճառով նրանք անլուրջ են վերաբերում իրենց ուխտերի համաձայն ապրելուն. այդպիսով առաջնորդում են նրանց անցնել ծառի մոտով, այլ ոչ թե հասնել ծառին: Եթե մենք ուշադրություն չենք դարձնում կյանքում մեր ուխտերին ճշգրտորեն հետևելուն, մեր անլուրջ վերաբերմունքը

կարող է ի վերջո տանել մեզ դեպի արգելված արահետներ կամ միանալ նրանց, ովքեր արդեն իսկ մտել են մեծ ու ընդարձակ շենքը: Եթե զգույշ չլինենք, մենք կարող ենք նույնիսկ խեղդվել պղտոր գետում:[1]

Ամեն բան, անգամ ավետարանով ապրելը, կարելի է անել երկու եղանակով՝ զգոնությամբ կամ անլրջությամբ: Երբ մենք խորհում ենք Փրկիչի հանդեպ մեր նվիրվածության մասին, արդյո՞ք մենք զգոն ենք, թե՞ անլուրջ ենք վերաբերվում: Մեր մահկանացու էության պատճառով արդյո՞ք մենք երբեմն չենք արդարացնում մեր վարքագիծը, երբեմն անդրադառնալով մեր արարքներին որպես ոսկե միջին, կամ խառնելով լավը մի բանի հետ, որն այդքան էլ լավ չէ: Ցանկացած պահի, երբ մենք ասում ենք «սակայն», «բացի» կամ «բայց», երբ խոսքը վերաբերում է մեր մարգարե ղեկավարների խորհրդին հետևելուն կամ ավետարանով ապրելիս զգոն լինելուն, մենք իրականում ասում ենք. «Այդ խորհուրդն ինձ չի վերաբերում»: Մենք կարող ենք արդարացնել մեր բոլոր ցանկությունները, սակայն իրականությունն այն է, որ սխալ բան անելու համար չկա ճիշտ եղանակ:

Երիտասարդների 2019 թվականի թեման վերցված է Հովհաննես 14.15 հատվածից, որտեղ Տերը հրահանգում է. «Եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցէք»: Եթե մենք սիրում ենք նրան, համաձայն մեր իսկ հայտարարությունների, արդյոք չե՞նք կարող ցուցադրել այդ սերը մի փոքր ավելի զգոն լինելով Նրա պատվիրաններով ապրելիս:

Ավետարանով ապրելիս զգոն լինել չի նշանակում անել դա ձևականորեն կամ լինել բծախնդիր: Դա նշանակում է ունենալ պատշաճ մտքեր և վարքագիծ՝ որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ: Մինչ մենք կխորհենք ավետարանով ապրելիս զգոնություն կամ անլուրջ վերաբերմունք ունենալու վերաբերյալ, ահա մի քանի մտքեր, որոնց շուրջ կարելի է խորհել.

Արդյո՞ք մենք զգոնությամբ ենք վերաբերվում մեր Հանգստության օրվա երկրպագությանը և ամեն շաբաթ հաղորդությունից ճաշակելու նախապատրաստությանը:

Կարո՞ղ ենք ավելի զգոն լինել մեր աղոթքներում և սուրբ գրությունների ուսումնասիրության մեջ կամ ավելի ջերմեռանդորեն ներգրավված Եկ հետևիր ինձ. Անհատների ու ընտանիքների համար ձեռնարկում:

Արդյո՞ք մենք զգոնությամբ ենք վերաբերվում տաճարային մեր երկրպագությանը և զգոնությամբ ու գիտակցաբար ապրում ուխտերով, որոնք կապել ենք մկրտվելիս և տաճարում: Արդյո՞ք մենք զգոնություն ենք ցուցաբերում կապված մեր արտաքին տեսքի հետ և համեստ հագուստներ ենք կրում, հատկապես սուրբ վայրերում և հանգամանքներում: Արդյո՞ք մենք զգոն ենք, թե ինչպես ենք կրում տաճարային սուրբ հագուստները: Թե՞ աշխարհի նորաձևությունը թելադրում է ավելի անլուրջ վերաբերմունք:

Արդյո՞ք մենք զգոնությամբ ենք վերաբերվում ուրիշներին սպասավորելուն և Եկեղեցու մեր կոչումներին, թե՞ անտարբեր կամ անլուրջ ենք վերաբերվում ծառայելու մեր կոչին:

Արդյոք մենք զգոնությո՞ն, թե՞ անլուրջ վերաբերմունք ենք ցուցաբերում ընթերցանության նյութ, հեռուստաալիք կամ շարժական սարքերում նյութեր ընտրելիս: Արդյո՞ք մենք զգոն ենք մեր խոսքում: Թե՞ մենք անլուրջ ենք ընդունում կոպիտ ու գռեհիկ խոսքը:

Երիտասարդներին զորացնելու համար գրքույկը պարունակում է չափանիշներ, և եթե զգոնությամբ հետևենք, դրանք կբերեն մեծ օրհնություններ և կօգնեն մեզ մնալ ուխտի արահետի վրա: Չնայած այն գրված է երիտասարդների բարօրության համար, դրա չափանիշները չեն կորցնում իրենց ազդեցությունը, երբ մենք ավարտում ենք Երիտասարդ Տղաների կամ Երիտասարդ Աղջիկների ծրագրերը: Դրանք մշտապես վերաբերում են մեզանից յուրաքանչյուրին: Այդ չափանիշների վերանայումը կարող է ոգեշնչել մեզ գտնել այլ եղանակներ, թե ինչպես կարող ենք ավելի զգոն լինել ավետարանով ապրելիս:

Մենք չենք ցածրացնում մեր չափանիշները մեր կամ մեկ ուրիշի հարմարավետության համար: Մենք Հիսուս Քրիստոսի աշակերտներն ենք, և որպես այդպիսին մենք պետք է բարձրացնենք ուրիշներին, հասցնելով նրանց ավելի բարձր ու սուրբ վայր, որտեղ նրանք ևս կարող են հնձել մեծ օրհնություններ:

Ես հրավիրում եմ մեզանից յուրաքանչյուրին փնտրել Սուրբ Հոգու առաջնորդությունը, որպեսզի իմանանք, թե ինչ ճշգրտումներ պետք է կատարենք մեր կյանքում, որպեսզի ավելի զգոնությամբ պահենք մեր ուխտերը: Ես նաև աղերսում եմ ձեզ քննադատության չենթարկել ուրիշներին, ովքեր անցնում են այդ նույն ուղին: «Դատաստանն իմն է, ասում է Տերը»:[2] Մեզանից յուրաքանչյուրը գտնվում է աճի ու փոփոխության գործընթացում:

Ինձ համար հետաքրքիր է Մորմոնի Գրքի պատմությունը ուխտադրուժ ամղիկիացիների մասին: Որպեսզի ուրիշներն իմանային, որ իրենք այլևս ոչ մի կապ չունեն Հիսուս Քրիստոսի և Նրա Եկեղեցու հետ, նրանք տարբերակող կարմիր նշան դրեցին իրենց ճակատներին՝ ի ցույց բոլորի:[3] Ի հակադրություն դրա և որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ, ի՞նչ նշան ենք մենք կրում մեր վրա: Կարո՞ղ են ուրիշները հեշտությամբ տեսնել Նրա պատկերը մեր դեմքին և իմանալ, թե ում ենք մենք ներկայացնում՝ համաձայն զգոնությամբ ապրած մեր կյանքի:

Որպես ուխտի ժողովուրդ, մենք չպիտի խառնվենք աշխարհին: Մեզ կոչել են «սեպհական ժողովուրդ»[4]. ինչպիսի՜ հաճոյախոսություն: Մինչ աշխարհի ազդեցությունները ավելի ու ավելի են հակվում դեպի չարը, մենք պետք է մեր ողջ ջանասիրությամբ ձգտենք անսասան մնալ արահետում, որը մեզ ապահովությամբ առաջնորդում է Փրկիչի մոտ՝ մեծացնելով տարածությունը մեր ուխտով ապրելու և աշխարհի ազդեցությունների միջև:

Մինչ ես կենտրոնանում եմ հավիտենական երջանկություն ձեռք բերելու վրա, ես հասկանում եմ, որ երբեմն մենք մեզ գտնում ենք «ոսկե միջինը» կատարելիս: Մշուշի մեզն անխուսափելի է, մինչ մենք ճամփորդում ենք

ուխտի արահետով: Գայթակղության և անլուրջ վերաբերմունքի պատճառով մենք կարող ենք մի փոքր շեղվել դեպի աշխարհի խավարը և հեռանալ ուխտի արահետից: Այն պահերի վերաբերյալ, երբ նման բան կարող է տեղի ունենալ, մեր սիրելի մարգարեն՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը, մեզ հորդորել է վերադառնալ ուխտի արահետին և անել դա շատ արագ: Որքան երախտապարտ եմ ես ապաշխարության պարգևի և մեր Փրկիչի Քավության զորության համար:

Անհնար է կատարյալ կյանքով ապրել: Միայն մեկ մարդ կարողացավ կատարյալ լինել, մինչ ապրում էր այս թելեստիալ մոլորակում: Դա Հիսուս Քրիստոսն էր: Չնայած մենք գուցե կատարյալ չլինենք, եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք կարող ենք արժանավոր լինել. արժանի՝ ճաշակելու հաղորդությունը, արժանի՝ տաճարային օրհնություններին և արժանի՝ ստանալու անձնական հայտնություն:

Բենիամին թագավորը վկայել է օրհնությունների մասին, որոնք տրվում են նրանց, ովքեր զգոնությամբ հետևում են Փրկիչին. «Եվ բացի դրանից, ես կցանկանայի, որ դուք խորհեք օրհնված և երջանիկ վիճակի վրա նրանց, ովքեր պահում են Աստծո պատվիրանները: Քանզի, ահա, նրանք օրհնված են բոլոր բաներում՝ և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր. և եթե նրանք հավատարիմ համբերում են մինչև վերջ, նրանք ընդունվում են երկնքում, որի շնորհիվ նրանք կարողանում են բնակվել Աստծո հետ երբեք չվերջացող երջանկության վիճակում»:[5]

Կարո՞ղ ենք երջանկությունը գնել $15.00-ով: Ոչ, չենք կարող: Մեծ ու հարատև երջանկությունը տրվում է Հիսուս Քրիստոսի ավետարանի համաձայն գիտակցաբար և զգոնությամբ ապրելու արդյունքում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես 1 Նեփի 8, 15:
2. Մորմոն 8.20
3. Տես Ալմա 3.4:
4. Ա Պետրոս 2.9
5. Մոսիա 2.41

ԵՐԵՑ ԲՐՈՒՔ Պ. ՀԵՅԼՍ
Յոթանասունից

Աղոթքների պատասխանը

Հայրը տեղյակ է մեր մասին, գիտի մեր կարիքները և կատարելապես կօգնի մեզ:

Հիսուս Քրիստոսի ավետարանի կարևորագույն և մխիթարող վարդապետությունն այն է, որ Երկնային Հայրը կատարյալ սեր ունի Իր զավակների հանդեպ: Այդ կատարյալ սիրո շնորհիվ Նա օրհնում է մեզ ոչ միայն համաձայն մեր ցանկությունների և կարիքների, այլ նաև համաձայն Իր անսահման իմաստության: Ինչպես պարզորոշ նշել է Նեփի մարգարեն. «Ես գիտեմ, որ [Աստված] սիրում է իր զավակներին»:[1]

Այդ կատարյալ սիրո հատկանիշներից մեկը մեր Երկնային Հոր

ներգրավվածությունն է մեր կյանքի մանրամասներում, նույնիսկ երբ մենք գուցե տեղյակ չենք այդ մասին կամ չենք հասկանում դա: Մենք փնտրում ենք Հոր աստվածային առաջնորդությունն ու օգնությունը սրտաբուխ աղոթքի միջոցով: Երբ մենք պատվում ենք մեր ուխտերը և ձգտում ավելի նմանվել Փրկիչին, արժանանում ենք աստվածային առաջնորդության մշտական[2] աղբյուրի՝ Սուրբ Հոգու ազդեցության և ոգեշնչման միջոցով:

Սուրբ գրություններն ուսուցանում են մեզ. «Որովհետեւ ձեր Հայրը գիտէ թէ ի՞նչ բաներ պէտք են ձեզ, ձեր նորանից խնդրելուցն առաջ»,[3] և Նա «գիտի բոլոր բաները, քանզի [Նրա] աչքի առաջ բոլոր բաները ներկա են»:[4]

Մորմոն մարգարեն ասվածի մի օրինակ է հանդիսանում: Նա չապրեց այնքան, որ տեսներ իր գործերի արդյունքը: Սակայն նա հասկանում էր, որ Տերը միշտ զգոնությամբ առաջնորդում էր իրեն: Երբ նա ոգեշնչում զգաց ներառելու Նեփիի փոքր թիթեղներն իր արձանագրության մեջ, Մորմոնը գրեց. «Եվ ես անում եմ սա իմաստուն նպատակի համար. քանզի ըստ Տիրոջ Հոգու ներգործումների, որն իմ մեջ է, այսպես է

այն ՀՀնջում ինձ։ Եվ այժմ ես չգիտեմ բոլոր բաները. բայց Տերը գիտի բոլոր բաները, որոնք պետք է զան. ուստի, նա ներգործում է իմ մեջ՝ անել ըստ իր կամքի»։[5] Չնայած Մորմոնը չգիտեր հետագայում ձեռագիր 116 էջերի կորստի մասին, Տերը գիտեր և ուղի պատրաստեց այդ խոչընդոտը հաղթահարելու համար այդ իրադարձությունից շատ տարիներ առաջ։

Հայրը տեղյակ է մեր մասին, գիտի մեր կարիքները և կատարելապես կօգնի մեզ։ Երբեմն այդ օգնությունը տրվում է հենց այն պահին, երբ մենք խնդրում ենք աստվածային օգնություն, կամ կարճ ժամանակ անց։ Երբեմն մեր ամենանվիրական և արժանի ցանկությունները չեն գտնում այն պատասխանը, որը հուսացել էինք, սակայն մենք համոզվում ենք, որ Աստված ավելի մեծ օրհնություններ ուներ մեզ համար։ Եվ երբեմն էլ մեր արդար ցանկությունները չեն շնորհվում մեզ այս կյանքում։ Երեք տարբեր պատմությունների միջոցով ես կներկայացնեմ ուղիները, որոնցով մեր Երկնային Հայրը կարող է պատասխանել Իրեն ուղղված մեր ջերմեռանդ աղոթքներին։

Մեր կրտսեր որդին որպես միսիոներ կանչվեց ծառայելու Ֆրանսիա Փարիզ միսիայում։ Ծառայելու նախապատրաստությունների ժամանակ մենք գնացինք նրա հետ սովորական վերնաշապիկներ, կոստյումներ, փողկապներ, գուլպաներ և բաճկոն գնելու։ Ցավոք, նրա ուզած բաճկոնը չէր համապատասխանում նրա չափերին։ Ինչևէ, խանութի գործավարը նշեց, որ համապատասխան բաճկոնը մի քանի շաբաթից կառաքվեր Պրովոյի միսիոներների ուսուցման կենտրոն՝ նախքան մեր որդու Ֆրանսիա մեկնելը։ Մենք վճարեցինք բաճկոնի համար և հանգիստ վերադարձանք տուն։

Մեր որդին միսիոներների ուսուցման կենտրոն գնաց հունիսին, իսկ բաճկոնն առաքվեց օգոստոսին նախատեսված նրա մեկնումից մի քանի օր առաջ։ Նա չփորձեց բաճկոնը, այլ անմիջապես տեղավորեց այն ճամպրուկում՝ իր հագուստների և այլ պարագաների հետ։

Երբ Փարիզում եկավ ձմեռը, որտեղ ծառայում էր մեր որդին, նա գրեց մեզ, որ հանել է բաճկոնը և փորձել, սակայն պարզվել է, որ այն չափազանց փոքր էր։ Ուստի, մենք լրացուցիչ գումար ուղարկեցինք նրա բանկային հաշվին, որպեսզի նա կարողանար մեկ այլ բաճկոն գնել Փարիզում. նա այդպես էլ արեց։ Մի փոքր բարկացած ես գրեցի նրան, որ առաջին բաճկոնը տար մեկ ուրիշին, քանի որ նա չէր կարող օգտագործել այն։

Ավելի ուշ մենք նրանից հետևյալ էլ-նամակը ստացանք. «Այստեղ շատ ցուրտ է։ . . . Քամին կարծես անցնում է մեր միջով, չնայած իմ նոր բաճկոնը շատ լավն է ու բավականին ծանր։ . . . Ես իմ մյուս բաճկոնը տվեցի [մեր հետ ապրող մեկ ուրիշ միսիոների,] ով ասաց, որ աղոթում էր ավելի լավ բաճկոն ձեռք բերելու համար։ Նա մի քանի տարվա նորադարձ է և միայն մայրը . . . ու նրան մկրտած միսիոներն են աջակցում իրեն իր միսիայում, ուստի, այդ բաճկոնը նրա աղոթքի պատասխանն էր, և ես շատ ուրախ եմ դրա համար»։[6]

Երկնային Հայրը գիտեր, որ այդ միսիոները, որ ծառայում էր Ֆրանսիայում, տանից 10000 կմ հեռավորության վրա, շուտափույթ նոր բաճկոնի կարիք էր ունենալու ցուրտ Փարիզում, սակայն այդ միսիոները միջոցներ չէր ունենալու այն գնելու համար։ Երկնային Հայրը նաև գիտեր, որ մեր որդին Պրովոյի (Յուտա) հագուստի խանութից ստանալու էր բաճկոն, որը շատ փոքր էր լինելու։ Նա գիտեր, որ այդ երկու միսիոներները միասին ծառայելու էին Փարիզում, և որ բաճկոնը լինելու էր անհապաղ դրա կարիքն ունեցող միսիոների խոնարհ և ջերմեռանդ աղոթքի պատասխանը։

Փրկիչն ուսուցանել է.

«Չէ՞ որ երկու ճնճղուկ մէկ դանկի են ծախվում, եւ նորանցից մէկը չի ընկնիլ գետինն առանց ձեր Հօր։

Իսկ ձեր գլխի ամեն մազերն էլ համարուած են։

Ուրեմն մի վախենաք. Դուք շատ ճնճղուկներից աւելի լաւ էք»։[7]

Այլ իրավիճակներում, երբ մեր արժանի ցանկությունները չեն գտնում այն պատասխանը, որը հուսացել էինք, իրականում դա կարող է լինել մեր օգտի համար։ Օրինակ, Հակոբի որդի Հովսեփին եղբայրներն այնքան նախանձեցին և ատեցին, որ պատրաստ էին դավադրաբար սպանել նրան։ Սակայն նրանք որպես ստրուկ վաճառեցին նրան Եգիպտոս ուղարկվելու համար։[8] Եթե երբևէ եղել է մարդ, ով զգացել է, որ իր աղոթքների պատասխանները չեն արդարացնում իր հույսերը, դա կարող էր լինել Հովսեփը։ Իրականում թվացյալ դժբախտությունների արդյունքում մեծ օրհնություններ էին տրվում նրան, որի արդյունքում նրա ընտանիքը փրկվեց սովից։ Ավելի ուշ, երբ Եգիպտոսում նա դարձել էր վստահելի առաջնորդ, մեծ հավատքով և իմաստությամբ նա ասաց իր եղբայրներին.

«Եւ հիմա մի վշտանաք եւ մի նեղուիք որ ինձ ծախեցիք այստեղ. Որովհետեւ Աստուած ուղարկեց ինձ ձեր առաջին կեանք պահելու համար։

Որովհետեւ երկրիս վերայ սովի երկրորդ տարին է այս. Եւ տակաւին հինգ տարի կայ որ վարուցան, եւ հունձք չի լինիլ։

Եւ Աստուած ինձ ձեր առաջին ուղարկեց որ երկրի վերայ ձեզ համար սերունդ պահէ, եւ ձեզ ապրեցնէ մեծ ազատութիւնով։

Եւ արդ՝ ոչ թէ դուք ուղարկեցիք ինձ այս տեղ, այլ Աստուած»։[9]

Քոլեջում ուսանելու տարիներին մեր ավագ որդին ընդունվել էր շատ ցանկալի, կես դրույքով ուսանողական աշխատանքի, որը հրաշալի, մշտական աշխատանքի հնարավորություն էր ուսումն ավարտելուց հետո։ Նա ջանասիրաբար աշխատեց այդտեղ չորս տարի, ձեռք բերեց բարձր որակավորում և շատ հարգված էր իր գործընկերների և ղեկավարների կողմից։ Նրա ավարտական տարվա վերջում, կարծես թե երկնքի հովանավորությամբ (մեր որդին թերևս այդպես էր կարծում), հաստատվեց այդ աշխատատեղը, և նա լավագույն թեկնածուն էր համարվում բոլոր առումներով, ուստի, նա վստահ էր, որ կստանար այդ աշխատանքը։

Սակայն, նա չընդունվեց աշխատանքի: Մեզանից ոչ ոք չէր հասկանում, թե ինչու: Նա լավ պատրաստված էր, հարցազրույցը լավ էր անցել, ամենառարակավորված թեկնածուն էր և աղոթել էր մեծ հավատքով ու ակնկալիքով: Նա ընկճված և հիասթափված էր, իսկ մենք չգիտեինք, թե ինչպես օգնել նրան: Ինչո՞ւ Աստված մերժեց նրա արդար ցանկությունը:

Անցան տարիներ, մինչև մեզ պարզ դարձավ այդ պատասխանի պատճառը: Եթե նա ավարտելուց հետո ընդունվեր իր երազած աշխատանքին, նա բաց կթողներ իր կյանքը փոխող կարևորագույն հնարավորությունը, որն այժմ ապահովում է նրա հավերժական երջանկությունն ու օրհնությունները: Աստված ի սկզբանե գիտեր ամեն բան (ինչպես Նա միշտ իմանում է), և այս դեպքում, բազում արդար աղոթքների պատասխանն էր ոչ՝ հօգուտ ավելի լավ արդյունքի:

Եվ երբեմն, աղոթքի պատասխանը, որը մենք փնտրում ենք արդարությամբ և մեծ ջանասիրությամբ, չի տրվում այս կյանքում:

Քույր Պատրիցիա Պարկինսոնը ծնվել էր նորմալ տեսողությամբ, սակայն յոթ տարեկանում նա սկսեց կուրանալ: Ինը տարեկանում նա սկսեց հաճախել խուլերի և կույրերի համար նախատեսված Յուտայի դպրոցը, որը գտնվում էր Օգդենում (Յուտա), իր տնից 90 մղոն (145կմ) հեռավորության վրա, անհրաժեշտություն առաջացնելով, որ նա մնար գիշերօթիկ դպրոցում, որի պատճառով ինքնամյա աղջնակը մեծ կարոտ էր զգում:

11 տարեկանում նա ամբողջությամբ զրկվեց տեսողությունից: Պատրիցիան գիշերօթիկ դպրոցն ավարտեց 15 տարեկանում և տուն վերադառնալով սկսեց հաճախել տեղի ավագ դպրոցը: Ապա նա քոլեջ ընդունվեց և բակալավրի աստիճան ստացավ շփման խանգարումների և հոգեբանության ոլորտում, որից հետո հերոսական պայքար մղելով համալսարանի քննություններն ընդունող հանձնաժողովի կասկածամիտ անդամների դեմ, նա ընդունվեց ասպիրանտուրա և մագիստրոսի աստիճան ստացավ բանավոր խոսքի պաթոլոգիայի ոլորտում: Պատրիցիան այժմ աշխատում է տարրական դպրոցի 53 աշակերտների հետ և իր դպրոցի շրջանում ղեկավարում բանավոր խոսքի չորս մասնագետների: Նա ունի իր սեփական տունը և մեքենան, որն ընկերները կամ ընտանիքի անդամներն են վարում անհրաժեշտության դեպքում:

10 տարեկանում Պատրիցիան պետք է անցներ ևս մեկ բուժզննում՝ կապված նրա վատթարացող տեսողության հետ: Նրա ծնողները միշտ ճշգրիտ ասում էին նրան իր առողջության հետ կապված խնդիրների մասին, սակայն ինչ-որ պատճառով այս անգամ նրանք ոչինչ չասացին նրան: Երբ ծնողներն ասացին նրան այդ զննման մասին, Պատրիցիան, նրա ծնողների խոսքերով, շփոթության մեջ էր: Նա վազեց կողքի սենյակը, բայց ավելի ուշ հետ եկավ և մի փոքր վրդովված ասաց իր ծնողներին. «Թույլ տվեք ձեզ մի բան ասել: Ես գիտեմ դա, Աստված գիտի դա, և գուցե դուք ևս գիտեք դա: Իմ կյանքի մնացած բոլոր օրերում ես կույր եմ լինելու»:

Մի քանի տարի առաջ Պատրիցիան մեկնեց Կալիֆորնիա, այցելելու ընտանիքի անդամներին, ովքեր այնտեղ էին ապրում: Բակում էր նրա երեքամյա զարմիկը հարցրեց. «Հորաքույր, ինչո՞ւ պարզապես չես խնդրում Երկնային Հորը քեզ նոր աչքեր տալ: Որովհետև, եթե դու խնդրես Երկնային Հորից, Նա կտա քեզ ինչ-որ կուզես: Դու պարզապես պետք է խնդրես Նրան»:

Պատրիցիան ասում է, որ այդ հարցը հիշողություններ արթնացրեց նրա մեջ, սակայն նա պատասխանեց. «Երբեմն Երկնային Հայրն այլ կերպ է արձագանքում: Երբեմն Նա ուզում է, որ դու որոշ բաներ սովորես, ուստի, Նա չի տալիս ամեն բան, որ ուզում ես: Երբեմն դու պետք է սպասես: Երկնային Հայրը և Փրկիչը լավ

գիտեն, թե որն է բարին մեզ համար, և ինչի կարիք մենք ունենք: Ուստի, Նրանք չեն պատրաստվում նույն պահին շնորհել քեզ ամեն բան, ինչ ուզում ես»:

Պատրիցիային ես ճանաչում եմ երկար տարիներ և վերջերս ասացի նրան, որ ինձ հիացնում է այն փաստը, որ նա միշտ դրական վերաբերմունք ունի և երջանիկ է: Նա պատասխանեց. «Դու ինձ հետ մեր տանը չես եղել, այդպես չէ՞: Ես ունենում եմ իմ դժվար պահերը: Ես ունեցել եմ բավականին ծանր դեպրեսիա և շատ եմ լացել»: Այնուամենայնիվ, նա ավելացրել է. «Այն ժամանակվանից, երբ ես սկսեցի կորցնել տեսողությունս, տարօրինակ էր, բայց ես գիտեի, որ Երկնային Հայրը և Փրկիչը իմ և իմ ընտանիքի հետ էին: Մենք լավագույնս կարողացանք հաղթահարել այդ ամենը, և իմ կարծիքով, մենք ճիշտ ձևով հաղթահարեցինք ամեն բան: Ի վերջո, ես դարձա բավականին հաջողակ անձնավորություն, և ընդհանուր առմամբ ես երջանիկ մարդ եմ: Ես հիշում եմ Նրա ձեռքը ամեն բանի մեջ: Նրանց, ովքեր հարցնում են ինձ, թե արդյո՞ք ես բարկացած եմ իմ կուրության պատճառով, ես պատասխանում եմ. «Ո՞ւմ վրա ես պետք է բարկանամ: Երկնային Հայրն այս ամբողջ ընթացքում ինձ հետ է եղել. ես մենակ չեմ: Նա ինձ հետ է ամեն վայրկյան»:

Ինչ վերաբերում է այս պատմությանը, իր տեսողությունը վերագտնելու Պատրիցիայի ցանկությունը չի շնորհվի նրան այս կյանքում: Սակայն, նրա նշանաբանը, որը ստացել է հորից, հետևյալն է. «Մա նույնպես կանցնի»:[10]

Նախագահ Հենրի Բ. Այրինգը հայտարարել է. «Հայրն այս պահին տեղյակ է ձեր մասին, ձեր զգացմունքների և ձեր շուրջ գտնվող ամենքի հոգևոր ու աշխարհիկ կարիքների մասին»:[11] Այս հրաշալի և մխիթարող ճշմարտությունը կարելի է գտնել իմ պատմած երեք փորձառություններում:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, երբեմն մեր աղոթքները արագ արձագանք են ստանում մեր ակնկալած ձևով: Երբեմն էլ, մեր աղոթքները չեն ստանում մեր ակնկալած պատասխանը, սակայն ժամանակի ընթացքում մենք տեսնում ենք, որ Աստված ավելի մեծ օրհնություններ ուներ մեզ համար պատրաստած, քան մենք էինք ի սկզբանե ակնկալում: Եվ երբեմն էլ մեր արդար ցանկությունները չեն շնորհվում մեզ այս կյանքում:[12] Ինչպես ասել է Երեց Նիլ Ա. Մաքսվելը. «Հավատը նաև ներառում է վստահություն առ Աստծո ժամանակացույցը»:[13]

Մենք համոզված ենք, որ Իր իսկ ձևով և Իր իսկ ժամանակին Երկնային Հայրը կօրհնի մեզ և լուծում կտա մեր բոլոր մտահոգություններին, անարդարություններին և հիասթափություններին:

Ահա Բենիամին թագավորի խոսքերը. «Եվ բացի դրանից, ես կցանկանայի, որ դուք խորհեք օրհնված և երջանիկ վիճակի վրա նրանց, ովքեր պահում են Աստծո պատվիրանները: Քանզի, ահա, նրանք օրհնված են բոլոր բաներում՝ և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր. և եթե նրանք հավատարիմ համբերում են մինչև վերջ, նրանք ընդունվում են երկնքում, որի շնորհիվ նրանք կարողանում են բնակվել Աստծո հետ երբեք չվերջացող երջանկության վիճակում: Օ՜ հիշե՛ք, հիշեք, որ այս բաները ճշմարիտ են. քանզի Տեր Աստված է ասել դրանք»:[14]

Ես գիտեմ, որ Աստված լսում է մեր աղոթքները:[15] Ես գիտեմ, որ որպես ամենագետ, սիրող Հայր, Նա կատարելապես պատասխանում է մեր աղոթքներին, համաձայն Իր անսահման իմաստության և այնպես, որ դրանք ի վերջո երջանկություն և օրհնություն են բերում մեզ: Այդ մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 1 Նեփի 11.17, տես նաև Ա Հովհաննես 4.8
2. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիահոնա,* մայիս 2018, 93-96:
3. Մատթեոս 6.8
4. Վարդապետություն և Ուխտեր 38.2
5. Մորմոնի Խոսքերը 1.7
6. Անձնական նամակագրություն:
7. Մատթեոս 10.29-31
8. Տես Ծննդոց 37.20, 26-28:
9. Ծննդոց 45.5-8
10. Պատրիցիա Պարկինսոնի հետ ունեցած անձնական հարցազրույցից, դեկտեմբեր 10, 2018:
11. Հենրի Բ. Այրինգ, “Որպեսզի Նրա Հոգին ձեզ հետ լինի», *Լիահոնա,* մայիս 2018, 88:
12. See Jeffrey R. Holland, “An High Priest of Good Things to Come,” *Liahona,* Jan. 2000, 42–45.
13. Neal A. Maxwell, “Lest Ye Be Wearied and Faint in Your Minds,” *Ensign,* May 1991, 90.
14. Մոսիա 2.41
15. Տես «Աղոթքի զորությունը», mormon.org/beliefs/power-of-prayer:

ԵՐԵՑ ԴԻՏԵՐ Ֆ. ՈՒԽԴՈՐՖ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Միսիոներական աշխատանք. կիսելով այն, ինչ կա Ձեր սրտում

Որտեղ էլ գտնվեք այս աշխարհում, կան շատ հնարավորություններ Հիսուս Քրիստոսի ավետարանի բարի լուրով կիսվելու համար:

Անցյալ ամիս Տասներկու Առաքյալները հրավիրվել էին մեր սիրելի մարգարեի՝ Նախագահ Ռասել Մ. Նելսոնի կողմից՝ նրա հետ ճանապարհորդելու Հռոմ Իտալիայ տաճարի նվիրագործմանը: Ուղևորության ընթացքում ես մտածում էի Պողոս Առաքյալի և նրա ճամփորդությունների մասին: Այն ժամանակ Երուսաղեմից Հռոմ հասնելը կտևեր մոտ 40 օր: Այսօր, իմ սիրած ինքնաթիռներից մեկով, տևում է 3 ժամից պակաս:

Աստվածաշնչի գիտնականները կարծում են, որ Պողոսը Հռոմում էր, երբ գրեց մի քանի իր նամակները, որոնք շատ կարևոր էին Եկեղեցու անդամներին ամրացնելու համար՝ ինչպես նրա օրերում, այնպես էլ այսօր:

Պողոսը և հին եկեղեցու մյուս անդամները՝ վաղ օրերի Սրբերը, սերտ ծանոթ էին զոհաբերությանը: Շատերը դաժանորեն հալածվել են, նույնիսկ՝ մինչև մահ:

Վերջին 200 տարվա ընթացքում Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցու անդամները՝ Վերջին օրերի Սրբերը, նույնպես տարբեր հալածանքներ են կրել: Սակայն, չնայած այդ հալածանքներին (իսկ երբեմն էլ դրանց պատճառով), Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին շարունակել է աճել և այժմ տարածվել է ամբողջ աշխարհում:

Շատ բան կա անելու

Սակայն, նախքան տոնելը և միմյանց շնորհավորելը այս հրաշալի հաջողության համար, լավ կլինի մենք հասկանանք դրա հեռանկարը:

Աշխարհում գոյություն ունի մոտավորապես յոթ ու կես միլիարդ մարդ, համեմատած շուրջ 16 միլիոն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի հետ, որն իսկապես մի փոքր հոտ է:[1]

Մինչդեռ, աշխարհի որոշ մասերում քրիստոնյա հավատացյալների թիվը կրճատվում է:[2]

Նույնիսկ Տիրոջ վերականգնված Եկեղեցում, մինչ ընդհանուր անդամների թիվը շարունակում է աճել, կան շատ մարդիկ, որոնք չեն ստանում կանոնավոր Եկեղեցի հաճախելու օրհնությունները:

Այլ կերպ ասած, որտեղ էլ գտնվեք այս աշխարհում, կան շատ հնարավորություններ Հիսուս Քրիստոսի ավետարանի բարի լուրով[3] կիսվելու համար այն մարդկանց հետ, որոնց հանդիպում եք, ում հետ սովորում, ապրում, աշխատում և շփվում եք:

Անցյալ տարի ես ունեցել եմ հետաքրքիր հնարավորություն մեծապես ներգրավված լինելու Եկեղեցու միսիոներական համաշխարհային գործունեության մեջ: «Ես հաճախ խորհել և աղոթել եմ մեզ՝ Իր աշակերտներին, Իր զավակներին, տված Փրկիչի մեծ հանձնառության մասին. «Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցէք, նորանց մկրտելով Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունովը»:[4]

Ես դժվարացել եմ պատասխանել հետևյալ հարցին. «Ինչպե՞ս կարող ենք մենք, որպես Քրիստոսի անդամներ և աշակերտներ, մեր առօրյա կյանքում լավագույնս իրականացնել այդ հանձնառությունը»:

Այսօր ես հրավիրում եմ այդ հարցի մասին խորհել ձեր սրտերում և մտքերում:[5]

Միսիոներական աշխատանքի պարգևը

Եկեղեցու ղեկավարները տասնամյակներ շարունակ կարևորել են հստակ կոչը. «Յուրաքանչյուր անդամ միսիոներ է»:[6]

Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամները, ինչպես նախկինում, այնպես էլ մեր օրերում, եռանդով և ուրախությամբ են ավետարանով կիսվել ընկերների և ծանոթների հետ: Նրանց սրտերը վառվում են Հիսուս Քրիստոսի վկայությամբ, և նրանք անկեղծորեն ցանկանում են, որ ուրիշները զգան այդ նույն ուրախությունը, որը նրանք գտել են Փրկիչի ավետարանում:

Եկեղեցու որոշ անդամներ կարծես դրա պարգևն ունեն: Նրանք սիրում են ավետարանի ներկայացուցիչներ լինել: Նրանք համարձակ և ուրախ ծառայում ու ղեկավարում են աշխատանքը՝ որպես անդամ միսիոներներ:

Այնուամենայնիվ, մեզանից ոմանք ավելի անվճռական են: Երբ միսիոներական աշխատանքը քննարկվում է Եկեղեցու ժողովներում, գլուխները դանդաղորեն իջնում են և թաքնվում են նստարանի հետևում, աչքերը կենտրոնանում են սուրբ գրությունների վրա կամ փակ խորհրդածում են, որպեսզի խուսափեն այլ անդամների աչքերից:

Ինչո՞ւ է դա այդպես: Գուցե մեղավո՞ր ենք զգում՝ ավետարանով ավելի շատ չկիսվելու համար: Գուցե վստահ չե՞նք, թե ինչպես անենք դա: Կամ գուցե վախենու՞մ ենք մեր հարմարավետության գոտուց դուրս գալ:

Ես հասկանում եմ դա:

Բայց հիշեք, որ Տերը երբեք չի պահանջել փորձագիտական, անթերի միսիոներական ջանքեր: Փոխարենը՝ «Տերը պահանջում է սիրտն ու պատրաստակամ միտքը»:[7]

Եթե դուք արդեն ուրախ կատարում եք միսիոներական աշխատանք, խնդրում եմ շարունակեք և օրինակ ծառայեք ուրիշներին: Տերը կօրհնի ձեզ

Եթե այնուամենայնիվ, դուք զգում եք, որ դանդաղում եք գործել, երբ խոսքը վերաբերում է ավետարանի ուղերձի տարածմանը, կարո՞ղ եմ առաջարկել հինգ գործողություն, որոնք զերծ կպահեն մեղավոր զգալուց, և որոնք կարող են կատարել բոլորը, որպեսզի մասնակցեն Իսրայելը հավաքելու Փրկիչի մեծ հանձնառությանը:

Հինգ պարզ առաջարկներ

Առաջինը, ավելի մոտեցեք Աստծուն: Առաջին մեծ պատվիրանը Աստծուն սիրելն է:[8] Դա է Երկրի վրա գտնվելու հիմնական պատճառը: Հարցրեք ինքներդ ձեզ. «Իսկապե՞ս հավատում եմ Երկնային Հորը»:

«Արդյո՞ք ես սիրում եմ Նրան»:

Որքան ավելի մոտենաք մեր Երկնային Հորը, այնքան շատ Նրա լույսն ու ուրախությունը կհորդեն ձեր միջից: Ուրիշները կնկատեն, որ ինչ-որ եզակի և հատուկ բան կա ձեր մեջ: Եվ նրանք կհարցնեն դրա մասին:

Երկրորդ, ձեր սիրտը լցրեք ուրիշների հանդեպ սիրով: Սա երկրորդ մեծ պատվիրանն է:[9] Փորձեք ձեզ շրջապատող բոլոր մարդկանց իսկապես տեսնել որպես Աստծո զավակներ: Սպասավորեք նրանց, անկախ նրանից՝ նրանց անունները կան ձեր սպասավորության ցուցակում, թե՝ ոչ:

Ծիծաղեք նրանց հետ: Ուրախացեք նրանց հետ: Լացեք նրանց հետ: Հարգեք նրանց: Բուժեք, բարձրացրեք և ամրացրեք նրանց:

Ձգտեք ընդօրինակել Քրիստոսի սերը և կարեկցանք ունենալ ուրիշների հանդեպ, նույնիսկ նրանց, ովքեր անբարյացակամ են ձեր հանդեպ, ովքեր ծաղրում են ձեզ և ցանկանում են վնաս հասցնել: Սիրեք նրանց և վերաբերվեք նրանց Երկնային Հոր զավակների նման:

Երրորդը, ձգտեք քայլել աշակերտության ուղիով: Ինչպես Աստծո և Նրա զավակների հանդեպ ձեր սերը մեծանա, այնպես էլ Հիսուս Քրիստոսին հետևելու ձեր նվիրվածությունը կմեծանա:

Նրա ճանապարհների մասին սովորում եք, երբ սնվում եք Նրա խոսքով և ականջ եք դնում ու կիրառում եք ժամանակակից մարգարեների ու առաքյալների ուսմունքները: Նրա ճանապարհներով քայլելու ձեր վստահությունն ու քաջությունն աճում է, երբ դուք սովորելու, խոնարհ պատրաստ սրտով հաղորդակցվում եք Երկնային Հոր հետ:

Աշակերտության ուղիով քայլելու համար պետք է վարժվել՝ ամեն օր, քիչ-քիչ, «շնորհ շնորհի տեղ»,[10] «տող առ տող»:[11] Երբեմն, երկու քայլ առաջ և մեկ քայլ հետ:

Կարևորն այն է, որ դուք չհանձնվեք և շարունակեք ճիշտ ձևով անել դա: Ի վերջո, դուք կդառնաք ավելի լավը, ավելի երջանիկ և ավելի անկեղծ: Ուրիշների հետ ձեր հավատքի մասին զրուցելն ավելի

սովորական և բնական կդառնա: Իրականում ավետարանը կլինի ձեր կյանքի այնպիսի կարևոր, արժեքավոր մասը, որ անբնական կլինի չխոսել դրա մասին ուրիշների հետ: Գուցե դա անմիջապես տեղի չունենա, դա ամբողջ կյանքը տևող աշխատանք է: Բաց դա տեղի կունենա:

Չորրորդ, կիսվեք այն ամենով, ինչ կա ձեր սրտում: Ես չեմ խնդրում, որ դուք բարձրախոսով կանգնեք փողոցի անկյունում և Մորմոնի Գրքից հատվածներ գոռաք: Ինչ ես խնդրում եմ, այն է, որ դուք միշտ փնտրեք ձեր հավատքով մարդկանց հետ բնական և սովորական եղանակներով կիսվելու հնարավորությունները՝ ինչպես անձամբ, այնպես էլ առցանց: Ես խնդրում եմ, որ դուք բոլոր ժամանակներում «կանգնեք որպես վկաներ»[12] ավետարանի զորության, և անհրաժեշտության դեպքում բառեր օգտագործեք:[13]

Քանի որ «Քրիստոսի ավետարանը . . . Աստծո զօրութիւնն է փրկելու համար», դուք կարող եք վստահ և քաջ կիսվել նրանով:[14] Վստահությունը, քաջությունը և խոնարհությունը կարող են թվալ հակասական հատկանիշներ, սակայն դա այդպես չէ: Նրանք արտացոլում են Փրկիչի հրավերը՝ չթաքցնել ավետարանի արժեքներն ու սկզբունքները վերարկուի տակ, այլ ձեր լույսը թող շողա, որ ձեր բարի գործերը փառավորեն ձեր Երկնային Հորը:[15]

Դա անելու համար կան բազմաթիվ սովորական և բնական եղանակներ, ամենօրյա բարի գործերից մինչև YouTube, Facebook, Instagram կամ Twitter հավելվածներում ձեր հանդիպած մարդկանց հետ անձնական վկայությունների, պարզ զրույցների միջոցով: Այս տարի մեր տներում և կիրակնօրյա դպրոցում մենք սովորում ենք Նոր Կտակարանից: Ինչպիսի՜ հրաշալի հնարավորություն է ընկերներին և հարևաններին հրավիրել եկեղեցի և ձեր տները՝ ձեզ հետ սովորելու Փրկիչի մասին: Նրանց հետ կիսվեք Gospel Library հավելվածով, որտեղ նրանք կարող են գտնել Եկ, հետևիր ինձ ծրագիրը: Եթե դուք ճանաչում եք երիտասարդների և նրանց ընտանիքներին, տվեք նրանց Երիտասարդներին զորացնելու համար գրքույկը և հրավիրեք նրանց մոտենալ ու տեսնել, թե ինչպես են մեր երիտասարդները ձգտում ապրել այդ սկզբունքներով:

Եթե ինչ -որ մեկը հարցնում է ձեր հանգստյան օրերի մասին, առանց հապաղելու խոսեք եկեղեցում ունեցած ձեր փորձառության մասին: Նրանց պատմեք այն փոքր երեխաների մասին, ովքեր հավաքվածների առաջ ջերմեռանդորեն երգեցին այն մասին, թե ինչպես են փորձում նմանվել Հիսուսին: Խոսեք երիտասարդների խմբի մասին, ովքեր իրենց ժամանակը տրամադրեցին ծերանոցներում՝ օգնելով ծերերին հավաքել անձնական պատմություններ: Խոսեք մեր կիրակնօրյա ժողովի ժամանակացույցում վերջին փոփոխության մասին, և թե ինչպես է այն օրհնում ձեր ընտանիքը: Կամ բացատրեք, թե ինչու ենք կարևորում, որ սա Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է, և որ մենք Վերջին օրերի Սրբերն ենք, ինչպես հին Եկեղեցու անդամներն էին կոչվում Սրբեր:

Ինչպես էլ որ ձեզ համար սովորական և բնական լինի, մարդկանց հետ կիսվեք, թե Հիսուս Քրիստոսն ու Նրա Եկեղեցին ինչու են կարևոր ձեզ համար: Հրավիրեք նրանց «գալ և տեսնել»:[16] Ապա, խրախուսեք նրանց գալ և օգնել: Մարդկանց համար կան մեր Եկեղեցում օգնելու բազմաթիվ հնարավորություններ:

Աղոթեք, որ ոչ միայն միսիոներները գտնեն ընտրյալներին: Ամեն օր ձեր ամբողջ սրտով աղոթեք, որ գտնեք նրանց, ովքեր կգան և կտեսնեն, կգան և կմնան: Լիաժամկետ միսիոներներին տեղեկացված պահեք: Նրանք հրեշտակների նման պատրաստ են օգնել:

Բարի լուրով, Հիսուս Քրիստոսի ավետարանով, կիսվեք սիրով և համբերությամբ: Եթե մարդկանց հետ համագործակցենք միակ ակնկալիքով, որ նրանք շուտով կհագնեն սպիտակ հագուստը և կհարցնեն մոտակա մկրտարանի տեղը, ապա մենք դա սխալ ենք անում:

Ոմանք, ովքեր գալիս և տեսնում են, հավանաբար, երբեք չեն միանա Եկեղեցուն, իսկ ոմանք կմիանան ավելի ուշ: Դա նրանց ընտրությունն է: Սակայն դա չպետք է նվազեցնի նրանց հանդեպ մեր սերը: Եվ դա չպետք է նվազեցնի մեր խանդավառ ջանքերը՝ շարունակելու հրավիրել անհատներին և ընտանիքներին գալ և տեսնել, գալ և օգնել, և գալ ու մնալ:

Հինգերորդ, վստահեք, որ Տերը կկատարի Իր հրաշքները: Հասկացեք, որ մարդկանց դարձի բերելը ձեր աշխատանքը չէ: Դա Սուրբ Հոգու դերն է: Ձեր դերն այն է, որ կիսվեք նրանով, ինչ կա ձեր սրտում և կայուն ապրեք ձեր հավատքում:

Այսպիսով, մի վհատվեք, երբ ինչ-որ մեկն ավետարանի ուղերձն անմիջապես չի ընդունում: Դա ձեր ձախողումը չէ:

Դա անհատի և Երկնային Հոր միջև է:

Ձեր գործն է սիրել Աստծուն և սիրել ձեր մերձավորին՝ Նրա զավակներին:

Հավատացեք, սիրեք և գործեք:

Հետևեք այդ ուղուն և Աստված ձեր միջոցով հրաշքներ կգործի և կօրհնի Իր թանկագին զավակներին:

Այս հինգ առաջարկները կօգնեն ձեզ անել այն, ինչ Հիսուս Քրիստոսի աշակերտներն արել են հին ժամանակներից սկսած: Նրա ավետարանը և Նրա Եկեղեցին ձեր կյանքի և այն ամենի կարևոր մասն են կազմում, թե ով եք դուք և ինչ եք անում: Հետևաբար, հրավիրեք ուրիշներին գալ և տեսնել և գալ ու օգնել, իսկ Աստված

կանի Իր փրկարար աշխատանքը և նրանք կգան ու կմնան:

Ի՞նչ կլինի, եթե դժվար լինի:

Դուք կհարցնեք. «Ի՞նչ կլինի, եթե ես այդ ամենն անեմ, իսկ մարդիկ լավ չարձագանքեն»: Ի՞նչ կլինի, եթե նրանք քննադատաբար մոտենան Եկեղեցուն: Ի՞նչ կլինի, եթե ինձ հանեն իրենց ընկերների ցուցակից:

Այո, դա կարող է տեղի ունենալ: Հին ժամանակներից սկսած, Հիսուս Քրիստոսի աշակերտները հաճախ հալածվել են:[17] Պետրոս առաքյալն ասել է. «Ուրախ եղեք . . . թե դուք Քրիստոսի չարչարանքին մասնակից եք»:[18] Վաղ օրերի սրբերն ուրախացել են, «որովհետեւ արժանի եղան նորա անունի համար անարգուիլ»:[19]

Հիշեք, որ Տերն աշխատում է խորհրդավոր ձևերով: Հնարավոր է, որ մերժմանն ուղղված ձեր Քրիստոսանման պատասխանը կմեղմի կարծրացած սիրտը:

Որպես Տեր Հիսուս Քրիստոսի Առաքյալ, ես օրհնում եմ ձեզ վստահությամբ, որ ավետարանի արժեքների կենդանի վկա լինեք, օրհնում եմ քաջությամբ, որ միշտ հանդես գաք որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ, օրհնում եմ խոնարհությամբ, որ աջակցեք Իր գործի մեջ՝ որպես Երկնային Հոր և Նրա զավակների հանդեպ ձեր սիրո արտահայտում:

Իմ սիրելի՛ ընկերներ, դուք ուրախ կլինեք իմանալով, որ դուք կարևոր մասն եք կազմում վաղուց կանխագուշակված Իսրայելի հավաքման գործում՝ նախապատրաստելով Քրիստոսի գալուստը «զորություն ու մեծ փառք հագած. բոլոր սուրբ հրեշտակների հետ»:[20]

Ձեր Երկնային Հայրը ճանաչում է ձեզ: Տերը սիրում է ձեզ: Աստված կօրհնի ձեզ: Այս աշխատանքը կարգված է Նրա կողմից: Դուք կարող եք դա անել: Մենք դա կարող ենք միասին անել:

Այդ մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մեծ մարգարե Նեփին տեսիլքում տեսավ, որ չնայած Աստծո Գառի Եկեղեցին կտարածվի «ողջ երկրի երեսի վրա», աշխարհի ամբարշտությունների պատճառով ընդհանուր «թվով փոքր [կլինի]» (1 Նեփի 14.12, տես նաև Ղուկաս 12.32):
2. Օրինակ, Pew Research Center-ի վերջին ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ԱՄՆ-ում «մեծահասակների (18 տարեկանից բարձր տարիքի) տոկոսը, ովքեր նկարագրում են իրենց որպես քրիստոնյաներ, ընդամենը յոթ տարվա ընթացքում նվազել է մոտ 8 տոկոսային կետով, 78.4 տոկոսից . . . 2007 թ., մինչև 70.6% 2014 թվականի դրությամբ: Նույն ժամանակահատվածում ամերիկացիների տոկոսը, ովքեր որևէ կրոնի չեն պատկանում, նկարագրում են իրենց որպես աթեիստ, ագնոստիկ կամ «ոչինչ, մասնավորապես», վեց կետից ավել աճել է՝ 16.1%-ից մինչև 22.8%» (“America’s Changing Religious Landscape,” Pew Research Center, May 12, 2015, pewforum.org):
3. *Ավետարան* բառը նշանակում է «բարի լուր»: Բարի լուրն այն է, որ Հիսուս Քրիստոսը կատարել է Քավություն, որը գերեզմանից կփրկագնի ողջ մարդկությանը և յուրաքանչյուրին կվարձատրի իր գործերի համեմատ: Այս Քավությունը սկսվեց նախաերկրային աշխարհում Իր նշանակման հետ, շարունակվեց Իր մահկանացու ժամանակաշրջանում և ավարտվեց Իր փառավոր Հարությամբ: Նրա մահկանացու կյանքի, ծառայության և զոհաբերության աստվածաշնչյան արձանագրությունները կոչվում են Ավետարաններ՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի:
4. Մատթեոս 28.19
5. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, իմ բարեկամնե՛ր. Ես թողնում եմ ձեզ այս ասածները՝ խորհելու ձեր սրտում» (Վարդապետություն և Ուխտեր 88.62):

   «Ահա, ես ասում եմ քեզ, որ դու պետք է քննես այն քո մտքում. հետո դու պետք է հարցնես ինձ, թե արդյոք դա ճիշտ է, և եթե դա ճիշտ լինի, ես այնպես կանեմ, որ կուրծքդ կայրվի քո ներսում. ուստի, դու պիտի զգաս, որ դա ճիշտ է» (Վարդապետություն և Ուխտեր 9.8):
6. Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը խրախուսեց «ամեն մի անդամի [լինել] միսիոներ», երբ 1922-1924թթ. նախագահել է Եվրոպական միսիայում և նույն ուղերձով Եկեղեցու հետ կիսվեց 1952 թ-ի գերագույն համաժողովի ժամանակ (տես «Յուրաքանչյուր անդամ միսիոներ է» կարգախոսն անփոփոխ է այսօր», *Եկեղեցու նորություններ,* փետրվար 20, 2015, նորություններ:
7. Վարդապետություն և Ուխտեր 64.34
8. Տես Մատթեոս 22.37-38:
9. Տես Մատթեոս 22.39:
10. Վարդապետություն և Ուխտեր 93.12
11. Եսայիա 28.10
12. Մոսիա 18.9
13. Այս միտքը հաճախ վերագրվում է Սենտ Ֆրենսիսին Ասսիսացուն, տես նաև Հովհաննես 10.36–38:
14. Հռովմայեցիս 1.16
15. Տես Մատթեոս 5.15-16:
16. Հովհաննես 1.46, շեշտադրումն ավելացված է:
17. Տես Հովհաննես 15.18:
18. Ա Պետրոս 4.13, Անգլերեն ստանդարտ տարբերակ, տես նաև 1–19 հատվածներ ավելին իմանալու համար, թե Քրիստոսի հետևորդներն ինչպես պետք է դիտեն տառապանքը հանուն ավետարանի:
19. Գործք Առաքելոց 5.41
20. Վարդապետություն և Ուխտեր 45.44

ԵՊԻՍԿՈՊՈՍ Վ. ՔՐԻՍՏՈՖԵՐ ՎԱԴԵԼ
Նախագահող Եպիսկոպոսության Երկրորդ Խորհրդական

Ինչպես Նա ծառայեց

Երբ մենք փորձենք ծառայել այնպես, ինչպես Նա ծառայեց, ինքներս մեզ ներելու և ուրիշներին բարձրացնելու հնարավորություններ կտրվեն մեզ:

Մոտ 18 ամիս առաջ, 2017թ. աշնանը, իմ 64-ամյա եղբայր Մայքը տեղեկացրեց ինձ, որ իր մոտ ախտորոշել են ենթաստամոքսային գեղձի ուռուցք: Նա նաև ասաց ինձ, որ քահանայության օրհնություն էր ստացել իր տնային ուսուցչից, և հանդիպել էր իր եպիսկոպոսի հետ: Ավելի ուշ նա ուղարկեց ինձ Օկլանդ Կալիֆորնիա Տաճարի նկարը, որը նկարել էր հիվանդանոցից, որտեղ բուժում էր ստանում, հետևյալ հաղորդագրությամբ. «Տես, թե ինչ տեսարան է բացվում իմ հիվանդասենյակից»:[1]

Տնային ուսուցիչների, քահանայության օրհնությունների, եպիսկոպոսների և տաճարների հետ կապված նրա մեկնաբանություններն նույնքան անակնկալ էին ինձ համար, որքան քաղցկեղը: Ինչպես տեսնում եք, Մայքը՝ Ահարոնյան Քահանայություն կրող քահանան, մոտ 50 տարի կանոնավոր չէր հաճախում եկեղեցի:

Մեր ողջ ընտանիքով մենք գրեթե նույնքան հետաքրքրված էինք նրա հոգևոր առաջընթացով, որքան որ քաղցկեղի դեմ մղվող նրա պայքարի առաջընթացով, որը մեծապես պայմանավորված էր Մորմոնի Գրքի, կնքման զորության և մահից հետո կյանքի վերաբերյալ այժմ նրա կողմից հաճախակի տրվող հարցերով: Մինչ ամիսներ անցան և քաղցկեղը տարածվեց, լրացուցիչ և ավելի մասնագիտացված բուժման կարիքն ի վերջո Մայքին բերեց Յուտա՝ Հանթսման քաղցկեղի կենտրոն:

Մայքի ժամանելուց կարճ ժամանակ անց նրան այցելեց Ջոն Հոլբրուքը՝ ծխի միսիայի ղեկավարը, ով ծառայում էր խնամքի կենտրոնում, որտեղ նա այժմ ապրում էր: Ջոնը նշել է. «Ինձ համար ակնհայտ էր այն, որ Մայքը Աստծո զավակ էր»: Նրանք շուտով ընկերացան, և Ջոնը դարձավ Մայքի սպասավորող եղբայրը: Նա անմիջապես հրավեր ստացավ, որ միսիոներներն այցելեն իրեն, ինչից եղբայրս քաղաքավարի հրաժարվեց,

սակայն նրանց ընկերությունից մեկ ամիս անց Ջոնը կրկին դիմեց այդ հարցով, բացատրելով Մայքին հետևյալը. «Կարծում եմ քեզ դուր կգա լսել ավետարանի ուղերձը»:[2] Այս անգամ հրավերն ընդունվեց, և կազմակերպվեցին հաճախակի հանդիպումներ միսիոներների հետ, ինչպես նաև այցելություններ Եպիսկոպոս Ջոն Շարփի կողմից, ում հետ զրույցների արդյունքում, ի վերջո, Մայքը ստացավ իր հայրապետական օրհնությունը՝ իր մկրտությունից 57 տարի անց:

Անցած տարվա դեկտեմբերի սկզբին, ամիսներ շարունակ բուժում ստանալուց հետո, Մայքը որոշեց դադարեցնել քաղցկեղի դեմ բուժումը, որի արդյունքում նրա մոտ առաջ էին եկել որոշ տեսողական խնդիրներ, և թույլ տալ բնությանը անելու իր գործը: Մայքի բժիշկը տեղեկացրեց մեզ, որ նա առավելագույնս ունենալու էր երեք ամսվա կյանք: Միևնույն ժամանակ, ավետարանի վերաբերյալ հարցերը շարունակվում էին, ինչպես նաև նրա տարածքի քահանայության ղեկավարների այցելությունները և աջակցությունը: Մայքին այցելելիս մենք հաճախ մահճակալի կողքին տեսնում էինք Մորմոնի Գիրքը բաց վիճակում, մինչ քննարկում էինք ավետարանի Վերականգնումը, քահանայության բանալիները, տաճարային արարողությունները և մարդու հավերժական բնույթը:

Դեկտեմբերի կեսերին, իր ձեռքում ունենալով հայրապետական օրհնությունը, կարծես թե Մայքը լցվում էր ուժով և երեք ամիսների վերաբերյալ կատարված կանխատեսումները կարծես հավանական էին թվում: Մենք նույնիսկ ծրագրել էինք, որ նա միանալու էր մեզ Սուրբ Ծննդյան, Նոր Տարվա և մնացած տոներին: Դեկտեմբերի 16-ին ես անսպասելի զանգ ստացա Եպիսկոպոս Շարփից, ով տեղեկացրեց ինձ, որ նա և ցցի նախագահը հարցազրույց էին անցկացրել Մայքի հետ և արժանի գտել նրան ստանալու Մելքիսեդեկյան Քահանայություն, և հարցրեց, թե երբ կարող եմ մասնակցել այդ արարողությանը: Արարողությունը նախատեսեցինք անցկացնել ուրբաթ օրը՝ դեկտեմբերի 21-ին:

Երբ եկավ օրը, ես և կինս՝ Քարոլը, գնացինք խնամքի կենտրոն, որտեղ մեզ անմիջապես դիմավորեցին ու ասացին, որ Մայքը գտնվում էր ծայրահեղ ծանր վիճակում: Մտնելով սենյակ՝ մենք այնտեղ տեսանք հայրապետին, նրա եպիսկոպոսին և ցցի նախագահին. ապա Մայքը բացեց իր աչքերը: Նա ճանաչեց ինձ և հասկացրեց, որ լսում էր ինձ և պատրաստ էր ստանալու քահանայությունը: Մայքի Ահարոնյան Քահանայություն ստանալուց հիսուն տարի անց ես արտոնություն ունեցա նրա տեղի ղեկավարների աջակցությամբ հաստատել Մելքիսեդեկյան Քահանայությունը և կարգել իմ եղբորը որպես երեց: Հինգ ժամ անց Մայքը մահացավ, անցնելով վարագույրի մյուս կողմը՝ հանդիպելու մեր ծնողներին որպես Մելքիսեդեկյան Քահանայության կրող:

Ընդամենը մեկ տարի առաջ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը կոչ արեց մեզանից յուրաքանչյուրին հոգալ մեր եղբայրների և քույրերի համար «ավելի բարձր ու սուրբ եղանակով»:[3] Խոսելով Փրկիչի մասին՝ Նախագահ Նելսոնն ուսուցանել է. «Քանի որ սա Նրա Եկեղեցին է, մենք՝ Նրա ծառաները, կծառայենք անհատին, ինչպես Նա ծառայեց: Մենք կծառայենք Նրա անունով, Նրա զորությամբ և իշխանությամբ և Նրա սիրառատ բարությամբ»:[4]

Արձագանքելով Աստծո մարգարեի հրավերին, ողջ աշխարհում նշանակալի ջանքեր են գործադրվում մարդուն սպասավորելու համար, ինչպես համաձայնեցված ջանքեր, մինչ անդամները հավատարմորեն կատարում են սպասավորելու իրենց հանձնարարությունները, այնպես էլ, ինչպես ես կանվանեմ, «անակնկալ» սպասավորում, մինչ շատերը Քրիստոսանման սեր են ցուցաբերում՝ արձագանքելով անսպասելի հնարավորություններին: Մեր իսկ ընտանիքում մենք շատ մոտիկից ականատես եղանք նման սպասավորությանը:

Ջոնը, ով Մայքի ընկերն ու սպասավորող եղբայրն էր և նախկինում ծառայել էր որպես միսիայի նախագահ, ասում էր իր միսիոներներին, որ «եթե մեկը գտնվում է այն ցուցակի մեջ, որն ասում է՝ «հետաքրքրված չէ», մի հանձնվեք: Մարդիկ փոխվում են»: Այն ժամանակ նա մեզ ասաց. «Մայքը շատ էր փոխվել»:[5] Ջոնը սկզբում ընկեր էր, ով քաջալերում և աջակցում էր, սակայն նրա սպասավորությունը չսահմանափակվեց ընկերական այցերով: Ջոնը գիտեր, որ սպասավորն ավելին է, քան ընկերը, և որ ընկերությունը մեծարվում է, երբ մենք սպասավորում ենք:

Պարտադիր չէ, որ մարդը իմ եղբոր պես կյանքին վտանգ սպառնացող հիվանդություն ունենա, որպեսզի սպասավորության կարիք ունենա: Այդ կարիքներն ունենում են տարբեր ձևեր, չափեր և հանգամանքներ: Միայնակ ծնողը, ոչ ակտիվ զույգը, դժվարությունների միջով անցնող դեռահասը, հոգսաշատ մայրը, հավատքի փորձությունը, ֆինանսական, առողջական կամ ամուսնական խնդիրները. ցանկը կարծես թե անվերջ է: Այնուամենայնիվ, ինչպես Մայքը, ոչ ոք չափից ավելի չի հեռացել, և երբեք ուշ չէ Փրկիչի սիրառատ օգնությունը ստանալու համար:

Եկեղեցու սպասավորության վերկայքում մեզ ուսուցանում են, որ «թեև, սպասավորության շատ նպատակներ կան, մեր ջանքերը պետք է առաջնորդվեն ուրիշներին օգնելու ցանկությամբ, որ նրանք ավելի խորը անձնական դարձ ունենան և ավելի նմանվեն Փրկիչին»:[6] Երեց Նիլ Լ. Անդերսենն այսպես է արտահայտել այդ միտքը.

«Բարեսիրտ մարդը կարող է օգնել մեկին ամրացնել անվաղողը, սենյակակցին տանել բժշկի, ճաշել որևէ մեկի հետ, ով տխուր է, կամ օրն ավելի պայծառ դարձնելու համար ժպտալ և բարևել:

Բայց առաջին պատվիրանի հետևորդը, բնականաբար, լրացումներ կանի ծառայության այդ կարևոր գործերին»:[7]

Մեր սպասավորությունը կատարելով Հիսուս Քրիստոսի նման, կարևոր է հիշել, որ սիրելու, բարձրացնելու, ծառայելու և օրհնելու Նրա ջանքերն ավելի բարձր նպատակ էին հետապնդում, քան անմիջական կարիքի բավարարումը: Անշուշտ, նա գիտեր նրանց ամենօրյա կարիքները և կարեկցանք էր զգում նրանց ունեցած տառապանքների համար, մինչ բժշկում, կերակրում, ներում և ուսուցանում էր: Սակայն, Նա ուզում էր ավելին անել, քան պարզապես բավարարել այսօրվա կարիքները: Նա ցանկանում էր, որ իր շուրջ գտնվողները հետևեն Իրեն, ճանաչեն Իրեն

և հասնեն իրենց աստվածային ներուժին:[8]

Երբ մենք փորձենք ծառայել այնպես, ինչպես Նա ծառայեց,[9] ինքներս մեզ ներելու և ուրիշներին բարձրացնելու հնարավորություններ կտրվեն մեզ: Այս հնարավորությունները հաճախ կարող են դժվարություններ առաջ բերել և փորձել Տիրոջը ավելի շատ նմանվելու մեր ցանկությունը, ում ամենամեծ ծառայությունը՝ Նրա անսահման Քավությունը, ամենադժվարն էր: Մատթեոսի 25-րդ գլխում մեզ հիշեցվում է, թե Տերն ինչ զգացողություններ ունի մեր հանդեպ, երբ Նրա նման, մենք զգայուն ենք դժվարությունների, փորձությունների և խնդիրների հանդեպ, որոնց հանդիպում են շատ շատերը, սակայն ինչը հաճախ աննկատ է մնում:

«Եկէք, ով իմ Հօր օրհնածները, ժառանգեցէք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած թագաւորութիւնը:

Որովհետեւ սովեցի, եւ դուք տուիք ինձ ուտել. Ծարաւեցի եւ խմեցրիք ինձ. օտար էի, եւ ինձ ձեզ մօտ առաք. . . .

Այն ժամանակ արդարները կ'պատասխանեն նորան եւ կ'ասեն. Տէ՛ր, ե՞րբ տեսանք քեզ սոված, եւ կերակրեցինք, կամ ծարաւ, եւ խմեցրինք:

Ե՞րբ տեսանք քեզ օտար, եւ մեզ մօտ առանք: . . .

Թագաւորն էլ կ'պատասխանէ եւ կ'ասէ նորանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որովհետեւ այս իմ փոքր եղբայրներից մէկին արիք, ինձ արիք»:[10]

Լինենք սպասավորող եղբայրներ կամ քույրեր, կամ երբպարզապես նկատում ենք կարիքի մեջ գտնվողին, մեզ խրախուսում են փնտրել Հոգու առաջնորդությունը, ապա գործել: Գուցե մենք խորհում ենք, թե ինչպես կարող ենք լավագույնս ծառայել, սակայն Տերը գիտի և Նրա Հոգու միջոցով մենք կառաջնորդվենք մեր ջանքերում: Ինչպես Նեփին, ով «առաջնորդվում էր Հոգու կողմից՝ նախապես չիմանալով բաները, որոնք պետք է աներ»,[11] մենք նույնպես կառաջնորդվենք Հոգով, մինչ ձգտում ենք գործիքներ դառնալ Տիրոջ ձեռքերում՝ օրինելով Նրա զավակներին: Երբ փնտրենք Հոգու առաջնորդությունը և վստահենք Տիրոջը, մենք կհայտնվենք այնպիսի պայմաններում և իրավիճակներում, որտեղ կարող ենք գործել և օրինել, այլ կերպ ասած՝ սպասավորել:

Գուցե լինեն ժամանակներ, երբ մենք տեսնենք մեր շուրջը գտնվող կարիքները, սակայն անհարմար զգանք արձագանքել, ենթադրելով, որ այն, ինչը մենք կարող ենք առաջարկել, բավարար չէ: Որպեսզի ծառայենք այնպես, ինչպես Նա ծառայեց,[12] պետք է սպասավորենք տալով այն ամենը, ինչ կարող ենք տալ և վստահել, որ Տերը կմեծարի մեր ջանքերը՝ օրինելով մեր «ճամփորդ ընկերներին այս մահկանացու ճամփորդության ընթացքում»:[13] Ոմանց համար դա կարող է լինել ժամանակ տրամադրելը և հմտություններ տալը, ուրիշների համար՝ բարի խոսքը կամ ուժեղ թիկունքը: Գուցե կարծենք, որ մեր ջանքերն անբավարար են, սակայն Նախագահ Դալլին Հ. Օուքսը կիսվել է կարևոր սկզբունքով, որը վերաբերում է «փոքր և հասարակ» գործերին: Նա ուսուցանել է, որ փոքր և հասարակ գործերը զորեղ են, քանի որ հրավիրում են «Սուրբ Հոգու ընկերակցությունը»,[14] ընկեր, ով օրհնում է թե՛ տվողին, թե՛ ստացողին:

Իմանալով, որ շուտով մահանալու է, իմ եղբայր Մայքը մի օր ասաց. «Հրաշք է, թե ինչպես կարող է ենթաստամոքսային գեղձի քաղցկեղը կենտրոնացնել մարդու ուշադրությունը ամենակարևոր բանի վրա»:[15] Շնորհակալություն հրաշալի տղամարդկանց և կանանց, ովքեր տեսան կարիքը, չդատապարտեցին և սպասավորեցին Փրկիչի նման. չափազանց ուշ չէր Մայքի համար: Ոմանք կարող են փոխվել շուտով, ոմանք էլ՝ գուցե վարագույրի մյուս կողմում: Այնուամենայնիվ, մենք պետք է հիշենք, որ երբեք ուշ չէ և ոչ ոք այնքան չի հեռացել արահետից, որ Հիսուս Քրիստոսի անսահման Քավությունը հասանելի չլինի նրանց, քանի որ այն անսահմանափակ է ժամանակի ու տարածության առումով:

Անցած հոկտեմբերի գերագույն համաժողովին Երեց Դեյլ Գ. Ռենլանդն ուսուցանեց, որ «անկախ նրանից, թե որքան ժամանակ ենք արահետից դուրս եղել . . . այն պահին, երբ մենք որոշում ենք փոխվել, Աստված օգնում է մեզ վերադառնալ»:[16] Փոխվելու այդ որոշումը, ինչևէ, հաճախ հրավերի արդյունք է, ինչպես օրինակ՝ «Կարծում եմ քեզ դուր կգա լսել ավետարանի ուղերձը»: Ճիշտ, ինչպես երբեք ուշ չէ Փրկիչի համար, երբեք չափից ավելի շուտ չէ հրավիրելը մեզ համար:

Զատիկի այս շրջանը ևս մեկ անգամ փառահեղ հնարավորություն է սևեռելու մեր ուշադրությունը Փրկիչ Հիսուս Քրիստոսի քավող մեծ զոհաբերության և այն ամենի վրա, որ Նա արեց մեզանից յուրաքանչյուրի համար նման մեծ գին վճարելով, գին, որի մասին խոսելիս Ինքն անձամբ հայտարարեց, որ այն «ստիպեց [Նրան], բոլորից մեծագույնին, ցավից դողալ»: «Այնուամենայնիվ,- հայտարարում է Նա,- ես ճաշակեցի ու ավարտեցի իմ նախապատրաստությունները մարդկանց զավակների համար»:[17]

Ես վկայում եմ, որ Նրա գործն ավարտելու շնորհիվ, միշտ էլ հույս կա: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Անձնական զրույց
2. Զրույց Զոն Հոլբրուքի հետ
3. Ռասսել Մ. Նելսոն, «Ներածական ելույթ», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 6:
4. Ռասսել Մ. Նելսոն, «Սպասավորել Աստծո զորությամբ և իշխանությամբ», *Լիահոնա,* մայիս 2018, 69:
5. Զրույց Զոն Հոլբրուքի հետ
6. «Սպասավորման սկզբունքները. Նպատակը, որը կփոխի մեր ծառայությունը», *Լիահոնա,* հունվար 2019, 8, տես նաև ministering.ChurchofJesusChrist.org:
7. Նիլ Լ. Անդերսեն, «Ավելի սուրբ մոտեցում սպասավորությանը» (Բրիգամ Յանգ Համալսարանի հոգևոր երեկո, ապրիլ 10, 2018), 3, speeches.byu.edu:
8. Տես «Նպատակը, որը կփոխի մեր ծառայությունը», 8–10:
9. Տես 3 Նեփի 17.9–10, 20–21:
10. Մատթեոս 25.34-35, 37-38, 40
11. 1 Նեփի 4.6
12. Տես 3 Նեփի 17.9–10, 20–21:
13. Թոմաս Ս. Մոնսոն, «Մեր՝ Ավետարանի էությունը», *Լիահոնա,* մայիս 2014, 91
14. Դալլին Հ. Օուքս, «Փոքր և հասարակ բաներ», *Լիահոնա,* մայիս 2018, 90:
15. Անձնական զրույց
16. Դեյլ Գ. Ռենլանդ, «Ընտրեք այս օրը», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 106:
17. Վարդապետություն և Ուխտեր 19.18-19



ՆԱԽԱԳԱՀ ՀԵՆՐԻ Բ. ԱՅՐԻՆԳ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Տուն, որտեղ Տիրոջ Հոգին է բնակվում

Դուք ձեր մեծագույն ուրախությունը կգտնեք, երբ ձեր տունը դարձնեք Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի մի վայր և մի վայր, որը լցված է սիրով:

Իմ սիրելի՛ եղբայրներ ու քույրեր, ես շնորհակալ եմ, որ ինձ հրավիրել են ելույթ ունենալ ձեզ համար Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու այս 189-րդ ամենամյա գերագույն համաժողովին: 1830 թվականի այս օրը Ջոզեֆը Սմիթը կազմավորեց Եկեղեցին Տիրոջ ղեկավարության ներքո: Դա տեղի ունեցավ Ուիթմերնեռի ընտանիքում, Ֆայեթ քաղաքի մոտ (Նյու Յորք): Այդ օրն այնտեղ ներկա էին վեց անդամներ և 50 այլ հետաքրքրվողներ:

Թեև ես չգիտեմ, թե ինչ է ասել Մարգարե Ջոզեֆը կամ ինչպիսի տեսք է նա ունեցել, երբ կանգնել է այդ փոքրիկ խմբի առաջ, ես գիտեմ, թե Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք ունեցող այդ մարդիկ ինչ են զգացել: Նրանք զգացել են Սուրբ Հոգին և զգացել են, որ գտնվում են սուրբ վայրում: Եվ անշուշտ, նրանք զգացել են, որ միասնական են:

Այդ հրաշալի զգացողությունն այն է, ինչ մենք բոլորս ուզում ենք ունենալ մեր տներում: Դա մի զգացողություն է, որն ինչպես Պողոսն է նկարագրել, գալիս է «հոգու խորհուրդից»:[1]

Այսօրվա իմ նպատակն է ուսուցանել այն, ինչ ես գիտեմ նրա մասին, թե ինչպես մենք կարող ենք ավելի հաճախակի արժանանալ այդ զգացողությանը և հրավիրել, որ այն երկար մնա մեր ընտանիքներում: Փորձից գիտեք, որ դրան հասնելը հեշտ չէ: Հակառակությունը, հպարտությունը և մեղքը խանգարում են դրան: Քրիստոսի մաքուր սերը պետք է տիրի մեր ընտանիքի անդամների սրտերում:

Ադամն ու Եվան, Լեքին ու Սարիան և մյուս ծնողները, որոնց մենք ճանաչում ենք սուրբ գրություններից, հասկացան, որ դա դժվար մարտահրավեր է: Այնուամենայնիվ, կան ընտանիքների և տների կայուն երջանկության քաջալերող օրինակներ, որոնք մխիթարում են մեզ: Եվ այդ օրինակները թույլ են տալիս մեզ սովորել, թե ինչպես է դա հնարավոր մեր և մեր ընտանիքների համար: Դուք հիշում եք 4-րդ Նեփիի այս պատմությունը.

«Եվ եղավ այնպես, որ չկար ոչ մի հակառակություն երկրում Աստծո սիրո շնորհիվ, որը բնակվում էր մարդկանց սրտերում:

Եվ չկային նախանձություններ, ոչ էլ պայքարներ, ոչ էլ խլրտումներ, ոչ էլ պոռնկություններ, ոչ էլ ստախոսություններ, ոչ էլ սպանություններ, ոչ էլ որևէ ձևի հեշտասիրություն. և, անկասկած, ավելի երջանիկ ժողովուրդ չէր կարող լինել այն բոլոր ժողովուրդների մեջ, որոնք ստեղծվել էին Աստծո ձեռքով:

Չկային ո՛չ ավազակներ, ո՛չ մարդասպաններ, ո՛չ էլ կային Լամանացիներ կամ որևէ այլ տեսակի -ացիներ. այլ նրանք մեկ էին՝ Քրիստոսի զավակները և Աստծո արքայության ժառանգները:

Եվ որքա՜ն օրհնված էին նրանք: Քանզի Տերն օրհնում էր նրանց բոլոր իրենց գործերում. այո, նրանք օրհնված էին ու բարգավաճում էին նույնիսկ մինչև հարյուր և տաս

տարիներ անցնելը, և առաջին սերունդը՝ Քրիստոսից սկսած, անց էր կացել. և ողջ երկրում չկար ոչ մի հակառակություն»:[2]

Ինչպես գիտեք, այդ երջանիկ ժամանակը հավետ չտևեց: 4-րդ Նեփիում գրված պատմությունը նկարագրում է մարդկանց մի լավ խմբի հոգևոր անկման վերջնական ախտանիշները: Դա մի օրինաչափություն է, որը դարերի ընթացքում դրսևորվել է ամբողջ ժողովուրդների, համայնքների և դժբախտաբար՝ ընտանիքների մեջ: Ուսումնասիրելով այդ օրինաչափությունը, մենք կարող ենք տեսնել, թե ինչպես կարող ենք պաշտպանել և նույնիսկ ավելացնել սիրո զգացմունքները մեր ընտանիքում:

Ահա անկման օրինաչափությունը, որը դրսևորվել է 200 տարի ավետարանի շնորհիվ կատարյալ խաղաղության մեջ ապրելուց հետո.

Հպարտությունն աստիճանաբար գլուխ բարձրացրեց:

Մարդիկ դադարեցին իրենց ունեցածով կիսվել ուրիշների հետ:

Նրանք սկսեցին իրենց բարձր կամ ցածր դասել ուրիշներից:

Նրանց հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ սկսեց նվազել:

Նրանք սկսեցին ատել:

Նրանք սկսեցին տարբեր տեսակի մեղքեր գործել:

Իմաստուն ծնողները բավականին զգույշ կլինեն, տեսնելով այդ ախտանիշները, երբ դրանք ի հայտ գան իրենց ընտանիքի անդամների մոտ: Նրանք, անշուշտ, կմտահոգվեն: Բայց նրանք կիմանան, որ հիմքում ընկած գործոնը սատանայի ազդեցությունն է, որը փորձում է լավ մարդկանց առաջնորդել մեղքի ճանապարհով և այդպիսով կորցնել Սուրբ Հոգու ազդեցությունը: Այսպիսով, իմաստուն ծնողները կհասկանան, որ կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի և իրենց համար՝ ավելի լիարժեք ընդունելու Տիրոջ մոտ գալու Նրա հրավերը:

Դուք կարող եք քիչ հաջողություն ունենալ երեխային ապաշխարելու կոչ անելիս, օրինակ՝ հպարտության մեջ ապաշխարելու: Դուք կարող եք փորձել համոզել երեխաներին

առատաձեռնորեն կիսվել իրենց ունեցածով: Դուք կարող եք հորդորել նրանց, որ դադարեն մտածել, որ ավելի լավն են, քան ընտանիքում մեկ ուրիշը: Բայց հետո մոտենում եք այն ախտանիշին, որն ավելի շուտ ես նկարագրեցի. «Նրանց հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ սկսեց նվազել»:

Գոյություն ունի բանալի, որը կառաջնորդի ձեր ընտանիքին աճել այն հոգևոր մակարդակին, որը ցանկանում եք նրանց համար, և որ դուք լինեք նրանց հետ այդ վայրում: Երբ օգնեք նրանց աճել այն հավատքի մեջ, որ Հիսուս Քրիստոսը նրանց սիրառատ Քավիչն է, նրանք ապաշխարելու ցանկություն կունենան: Երբ նրանք ապաշխարեն, խոնարհությունը կսկսի փոխարինել հպարտությանը: Երբ նրանք սկսեն զգալ այն, ինչ Տերն է տվել իրենց, նրանք կցանկանան ավելի շռայլորեն կիսվել: Հայտնի կամ ճանաչված լինելու համար մրցակցությունը կնվազի: Մերը դուրս կմղի ատելությունը: Եվ վերջապես, ինչպես տեղի ունեցավ Բենիամին թագավորի կողմից դարձի եկած մարդկանց հետ, բարիք գործելու ցանկությունը կամրացնի նրանց մեղք գործելու գայթակղության դեմ: Բենիամին թագավորի ժողովուրդը վկայեց, որ իրենք «այլևս հակում չունեին չարիք գործելու»:[3]

Այսպիսով, Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի ստեղծումը ձեր ընտանիքում և ձեր տանը հոգևոր անկման վերելք է առաջ բերում: Հավանաբար, այդ հավատքն ավելի շատ ապաշխարություն առաջ կբերի, քան հոգևոր անկման յուրաքանչյուր ախտանիշի դեմ քարոզը:

Դուք լավագույնս կառաջնորդեք օրինակի միջոցով: Ընտանիքի անդամներն ու ուրիշները պետք է տեսնեն, որ դուք աճում եք Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ ձեր հավատքում: Ձեզ մեծ աջակցություն է ցուցաբերվել վերջերս: Ծնողները Եկեղեցում օրհնվել են ներշնչված ուսումնական ծրագրով ընտանիքների և անհատների համար: Երբ օգտագործեք այն, դուք կամրապնդեք ձեր և ձեր երեխաների հավատքը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Աճել հավատքում

Փրկիչի հանդեպ ձեր հավատքը մեծացել է, երբ հետևել եք Նախագահ

Ռասսել Մ. Նելսոնի՝ Մորմոնի Գիրքը կրկին կարդալու առաջարկին: Դուք նշել եք հատվածներ և խոսքեր, որոնք վերաբերում են Փրկիչին: Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր հավատքն աճել է: Բայց նոր բույսի նման, Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը կթառամի, եթե չկարողանաք շարունակական ուժ գտնել և խորհել ու աղոթել՝ այն մեծացնելու համար:

Հավատքով աճելու ձեր օրինակին, գուցե, ձեր ընտանիքի ոչ բոլոր անդամները հետևեն ներկայումս: Սակայն մխիթարվեք Ալմա Կրտսերի փորձով: Ապաշխարության և ներման իր ցավալի կարիքի մեջ նա հիշեց Հիսուս Քրիստոսի հանդեպ իր հոր հավատքը: Ձեր երեխաները կարող են հիշել Փրկիչի հանդեպ ձեր հավատքը, երբ նրանք հուսահատորեն ապաշխարության կարիք ունենան: Ալման այդ պահի մասին այսպես է ասել.

«Եվ եղավ այնպես, որ երբ ես այսպես պրկված էի տանջանքից, մինչ ես տակնուվրա էի եղած իմ բազում մեղքերի հիշողությունից, ահա, ես հիշեցի նաև լսած լինելս՝ իմ հոր մարգարեանալը ժողովրդին, մի Հիսուս Քրիստոսի, մի Աստծո Որդու գալստյան վերաբերյալ՝ քավելու համար աշխարհի մեղքերը:

Արդ, երբ դատողությունս որսաց այս միտքը, ես գոչեցի իմ սրտում. Ո՜վ Հիսուս, դո՛ւ, Աստծո՛ Որդի, ողորմություն ունեցիր իմ հանդեպ, որ դառը մաղձի մեջ եմ, և օղակված եմ մահվան հավիտենական շղթաներով:

Եվ արդ, ահա, երբ ես մտածեցի այս, ես այլևս չկարողացա հիշել իմ ցավերը. այո, ես այլևս տակնուվրա չէի լինում իմ մեղքերի հիշողությունից»:[4]

Աղոթել սիրով

Հավատքով աճելու ձեր օրինակից բացի, ընտանեկան աղոթքը կարող է կարևոր դեր խաղալ տունը սրբավայր դարձնելու գործում: Սովորաբար մեկն ընտրվում է աղոթելու ընտանիքի համար: Երբ ծնկի իջած և աղոթքը լսող մարդկանց համար աղոթքը պարզորոշ ուղղվում է Աստծուն, ապա հավատն աճում է բոլորի մոտ: Նրանք կարող են զգալ Երկնային Հոր և Փրկիչի հանդեպ սիրո արտահայտությունները: Եվ երբ աղոթողը նշում է նրանց, ովքեր ծնկի իջած աղոթում են այդ շրջանում, և ովքեր կարիքի մեջ են, բոլորը կարող են սեր զգալ իրենց հանդեպ և ընտանիքի յուրաքանչյուր անդամի հանդեպ:

Նույնիսկ այն ժամանակ, երբ ընտանիքի անդամները չեն ապրում տանը, աղոթքը կարող է սիրո կապեր ստեղծել: Ընտանիքում ասված աղոթքը կարող է հասնել ողջ աշխարհով մեկ: Մեկից ավելի անգամներ հասկացել եմ, որ ընտանիքի որևէ անդամ միևնույն պահին հեռվում աղոթում է նույն բանի համար, ինչ ես եմ աղոթում: Ինձ համար այն հին ասացվածքը, որ «այն ընտանիքը, որ աղոթում է միասին, մնում է միասին», կարող է ձևափոխվել և դառնալ «այն ընտանիքը, որ աղոթում է միասին, միասին է մնում նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք միմյանցից հեռու են գտնվում»:

Ուսուցանել վաղ ապաշխարությունը

Քանի որ մեզանից ոչ մեկը կատարյալ չէ և զգացմունքները հեշտ է վիրավորել, ընտանիքները կարող են սրբազան սրբավայր դառնալ միայն, եթե մենք ապաշխարենք շուտ և անկեղծ: Ծնողները կարող են օրինակ ծառայել: Խիստ խոսքերից և չարակամ մտքերից կարելի է արագ և անկեղծ ապաշխարել: Հասարակ «ներողություն եմ խնդրում» բառերը կարող են վերքերը բուժել և երկու կողմին հրավիրել ներման ու սիրո:

Մարգարե Ջոզեֆ Սմիթը մեզ համար օրինակ էր, երբ նա բախվում էր սարսափելի հարձակումների, դավաճանների և նույնիսկ՝ ընտանիքում անհամաձայնությունների: Նա շուտ էր ներում, չնայած գիտեր, որ հարձակվողը կրկին կարող է հարձակվել: Նա ներում էր խնդրում և առատորեն ներում էր:[5]

Զարգացնել միսիոներական հոգի

Մոսիայի որդիները լցված էին ավետարանը բոլորին առաջարկելու

վճռականությամբ: Այդ ցանկությունն առաջացավ ապաշխարելու նրանց անձնական փորձառությունից: Նրանք չէին կարող համակերպվել այն մտքին, որ որևէ մարդ կարող է տառապել մեղքի ազդեցությունից, ինչպես իրենք են տառապել: Այսպիսով, նրանք տարիներ շարունակ հանդիպեցին մերժումների, դժվարությունների և վտանգների՝ առաջարկելով Հիսուս Քրիստոսի ավետարանն իրենց թշնամիներին: Այդ ընթացքում նրանք ուրախություն գտան այն մարդկանց համար, ովքեր ապաշխարեցին և Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով ստացան ներման ուրախությունը:

Մեր ընտանիքի անդամները կաճեն ավետարանով կիսվելու իրենց ցանկությամբ, երբ նրանք զգան ներման ուրախությունը: Դա կարող են զգալ նույնիսկ այն դեպքում, երբ նորոգում են ուխտերը՝ հաղորդությունը ճաշակելիս: Միսիոներական ոգին կաճի մեր տներում, երբ երեխաներն ու ծնողները հաղորդության ծառայության ընթացքում զգան ներման ուրախությունը: Իրենց ակնածանքի շնորհիվ, ծնողներն ու երեխաները կարող են օգնել իրար՝ զգալու այդ ուրախությունը: Այդ ուրախությունն այնքան հեռուն կարող է գնալ, որ մեր տները դառնան միսիոներների ուսուցման կենտրոններ: Գուցե բոլորը միսիայում չծառայեն, բայց բոլորը կզգան ավետարանով կիսվելու ցանկությունը, ինչն օգնել է նրանց ներում և խաղաղություն զգալ: Եվ արդյոք ներկայումս լիաժամկետ ծառայող են, թե՝ ոչ, բոլորը կարող են ուրախություն զգալ՝ առաջարկելով ավետարանն ուրիշներին:

Այցելել տաճար

Ե՛վ ծնողների, և՛ երեխաների համար տաճարը լավագույն հնարավորությունն է երկնային վայրերը ճանաչելու և սիրելու համար: Դա հատկապես ճշմարիտ է, երբ երեխաները փոքր են: Երեխաները ծնվում են Քրիստոսի լույսով: Նույնիսկ երեխան կարող է զգալ, որ տաճարը սուրբ է: Քանի որ ծնողները սիրում են իրենց փոքրիկ երեխաներին, տաճարը նրանց համար ներկայացնում է այն հույսը, որ նրանք կարող են օգնել իրենց երեխաներին հավիտյան սիրել իրենց հավերժական ընտանիքը:

Ձեզանից ոմանք տանն ունեն տաճարների լուսանկարներ: Քանի որ տաճարները կառուցվում են աշխարհով մեկ, հնարավոր է, որ շատ ծնողներ այցելեն տաճարի տարածք իրենց ընտանիքների հետ: Մի քանիսը կարող են նույնիսկ այցելել բաց դռներին, երբ տաճարները կառուցվեն: Ծնողները կարող են հարցնել երեխաներին, թե ինչ են զգացել տաճարին մոտ գտնվելու ժամանակ:

Յուրաքանչյուր ծնող կարող է վկայություն բերել, թե տաճարն ինչ է նշանակում իր համար: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը, ով սիրում էր տաճարները, հաճախ հետևում էր, թե ինչպես էր մայրը ուշադիր արդուկում տաճարային հագուստը:[6] Նա խոսում էր այն մասին, թե ինչպես էր երեխա ժամանակ ականատես լինում, երբ իր ընտանիքը տնից դուրս էր գալիս, որպեսզի տաճար այցելի:

Երբ նա Եկեղեցու նախագահ էր, յուրաքանչյուր շաբաթվա նույն օրը հաճախում էր տաճար: Նա միշտ տաճարային աշխատանք էր կատարում իր որևէ նախնու համար: Դա հիմնականում ծնողների շնորհիվ էր:

Իմ վկայությունը

Դուք ձեր մեծագույն ուրախությունը կգտնեք, երբ ձեր տունը դարձնեք Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի մի վայր և մի վայր, որը լցված է սիրով, Քրիստոսի մաքուր սիրով: Ավետարանի վերականգնումը սկսվեց մի համեստ հարցով, որը ծագել էր մի համեստ տանը, և այն կարող է շարունակվել յուրաքանչյուրիս տանը, երբ շարունակենք հաստատել և կիրառել ավետարանի սկզբունքներն այդ տանը: Երեխա ժամանակից դա եղել է իմ հույսը և իմ ամենամեծ ցանկությունը: Դուք բոլորդ ունեք այդպիսի տներ: Ձեզանից շատերը, Տիրոջ օգնությամբ, ստեղծել եք այդպիսի տներ:

Ոմանք ամբողջ սրտով փորձել են ունենալ այդ օրհնությունը, բայց դեռևս այն չի տրվել նրանց: Իմ խոստումը ձեզ այն է, ինչն օրերից մի օր ինձ է տվել Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներից մեկը: Ես ասել էի նրան, որ իմ որոշ հարազատների կատարած ընտրությունների պատճառով, ես կասկածում եմ, որ մենք կարող ենք միասին լինել գալիք աշխարհում: Որքանով որ կարող եմ հիշել, նա ասաց. «Դուք մտահոգվում եք սխալ խնդրի մասին: Դուք պարզապես ապրեք սելեստիալ արքայությանն արժանի կյանքով և ընտանեկան ձեռքբերումներն ավելի հրաշալի կլինեն, քան դուք կարող եք պատկերացնել»:

Ես հավատում եմ, որ նա մահկանացու կյանքում այդ ուրախ հույսը կառաջարկի այն մարդուն, ով հնարավոր ամեն բան արել է՝ ինքներս մեզ և մեր ընտանիքի անդամներին հավերժական կյանքի արժանացնելու համար: Ես գիտեմ, որ Երկնային Հոր ծրագիրը երջանկության ծրագիր է: Ես վկայում եմ, որ Նրա ծրագիրը հնարավոր է դարձնում մեզանից յուրաքանչյուրի համար, ով ամեն ինչ արել է, ընտանիքում հավերժ կնքվելու համար:

Ես գիտեմ, որ Ջոզեֆ Սմիթին վերականգնված քահանայության բանալիներն անխախտ կապով փոխանցվել են Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին: Այդ բանալիներն այսօր հնարավոր են դարձնում ընտանիքների կնքումը: Ես գիտեմ, որ Երկնային Հայրը կատարյալ սիրով սիրում է մեզ՝ Իր հոգևոր զավակներին: Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք ապաշխարել, մաքրվել և արժանի լինել մեր սիրելի ընտանիքներում հավիտյան ապրելու՝ մեր Երկնային Հոր և Նրա Սիրելի Որդու, Հիսուս Քրիստոսի հետ: Այդ մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հռովմայեցիս 8.6
2. 4 Նեփի 1.15-18
3. Մոսիա 5.2
4. Ալմա 36.17-19
5. Տես *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 391-98:
6. Տես *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն* (2014), 167:



Շաբաթ ցերեկային նիստ

ՆԱԽԱԳԱՀ ԴԱԼԼԻՆ Հ. ՕՈՒՔՍ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Եկեղեցու պաշտոնյաների հաստատում

Այժմ ես հաստատման կներկայացնեմ Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորներին, Տարածքային Յոթանասունականներին և օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահություններին:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Ռասսել Մերիոն Նելսոնին՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, Դալլին Հարիս Օուքսին՝ որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, և Հենրի Բենիոն Այրինգին՝ որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե այդպիսիք կան, կարող են արտահայտել դա:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Դալլին Հ. Օուքսին որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ և Մ. Ռասսել Բալլարդին՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի գործող Նախագահ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են քվեարկել:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին՝ Մ. Ռասսել Բալլարդին, Ջեֆրի Ռ. Հոլլանդին, Դիտեր Ֆ. Ուխդորֆին, Դեյվիդ Ա. Բեդնարին, Քվենթին Լ. Քուքին, Դ. Թոդ Քրիստոֆերսոնին, Նիլ Լ. Անդերսենին, Ռոնալդ Ա. Ռասբենդին, Գարի Է. Սթիվենսոնին, Դեյլ Գ. Ռենլանդին, Գերիթ Վ. Գոնզին և Ուլիսես Սոարեսին:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության Խորհրդականները և Տասներկու Առաքյալները՝ որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվերակել:

Դեմ լինելու դեպքում, եթե այդպիսիք կան, արտահայտեք նույն կերպ:

Առաջարկվում են ազատման Տարածքային Յոթանասունականների իրենց ծառայությունից. Երեցներ Վիկտորինո Ա. Բաբիդա, Լ. Թոդ Բաջ, Պիտեր Մ. Ջոնսոն, Ջոն Ա. Մակքյուն, Մարկ Լ. Փեյս, Ջեյմս Ռ. Ռասբենդ և Բենիամին Մ. Զ. Թայ:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և իրենց շնորհակալությունը հայտնել այս եղբայրներին իրենց նվիրված ծառայության համար, խնդրում ենք քվեարկել ձեռքի բարձրացմամբ:

Առաջարկվում է՝ խորին երախտագիտությամբ ազատել Եղբայրներ Թեդ Ռ. Քալիստերին, Դեվին Գ. Դյուրանին և Բրայըն Ք. Էշթոնին որպես Կիրակնօրյա Դպրոցի գերագույն գերագույն նախագահություն:

Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են միանալ մեզ, արտահայտելով իրենց երախտագիտությունը այս եղբայրներին իրենց գերազանց ծառայության համար, խնդրում ենք արտահայտել դա:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք որպես Տարածքային Յոթանասունականներ. Ռուբեն Վ. Ալիո, Խորխե Մ. Ալվարադո, Հանս Թ. Բում, Լ.Թոդ Բաղջ, Ռիկարդո Պ. Խիմենես, Պիտեր Մ. Ջոնսոն, Ջոն Ա. Մակքյուն, Ջեմս Ռ. Ռասբենդ, Բենիամին Մ. Զ. Թայ և Ալան Ռ. Ռոքեր:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվերակել:

Ովքեր դեմ են, նույն ձևով:

Առաջարկվում են հաստատման որպես Տարածքային Յոթանասունականներ. Սոլոմոն Լ. Ալիչե, Գիլյերմո Ա. Ալվարեզ, Դարեն Ռ. Բարնի, Հուլիոս Ֆ. Բալիերմո, Ջեյմս Հ. Բեքեր, Քևին Գ. Բրաուն, Մարկ Ս. Բրայս, Ա. Մարկոս Կաբբալ, Դանսթան Գ. Բ. Թ. Չաղամբուկա, Ալան Ք. Կ. Չոնգ, Քրիստիան Ք. Չիգբունդու, Փոլ Ն. Քլայթոն, Կարիմ Դե Վալ, Հիռոյուկի Դոմոն, Մերնա Պ. Դոնատո, Մարկ Դ. Էդի, Զախարի Ֆ. Էվանս, Հենրի Ջ. Այրինգ, Սապել Ֆաալոգո կրտ., Դեյվիդ Լ. Ֆրիշկնեխտ, Ջոն Ջ. Գալեզո, Եֆրեյն Ռ. Գարսիա, Ռոբերտ Գորդոն, Մարկ Ա. Գոդֆրեդսոն, Թոմաս աանի, Մայքլ Ջ. Հեսս, Գլեն Մ. Հոլմս, Ռիչարդ Ս. Հատչինս, Տիտո Իբանյես, Ակինորի Իտո, Ջերեմի Ռ. Ջազի, Կելլի Ռ. Ջոնսոն, Քրիստոֆեր Հյունսու Կիմ, Հ. Մորոնի Քլեյն, Ինոկ Ֆ. Կուպու, Ստեֆեն Չի Կոն Լաի, Վիկտոր Դ. Լատարո, Տարմո Լեպ, Իտցկոատլ Լոզանո, Քևին Ջ Լիթգո, Էդգար Պ. Մոնտե, Ս. Եֆրաիմ Մսանե, Լուիզ Ք. Դ. Քուեյրոզ, Իֆանոմեզանա Ռասոլոնդրայբե, Էդուարդո Ռեսեկ, Թոմաս Գ Ռոման, Ռամոն Ի. Սարմիենտո, Ջոնաթան Ս. Շմիթ, Վայ Միկահեմա, Դենելսոն Միլվա, Լուիս Սպինա, Կառլոս Գ. Սուֆերտ, Վոյ Ռ. Տաեօլայի, Մերխիո Ռ. Վարգաս և Մարկուս Զառսե:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվերակել:

Ովքեր դեմ են, նույնպես:

Առաջարկվում է, որ մենք ծառայության հաստատենք Մարկ Լ. Փեյսին, որպես Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահ, Միլթոն դա Ռոչա Կամարգոյին՝ որպես առաջին խորհրդական, և Ժան Էրիկ Նյումանին՝ որպես երկրորդ խորհրդական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են ևս քվեարկել:

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանավորները, Տարածքային Յոթանասունականները և գերագույն օժանդակ կազմակերպությունների նախագահությունները ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվերակել:

Ովքեր դեմ են, նույնպես:

Նախագահ Նելսոն, քվեարկությունը տեղի ունեցավ: Մենք հրավիրում ենք բոլոր նրանց, ովքեր դեմ են քվեարկել այդ առաջարկներից որևէ մեկին, կապ հաստատել իրենց ցցերի նախագահների հետ:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, շնորհակալություն Եկեղեցու ղեկավարների համար ձեր շարունակական հավատքի և աղոթքների համար:

Այժմ նոր կանչված Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունականներին և Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահությանը հրավիրում ենք զբաղեցնել իրենց տեղերը բեմահարթակի վրա: ■

Եկեղեցու աուդիտի բաժնի հաշվետվություն, 2018

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՔԵՎԻՆ Ռ. ՅԵՐԳԵՆՍԵՆԸ
Եկեղեցու աուդիտի բաժնի գլխավոր տնօրեն

Ուղղված է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությանը

Հարգելի՛ Եղբայրներ, ինչպես ասվում է Վարդապետություն և Ուխտերի 120-րդ բաժնում տրված հայտնության մեջ, Եկեղեցու ֆոնդերի ծախսերը հաստատում է Տասանորդների տնօրինման խորհուրդը, որը կազմված է Առաջին Նախագահությունից, Տասներկու Առաքյալների Քվորումից և Նախագահող Եպիսկոպոսությունից: Եկեղեցու միավորները ծախսում են ֆոնդերը՝ ըստ հաստատված բյուջեների, քաղաքականությունների և ընթացակարգերի:

Եկեղեցու աուդիտի բաժինը, որը բաղկացած է հավաստագրված մասնագետներից և գործում է Եկեղեցու մյուս բաժիններից անկախ, պատասխանատու է աուդիտների անցկացման համար, որպեսզի խելամիտ վերահսկողություն հաստատվի ստացվող նվիրատվությունների, կատարվող ծախսերի և Եկեղեցու ակտիվները պահպանելու ուղղությամբ:

Հիմնվելով կատարված աուդիտի արդյունքների վրա, Եկեղեցու աուդիտի բաժինն այն կարծիքին է, որ 2018 թվականին բոլոր նյութական հարցերին առնչվող ստացված նվիրատվությունները, կատարված ծախսերը և Եկեղեցու ակտիվները հաշվառվել և տնօրինվել են համապատասխան Եկեղեցու հաստատված բյուջեների, քաղաքականությունների և հաշվապահական ընթացակարգերի: Եկեղեցին հետևում է այն գործելաոճին, որն ուսուցանում է իր անդամներին, այն է՝ ապրել բյուջեի սահմաններում, խուսափել պարտքերից և խնայել կարիքի ժամանակների համար:

Հարգանքով ներկայացրեց՝
Եկեղեցու Աուդիտի Բաժանմունք
Քևին Ռ. Յերգենսեն
Գլխավոր տնօրեն ■

ԵՐԵՑ Մ. ՌԱՍՍԵԼ ԲԱԼԼԱՐԴ
Տասներկու Առաքյալների Քվորումի Գործող Նախագահ

Հիսուս Քրիստոսի ճշմարիտ, մաքուր և պարզ ավետարանը

Աստծուն և մեր մերձավորին սիրելը հանդիսանում է սպասավորության, տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ուսումնասիրության, Հանգստության օրվա հոգևոր երկրպագության և փրկության աշխատանքի վարդապետական հիմքը:

Իմ թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, ինձ համար դժվար է հավատալ, որ 71 տարի առաջ, 1948թ. ես միսիոներ էի Անգլիայում, իսկ 44 տարի առաջ ես և Բարբարան մեր ընտանիքով տեղափոխվեցինք Կանադա, երբ ես Կանադա Տորոնտո Միսիայի նախագահն էի: 1976թ. ապրիլին, երբ ծառայում էի այնտեղ, ես կանչվեցի Յոթանասունի Առաջին Քվորում, իսկ 1985թ.-ին անսպասելիորեն կանչվեցի Տասներկու Առաքյալների Քվորում: Ի տարբերություն իմ նախորդ կոչումների, որոնցից ես հետագայում հետ էի կանչվում, Տասներկուսի իմ կոչումից հետ կանչվելը լավագույն տարբերակը չէ, սակայն ես աղոթում եմ, որ այդ օրը գա միայն այն ժամանակ, երբ ես ավարտեմ այն բոլոր գործերը, որոնք Տերը կանչել է ինձ կատարելու:

Խորհելով որպես Բարձրագույն Իշխանավոր իմ վերջին 43 տարիների ծառայության մասին, և այն հրաշալի հնարավորության մասին, որը ես ունեցել եմ՝ ծառայելով Երկնային Հոր զավակներին, ես լիովին հասկանում եմ, որ Նա ցանկանում է, որ Իր բոլոր զավակները գտնեն խաղաղություն, ուրախություն և երջանկություն իրենց կյանքում:

Լեքի մարգարեն ուսուցանել է. «Մարդիկ [և կանայք] կան, որպեսզի ունենան ուրախություն»:[1] Կան շատ պատճառներ, թե մենք ինչու չենք կարող այս կյանքում ունենալ խաղաղություն, ուրախություն և երջանկություն: Դրանց թվում են՝ աղքատությունը, պատերազմը, բնական աղետները և անկանխատեսելի խնդիրները աշխատանքում, առողջությունը և ընտանեկան հարաբերությունները:

Չնայած մենք չենք կարող կառավարել այդ արտաքին ուժերից շատերը, որոնք ազդում են մեր երկրային կյանքի վրա, մինչ մենք ձգտում ենք դառնալ Տեր Հիսուս Քրիստոսի հավատարիմ աշակերտներ, սակայն մենք կարող ենք գտնել խաղաղություն, ուրախություն և երջանկություն՝ չնայած աշխարհիկ հոգսերին, որոնք շրջապատում են մեզ:

Իմ զավակներից մեկը մի անգամ ասաց. «Հայրիկ, ես ուզում եմ իմանալ, արդյո՞ք երբևէ կկարողանամ հասնել դրան»: Ես պատասխանեցի. «Երկնային Հայրը մեզ խնդրում է ամեն օր անել մեզանից կախված հնարավոր ամեն բան»: Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ամեն օր արեք ձեզանից կախված հնարավոր ամեն բան, և դուք շուտով կհասկանաք, որ ձեր Երկնային Հայրը ճանաչում ու սիրում է ձեզ: Եվ երբ դուք իրոք հասկանաք դա, ձեր կյանքը իսկական իմաստ ու նպատակ կստանա, և դուք կլցվեք ուրախությամբ ու խաղաղությամբ:

Աշխարհի լույսը՝ Փրկիչը, ասել է. «Ամեն ինձ հավատացողը խավարի մեջ չի մնա»:[2]

«Հիսուս Քրիստոսն այն անունն է, որը տրված է Հորից, և ուրիշ անուն չկա տրված, որով մարդ կարողանա փրկվել.

«Ուստի, բոլոր տղամարդիկ [և կանայք] պետք է իրենց վրա վերցնեն անունը, որը տրված է Հորից»:[3]

Սուրբ գրություններն ուսուցանում են մեզ, որ սատանան ցանկանում է առաջնորդել մարդկանց դեպի խավարը: Նա ամեն ջանք գործադրում է, որպեսզի հանգցնի Հիսուս Քրիստոսի լույսը և հերքի Նրա ավետարանի ճշմարտությունը: Ինչպես Լեքին է ուսուցանել իր զավակներին, սատանան «ջանում է, որ բոլոր մարդիկ լինեն թշվառ, ինչպես ինքը»:[4] Եթե Երկնային Հոր «գործն ու . . . փառքն» է՝ «իրականացնել [տղամարդկանց ու կանանց],[5] անմահությունն ու հավերժական կյանքը», ապա Լյուցիֆերի «գործն» է՝ Աստծո զավակներին հասցնել անվերջ թշվառության ու վայի մի վիճակի: Մեղքն ու օրինազանցությունը թուլացնում են Քրիստոսի լույսը մեր կյանքում: Ահա ինչու մեր նպատակն է լիովին վայելել Քրիստոսի լույսը, որը բերում է խաղաղություն, ուրախություն և երջանկություն:

Վերջին մեկ ու կես տարվա ընթացքում Տերը ոգեշնչել է Իր մարգարեին ու Առաքյալներին իրականացնել մի շարք հրաշալի փոփոխություններ: Սակայն ես անհանգստանում եմ, որ այդ փոփոխությունների հոգևոր նպատակները կարող են կորսվել ոգևորության մեջ, որն առաջացել է դրանց արդյունքում:

Ջոզեֆ Ֆ. Սմիթն ասել է. «Հիսուս Քրիստոսի ճշմարիտ, մաքուր և պարզ ավետարանը վերականգնվել է: Մենք պատասխանատու ենք, որ այն պահպանվի երկրի վրա»:[6] Նա ավելացրել է, որ ճշմարիտ, մաքուր և պարզ ավետարանը «Քրիստոսի փրկող վարդապետությունն է»:[7]

Հավատո Հանգանակներում Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ «Քրիստոսի Քավության շնորհիվ ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ հնազանդվելով Ավետարանի օրենքներին և արարողություններին»:[8]

Ավետարանի առաջին սկզբունքներն են՝ հավատը առ Հիսուս

Քրիստոսը, ապաշխարությունը, մկրտությունը, Սուրբ Հոգու պարգևը և մինչև վերջ համբերելը: Նրա եղբայր Հայրումն ուսուցանել է. «Քարոզեք դրանք կրկին ու կրկին. դուք կհասկանաք, որ օրեցօր նոր գաղափարներ և դրանց վերաբերյալ լրացուցիչ լույս կբացահայտվեն ձեզ: Դուք կարող եք ընդլայնել դրանք, . . . որպեսզի հստակ հասկանաք դրանք: Այդ ժամանակ դուք կկարողանաք դարձնել դրանք ավելի պարզ ըմբռնելի նրանց համար, ում ուսուցանում եք»:[9]

Եկեղեցու հոգևոր նպատակները տեսնելու լավագույն ուղին մեզ համար Քրիստոսի ճշմարիտ, մաքուր և պարզ ուսմունքներով ապրելն է և Փրկիչի երկու մեծ պատվիրանները կիրառելը. «Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը եւ քո բոլոր մտքովը: . . . Սիրիր քո մերձավորին քո անձի պես»:[10]

Այդ երկու մեծ պատվիրաններին հնազանդվելը տալիս է ավելի մեծ խաղաղություն և ուրախություն զգալու ուղի: Եթե մենք սիրենք ու ծառայենք Աստծուն և մեր մերձավորներին, մենք բնականորեն կզգանք ավելի մեծ ուրախություն, որն այլ եղանակով չէինք ստանա:

Աստծուն և մեր մերձավորին սիրելը հանդիսանում է սպասավորության, տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ուսումնասիրության, Հանգստության օրվա հոգևոր երկրպագություն և փրկության աշխատանքի վարդապետական հիմքը, որը կատարվում է վարագույրի երկու կողմերում և աջակցվում է Սփոփող Միություններում ու երեցների քվորումներում: Այս ամենը հիմնված է երկու աստվածային պատվիրանների վրա՝ սիրել Աստծուն և սիրել մեր մերձավորներին: Կա՞ ավելի հիմնարար, ավելի խորը, ավելի պարզ բան, քան սա է:

Ճշմարիտ, մաքուր և պարզ ավետարանի ծրագրով ապրելը մեզ ավելի շատ ժամանակ կտա՝ այցելելու այրիներին, որբերին, միայնակներին, հիվանդներին և աղքատներին: Մենք կգտնենք խաղաղություն, ուրախություն և երջանկություն կյանքում, երբ ծառայենք Տիրոջը և մեր մերձավորներին:

Հանգստության օրվա փոփոխությունները, որոնք շեշտադրում են տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ուսումնասիրությունը և ավետարանի ուսումնասիրությունը, հնարավորություն են տալիս մեր տներում նորոգել մեր հոգին և մեր նվիրվածությունը Աստծուն: Ի՞նչը թերևս կարող է լինել ավելի պարզ, հիմնարար և խորը: Եղբայրնե՛ր և քույրե՛ր, արդյոք հասկանու՞մ եք, որ ավետարանի ուսումնասիրությունն ու ուսուցումը մեր ընտանիքներում կարևոր եղանակ է մեր կյանքում ուրախություն ու երջանկություն գտնելու համար:

Խոսելով Հանգստության օրվա մասին, Փրկիչն ասաց. «Քանզի, ճշմարիտ, դա է քեզ նշանակված օրը, որ քո աշխատանքներից հանգստանաս և քո տուրքը մատուցես

Բարձրյալին»:[11] Նա ավելացրեց. «Որ քո ուրախությունը լինի լիակատար . . . ցնծության և աղոթքի [միջոցով], . . . դու [պետք է] անես այս բաները գոհաբանությամբ, ուրախ սրտերով ու դեմքերով . . . [և] ուրախ սրտով և զվարթ դեմքով»:[12]

Խնդրում եմ մտածեք այս հայտնության որոշ կարևոր բառերի շուրջ. ուրախություն, ցնծություն, գոհաբանություն, ուրախ սրտեր, ուրախ սիրտ և զվարթ դեմք: Ինձ թվում է, որ Հանգստության օրը պահելը պետք է ժպիտ բերի մեր դեմքերին:

Երբ մենք սպասավորում ենք ավելի լավ և ավելի սուրբ ձևով, խնդրում եմ մտածեք, թե որքան կարևոր է, որ մենք ողջունենք բոլոր նրանց, ովքեր գալիս են մեր Եկեղեցու ժողովներին, հատկապես՝ նոր անդամներին և այցելուներին: Մենք պետք է հաճույքով երգենք օրհներգերը և բաց սրտով ու մտքով ուշադիր լսենք հաղորդության աղոթքի խոսքերը:

Հավատքի վկայությունները ծոմի և վկայության ժողովներին ղեկավարվում են եպիսկոպոսության անդամի կողմից, ով կիսվում է կարճ վկայությամբ, որը կենտրոնացած է երջանկության ծրագրի և Քրիստոսի ճշմարիտ, մաքուր ու պարզ ավետարանի վրա: Մնացած բոլորը պետք է հետևեն այդ օրինակին: Մենք պետք է հիշենք, որ կան ավելի պատշաճ վայրեր պատմություններ պատմելու կամ ճամփորդական արկածներով կիսվելու համար: Երբ մեր վկայությունները կենտրոնացնենք Քրիստոսի ավետարանի վրա, և երբ միմյանց հետ կիսվենք մեր վկայություններով, Նա մեզ կտա հոգևոր նորոգում:

Արդյունավետ սպասավորությունը լավագույնս հասկացվում է, երբ մտածում ենք Աստծուն և մեր մերձավորին սիրելու մասին: Պարզ ասած՝ մենք սպասավորում ենք, քանի որ սիրում ենք մեր Երկնային Հորը և Նրա զավակներին: Ես հավատում եմ, որ մեր սպասավորման ջանքերը ավելի հաջող կլինեն, եթե մենք սպասավորենք պարզ եղանակներով: Մեծագույն ուրախությունը գալիս է կյանքի պարզ բաներից, ուստի մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի չմտածենք, թե ավելի շատ բաներ պետք է ավելացվեն ցանկացած փոփոխությանը, որը մենք ընդունել ենք, որպեսզի կառուցենք հավատ և ամուր վկայություններ Աստծո զավակների սրտերում:

Մենք չպիտի բարդացնենք իրերի դրությունը լրացուցիչ ժողովներով, ակնկալիքներով կամ պահանջներով: Մի բարդացրեք: Հենց այդ պարզության մեջ դուք կգտնեք խաղաղությունը, ուրախությունն ու երջանկությունը, որի մասին ես խոսում էի:

Երկար տարիներ Եկեղեցու ղեկավարության նպատակները, ինչպես նշված է Զեռնարկ Բ-ում, պարզ ու հստակ գործողություններ են, որոնցից ես մեջբերում եմ.

«Ղեկավարները պետք է խրախուսեն յուրաքանչյուր անդամի ստանալ քահանայության բոլոր կարևոր ծեսերը, պահել դրանց հետ կապված ուխտերը և արժանի դառնալ վեհացման և հավերժական կյանքի: . . .

Չափահասներ. Խրախուսել յուրաքանչյուր չափահասի լինել արժանի՝ ստանալու տաճարային արարողությունները: Ուսուցանել բոլոր չափահասներին գտնել իրենց նախնիներին և կատարել նրանց համար տաճարային փոխարինող արարողությունները:

Երիտասարդներ. Օգնել յուրաքանչյուր երիտասարդ տղամարդու ստանալ Մելքիսեդեկյան Քահանայություն, ստանալ տաճարային արարողությունները և արժանի լինել ծառայելու լիաժամկետ միսիայում: Օգնել յուրաքանչյուր երիտասարդ կնոջ պատրաստվել արժանի լինելու կապել ու պահել սրբազան ուխտերը և ստանալ տաճարային արարողությունները: Ամրացնել երիտասարդներին իմաստալից միջոցառումներին մասնակցելու միջոցով:

Բոլոր անդամներ. Օգնել քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարներին, ծխի խորհուրդներին, ծխի և լիաժամկետ միսիոներներին և անդամներին համատեղ աշխատել, հավասարակշռված ջանքեր գործադրելով՝ փրկելու անհատներին, ամրացնելու ընտանիքները և Եկեղեցու միավորները, ավելացնելու քահանայության ակտիվությունը և հավաքելու Իսրայելը՝ դարձի բերելու, պահպանելու և ակտիվացնելու միջոցով: Ուսուցանել անդամներին ապահովել իրենց և իրենց ընտանիքները և օգնել աղքատներին ու կարիքավորներին Տիրոջ ձևով»:[13]

Եկեղեցու իմ ծառայությունն օրհնել է ինձ բազմաթիվ ուշագրավ ու հատուկ հոգևոր փորձառություններով: Ես վկայում եմ, որ Տերը ղեկավարում

է Իր Եկեղեցին Իր նպատակներն իրականացնելու համար: Ես իմ ունակություններից վեր աստվածային առաջնորդություն եմ ստացել: Ինձ համար ապրող ավետարանի ուրախությունը կենտրոնացած է եղել ճշմարիտ, մաքուր և պարզ վարդապետության և Հիսուս Քրիստոսի ավետարանի վրա:

Ես ծառայել եմ վեց մարգարեների և Եկեղեցու Նախագահների բանալիների ու ղեկավարության ներքո՝ Սպենսեր Վ. Քիմբլից մինչև Ռասսել Մ. Նելսոնը: Ես վկայում եմ, որ նրանցից յուրաքանչյուրը եղել է և կա՝ Աստծո ընտրյալ մարգարե: Նրանք մեզ ուսուցանել են կարևոր սկզբունքներ Եկեղեցու և Քրիստոսի ավետարանի և վարդապետության մասին: Նախագահ Նելսոնը արագ տեմպերով առաջ է տանում Տիրոջ աշխատանքը: Ես ասում եմ «արագ», քանի որ նա Եղբայրներից միակն է, ով տարիքով մեծ է ինձնից, և ես դժվարանում եմ հասնել նրա հետևից: Ես վկայում եմ, որ նա կրում է քահանայության բանալիները և Աստծո մարգարեի թիկնոցը: Նախագահ Նելսոնն ուսուցանում է Հիսուս Քրիստոսի ճշմարիտ, մաքուր և պարզ ավետարանը: Ես բերում եմ իմ վկայությունը, որ Հիսուսը Քրիստոսն է, և սա Նրա Եկեղեցին է, որի մասին ես խոնարհաբար վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով՝ ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 2 Նեփի 2.25
2. Հովհաննես 12.46
3. Վարդապետություն և Ուխտեր 18.23–24
4. 2 Նեփի 2.27
5. Մովսես 1.39
6. Joseph F. Smith, “Principles, Not Popularity,” *Improvement Era,* July 1906, 732.
7. Joseph F. Smith, “Principles, Not Popularity,” 732.
8. Հավատո Հանգանակ 1.3
9. Hyrum Smith, in “What Is My Purpose as a Missionary?” *«Քարոզիր Իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ձեռնարկ»* (2019), 6:
10. Տես՝ Վարդապետություն և Ուխտեր 59.5–6, տես նաև՝ Երկրորդ Օրինաց 6.5, Ղևտացոց 19.18, Մատթեոս 22.36–40:
11. Վարդապետություն և Ուխտեր 59.10
12. Վարդապետություն և Ուխտեր 59.13-15
13. *Ձեռնարկ Բ. Սպասավորել Եկեղեցում* (2010), 3.4:

ԵՐԵՑ ՄԱԹԻԱՍ ՀԵԼԴ
Յոթանասունից

Գիտելիք փնտրել Հոգով

Մենք պետք է սովորենք բացահայտել ճշմարտությունը ոչ միայն մեր բանականության միջոցով, այլ նաև Հոգու մեղմ ձայնի:

Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, Տերը շարունակ ասել է մեզ. «Ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով»:[1] Մենք կարող ենք լույս և հասկացողություն ստանալ ոչ միայն մեր մտքում տրամաբանական դատողություններ կատարելով, այլ նաև Սուրբ Հոգու առաջնորդության և ոգեշնչման միջոցով:

Գիտելիքի այս լրացուցիչ աղբյուրը միշտ չէ, որ եղել է իմ կյանքի մի մասը:

Իմ թանկագին կինը՝ Իռենը, և ես միացել ենք Եկեղեցուն 31 տարի առաջ, երբ նոր էինք ամուսնացել: Երկուսս էլ մեծացել ենք Կոլումբիայում, սակայն մեր ամուսնությունից մի քանի ամիս անց իմ գործի բերումով մենք տեղափոխվեցինք Գերմանիա: Մենք շատ երիտասարդ էինք և մեծ հույսեր ու սպասելիքներ ունեինք. մեզ համար առանձնակի ոգևորիչ և երջանիկ ժամանակներ էին:

Մինչ ես կենտրոնացած էի իմ կարիերայի վրա, Իռենը զգում էր, որ մենք ստանալու էինք որոշակի երկնային ուղերձ, առանց իմանալու, թե ինչպես կամ երբ: Ուստի, նա սկսեց բացել մեր տան դռներն ամեն տեսակի վաճառականների առաջ, ովքեր որևէ առաջարկ ունեին՝ հանրագիտարաններ, փոշեկուլներ, խոհարարական գրքեր, խոհանոցային պարագաներ և այլն, միշտ սպասելով այդ յուրահատուկ ուղերձին:

Մի երեկո նա ասաց ինձ, որ մուգ կոստյումներով երկու երիտասարդ տղա թակել էին մեր դուռը, և նա շատ պարզ և առանձնակի հուշում էր ունեցել նրանց ներս հրավիրելու: Նրանք ասել էին, որ ցանկանում են խոսել նրա հետ Աստծո մասին, սակայն կրկին կվերադառնան, երբ ես ևս տանը կլինեմ: Կարո՞ղ էր սա լինել սպասված ուղերձը:

Նրանք սկսեցին այցելել մեզ, և նրանց առաջնորդությամբ մենք կարդացինք սուրբ գրությունները և սկսեցինք հասկանալ Հիսուս Քրիստոսի հույժ կարևորությունը՝ որպես մեր Փրկիչ և Քավիչ: Շուտով մենք ափսոսացինք, որ մկրտվել էինք մանուկ հասակում, և գիտակցաբար չէինք կապել ուխտը: Ինչևէ, կրկին մկրտվելը նաև նշանակելու էր դառնալ այս նոր Եկեղեցու անդամները, ուստի, մենք նախ պետք է ամեն բան հասկանայինք կապված դրա հետ:

Սակայն ինչպե՞ս մենք կարող էինք իմանալ, թե արդյոք Մորմոնի Գրքի, Ջոզեֆ Սմիթի և փրկության ծրագրի վերաբերյալ միսիոներների պատմածն իսկապես ամբողջությամբ ճիշտ էր: Տիրոջ խոսքերից մենք հասկացանք, որ մենք կարող

էինք «ճանաչել նրանց իրենց պտուղներից»:[2] Ուստի, շատ համակարգված կերպով մենք սկսեցինք քննել Եկեղեցին, փնտրելով այդ պտուղները և գործի դնելով մեր ողջ բանականությունը: Ի՞նչ տեսանք մենք: Ահա, թե ինչ տեսանք մենք.

- Ընկերասեր և ուրախ մարդիկ, հրաշալի ընտանիքներ, ովքեր հասկանում են, որ մենք այս կյանքում պետք է երջանկություն գտնենք, այլ ոչ թե լոկ տառապանք ու թշվառություն:
- Եկեղեցի, որը չունի վճարվող աշխատողներ, այլ որտեղ յուրաքանչյուր անդամ ստանձնում է հանձնարարություններ և պարտականություններ:
- Եկեղեցի, որտեղ Հիսուս Քրիստոսը և ընտանիքները ամեն բանի կենտրոնում են, որտեղ մարդիկ ամիսը մեկ անգամ ծոմ են պահում և նվիրատվություններ կատարում աղքատներին ու կարիքավորներին օգնելու համար, որտեղ քաջալերվում են առողջ սովորությունները՝ սովորեցնելով մեզ խուսափել վնասակար նյութերից:

Բացի դրանից.

- Մեզ դուր եկան շեշտադրումները կապված անձնական զարգացման, կրթության, ջանասեր աշխատանքի և ինքնապահովման հետ:
- Մենք իմացանք մարդասիրական ուշագրավ ծրագրի մասին:
- Եվ մենք տպավորված էինք գերագույն համաժողովներով, որտեղ հնչում էր հրաշալի երաժշտություն և կիսվում էին հոգևոր խորիմաստ սկզբունքներով:

Այս ամենը տեսնելով, մենք չէինք կարող որևէ սխալ գտնել Եկեղեցում: Հակառակը, մեզ շատ դուր եկավ ամեն բան, որ տեսանք: Այնուամենայնիվ, մենք դեռևս չէինք կարողանում մկրտվելու որոշում կայացնել, քանի որ ուզում էինք ամեն բան կանխավ իմանալ:

Սակայն, նույնիսկ մեր անորոշության մեջ, Տերը համբերությամբ նախապատրաստում էր մեզ, Նա հղկում էր մեզ և օգնում բացահայտել, որ մենք պետք է սովորենք բացահայտել ճշմարտությունը ոչ միայն մեր բանականության միջոցով, այլ նաև Հոգու մեղմ ձայնի, որը խոսում է հատկապես մեր սրտի հետ:

Այդ ձայնը և դրանից բխող զգացումն այցելեց մեզ մի երեկո ավետարանն ուսումնասիրելուց 10 ամիս անց, երբ Մոսիա 18 գլխում կարդացինք. «Քանի որ դուք փափագում եք . . . կրելու մեկդ մյուսի բեռը, . . .և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության, . . . եթե սա է ձեր սրտի իղձը, ի՞նչ ունեք դուք դեմ Տիրոջ անունով մկրտվելուն»:[3]

Մորմոնի Գրքի այդ հատվածը թափանցեց մեր սիրտն ու հոգին, և մենք անմիջապես զգացինք և հասկացանք, որ իսկապես պատճառ չկար չմկրտվելու: Մենք գիտակցում էինք, որ այդ հատվածում նշված ցանկությունները նաև մեր սրտի ցանկություններն էին, և որ այդ բաներն էին իրականում կարևոր: Դրանք ավելի կարևոր էին, քան ամեն բան հասկանալը, քանի որ մենք արդեն իսկ բավականին գիտելիք ունեինք: Մենք արդեն իսկ ապավինել էինք սիրող Երկնային Հոր առաջնորդող ձեռքին և վստահ էինք, որ Նա կշարունակեր առաջնորդել մեզ:

Ուստի, այդ նույն օրը մենք օր ընտրեցինք մեր մկրտվելու համար և, ի վերջո, շուտով մկրտվեցինք:

Մենք ի՞նչ սովորեցինք այդ փորձառությունից:

Առաջինը, մենք սովորեցինք, որ կարող ենք լիովին վստահել սիրառատ Երկնային Հորը, ով շարունակ փորձում է օգնել մեզ դառնալ այն անձնավորությունը, որն, ըստ Նրա,կարող ենք դառնալ: Մենք հաստատեցինք Նրա հետևյալ խոսքերի մեծագույն ճշմարտությունը, երբ Նա ասել է. «Ես կտամ մարդկանց զավակներին՝ տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ. և օրհնված են նրանք, ովքեր ականջ են դնում իմ ցուցումներին . . . , քանզի նրանք իմաստություն կսովորեն. քանզի նրան, ով ընդունում է, ես կտամ ավելին»:[4]

Եվ երկրորդը, մենք սովորեցինք, որ ի լրացում մեր բանականությանը, գիտելիք ձեռք բերելու մեկ այլ զորություն կա, որ կարող է մեզ առաջնորդություն և հասկացողություն տալ: Դա Նրա Սուրբ Հոգու մեղմ հանդարտ ձայնն է, որը խոսում է մեր սրտի և նաև մեր մտքի հետ:

Ես կցանկանայի համեմատել այս սկզբունքը մեր տեսնելու ունակության հետ: Մեր Երկնային Հայրը մեզ տվել է ոչ թե մեկ, այլ երկու ֆիզիկական աչք: Մենք կարող ենք պատշաճ կերպով տեսնել միայն մեկ աչքով, սակայն երկրորդ աչքը մեզ տալիս է մեկ այլ պատկեր: Երբ այդ երկու պատկերները մեր ուղեղում միանում են իրար, դրանք արտացոլում են մեր շրջապատի եռաչափ պատկերը:

Նմանապես, մեզ տրվել են տեղեկությունների երկու աղբյուրներ մեր ֆիզիկական և հոգևոր ունակությունների միջոցով: Մեր միտքը ընկալում է մեր դատողության և մեր ֆիզիկական զգայարանների միջոցով: Սակայն Սուրբ Հոգու պարգևի միջոցով Հայրը տալիս է մեզ նաև երկրորդ պատկերը, որն իրականում ամենակարևորը և ճշմարիտն է, քանի որ այն տրվում է անմիջապես Նրա կողմից: Սակայն, քանի որ Հոգու շշունջները հաճախ շատ աննկատ են լինում, շատերը չեն գիտակցում այդ լրացուցիչ աղբյուրի գոյությունը:

Երբ այդ երկու պատկերներն այնուհետև միավորվում են մեր հոգում, մեկ ամբողջական պատկերը

ցույց է տալիս բաների իրականությունն այնպես, ինչպես իրականում կան: Բացի այդ, Սուրբ Հոգու կողմից տրված լրացուցիչ հեռանկարի շնորհիվ որոշակի «իրողություններ», որոնց պատկերը մենք ստացել ենք բացառապես մեր մտավոր հասկացողության միջոցով, կարող են բացահայտվել որպես խաբեություն կամ պարզապես սխալ: Հիշեք Մորոնիի խոսքերը. «Եվ Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ»:[5]

31 տարի լինելով Եկեղեցու անդամ,ես բազմիցս համոզվել եմ, որ երբ մենք ապավինում ենք լոկ մեր բանականությանը և ժխտում կամ անտեսում հոգևոր հասկացողությունը, որը կարող ենք ստանալ Սուրբ Հոգու շշունջների և տպավորությունների շնորհիվ, նման է այս կյանքը մեկ աչքով ապրելուն: Սակայն, պատկերավոր ասած, մեզ իրականում տրվել է երկու աչք: Երկու պատկերները միասին միայն կարող են տալ մեզ ճշմարիտ և ամբողջական պատկերը բոլոր ճշմարտությունների և ամեն փորձառությունների, որ ունենում ենք այս կյանքում, ինչպես նաև ամբողջական և խորը հասկացողություն մեր ինքնության և նպատակի վերաբերյալ՝ որպես կենդանի Երկնային Հոր զավակներ:

Ես հիշում եմ, թե ինչ ուսուցանեց Նախագահ Նելսոնը մի տարի առաջ, երբ ասաց, որ «գալիք օրերում հնարավոր չի լինի հոգևորապես գոյատևել առանց Սուրբ Հոգու առաջնորդության, ուղղորդման և մշտապես սփոփող ազդեցության»:[6]

Ես միանշանակ համոզված եմ, որ.

- Մենք ունենք սիրող Երկնային Հայր, և բոլորս համաձայնվել ենք գալ այս երկիր որպես աստվածային ծրագրի մի մաս:
- Հիսուսը Քրիստոսն է. Նա ապրում է և իմ Փրկիչն ու Քավիչն է:
- Ջոզեֆը՝ գյուղացի այդ խոնարհ տղան, կանչվեց և հզոր մարգարե դարձավ, ով առաջ բերեց ժամանակների լրության տնտեսությունը՝ բոլոր բանալիներով, Աստծո սուրբ քահանայության զորությամբ և իշխանությամբ:
- Մորմոնի Գիրքը Հիսուս Քրիստոսի մասին երկրորդ վկայությունն է, և ընտանիքները նախատեսված են հավերժ միասին լինելու:
- Մեր Տեր Հիսուս Քրիստոսն այսօր առաջնորդում է Իր վերականգնված Եկեղեցին մեր ապրող մարգարեի՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի միջոցով:

Այս և ուրիշ շատ թանկագին ճշմարտություններ ինձ համար դարձել են հոգևոր հիմք, որ ես դառնամ այն, ինչ Աստված օգնում է ինձ դառնալ: Եվ ես ակնկալում եմ բազում նոր ուսմունքներ, որոնք Նա դեռևս ցանկանում է, որ ես և դուք ստանանք, մինչ ապրում ենք այս հրաշալի կյանքը և «ուսում փնտրենք . . . ուսումնասիրելով և նաև հավատքով»:

Ես գիտեմ, որ այս ամենը ճշմարիտ է և վկայում եմ դրանց վերաբերյալ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 109.7, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 88.118:
2. 3 Նեփի 14.16
3. Մոսիա 18.8-10
4. 2 Նեփի 28.30
5. Մորոնի 10.5
6. Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիահոնա,* մայիս 2018, 96:

ԵՐԵՑ ՆԻԼ Լ. ԱՆԴԵՐՍԵՆ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հավատքի աչքը

Երբ մենք ընտրում ենք, թե հայտարարության որ մասն ընդունենք, մենք մշուշում ենք մեր հավերժական հեռանկարը, չափից ավելի կարևորելով այստեղ և այս պահին մեր ունեցած փորձառությունը:

Իր խաչելությունից առաջ Հիսուսին տարան Պիղատոսի պալատ դատելու: «Դո՞ւ ես Հրեաների թագաւորը»: Ներողամտորեն հարցրեց Պիղատոսը: Հիսուսը պատասխանեց. «Իմ թագաւորութիւնն այս աշխարհիցը չէ: . . . Ես եկել [եմ] աշխարհք, որ ճշմարտութեան [մասին] վկայեմ: Ամեն ով որ ճշմարտութիւնիցն է՝ իմ ձայնը լսում է»:

Պիղատոսը անամոթաբար հարցրեց. «Ի՞նչ է ճշմարտությունը»:[1]

Ժամանակակից աշխարհում «Ի՞նչ է ճշմարտությունը» հարցը կարող է ցավալիորեն բարդ լինել աշխարհիկ մտքի համար:

Google-ում «Ի՞նչ է ճշմարտությունը» հարցի պատասխանը փնտրելիս ավելի քան մեկ միլիոն պատասխան ենք գտնում: Մեր բջջային հեռախոսներում մենք ավելի շատ հասանելի տեղեկություն ունենք, քան քարից ու ավազից կառուցված գրադարանների բոլոր գրքերը: Մենք ծանրաբեռնված ենք տեղեկատվության և կարծիքների տարափով: Հրապուրիչ և գրավող ձայները հետապնդում են մեզ ամեն քայլափոխի:

Այսօր տիրող շփոթությունից ելնելով, զարմանալի չէ, որ շատերը կրկնում են 2500 տարի առաջ երիտասարդ Սոկրատեսին ասված Պրոտագորասի խոսքերը. «Այն, ինչ ճիշտ է քեզ համար,- ասել է նա,- ճիշտ է քեզ համար, իսկ այն, ինչ ճիշտ է ինձ համար, ճիշտ է ինձ համար»:[2]

Ճշմարտություն Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի միջոցով

Օրհնված լինելով Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանով, մենք խոնարհաբար հայտարարում ենք, որ կան բաներ, որոնք ամբողջությամբ բացարձակ ճշմարիտ են: Այդ հավերժական ճշմարտությունները նույնն են Աստծո յուրաքանչյուր որդու և դստեր համար:

Սուրբ գրություններն ուսուցանում են. «Եվ ճշմարտությունը գիտություն է բաների մասին, ինչպես որ կան, և ինչպես որ կային, և ինչպես որ կլինեն»:[3] Ճշմարտությունը նայում է հետ ու առաջ, ժամանակի մեջ մեծացնելով մեր փոքր կետի հեռանկարը:

Հիսուսն ասել է. «Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը»:[4] Ճշմարտությունը մեզ ցույց է տալիս հավերժական կյանք տանող ճանապարհը, և այն տրվում է միայն մեր Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Չկա այլ ճանապարհ:

Հիսուս Քրիստոսն ուսուցանում է մեզ, թե ինչպես ապրել և Իր Քավության ու Հարության միջոցով Նա առաջարկում է մեզ ներում մեր մեղքերից և անմահություն՝ վարագույրի մյուս կողմում: Սա բացարձակ ճշմարտություն է:

Նա ուսուցանում է մեզ, որ կարևոր չէ՝ մենք հարուստ ենք, թե աղքատ, հայտնի ենք, թե անհայտ, իմաստուն ենք, թե հասարակ մի մարդ: Այլ մեր մահկանացու որոնումների նպատակն է ամրապնդել մեր հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոսը, ընտրել բարին՝ չարի փոխարեն և պահել Նրա պատվիրանները: Մինչ մենք կարևորում ենք գիտության և բժշկության նորամուծությունները, Աստծո ճշմարտությունները շատ ավելի մեծ արժեք ունեն, քան այդ հայտնագործությունները:

Ի հակադրություն հավերժական ճշմարտությունների, միշտ եղել են կեղծիքներ, որոնց նպատակն է եղել շեղել Աստծո զավակներին ճշմարտությունից: Հակառակորդը միշտ բերում է նույն փաստարկները: Լսեք 2000 տարի առաջ ասված այս խոսքերը.

«Դուք չեք կարող իմանալ բաների մասին, որոնք դուք չեք տեսնում: . . . [Ինչ որ մարդ անում է,] հանցագործություն չէ:

[Աստված չէ, որ օրհնում է ձեզ, այլ] ամեն [մարդ բարգավաճում է] համաձայն իր [իսկ] հանճարի»:[5]

«Խելամիտ չէ, որ այնպիսի մի էակ, ինչպիսին Քրիստոսն է, . . . լինի Աստծո Որդին»:[6]

ՎԵՐԵՎՈՒՆ. ԱՄՄՈՆԱՐՈՆՈՒՄ՝ MICHAEL MURPHY/MMIKE.COM, ՀԻՍՈՒՍԻՆ.



Հավատքի աչքով և աղոթքով խորհելով ընտանիքի մասին հայտարարության շուրջ, մենք ավելի լավ ենք հասկանում, թե ինչպիսի գեղեցիկ կապ կա սկզբունքների միջև, որոնք լրացնում են մեկը մյուսին և հայտնի են դարձնում Իր զավակների համար նախատեսած մեր Հոր ծրագիրը:

«[Այն, ինչին դուք հավատում եք, հիմար ավանդություն է և] ձեր մտքերի խանգարվածությունը»:[7] Այսօր էլ մենք լսում ենք նման բաներ, այնպես չէ՞:

Ավետարանի Վերականգնման հետ Աստված տվել է մեզ հոգևոր կարևոր ճշմարտությունները սովորելու և իմանալու ուղին. մենք սովորում ենք դրանք սուրբ գրությունների, մեր անձնական աղոթքների, մեր իսկ փորձառությունների, ապրող մարգարեների և առաքյալների խորհուրդների և Սուրբ Հոգու առաջնորդության միջոցով, ով կարող է օգնել մեզ «իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ»:[8]

ճշմարտությունը բացահայտվում է հոգևորապես

Մենք կարող ենք իմանալ Աստծո բաները, եթե փնտրենք դրանք հոգևորապես: Պողոսն ասել է. «Աստուծոյ բաներն ոչ ով չ'գիտէ, բացի Աստուծոյ Հոգին ունեցողից: . . . Որովհետեւ հոգեւոր կերպով են քննվում»:[9]

Նայեք Մայքլ Մրֆիի այս ստեղծագործությանը: Այս պատկերին նայելիս, դուք դժվար թե հավատաք, որ սա արվեստագետի աչքի արտացոլումն է: Սակայն, երբ դուք այլ դիրքից եք նայում կետերին, տեսնում եք արվեստագետի ստեղծագործության հմայքը:

Նմանապես, մենք տեսնում ենք Աստծո հոգևոր ճշմարտությունները հավատքի աչքի հեռանկարի միջոցով: Պողոսն ասել է. «Շնչաւոր մարդն Աստուծոյ Հոգու բաները չէ ընդունում. որովհետեւ նորանք յիմարութիւն են նորա համար. եւ չէ կարող էլ գիտենալ՝ որովհետեւ հոգեւոր կերպով են քննվում»:[10]

Սուրբ գրությունները, մեր աղոթքները, մեր իսկ փորձառությունները, ժամանակակից մարգարեները և Սուրբ Հոգու պարգևը տալիս են մեզ ճշմարտության վերաբերյալ հոգևոր հեռանկար երկրի վրա մեր ճամփորդության համար:

Հոչակագիրը հավատքի աչքի միջոցով

Եկեք նայենք ընտանիքի վերաբերյալ հայտարարությանը հավատքի աչքով:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ներկայացրեց «Ընտանիք. հայտարարություն աշխարհին» հոչակագիրը հետևյալ բառերով. «Այդքան մեծ չափերով մոլորեցնող փաստարկների հետ մեկտեղ, որոնք մատուցվել են որպես ճշմարտություն, չափանիշների և արժեքների վերաբերյալ խաբեության, աշխարհի խավար կողմը բռնելու գրավչության և գայթակղության պայմաններում, մենք անհրաժեշտ ենք համարել զգուշացնել և նախազգուշացնել [ձեզ]»:[11]

Հոչակագիրը սկսվում է հետևյալ բառերով. «Մարդկային էակները՝ տղամարդիկ և կանայք, բոլորն արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես այդպիսին, յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր»:

Սրանք հավերժական ճշմարտություններ են: Ես և դուք բնության մեջ պատահականություն չենք:

Ես սիրում եմ այս խոսքերը. «Նախաերկրային աշխարհում հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն, որպես իրենց Հավերժական Հորը և ընդունում էին Նրա ծրագիրը»:[12]

Մենք ապրել ենք նախքան մեր ծնվելը: Մեր անհատական ինքնությունը դրոշմված է մեր մեջ հավերժորեն: Մեզ համար ոչ լիովին հասկանալի ուղիներով այնտեղ ունեցած մեր հոգևոր աճն ազդում է այն բանի վրա, թե ով ենք մենք այստեղ:[13] Մենք ընդունել էինք Աստծո ծրագիրը: Մենք գիտեինք, որ երկրի վրա ունենալու ենք դժվարություններ, ցավ և վիշտ:[14] Մենք նաև գիտեինք, որ Փրկիչը կգար, և եթե ապացուցենք

մեր արժանի լինելը, մենք հարություն կառնենք և մեր «գլխին փառք կավելացվի հավիտյանս հավիտենից»:[15]

Հռչակագրում հստակ ասվում է. «Մենք հայտարարում ենք, որ երկրի վրա կյանքի ստեղծման ուղիները ղեկավարվում են Աստծո կողմից: Մենք հաստատում ենք կյանքի սուրբ լինելը և նրա կարևորությունն Աստծո հավերժական ծրագրում»:

Մեր Հոր ծրագիրը խրախուսում է ամուսնուն և կնոջը երեխաներ բերել աշխարհ և պարտավորեցնում մեզ խոսել ի պաշտպանություն չծնվածների:

Հռչակագրի սկզբունքները գեղեցիկ ձևով կապված են իրար

Երբ մենք ընտրում ենք, թե հայտարարության որ մասն ընդունենք, մենք մշուշում ենք մեր հավերժական հեռանկարը, չափից ավելի կարևորելով այստեղ և այս պահին մեր ունեցած փորձառությունը: Հավատքի աչքով և աղոթքով խորհելով հայտարարության շուրջ, մենք ավելի լավ ենք հասկանում, թե ինչպիսի գեղեցիկ կապ կա սկզբունքների միջև, որոնք աջակցում են մեկը մյուսին և հայտնի են դարձնում Իր զավակների համար նախատեսած մեր Հոր ծրագիրը:[16]

Արդյո՞ք մենք պետք է զարմանանք, երբ Տիրոջ ապրող մարգարեները հայտարարում են Նրա կամքը, սակայն ոմանք շարունակում են հարցեր ունենալ: Իհարկե, ոմանք անմիջապես մերժում են մարգարեների ձայնը,[17] սակայն ուրիշները աղոթքով խորհում են իրենց անկեղծ հարցերի շուրջ, հարցեր, որոնք կգտնեն իրենց պատասխանը համբերությամբ և հավատքի աչքով: Եթե հայտարարությունը տրված լիներ մեկ այլ ժամանակաշրջանում, հարցեր, միևնույն է կառաջանային, սակայն այդ հարցերը գուցե տարբերվեին այսօրվա հարցերից: Մարգարեների նպատակներից մեկն է օգնել մեզ լուծում տալ անկեղծ հարցերին:[18]

Նախքան Եկեղեցու Նախագահ դառնալը Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է. «Մարգարեները տեսնում են ապագան: Նրանք տեսնում են սոսկալի վտանգները, որոնք հակառակորդը դնում է կամ դեռ կդնի մեր ճանապարհին: Մարգարեները նաև կանխատեսում են մեծ հնարավորությունները և արտոնությունները, որոնք սպասվում են նրանց, ովքեր լսում են հնազանդվելու մտադրությամբ»:[19]

Ես վկայում եմ Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի միասնական ձայնի ճշմարտության և հոգևոր ուժի մասին:

Աշխարհը հեռանում է ուղուց

Մեր կյանքում մենք տեսել ենք մեծ փոփոխություններ աշխարհիկ մտածելակերպի մեջ՝ կախված հայտարարությունում ուսուցանվող բազմաթիվ սկզբունքների հետ: Իմ պատանեկության և ամուսնության վաղ շրջանի տարիներին շատերն աշխարհում հեռացան Տիրոջ այն չափանիշից, որը մենք կոչում ենք մաքրաբարոյության օրենք, որ սեռական հարաբերությունները պետք է տեղի ունենան միայն ամուսնացած տղամարդու և կնոջ միջև: Մինչ ես 20-30 տարեկան էի, շատերը հեռացան դեռ չծնվածների սրբազան պաշտպանությունից, մինչ արհեստական վիժեցումը դարձավ ավելի ընդունելի: Վերջին տարիներին շատերը հեռացան Աստծո այն օրենքից, որ ամուսնությունը տղամարդու և կնոջ սրբազան միությունն է:[20]

Մինչ դիտում ենք, թե ինչպես են շատերը հեռանում Տիրոջ նշած սահմաններից, հիշում ենք Կափառնայումի այն օրը, երբ Տերը հայտարարեց Իր աստվածայնության մասին, բայց ցավոք «նորա աշակերտներից շատերը . . . [հեռացան]»:

Ապա Փրկիչը հարցրեց Տասներկուսին. «Մի՞թէ դուք էլ ուզում էք գնալ»:

Պետրոսը պատասխանեց.

«Տեր, ո՞ւմ մոտ գնանք. Յաւիտենական կեանքի խոսքեր ունիս դու:

Եւ մենք հաւատացինք եւ ճանաչեցինք, թէ դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին»:[21]

Ոչ բոլորի կյանքն է համահունչ Հռչակագրի հետ

Կան շատերը՝ երիտասարդ և ծեր, ովքեր նվիրված ու հավատարիմ են մարգարեների ուսմունքներին, չնայած նրանց ներկայիս սեփական փորձառությունն այնքան էլ չի համընկնում ընտանիքի վերաբերյալ հայտարարության հետ. երեխաներ, որոնց կյանքը ցնցվել է ամուսնալուծության պատճառով, երիտասարդներ, որոնց ընկերները ծաղրում են մաքրաբարոյության օրենքը, կանայք և տղամարդիկ, որոնք մեծ հարված են ստացել ամուսնական անհավատարմության պատճառով, ամուսիններ և կանայք, ովքեր չեն կարողանում երեխա ունենալ, կանայք և տղամարդիկ, ովքեր ամուսնացած են մեկի հետ, ով չի կիսում իրենց հավատքը վերականգնված ավետարանում, ամուրի կանայք և տղամարդիկ, ովքեր զանազան պատճառներով չեն կարողացել ամուսնանալ:

Մի ընկեր ունեմ, ում ճանաչում եմ մոտ 20 տարի և շատ հարգում, ամուսնացած չէ, քանի որ նույն սեռի հանդեպ համակրանք ունի: Նա հավատարիմ է մնացել իր տաճարային ուխտերին, զարգացրել է իր ստեղծագործական և մասնագիտական տաղանդները և նվիրվածությամբ ծառայել Եկեղեցում և հասարակությանը: Վերջերս նա ասաց ինձ. «Ես կարեկցում եմ նրանց, ովքեր իմ իրավիճակում ընտրում են չպահել մաքրաբարոյության օրենքն այն աշխարհում, որտեղ ապրում ենք: Բայց չէ՞ որ Քրիստոսը խնդրեց մեզ այս աշխարհից չլինել: Պարզ է, որ Աստծո չափանիշները տարբերվում են աշխարհի չափանիշներից»:

Մարդկային օրենքները հաճախ անցնում են Աստծո հաստատած օրենքների սահմանները: Նրանց, ովքեր ցանկանում են գոհացնել Աստծուն, միանշանակ անհրաժեշտ են հավատք, համբերություն և ջանասիրություն:[22]

Ես և կինս՝ Քեթին, ճանաչում ենք 40-ն անց մի ամուրի քրոջ, ով մասնագիտական մեծ հմտություններ ունի և հոժարակամ ծառայում է իր ծխում: Նա նույնպես պահում է Աստծո օրենքները: Նա գրել է.

«Ես երազել եմ այն օրվա մասին, երբ կօրհնվեմ ամուսին և երեխա ունենալու հնարավորությամբ: Ես

դեռևս սպասում եմ: Երբեմն իմ իրավիճակը բերում է մոռացված և միայնակ լինելու զգացողություններ, սակայն ես փորձում եմ շեղել իմ ուշադրությունն այն ամենի վրա կենտրոնանալուց, ինչ չունեմ, և փոխարենը կենտրոնանալ իմ ունեցածի վրա, և թե ինչպես կարող եմ օգնել ուրիշներին:

Իմ ընտանիքում, ծխում և տաճարում ծառայելն օգնել է ինձ: Ես մոռացված կամ միայնակ չեմ, քանի որ ես և մենք բոլորս մի մեծ ընտանիքի մասն ենք կազմում»:

Կա մեկը, ով հասկանում է

Ոմանք կասեն. «Դուք չեք հասկանում իմ իրավիճակը»: Գուցե ես չեմ հասկանում, սակայն վկայում եմ, որ կա Մեկը, ով հասկանում է:[23] Կա Մեկը, ով պարտեզում և խաչի վրա տարած Իր զոհաբերության պատճառով գիտի ձեր բեռները: Եթե դուք փնտրեք Նրան և պահեք Նրա պատվիրանները, ես խոստանում եմ ձեզ, որ Նա կօրհնի ձեզ և կթեթևացնի բեռները, որոնք միայնակ տանելու համար չափազանց ծանր են: Նա հավերժական ընկերներ և հնարավորություններ կտա ձեզ ծառայելու: Սակայն ավելի կարևորն այն է, որ Նա կլցնի ձեզ զորեղ Սուրբ Հոգով և կփայլեցնի Իր երկնային

հաստատումը ձեր վրա: Ոչ մի ընտրություն, ոչ մի այլընտրանք, որը հեռացնում է Սուրբ Հոգու ընկերակցությունը կամ հավերժության օրհնությունները, արժանի չէ մեր ուշադրությանը:

Ես գիտեմ, որ Փրկիչն ապրում է: Ես վկայում եմ, որ Նա իրականում կարևոր ամեն ճշմարտության աղբյուրն է, և որ Նա կտա բոլոր օրհնությունները, որոնք խոստացել է նրանց, ովքեր պահում են Նրա պատվիրանները: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես 18.33, 36-38
2. Վիլյամ Ս. Սահակյան և Մաբել Լուիս Սահակյան, *Մեծ փիլիսոփաների մտքերը* (1966), 28:
3. Վարդապետություն և Ուխտեր 93.24
4. Հովհաննես 14.6
5. Ալմա 30.15, 17
6. Հելաման 16.18
7. Տես Ալմա 30.14, 23, 27:
8. Մորոնի 10.5
9. Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ա Կորնթացիս 2.11 [Ա Կորնթացիս 2.11, տողատակի ծանոթագրություն գ], Ա Կորնթացիս 2.14
10. Ա Կորնթացիս 2.14
11. Gordon B. Hinckley, “Stand Strong against the Wiles of the World,” *Ensign,* Nov. 1995, 100. Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը վերջերս մեկնաբանություններ է կատարել՝ կապված հայտարարության պատմության հետ, որը ամփոփել է Շերի Դյուն. *Մտքեր Մարգարեի կյանքից. Ռասսել Մ. Նելսոն* (2019), 208:

    «1994թ. մի օր Տասներկու Առաքյալների Քվորումը մի օր անցկացրեց Սոլթ Լեյք Սիթի տաճարի իրենց խորհրդակցությունների սենյակում՝ քննարկելով ընտանիքներին վերաբերող խնդիրները: Նրանք քննարկեցին ամեն բան՝ սկսած պոռնոգրաֆիայի համատարած զարգացող բնույթից մինչև հակաընտանեկան տարբեր օրենքների հաստատումը: Սա նոր քննարկում չէր, սակայն այդ օրը ամբողջ օրակարգը ներառում էր այդ կարևորագույն թեմային վերաբերող հարցեր:

    Տասներկուսի անդամները վերանայեցին թե՛ վարդապետությունը, և թե՛ օրենքը, խորհելով բաների մասին, որոնք չեն կարող փոխվել՝ վարդապետությունը, և այն բաների մասին, որոնք հնարավոր է, որ կարող են՝ օրենքը: Նրանք քննարկեցին խնդիրներ, որոնց մոտալուտ վտանգը տեսնում էին, ներառելով ակտիվացող հասարակական հուզմունքը միասեռ ամուսնությունների և տրանսգենդերների իրավունքների շուրջ: «Սակայն դա ամենը չէր, որ մենք տեսնում էինք»,- բացատրել է Երեց Նելսոնը: «Մենք կարողանում էինք տեսնել տարբեր համայնքների ջանքերը՝ սեռական գործունեության բոլոր չափանիշները և սահմանափակումները վերացնելու համար: Մենք տեսնում էինք սեռի հետ կապված շփոթությունները: Մենք կարողանում էինք տեսնել այդ ամենի հետ կապված մոտալուտ վտանգը»:

    Այս ծավալուն քննարկումը, ինչպես նաև դրան հաջորդած այլ քննարկումներ հանգեցրին այն որոշմանը, որ Տասներկուսի անդամները պետք է պատրաստեն մի փաստաթուղթ, նույնիսկ հայտարարություն, որտեղ կշեշտվի Եկեղեցու դիրքորոշումը կապված ընտանիքի հետ, որը կներկայացվի առաջին նախագահությանը քննարկման համար»:
12. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2017, 145:
13. Նախագահ Դալլին Հ. Օուքսն ասել է. «Բյուրավոր մահկանացուներ, ովքեր ծնվել են այս աշխարհում, ընտրել են Հոր ծրագիրը և պայքար մղել դրա համար: Մեզանից շատերը նաև ուխտեր են կապել Հոր հետ, թե ինչ ենք անելու մահկանացու կյանքում: Հոգևոր աշխարհում մեր կատարած գործերը ազդում են մեզ վրա մահկանացու կյանքում այնպիսի ուղիներով, որոնք հայտնի չեն դարձվել մեզ» («Երջանկության մեծ ծրագիրը», *Ensign,* նոյեմբեր 1993, 72):
14. Տես Դալլին Հ. Օուքս, «Ճշմարտությունը և ծրագիրը», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 25-28:
15. Աբրահամ 3.26
16. Նախագահ Դալլին Հ. Օուքսն ասել է.

    «Դարձի եկած Վերջին Օրերի Սրբերը հավատում են, որ Ընտանիքի հռչակագիրը, որը հաստատվել է մոտ քառորդ դար առաջ և այժմ թարգմանված է շատ լեզուներով, Տիրոջ կողմից ավետարանի ճշմարտությունների վերաշեշտադրումն է, որոնք անհրաժեշտ են, որ ինքներս մեզ նեցուկ լինենք ընտանիքին սպառնացող ժամանակակից մարտահրավերների դարում: . . .

    Ես վկայում եմ, որ Ընտանիքի հռչակագիրը հավերժական ճշմարտության հաստատումն է, և Տիրոջ կամքը կապված Իր զավակների հետ, ովքեր հավերժական կյանք են փնտրում: Այն եղել է Եկեղեցու ուսմունքների և գործունեության հիմքը վերջին 22 տարիների ընթացքում և կշարունակի լինել ապագայում: Համարեք այն Եկեղեցու ուսմունքների և գործունեության հիմքը, ուսուցանեք այն, ապրեք դրանով և դուք կօրհնվեք, երբ առաջ ընթանաք դեպի հավերժական կյանք: . . .

    . . . Ես կարծում եմ, որ Ընտանիքի հռչակագրի հանդեպ մեր վերաբերմունքը և դրա օգտագործումը այս սերնդի քննություններից մեկն է: Ես աղոթում եմ, որ Վերջին Օրերի Սրբերը հաջողությամբ հանձնեն այդ քննությունը» («Ծրագիրը և հռչակագիրը», *Լիահոնա,* նոյեմբեր 2017, 30-31):
17. Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է. «Ոմանք կոչում են մեզ մոլեռանդներ, սակայն մոլեռանդ են նրանք, ովքեր մեզ թույլ չեն տալիս զգալ այն, ինչ զգում ենք, այլ ուզում են, որ մենք թույլ տանք իրենց զգալ այն, ինչ իրենք են զգում: Մեր դիրքորոշումն, ի վերջո, հանգում է մաքրաբարոյության օրենքին: Տասը պատվիրանները դեռևս արժեքավոր են: Դրանք երբեք չեղյալ չեն հայտարարվել: . . . Մենք արտոնված չենք փոխելու օրենքները, որոնք հաստատել է Աստված» (Dew, *Insights from a Prophet’s Life,* 212):

18. «Մինչ ընտանիքը հարձակման թիրախ է դարձել ողջ աշխարհով մեկ, ընտանիքի հոչակագրի ճշմարտությունները ուժ կտան ձեզ։

Ազնվական ծագում ունեցող երիտասարդնե՛ր, դուք պետք է հասկանաք հասարակության ներկայիս տարաձայնությունների հեռու գնացող հետևանքները՝ կապված հենց ամուսնության սահմանման հետ։ Այս քննարկումը վերաբերում է այն հարցին, թե արդյոք նույն սեռի երկու մարդ կարող են ամուսնանալ։ Եթե դուք հարց ունեք կապված Եկեղեցու դիրքորոշման հետ այս կամ այլ կարևոր խնդրի շուրջ, աղոթքով խորհեք դրա վերաբերյալ, ապա լսեք Եկեղեցու գալիք հոկտեմբեր ամսվա գերագույն համաժողովի մարգարեական ուղերձները։ Այդ ոգեշնչված ելույթները, որոնց կգումարվի Սուրբ Հոգու ոգեշնչումը, լիարժեք հասկացողություն կձևավորեն ձեր մտքում» (Ռասսել Մ. Նելսոն, «Ազնվագույն ծագում ունեցող երիտասարդնե՛ր, ի՞նչ կընտրեք դուք» [Եկեղեցու կրթական համակարգի հոգևոր երեկո, սեպտեմբեր 6, 2013], broadcasts.ChurchofJesusChrist.org)։

19. Ռասսել Մ. Նելսոն, «Կանգնեք որպես իսկական հազարամյակցիներ», *Լիահոնա,* հոկտեմբեր 2016, 53։

20. Նախագահ Նելսոնն ասել է. «Քաղաքացիական կառավարությունների վրա մեծապես ազդում են սոցիալական ուղղվածությունները և աշխարհիկ փիլիսոփայությունները, երբ նրանք գրում, վերարտադրում և գործադրում են օրենքները։ Անկախ նրանից, թե ինչ քաղաքացիական օրենսդրություն է ընդունվում, ամուսնության և բարոյականության վերաբերյալ Տիրոջ վարդապետությունը *չի կարող փոխվել։* Հիշեք՝ մեղքը, եթե անգամ մարդու կողմից օրինականացվում է, դեռևս մեղք է Աստծո աչքում» («Որոշումներ՝ հավերժության համար», *Լիահոնա,* նոյեմբեր 2013, 108)։

21. Հովհաննես 6.66-69

22. Տես Ալմա 32.41-43. Իմ ուշադրությունը միշտ գրավել է այն փաստը, որ մեր հավատքը սնուցելու վերաբերյալ այս հրաշալի գլխում, հավատքը, համբերությունը և ջանասիրությունը միասին նշվում են վերջին երեք հատվածներից յուրաքանչյուրում։

23. Տես Ալմա 7.12, Հիսուս Քրիստոսը տառապել է ոչ միայն մեր մեղքերի, այլ նաև մեր թուլությունների համար. «Եվ նա իր վրա վեր կառնի մահ, որ կարողանա արձակել մահվան կապանքները, որոնք կապում են իր ժողովրդին. և նա իր վրա վեր կառնի նրանց թուլությունները, որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, ըստ մարմնի, որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների»։ (Տվյալ դեպքում *թուլություններ* բառի հոմանիշներն են *հիվանդություն, տառապանք, պակասություն։*) Տես Վարդապետություն և Ուխտեր 88.6. «Նա վայր իջավ բոլոր բաներից ցած, որով և ըմբռնեց բոլոր բաները, որ կարողանա ամենի մեջ և ամենուրեք լինել ճշմարտության լույսը»։

ԵՐԵՑ ՏԱԿԱՇԻ ՎԱԴԱ
Յոթանասունից

Սնվեք Քրիստոսի խոսքերով

Քրիստոսի խոսքերով սնվելը կարող է տեղի ունենալ ամեն ժամանակ և ամեն առիթով, եթե մենք պատրաստում ենք մեր սրտերը։

Մեր Երկնային Հայրը սիրում է մեզ։ Նա կատարյալ ծրագիր է ապահովել մեզ համար, որպեսզի վայելենք Իր օրհնությունները։ Այս կյանքում բոլորիս հրավիրում են գալ դեպի Քրիստոսը և ընդունել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը մկրտության միջոցով, ստանալով Սուրբ Հոգու պարգևը և հավատարմորեն ապրելով ավետարանով։ Նեփին նկարագրում է մեր մկրտվելու պարտավորությունը՝ որպես մուտք դեպի մի «նեղ և անձուկ արահետ», և նա հիշեցնում է մեզ՝ շարունակել «առաջ մղվել Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, . . . սնվելով Քրիստոսի խոսքով և համբերել մինչև վերջ», որպեսզի ստանանք բոլոր օրհնությունները, որոնք Երկնային Հայրը պահել է մեզ համար (2 Նեփի 31.19–20)։

Նեփին հետագայում հիշեցնում է մեզ, որ եթե մենք «սնվենք Քրիստոսի խոսքերով» նրանք «կասեն [մեզ] բոլոր բաները, որ [մենք] պետք է անենք» (2 Նեփի 32.3) և որպեսզի մենք զորացվենք՝ հաղթահարելով «հակառակորդի կրակոտ նետերը» (1 Նեփի 15.24)։

Ի՞նչ է սնուցումը

Երբ երիտասարդ էի, ես կարծում էի, որ սնուցումը ուղղակի բրնձով ճոխ ճաշ է, սուշի և սոյայի սոուս: Այժմ ես գիտեմ, որ իսկական սնուցումն ավելին է, քան համեղ կերակուր վայելելը: Դա ուրախության, սնուցման, հանդիսության, ընտանիքի և սիրելիների հանդեպ սիրով կիսվելու, Աստծուն մեր շնորհակալությունները հայտնելու և հարաբերություններ կառուցելու փորձառություն է, մինչ վայելում ենք առատ, աներևակայելի համեղ ուտելիք: Ես հավատում եմ, երբ մենք սնուցվում ենք Քրիստոսի խոսքերով, մենք պարտավոր ենք մտածել նույն տեսակի փորձառության մասին: Մնուցվել սուրբ գրություններով չի նշանակում ուղղակի կարդալ դրանք:: Այն պետք է բերի մեզ իսկական ուրախություն և կառուցի մեր փոխհարաբերությունները Փրկիչի հետ:

Սա հստակորեն ուսուցանվում է Մորմոնի Գրքում: Հիշեք Լեքիի երազը, որտեղ նա տեսավ մի ծառ «որի պտուղը բաղձալի [է]՝ մարդուն երջանիկ դարձնելու համար»: Այդ պտուղը ներկայացնում է Աստծո սերը, և երբ Լեքին ճաշակեց պտղից «այն. . . քաղցր էր բոլոր բաներից ավելի, որ [նա] երբևէ նախկինում ճաշակել էր»: Այն «լցրեց [նրա] հոգին չափազանց մեծ ուրախությամբ» և մի բան էր, որով կամեցավ կիսվել իր ընտանիքի հետ (1 Նեփի 8.10–12):

Երբ սնուցվում ենք, մենք գուցե նաև պարզենք, որ մեր ունեցած ուտելիքի քանակը կամ տեսակը թերևս նշանակություն չունի, եթե մեր սրտերը լցված են երախտագիտությամբ: Լեքիի ընտանիքն անապատում սնվեցհում մսով, բայց Նեփին նկարագրեց այդ դժվար փորձությունը, ասելով. «Այնքան մեծ էին Տիրոջ օրհնությունները», որ «մեր կանայք . . . ուժեղ էին», և կարողանում էին «տանել իրենց ճամփորդություններն առանց տրտունջների» (1 Նեփի 17.1–2):

Սնուցումը երբեմն ներառում է փորձարկումը և ճաշակումը: Ալման խոսում է մեր սրտերում ցանված լավ սերմի մասին: Երբ մենք փորձարկում ենք այն, հասկանում ենք, որ սերմը սկսում է «համեղ լինել» (տես Ալմա 32.28–33):

Քրիստոսի խոսքերով սնվելը

Քրիստոսի խոսքերով սնուցման օրհնությունները հզոր են և կյանք փոխող: Կան հատկապես երեքը, որոնք կկամենայի հրավիրել ձեզ կիրառել ձեր կյանքում:

Առաջինը՝ Քրիստոսի խոսքերը կարող են օգնել մեզ «մեծացնել հայտնություն ստանալու[մեր] հոգևոր կարողությունը» (Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիահոնա,* մայիս 2018, 96) և ապահով առաջնորդել մեզ մեր կյանքի ընթացքում: Մորմոնն ուսուցանում է, որ Քրիստոսի խոսքերն ունեն «մեծ միտում՝ առաջնորդել ժողովրդին անելու այն, ինչն արդար [է]», և որ նրանք ավելի զորավոր են, քան որևէ բան, որ «սուրը» կարող է անել (Ալմա 31.5): Երբ ես փնտրել եմ Աստծո իմաստությունը իմ անձնական մարտահրավերների հետ գործ ունենալիս, միշտ, երբ փորձել եմ «Աստծո խոսքի ուժը» (Ալմա 31.5), ես ոգեշնչված եմ զգացել և կարողացել իմաստուն որոշումներ կայացնել, հաղթահարել գայթակղությունները և օրհնել իմ կյանքն առ Քրիստոս աճող հավատքով և իմ շրջապատի մարդկանց հանդեպ սիրով: Մեր մարգարե Նախագահ Նելսոնը նախազգուշացրել է. «Գալիք օրերում հնարավոր չի լինի հոգեպես գոյատևել՝ առանց Սուրբ Հոգու առաջնորդության, ուղղորդման և մշտական սփոփիչ ազդեցության» («Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», 96): Անհրաժեշտ հայտնությունը կգա, երբ մենք փորձենք «խոսքի ուժը» և այդ խոսքը կլինի ավելի հզոր, քան որևէ ուրիշ բան, որ կարող էինք փորձել կամ պատկերացնել:

Երկրորդ, երբ մենք մաքառում ենք մեր իսկ ինքնության և ինքնագնահատման պակասության հետ, «Աստծո հաճելի խոսքը» (Հակոբ 2.8) սուրբ գրություններում կօգնի մեզ իմանալ, թե ով ենք մենք իրականում և մեր սեփական ուժից վեր ուժ կտա մեզ: Որպես Աստծո զավակ Իմ ինքնության ճանաչումը ամենաքաղցր պահերից մեկն է, որ ես երբևէ զգացել եմ: Իմ պատանեկան տարիների ընթացքում ես ոչ մի բան չգիտեի Փրկիչի ուսմունքների մասին: Երբ առաջին անգամ կարդացի Նոր Կտակարանը, Քրիստոսի խոսքերը իսկապես բժշկեցին իմ վիրավոր հոգին: Ես հասկացա, որ մենակ չեմ, և որ ես Աստծո զավակն եմ: Երբ ես ճանաչեցի իմ ճշմարիտ ինքնությունը Աստծո առաջ, ես ճանաչեցի իմ անսահման ներուժը Քրիստոսի Քավության միջոցով:

Ենովսը նմանապես կիսվեց իր անձնական փորձառությամբ այն լուսավորման մասին, որը գալիս է Քրիստոսի խոսքերի շուրջ խորհրդածելուց: Երբ Ենովսը թույլ տվեց, որ իր հոր ուսուցանած խոսքերը «հավերժական կյանքի և Սրբերի ուրախության վերաբերյալ, խորը [սուզվեին] [իր] սրտում», նրա հոգին

«քաղցեց», և t [նա] ծնկի իջավ [իր] Արարիչի առջև . . . հզոր աղոթքով» (Ենովս 1.3–4)։ Այդ աղոթքում նա սկսեց ճանաչել Փրկիչին և իմացավ, որ մենք մեծ արժեք ունենք, սիրված ենք և կարող ենք ներվել մեր սխալների համար, և իսկապես Աստծո զավակներն ենք։

Երրորդը, մենք կարող ենք բարձրացնել ուրիշների կյանքը Քրիստոսի խոսքերի միջոցով։ Ճիշտ, ինչպես Ենովսը ճիշտ ժամանակին և տեղում էր, որտեղ Քրիստոսի խոսքերը դիպան նրա սրտին, Տերը կանի Իր բաժինը՝ դիպչելու նրանց սրտերին, ում հետ մենք ցանկանում ենք կիսվել ավետարանով։ Մեզանից շատերը զուցե հուսալքված են զգացել, երբ մենք փորձել ենք հրավիրել որևէ մեկին լսելու ավետարանը, որովհետև մեր ցանկացած արդյունքը չի հետևել։ Անկախ արդյունքից, Տերը հրավիրում է մեզ բացել մեր բերանը և կիսվել ուրիշների հետ ավետարանի ուղերձով։

Երկու տարի առաջ Տերը դիպավ իմ սիրելի մոր սրտին, որն օգնեց նրան ընդունել մկրտության արարողությունը։ Ես այդ օրվա իրականացմանը սպասել էի շուրջ 35 տարի։ Որպեսզի նա կայացներ այդ որոշումը, Եկեղեցու շատ անդամներ իսկապես սպասավորել էին նրան, ինչպես Քրիստոսը կսպասավորեր։ Մի կիրակի նա զգաց, որ պետք է գար եկեղեցի։ Նա հետևեց հուշմանը։ Երբ նստած էր առջևի շարքում և սպասում էր հաղորդության ծառայության սկսելուն, մի չորս տարեկան տղա կանգնեց նրա առջև և նայեց նրան։ Նա ողջունեց նրան ժպիտով։ Փոքրիկ տղան արագ հեռացավ նրանից և քայլեց հետ իր սեփական տեղը, որը շարքի մյուս կողմում էր, որտեղ մայրս էր նստած։ Այդ փոքրիկ տղան վերցրեց ինչ-որ բան իր աթոռից, հետ եկավ, մի երգարան տվեց մայրիկիս ու վերադարձավ իր տեղը։ Մայրս նկատեց, որ ժողովատանը յուրաքանչյուր աթոռի վրա մի երգարան էր դրված։ Նա հեշտությամբ կարող էր վերցնել դրանցից մեկը կողքի աթոռի վրայից։ Սակայն նա շատ տպավորված էր տղայի բարության անմեղ արարքից, որը նա սովորել էր իր տանը և եկեղեցում։ Դա մի նուրբ պահ էր նրա համար։ Նա ուժեղ տպավորություն էր ստացել, որ Աստված հրավիրում էր իրեն գալ և հետևել Փրկիչին։ Նա զգաց, որ պետք է մկրտվեր։ Այդ փոքր տղան չէր ակնկալում շնորհակալություն նրա համար, ինչ արեց, բայց նա ուղղակի արեց այն, ինչ կարող էր՝ Աստծո խոսքով ապրելու և իր մերձավորին սիրելու համար։ Նրա բարությունը առաջացրեց սրտի մի կարևոր փոփոխություն իմ մոր մեջ։

Քրիստոսի խոսքերը խորապես կդիպչեն սրտերին և կբացեն աչքերը նրանց, ովքեր դեռ չեն տեսնում Նրան։ Էմմաուս տանող ճանապարհին երկու աշակերտ քայլում էին Հիսուսի հետ։ Նրանք տխուր էին և չէին հասկանում, որ Փրկիչը հաղթել էր մահին։ Իրենց վշտի մեջ, նրանք չճանաչեցին, որ կենդանի Քրիստոսը քայլում էր իրենց հետ։ Չնայած Հիսուսը «մեկնում էր նորանց՝ ինչ որ գրքերի մէջ գրուած էր իր մասին», նրանք այնուամենայնիվ չճանաչեցին Նրան՝ որպես հարություն առած Փրկիչ, մինչև որ նստեցին և հաց կտրեցին Նրա հետ։ Այդ ժամանակ միայն նրանց «աչքերը» բացվեցին։ Երբ մենք կամ մեր ընկերները, ծանոթները, հարևանները, սնուցվեն և հաց կտրեն Նրա հետ, մեր հասկացողության աչքերը կբացվեն։ Երբ աշակերտները Էմմաուսում մտածեցին հարություն առած Փրկիչի հետ իրենց ժամանակաընթացքի մասին, նրանք ասացին, որ իրենց սրտերը բորբոքվում էին իրենց ներսում, երբ Նա բացում էր գրքերն իրենց համար (տես Ղուկաս 24.27–32)։ Սա ճշմարիտ կլինի մեզանից բոլորի համար։

Եզրափակում

Եզրափակելով, բերում եմ վկայություն, որ Քրիստոսի խոսքերով սնվելը կարող է տեղի ունենալ ամեն ժամանակ և ամեն առիթով, եթե մենք պատրաստում ենք մեր սրտերը՝ նրանց ընդունելու համար։ Քրիստոսի խոսքերով սնվելը կբերի կենսապահովող հայտնություն, կվերահաստատի մեր ճշմարիտ ինքնությունը և արժեքը Աստծո առջև՝ որպես Նրա զավակ, և կառաջնորդի մեր ընկերներին դեպի Քրիստոս և հավիտենական կյանք։ Թույլ տվեք ավարտել՝ արձագանքելով Նեփիի հրավերին, երբ նա ասաց. «Ուստի, դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ՝ ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ։ Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք» (2 Նեփի 31.20)։ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։ ■

ԵՐԵՑ ԴԵՅՎԻԴ Փ. ՀՈՄԵՐ
Յոթանասունից

Լսել Նրա ձայնը

Այդքան բազմաթիվ մրցակցող ձայներով աշխարհում, մեր Երկնային Հայրը հնարավոր է դարձրել մեզ համար՝ լսել և հետևել Իր ձայնին:

Այսօր, վաղ առավոտյան, իմ կնոջ եղբայրը նրան մի երկտող տվեց, որը կինսգրել էր իր մորը շատ տարիներ առաջ: Այդ ժամանակ Քույր Հոմերը մի փոքրիկ աղջիկ էր: Մասնավորապես, նրա երկտողն ասում էր. «Սիրելի մայրիկ, այնքան եմ ափսոսում, ես չբերեցի իմ վկայությունն այսօր, բայց ես սիրում եմ քեզ»: Երբ մենք գնացինք նախաճաշելու, ես մտածեցի, որ դա հետաքրքիր բան էր: Այսպիսով ես նստեցի և գրեցի մի երկտող, որն ասում էր. «Սիրելի Նախագահ Նելսոն, ես ափսոսում եմ, որ այսօր ելույթ չունեցա, բայց ես սիրում եմ ձեզ»: Ինչ-որ տեղ դա ճիշտ չէր թվում: Այսպիսով, ահա մենք այստեղ ենք, և ես երջանիկ եմ ավելացնել իմ խոսքերը նրանց, որոնք խոսվել են այսօրվա նիստում:

Շատ տարիներ առաջ ես ճանապարհորդում էի մի փոքրիկ օդանավով, որի կառավարման վահանակի մոտ մի նորավարտ օդաչու էր: Մեր թռիչքի վերջում մեզ վայրէջքի ազդանշան տրվեց: Բայց, երբ մոտենում էինք գետնին, ես լսեցի ահազանգ օդաչուի խցիկում, որը զգուշացնում էր օդաչուին վեր բարձրանալ: Օդաչուն նայեց ավելի փորձառու երկրորդ օդաչուին, ով մատնացույց էր անում դեպի ներքև՝ վազքուղուց հեռու, և ասաց «Այժմ»:

Մեր օդանավը կտրուկ շարժվեց դեպի ձախ և ներքև, ապա հետ բարձրացավ համապատասխան բարձրության վրա, վերադարձավ վայրէջքի սխեմային, և անվտանգ վայրէջք կատարեց մեր նպատակակետում: Հետագայում մենք իմացանք, որ մեկ այլ օդանավի թռիչքի ազդանշան էր տրվել: Եթե հետևեինք ահազանգի հրահանգներին, մենք ուղղությունը կփոխեինք դեպի դիմացից եկող ինքնաթիռը, և ոչ թե հեռու կգնայինք դրանից: Այս փորձառությունն ուսուցանեց ինձ երկու կարևոր դաս. Առաջինը՝ մեր կյանքի վճռորոշ պահերին մենք կլսենք բազմաթիվ ձայներ, որոնք մրցակցում են մեր ուշադրությունը գրավելու համար: Եվ երկրորդը՝ կարևոր է, որ մենք լսենք ճիշտ ձայներին:

Մրցակցող ձայներ

Մենք ապրում ենք բազմաթիվ ձայներով աշխարհում, որոնք ձգտում են գրավել մեր ուշադրությունը: Բոլոր վերջին նորություններով, թվիթներով, բլոգներով, առդիոֆայլերով և Ալեքսի, Սիրիի համոզիչ խորհուրդներով հանդերձ, մենք կարող ենք դժվարությամբ կողմնորոշվել, թե որ ձայներին վստահել: Երբեմն կյանքում մենք առաջնորդվում ենք ամբոխավարությամբ, մտածելով, որ մեծամասնությունը կապահովի ճշմարտության լավագույն աղբյուրը: Այլ պահերի մենք «կանգ ենք առնում . . . երկու կարծիքների միջև»,[1] նախընտրելով լինել «ոչ սառը, ոչ տաք»:[2] Այնուամենայնիվ, այլ դեպքերում մենք հետևում ենք, թե ինչն է հարմար, կենտրոնանում մեկ ձայնի կամ հարցի վրա՝ մեզ ուղղորդելու համար, կամ բացառապես հիմնվում մեր իսկ մտածելու ունակության վրա:

Չնայած այդ մոտեցումներից յուրաքանչյուրը կարող է օգտակար լինել, փորձառությունն ուսուցանում է, որ դրանք միշտ չէ, որ վստահելի են: Այն, ինչ ընդունված է, միշտ չէ, որ լավագույնն է: Երկու կարծիքների միջև կանգ առնելը չի հանգեցնում ոչ մի ուղղությանն: Հարմարավետությունը հազվադեպ է տանում դեպի այն բաները, որոնք կարևոր են: Մեկ ձայնի կամ հարցի վրա սևեռվելը կարող է վնասել մեր տեսնելու ունակությունը: Եվ միմիայն մեր սեփական մտածողությանը վստահելով, կարող ենք գնալ դեպի մտքի

գերինտելեկտուալ ընդարմացում: Եթե մենք զգույշ չլինենք, սխալ ձայները կարող են մեզ հեռու քաշել ավետարանի կենտրոնից դեպի վայրեր, որտեղ հավատքը դժվար է պահպանել, և մենք գտնում ենք ոչ ավելի, քան դատարկություն, դառնություն և անբավարարվածություն:

Լսել սխալ ձայներ

Թույլ տվեք ցուցադրել, թե ինչ նկատի ունեմ ես՝ օգտագործելով մի համանմանություն և սուրբ գրությունից մի օրինակ: Լեռնագնացները սովորաբար 8000 մետրից վեր բարձրությունը անվանում են «մահվան զոնա», որովհետև այդպիսի բարձունքներում բավականաչափ թթվածին չկա կյանք ապահովելու համար: Մահվան զոնայի համար կա հոգևոր համարժեք: Եթե մենք շատ ժամանակ ենք անցկացնում անհավատության վայրերում, թվացյալ լավ միտումներ ունեցող ձայները զրկում են մեզ հոգևոր թթվածնից, որի կարիքը մենք ունենք:

Մորմոնի Գրքում մենք կարդում ենք Կորիհորի մասին, ով այդպիսի փորձառություն ունեցավ: Նա մեծ ժողովրդականություն էր վայելում, որովհետև իր ուսմունքները հաճելի էին մարմնական մտածողության [համար]»:[3] Նա ասում էր, որ ծնողներն ու մարգարեներն ուսուցանում են հիմար ավանդույթներ, որոնք նախատեսված են սահմանափակել ազատությունը և հավերժացնել տգիտությունը:[4] Նա պնդում էր, որ մարդիկ պետք է ազատ լինեն՝անելու այն, ինչ իրենք են նախընտրում, որովհետև պատվիրանները ոչ այլ ինչ են, քան հարմարավետ սահմանափակումներ:[5] Նրա համար հավատքը Հիսուս Քրիստոսի Քավության հանդեպ «մոլագար մտքի արդյունք» էր, որը ստեղծվել էր մի էակի կողմից, ով չէր կարող գոյություն ունենալ, որովհետև չէր կարող տեսանելի լինել:[6]

Կորիհորը այնպիսի խռովություն ստեղծեց, որ նրան բերեցին գլխավոր դատավորի և քահանայապետի առաջ: Այնտեղ նա վեր կացավ «մեծ փքուն խոսքերով», քննադատեց առաջնորդներին և նշան պահանջեց: Նշանը տրվեց: Նա զարկվեց այնպես, որ չկարողացավ խոսել: Այդ ժամանակ Կորիհորը հասկացավ, որ ինքը խաբվել էր, և մտածելով թանկարժեք ճշմարտությունների մասին, որոնցից հեռացելէր, նա ողբաց՝ ասելով. «Ես միշտ գիտեի»:[7]

Կորիհորը հետագայում ուտելիք էր մուրում, մինչև մահացու ոտնակոխ արվեց մի խումբ Զորամացիների կողմից:[8] Նրա պատմության վերջին հատվածը պարունակում է այս սթափեցնող միտքը. «Եվ այսպես, մենք տեսնում ենք վերջը նրա, ով խեղաթյուրում է Տիրոջ ուղիները. և այսպես, մենք տեսնում ենք, որ դևը չի աջակցի իր զավակներին վերջին օրը, այլ արագ քարշ կտա նրանց ներքև՝ դեպի դժոխք»:[9]

Ճիշտ ձայնը

Քանի որ մեր Երկնային Հայրը ավելի լավ [բաներ] է կամենում մեզ, Նա հնարավոր է դարձնում մեզ համար լսել Իր ձայնը: Շատ հաճախ մենք լսում ենք Նրան տպավորությունների միջոցով, որոնք տրվում են Սուրբ Հոգու կողմից: Սուրբ Հոգին Աստվածագլխի երրորդ անդամն է: Նա վկայում է Հոր և Որդու մասին,[10] ուղարկվել է «ուսուցանելու [մեզ] բոլոր բաները»,[11] և «ցույց կտա [մեզ] բոլոր բաները, որոնք [մենք] պիտի անենք»:[12]

Հոգին խոսում է տարբեր մարդկանց հետ տարբեր ձևով, և Նա կարող է խոսել նույն մարդու հետ տարբեր ձևերով տարբեր ժամանակներում: Արդյունքում, սովորելով այն բազմաթիվ ուղիները, որոնցով Նա խոսում է մեզ հետ, մենք փնտրտուքի մեջ ենք ողջ կյանքում: Երբեմն, Նա խոսում է մեր «մտքում և [մեր] սրտում»[13] մի ձայնով, որը մեղմ է, սակայն հզոր, ներթափանցելով «նրանց մեջ . . . որ լսում են, մինչև սրտի խորքը»:[14] Այլ դեպքերում Նրա տպավորությունները «զբաղեցնում են [մեր] մտքերը» կամ «ներգործում . . . [մեր] զգացումների վրա»:[15] Այլ դեպքերում, մեր կուրծքը «կայրվի [մեր] ներսում»:[16] Իսկ մյուս դեպքերում, Նա լցնում է մեր հոգիները ուրախությամբ, լուսավորում է մեր մտքերը,[17] կամ խոսում խաղաղություն մեր անհանգիստ սրտերին:[18]

Լսել Նրա ձայնը

Մենք կգտնենք մեր Հոր ձայնը շատ տեղերում: Մենք կգտնենք այն, երբ աղոթում ենք, երբ ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, հաճախում ենք եկեղեցի, մասնակցում հավատարիմ քննարկումների կամ տաճար գնում: Անշուշտ, մենք կգտնենք այն հենց այս շաբաթվա համաժողովում:

Այսօր մենք հաստատեցինք 15 տղամարդկանց՝ որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ: Նրանց հոգևորությունը և փորձառությունը տալիս է նրանց մի առանձնահատուկ հեռանկար, որի կարիքը մենք խիստ ունենք: Նրանց ուղերձները հեշտ է գտնել և ասվում են բացառիկ հստակությամբ: Դրանք պատմում են մեզ այն, ինչ Աստված է կամենում, որ մենք իմանանք, անկախ նրանից դրանք ժողովրդականություն վայելում են, թե ոչ:[19]

Երբ Նրա ձայնը փնտրում ենք այս վայրերից որևէ մեկում՝ լավ է, բայց նույնիսկ ավելի լավ է փնտրել այն դրանցից շատերի մեջ: Եվ երբ մենք լսում ենք այն, մենք պետք է հետևենք ուղղորդմանը, որ տրվում է: Հակոբոս Առաքյալն ասել է. «Բայց խօսքը անող եղէք, եւ ոչ միայն լսողներ»:[20] Իսկ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը մի անգամ ուսուցանել է. «Մենք նայում ենք: Սպասում ենք: Լսում ենք այդ հանգիստ մեղմ ձայնը: Երբ այն խոսում է, իմաստուն տղամարդիկ և կանայք հնազանդվում են»:[21]

Երբ ուղղորդումը դանդաղ է գալիս

Մեր մասնագիտական կյանքի վաղ շրջանում ինձ և Քույր Հոմերին խնդրեցին ընդունել փոփոխություն աշխատանքի հանձնարարության մեջ: Այդ ժամանակ դա մեզ թվաց կարևոր որոշում: Մենք ուսումնասիրեցինք, ծոմ պահեցինք, աղոթեցինք, բայց պատասխանը դանդաղում էր: Ի վերջո, մենք որոշում կայացրինք և առաջ գնացինք: Երբ արեցինք դա, մենք վստահություն զգացինք և շուտով հասկացանք, որ դա լավագույն որոշումներից մեկն էր, որ մենք երբևէ կայացրել էինք:

Արդյունքում, մենք սովորեցինք, որ պատասխանները երբեմն դանդաղ են գալիս: Սա կարող է լինել այն պատճառով, որ ճիշտ ժամանակը չէ, որովհետև պատասխանի կարիք չկա, կամ որովհետև Աստված վստահում է մեզ, որ որոշումը ինքներս կայացնենք: Երեց Ռիչարդ Գ. Սքոթը մի անգամ ուսուցանել է, որ մենք պետք է երախտապարտ լինենք այդպիսի ժամանակների համար, և տվել է այս խոստումը. «Երբ ապրում եք արժանի և ձեր ընտրությունը Փրկիչի ուսմունքների համաձայն է, և դուք պետք է գործեք, առաջ գնացեք վստահությամբ: . . . Աստված թույլ չի տա ձեզ շատ հեռուն գնալ, առանց նախազգուշացնող տպավորության, եթե դուք սխալ որոշում եք ընդունել»:[22]

Մենք պետք է ընտրենք

Եվ այսպիսով, մենք պետք է որոշենք՝ բոլոր այդ տարբեր ձայների միջից ընտրել այն, որին մենք պիտի հնազանդվենք: Արդյո՞ք մենք կհետևենք աշխարհի կողմից երաշխավորված անվստահելի ձայներին, թե կանենք պահանջվող աշխատանքը՝ թույլ տալով, որ մեր Հոր ձայնը առաջնորդի մեզ մեր որոշումներում և պաշտպանի մեզ վտանգից: Որքան ավելի ջանասիրաբար ենք որոնում Նրա ձայնը, այնքան ավելի հեշտ է դառնում լսելը: Բանն այն չէ, որ Նրա ձայնն է բարձրանում, այլ այն, որ մեր լսելու ունակությունն է մեծանում: Փրկիչը խոստացել է, որ եթե մենք «ականջ դնենք [Նրա] ցուցումներին և ունկնդրենք [Նրա] խորհրդին», Նա «կտա [մեզ] ավելին»:[23] Ես վկայում եմ, որ այս խոստումը ճշմարիտ է մեզանից յուրաքանչյուրի համար:

Մոտավորապես մեկ տարի առաջ մենք կորցրինք իմ ավագ եղբորը ողբերգական ավտովթարի հետևանքով: Ջոնի վաղ տարիները լի էին խոստումով և ձեռքբերումներով: Բայց, երբ նա ծերացավ, կոտրված մարմինը և չհամագործակցող միտքը նրա կյանքը դժվարացրին: Քանի որ



բժշկումը, որի հույսը նա ուներ, չեկավ այս կյանքում, Ջոնը համենայն դեպս կառչեց իր հավատքից, վճռելով համբերել մինչև վերջ:

Այսպիսով, ես գիտեմ, որ Ջոնը կատարյալ չէր, բայց ես զարմանում էի, թե ինչն էր նրան այդպիսի դիմացկունություն տալիս: Շատ ձայներ հրավիրում էին նրան ոչ պատշաճավայրեր, բայց նա որոշեց չգնալ: Փոխարենը, նա ամեն ինչ արեց ավետարանի կենտրոնում իր կյանքը խարսխելու համար: Նա ապրեց իր կյանքն այնտեղ, որովհետև նա գիտեր, որ կգտներ իր Տիրոջ ձայնն այնտեղ, նա ապրեց իր կյանքն այնտեղ, որովհետև գիտեր, որ այնտեղ կուսուցանվեր:

Եզրափակում

Քույրեր և եղբայրներ, այդքան բազմաթիվ մրցակցող ձայներով աշխարհում, ես վկայում եմ, որ մեր Երկնային Հայրը հնարավոր է դարձրել մեզ համար՝ լսել և հետևել Իր ձայնին: Եթե մենք ջանասեր լինենք, Նա և Նրա Որդին կտան մեզ ուղղորդումը, որին ձգտում ենք, ուժը, որի կարիքն ունենք, և երջանկությունը, որը մենք բոլորս ցանկանում ենք: Հիսուս Քրիստոսի անունով. ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Գ Թագավորաց 18.21
2. Տես Հայտնություն 3.15-16:
3. Ալմա 30.53, տես նաև Ալմա 30.18:
4. Տես Ալմա 30.14, 23–24, 27:
5. Տես Ալմա 30.17, 23, 27:
6. Ալմա 30.16, տես նաև Ալմա 30.13, 15, 26, 28:
7. Ալմա 30.31,52, տես նաև Ալմա 30.23, 28, 43, 50, 53:
8. Տես Ալմա 30.56, 58-59:
9. Ալմա 30.60
10. Տես 2 Նեփի 31.18:
11. Հովհաննես 14.26
12. 2 Նեփի 32.5, տես նաև 2 Նեփի 32.1–4
13. Վարդապետություն և Ուխտեր 8.2
14. 3 Նեփի 11.3
15. Վարդապետություն և Ուխտեր 128.1
16. Վարդապետություն և Ուխտեր 9.8
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 6.14-15, 11.13:
18. Տես Վարդապետություն և Ուխտեր 6.22-23:
19. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.38:
20. Հակոբոս 1.22
21. Thomas S. Monson, “The Spirit Giveth Life,” *Liahona,* June 1997, 4.
22. Ռիչարդ Գ. Սքոթ, «Օգտագործել աղոթքի մեծագույն պարգևը», *Լիահոնա,* մայիս 2007, 10:
23. 2 Նեփի 28.30



ԵՐԵՑ ՋԵՖՐԻ Ռ. ՀՈԼԼԱՆԴ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Սիա՛ Աստծո Գառը

Մեր փոփոխված կիրակնօրյա ծառայությունը պետք է ընդգծի Տիրոջ Ընթրիքի հաղորդությունը որպես մեր շաբաթական երկրպագության սրբազան, հասկացված հիմնական մաս:

Ես լավ էի զգում մինչև այն պահը, երբ արցունքներ տեսա այս երգչախմբի երիտասարդների աչքերում: Այդ արցունքներն ավելի պերճախոս քարոզ են, քան ես երբևէ կարող եմ ասել:

Ոչի եզրից նայելով անհամբեր բազմության վրայով, ովքեր ձգտում էին մկրտվել նրա կողմից, Հովհաննես Մկրտիչը հեռվում տեսավ իր զարմիկ Հիսուս Նազովրեցուն, ով վճռականորեն քայլում էր դեպի նա՝ խնդրանքով դիմելու այդ նույն արարողության համար: Ակնածալից, բայց մոտ գտնվողներին լսելի ձայնով, Հովհաննեսն արտասանեց այն հիացմունքի խոսքերը, որոնք դեռևս երկու հազարամյակ անց ոգեշնչում է մեզ. «Սիա Աստուծոյ Գառը»:[1]

Ուսանելի է, որ վաղուց մարգարեացած Հիսուսի այդ նախակարապետը չկոչեց Նրան «Եհովա» կամ «Փրկիչ» կամ «Քավիչ» կամ, նույնիսկ, «Աստծո Որդի», որոնք բոլորն էլ համապատասխան կոչումներ էին: Ոչ, Հովհաննեսն ընտրում է իր ժողովրդի կրոնական ավանդույթներում ամենավաղ և թերևս ամենատարածված կերպարը: Նա օգտագործում է զոհաբերվող գառի խորհրդանիշը, որը մատուցվում է ընկած աշխարհի մեղքերի ու վշտերի, և այդ աշխարհի բոլոր ընկած մարդկանց քավության համար:

Խնդրում եմ թույլ տվեք մի փոքր պատմել այդ պատմության մասին:

Եդեմի պարտեզից արտաքսվելուց հետո Ադամն ու Եվան ստիպված էին առերեսվել կործանարար ապագայի հետ: Մեզ համար բացելով մահկանացու և ժամանակավոր կյանքի դուռը, նրանք փակեցին անմահության և հավերժական կյանքի դուռն իրենց համար: Հանուն մեզ իրենց գիտակցաբար կատարած ընտրության հետևանքով առաջացած մեղքի պատճառով, այժմ նրանք բախվեցին ֆիզիկական մահվան և հոգևոր արտաքսման, և հավիտյան կտրվեցին Աստծո ներկայությունից:[2] Ի՞նչ պետք է նրանք անեին: Արդյո՞ք ելք կար այդ վիճակից: Մենք չգիտենք, թե պարզապես այդ երկուսին որքանով էր թույլ տրված հիշել դեռևս պարտեզում տրված հրահանգները, բայց նրանք իրոք հիշում էին, որ պետք է Աստծուն պարբերաբար զոհ մատուցեին մաքուր, անարատ գառ՝ իրենց հոտի արու առաջնեկին:[3]

Ավելի ուշ մի հրեշտակ եկավ բացատրելու, որ այդ զոհաբերությունը մի տեսակ էր, նախատիպ էր, որը հանուն նրանց կներկայացվեր աշխարհի Փրկիչի կողմից, որը պետք է գար: «Դա Հոր Միածնի զոհաբերության նմանությունն է»,- հրեշտակն ասաց: «Ուստի . . . դու պետք է ապաշխարես և կանչես առ Աստված առհավետ՝ Որդու անունով»:[4] Բարեբախտաբար, ելք կար այդ վիճակից և նույնիսկ՝ դեպի վեր:

Երկնային նախամահկանացու խորհրդի ժամանակ Աստված Ադամին ու Եվային (և մեզ բոլորիս) խոստացավ, որ օգնությունը կգա Նրա մաքուր, անարատ Որդուց՝ Աստծո Գառից, «մորթված աշխարհի հիմնադրումից ի վեր»,[5] ինչպես Հովհաննես առաքյալը հետագայում կնկարագրի Նրան: Զոհաբերելով իրենց փոքր խորհրդանշական գառները մահկանացու կյանքում, Ադամը և նրա սերունդը արտահայտում էին իրենց հասկացողությունը և իրենց կախվածությունը Հիսուս

Օծյալի քավող զոհաբերությունից:[6] Հետագայում անապատի խորանը կդառնար այս արարողության վայրը, իսկ դրանից հետո այն տաճարը, որը Սողոմոնը կկառուցեր:

Դժբախտաբար, որպես անկեղծ ապաշխարության և հավատարիմ ապրելակերպի խորհրդանիշ, իրենց անարատ փոքրիկ գառների այս ծիսական զոհաբերությունը իրեն չարդարացրեց, որքան որ բացահայտում է Հին Կտակարանի այդ մասը: Բարոյական վերաբերմունքը, որը պետք է զուգորդեր այդ զոհաբերություններին, երբեմն, չէր տևում այնքան երկար, որ արյունը չորանար քարերի վրա: Ամեն դեպքում, դա այնքան երկար չտևեց, որ կանխեր առաջին սերնդի եղբայրասպանությունը, երբԿայենը սպանեց Աբելին:[7]

Զարմանալի չէ, որ դարեր շարունակ նման փորձությունների և խնդիրների պատճառով երկնքի հրեշտակները վերջապես ուրախ երգեցին, երբ ծնվեց Հիսուսը՝վաղուց խոստացված Մեսիան: Իր կարճատև մահկանացու ծառայությունից հետո Զատիկի այս մաքուր ոչխարն Իր աշակերտներին նախապատրաստեց Իր մահվան համար՝ ներկայացնելով Տիրոջ ընթրիքի հաղորդությունը, որը Եդեմից դուրս ներկայացված արարողության ավելի անձնական ձև էր: Դեռ կլինի ողջակեզ, դեռ անհրաժեշտ կլինի զոհաբերություն, բայց այն կլինի խորհրդանշական, որն ավելի խորն է, ավելի ինքնաճանաչողական և անձնական, քան առաջնեկ գառան սպանությունը: Իր Հարությունից հետո Փրկիչը նեփիացիներին ասաց այդ մասին.

«Դուք այլևս ինձ չպետք է մատուցեք արյուն թափելը: . . .

. . . որպես զոհ դուք պիտի մատուցեք ինձ կոտրված սիրտ և փշրված հոգի: Եվ ով որ գալիս է ինձ մոտ կոտրված սրտով և փշրված հոգով, նրան ես կմկրտեմ կրակով և Սուրբ Հոգով: . . .

. . . Ուստի ապաշխարե՛ք . . . և փրկվեք»:[8]

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, տներում ավետարանի ավելի շատ ուսումնասիրության ոգևորիչ նոր շեշտադրմամբ, շատ կարևոր է, որ

հիշենք, որ մեզ դեռևս պատվիրված է «գնալ աղոթքի տուն և քո հաղորդությունները մատուցես իմ սուրբ օրը»:[9] Տանը կենտրոնացած ավետարանի ուսուցման համար ժամանակ գտնելուց բացի, մեր փոփոխված կիրակնօրյա ծառայությունը նույնպես պետք է նվազեցնի ժողովի ժամանակացույցի բարդությունն այնպես, որ պատշաճ կերպով շեշտի Տիրոջ Ընթրիքի հաղորդությունը՝ որպես մեր շաբաթական երկրպագության սրբազան, հասկացված հիմնական մաս: Յուրաքանչյուրս անհատապես պիտի հիշի, որ Քրիստոսը մահացավ կոտրված սրտով՝ ամբողջապես միայնակ կրելով ողջ մարդկային ընտանիքի մեղքերը և վշտերը:

Քանի որ մենք նպաստեցինք այդ օրհասական բեռին, այդ պահը պահանջում է մեր հարգանքը: Այդպիսով, մեզ խրախուսվում է մեր ծառայություններին ներկայանալ շուտ և լինել ակնածալից, հագնված պատշաճ՝ սրբազան արարողությանը մասնակցելու համար: «Կիրակնօրյա լավագույնը» մի քիչ կորցրել է իր իմաստը մեր ժամանակներում և հարգելով Նրան, ում մոտ գալիս ենք, մենք պարտավոր ենք վերականգնել հանգստության օրվա հագուստի ու արտաքին տեսքի այդ ավանդույթը, երբ և որտեղ կարող ենք:

Ինչ վերաբերում է ճշտապահությանը, ուշացումը կներվի այն օրհնված մայրերին, ովքեր երեխաների հետ, «Cheerios» նախաճաշիկներով և տակդիրների պայուսակներով արագ տեղաշարժվում են զանգվածային խառնաշփոթում, և որոնց բախտը բերել է, որ ընդհանրապես հասցրել են եկեղեցի գալ: Ավելին, կլինեն նաև ուրիշներ, որոնք անխուսափելիորեն կունենան արտակարգ իրավիճակներ հանգստության օրվա առավոտյան: Այնուամենայնիվ, այդ վերջին խմբի մարդկանց մենք ասում ենք, որ հազվադեպ ուշացումը հասկանալի է, բայց եթե արտակարգ իրավիճակ է ամեն կիրակի օր, ապա մենք խստորեն խորհուրդ ենք տալիս, որ դուք ապագայում կանխարգելող միջոցառումներ ձեռնարկեք այդ արտակարգ իրավիճակներից խուսափելու համար:

Նմանապես, մեր առաքելական խնդրանքն է, որ աղմուկը նվազեցնենք մեր շինությունների սրբավայրում: Մենք սիրում ենք զրուցել միմյանց հետ և մենք պետք է դա անենք, քանի որ դա Եկեղեցի հաճախելու ուրախություններից մեկն է, բայց այն *չպետք է* այդքան բառացի տեղի ունենա մի վայրում, որը հատուկ նվիրագործված է երկրպագության համար: Վախենում եմ, որ այցելուները, ովքեր մեր

հավատքից չեն, երբեմն ցնցված են բարձր աղմուկից՝ մի միջավայրում, որը պետք է բնութագրվի աղոթքով, վկայությամբ, հայտնությամբ և խաղաղությամբ: Գուցե Աստված նույնպես մի փոքր ցնցված է:

Մեր հաղորդության ժողովներում ակնածալից վերաբերմունքը կաճի, եթե նախագահողները նախքան ժողովը սկսելը բեմի վրա են, լսում են նախերգանքը և ակնածանքով օրինակ են ծառայում մնացածներին, որոնք պետք է ընդօրինակեն դա: Եթե խոսակցություն է բեմի վրա, մենք չպետք է զարմանանք նստածների խոսակցության վրա: Շնորհավորում ենք այն եպիսկոպոսներին, որոնք հանում են այն հայտարարությունները, որոնք նվազեցնում են երկրպագության ոգին: Օրինակ, ես չեմ կարող պատկերացնել Զաքարիայի նման մի քահանայի Տիրոջ հնագույն տաճարում, ով պատրաստվում է մասնակցել իր ամբողջ կյանքի համար քահանային տրված միակ արտոնությանը, ես չեմ կարող պատկերացնել նրան զոհասեղանի առջև դադար առնելիս, որպեսզի հիշեցնի մեզ, որ Փրկիչի երկրպագության հետ կապ չունեցող միջոցառմանը մնում է միայն վեց շաբաթ և գրանցումը շուտով կավարտվի:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, Տիրոջ կողմից կարգված այս ժամը մեր շաբաթվա ամենասուրբ ժամն է: Ըստ պատվիրանի, մենք հավաքվում ենք Եկեղեցում ամենից շատ անդամների կողմից ընդունված արարողության համար: Մենք պետք է շարունակենք հանուն Նրա հիշողության, ով հարցրեց, թե այն բաժակը, որը Նա պատրաստվում էր խմել, կարող է հեռացվել իրենից, քանի որ Նա գիտեր, որ հանուն մեզ այն չէր կարող հեռացվել: Օգտակար կլինի, եթե մենք հիշենք, որ հենց այդ նույն պահին այդ բաժակի խորհրդանիշը դանդաղ իր ճանապարհն էր հարթում դեպի մեզ՝ 11 կամ 12 տարեկան սարկավագի ձեռքով:

Երբ սուրբ ժամը գալիս է, որպեսզի ներկայացնենք Տիրոջ համար մեր զոհաբերության ընծան, մենք ունենք մեր մեղքերը, թերությունները և խնդիրները, որոնք կարող ենք շտկել, դրա համար էլ մենք այստեղ ենք: Բայց մենք կարող ենք ավելի շատ հաջողակ լինել նման խառնաշփոթի մեջ, եթե մենք ուշադիր ենք բոլոր կողմերից հավաքված մյուս կոտրված սրտերի և վշտացած հոգիների հանդեպ: Մեզանից ոչ շատ հեռու նստած են նրանք, ովքեր, գուցե, հաղորդության արարողության օրհներգի ողջ ընթացքում և քահանաների աղոթքների ընթացքում արտասվել են՝ առերևույթ կամ ներքուստ: Կարո՞ղ ենք լուռ նշումներ անել այդ մասին, և առաջարկել մեր փոքրիկ կտոր սփոփանքի հացը և կարեկցանքի մեր փոքրիկ գավաթը կարո՞ղ ենք նվիրել նրանց, կամ լացող, կարեկցանք պահանջող այն անդամին, ով ներկա չէ, և եթե մեր կողմից սպասավորման փրկագնող գործողություն չլինի, նա կրկին ներկա չի գտնվի հաջորդ շաբաթ, կամ մեր այն եղբայրներին և քույրերին, ովքեր Եկեղեցու անդամներ չեն, բայց մեր եղբայրներն ու քույրերն են: Այս աշխարհում տառապանքի պակաս չկա, լինի դա Եկեղեցու ներսում, թե դրսում, այնպես որ նայեք ցանկացած ուղղությամբ, և դուք կգտնեք այն մարդուն, որի ցավը, կարծես, չափազանց ծանր է, և ում կսկիծը, կարծես, թե ավարտ չունի: «Միշտ հիշելու Նրան»[10] եղանակներից մեկը կլինի այն, որ միանանք Մեծ Բժշկին Իր անվերջանալի գործը կատարելիս՝ բարձրացնելով նրանց բեռը, ովքեր բեռնավորված են, և թեթևացնելով նրանց ցավը, ովքեր վշտահար են:

Սիրելի՛ բարեկամներ, ամեն շաբաթ աշխարհով մեկ հավաքվելով նրա համար, ինչը հուսով ենք, Քրիստոսի փառահեղ քավող պարգևի սրբազան երախտագիտությունն է ողջ մարդկությանը, թող որ մենք հաղորդության զոհասեղանի վրա դնենք «ավելի շատ արցունքներ նրա վշտի համար [և] ավելի շատ ցավ նրա կսկիծի մեջ»: Իսկ հետո, երբ մենք խորհենք, աղոթենք և նորոգենք մեր ուխտը, թող որ մենք այդ սուրբ ժամից վերցնենք «ավելի շատ համբերություն տառապանքի մեջ, . . . ավելի շատ գովք սփոփանքի համար»:[11] Նման համբերության և սփոփանքի համար, նման սրբության և հույսի համար ես բոլորիդ համար աղոթում եմ Նրա անունով, ով կիսեց ներման թանկագին հացը և թափեց փրկագնման սուրբ գինին, Հիսուս Քրիստոսի՝ Աստծո հրաշալի, ողորմած և սուրբ Գառան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես 1.29
2. Տես 2 Նեփի 9.8-9:
3. Տես Մովսես 5.5, տես նաև Ելից 12.3–10:
4. Մովսես 5.7–8, տես նաև Մովսես 5.9:
5. Հայտնություն 13.8
6. See Bible Dictionary, “Anointed One”, տես նաև Սուրբ գրքերի ուղեցույց, «Օծյալ», scriptures.ChurchofJesusChrist.org:
7. Ճակատագրի հեգնանքով, Կայենի կողմից Աբելի սպանությունը, որը վերջին հաշվով ղեկավարվել է սատանայի կողմից, կարող էր առնչվել Կայենի նախորդ բարկությանը, երբ իր զոհաբերվող ընծան մերժվել էր Տիրոջ կողմից, իսկ Աբելինը՝ ընդունվել:

   «Աստված . . . պատրաստել է զոհաբերություն Իր իսկ Որդու պարգևով, որը պիտի ուղարկվեր ժամանակին, որպեսզի ճանապարհ պատրաստեր կամ դուռ բացեր, որի միջով մարդը կարող էր մտնել Տիրոջ ներկայությունը: . . .

   Հավատալով այդ քավությանը կամ փրկագնման ծրագրին, Աբելն ընդունելի ընծա մատուցեց Աստծուն, այսինքն՝ իր հոտերի առաջնեկներին: Կայենը հողի բարիքներից ընծա մատուցեց, որը չընդունվեց: . . . [Նրա զոհաբերությունը պետք է ընդգրկեր] արյուն թափելը» (Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 48, տես նաև 107–8):
8. 3 Նեփի 9.19–20, 22
9. Վարդապետություն և Ուխտեր 59.9
10. Մորոնի 4.3, 5.2
11. “More Holiness Give Me,” *Hymns,* no. 131.

Քահանայության գերագույն նիստ

ԵՐԵՑ ԳԱՐԻ Ի. ՍԹԻՎԵՆՍՈՆ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Քահանայության ձեր աշխատանքային գծատետրը

Ստեղծեք ձեր աշխատանքային գծատետրն այն մասին, թե ինչպես կապացուցեք ինքներդ ձեզ, որ Քրիստոսի աշակերտն եք:

Անցյալ դեկտեմբերին Առաջին նախագահությունը թողարկեց մի հայտարարություն, համաձայն որի 11 տարեկան տղաները «հունվարին ովքեր տվյալ տարվա ընթացքում կդառնան 12 տարեկան, . . . կսկսեն մասնակցել . . . Ահարոնյան Քահանայության քվորումների դասերին»:[1]

Արդյունքում, այս տարվա սկզբում կային բավականին զարմացած 11-ամյա տղաներ, ովքեր ենթադրել էին, որ իրենք կմնան Երեխաների Միությունում, մինչև իրենց հաջորդ ծննդյան տարեդարձը, բայց այժմ հաղորդություն են բաժանում կիրակի օրերին, որպես Եկեղեցու նոր կարգված սարկավագներ:

Մտածում եմ, ովքեր են ավելի զարմացած փոփոխությամբ՝ սարկավագները, թե՞ նրանց ծնողները: Մոտավորապես այդ 80,000 սարկավագներից շատերն այս երեկո ներկա են այստեղ, այս հրաշալի Համաժողովների Կենտրոնում, կամ մասնակցում են տեխնոլոգիական միջոցների շնորհիվ: Բարի գալուստ քահանայության այս մեծ եղբայրությունը:

Այդ փոփոխության շնորհիվ այս ժողովը պատմական է և դա, հավանաբար, Ահարոնյան քահանայության ամենամեծ խումբն է, որը *երբևէ* հաճախել է գերագույն համաժողովի քահանայության գլխավոր նիստին: Այս հատուկ առիթով, ես կցանկանայի իմ ելույթն ուղղել Ահարոնյան Քահանայության երիտասարդ տղամարդկանց:

Սպորտի շնորհիվ սովորած դասեր

Որպես ուսանողներ, ձեզանից շատերը նաև զարգացնում են իրենց տաղանդները, հետաքրքրությունները և հոբբիները դպրոցի լրացուցիչ պարապմունքների կամ դպրոցից դուրս անհատական դասերի, թիմերի և խմբերի՝ ներառյալ սպորտի միջոցով:

Իմ ողջ կյանքում սիրելով սպորտը, ես միշտ հիացել եմ այն մարդկանցով, ովքեր զարգացրել են իրենց մարզական ունակությունները և հանդես եկել բարձր մակարդակով: Որպեսզի ինչ-որ մեկն *իսկապես* հաջողության հասնի որևէ ոլորտում, բացի բնական տաղանդից, անհրաժեշտ է նաև մեծ կարգապահություն, զոհաբերություն և բազմաթիվ ժամերի ուսուցում և հմտությունների կիրառում: Նման մարզիկները հաճախ լսում են մարզիչի երբեմն կոշտ քննադատությունները և հոժարակամ մի կողմ են դնում այն, ինչ ցանկանում են հիմա՝ ապագայում ավելի մեծ բաների հասնելու համար:

Մենք ճանաչում ենք Եկեղեցու անդամների և քահանայություն կրողների, ովքեր հաջողության են հասել մասնագիտական ատլետիկայի բարձրագույն մակարդակներում: Կան բազմաթիվ լավ օրինակներ, բայց ժամանակի սղության պատճառով կարող եմ թվարկել միայն մի քանիսը: Միգուցե ճանաչեք այս մարզիկներից ոմանց՝ Ջերեմի Գուտրի և Բրայզ Հարփեր (բասկետբոլ), Ջաբարի Փարկեր և Ջիմեր Ֆրեդիտ (բասկետբոլ), Ռիկարդո Ռոջաս (ֆուտբոլ), Ուիլյամ Հոպատ (ռեգբիի լիգայում), Թայսոմ Հիլ և Դանիել Սորենսեն (ամերիկյան ֆուտբոլ): Այս մարդիկ բոլորն էլ իրենց բնագավառում մեծ ներդրում են ունեցել:

Չնայած նրանք չափազանց հաջողակ են իրենց մարզաձևում, այդ մարզիկներն առաջինը կխոստովանեն, որ իրենք կատարյալ մարզիկներ կամ կատարյալ մարդիկ չեն: Նրանք շատ են աշխատում լավագույն մարզավիճակում լինելու և ավետարանով ապրելու համար: Նրանք ոտքի են կանգնում, եթե սայթաքում են և ձգտում են դիմանալ մինչև վերջ:

Ուսումնասիրեք աշխատանքային գծատետրը

Թիմային մարզաձևերում ռազմավարությունները մշակվում են խաղերի

որոշ իրավիճակների հիման վրա և գրանցվում աշխատանքային գծատետրում: Մարզիկներն իրենց որոշակի հանձնարարությունների մասին սովորում են յուրաքանչյուր խաղի համար: Հաջողակ խաղացողները սովորաբար հիմնովին ուսումնասիրում են աշխատանքային գծատետրն այնպես, որ երբ ռազմավարությունը որոշվում է, նրանք ճշգրտորեն, գրեթե բնազդաբար, իմանում են, թե ուր գնան և ինչ անեն:

Նմանապես, քահանայության կրողներս նույնպես ունենք թիմ (քվորում) և աշխատանքային գծատետր (սուրբ գրություններ և ժամանակակից մարգարեների խոսքեր):

Դուք զորացնո՞ւմ եք ձեր թիմակիցներին:

Որքանո՞վ լավ եք ուսումնասիրել ձեր աշխատանքային գծատետրը:

Արդյո՞ք լիովին հասկանում եք ձեր հանձնարարությունը:

Դիմակայել ընդդիմությանը

Որպեսզի համեմատությունն ավելի հասկանալի դարձնենք, հայտնի մարզիչները գիտեն իրենց թիմի և հակառակորդի ուժեղ կողմերն ու թույլ կողմերը: Նրանք ստեղծում են ռազմավարություն, որը նրանց հաղթելու ավելի շատ հավանականություն կտա: Ի՞նչ կասեք ձեր մասին:

Դուք գիտեք, թե ինչ գայթակղություններ են առավել խոցելի ձեզ համար, և կարող եք կանխատեսել, թե ինչպես հակառակորդը կփորձի կանգնեցնել և հուսահատեցնել ձեզ: Դուք ստեղծե՞լ եք ձեր ռազմավարությունը և աշխատանքային գծատետրը, որպեսզի իմանաք, թե ինչպես արձագանքել, երբ բախվում եք ընդդիմությանը:

Երբ հանդիպեք բարոյական տարբեր գայթակղություններին, լինի դա ուրիշների շրջապատում, թե միայնակ էկրանին նայելիս, դուք իմանաք ձեր ռազմավարությունը: Երբ ընկերն առաջարկի ալկոհոլ օգտագործել կամ թմրամիջոցներ փորձել, իմանաք, թե ինչպես խաղալ: Դուք կվարժվեք և կիմանաք, թե ինչպես նախապես արձագանքել:

Ռազմավարությունով, աշխատանքային գծատետրով և ձեր դերի իրականացման հստակ հանձնառությամբ, դուք կհասկանաք, որ գայթակղությունն ավելի քիչ է վերահսկում ձեզ: Դուք արդեն որոշում կկայացնեք, թե ինչպես արձագանքել և ինչպես վարվել: Դուք ստիպված չեք լինի ամեն անգամ որոշում կայացնել, երբ հանդիպեք գայթակղությանը:

Տասներկու առաքյալներից մեկը վերջերս կիսվել է մի պատմությամբ, որը լուսաբանում է այդ սկզբունքը: Ավագ դպրոցում, երբ քահանա էր, նա ժամանակ էր անցկացնում իր ընկերների հետ: Մի բան ուտելուց հետո, երբ մեքենա էին վարում, ինչ-որ մեկն առաջարկեց, որ գնան կինոդիտման: Խնդիրն այն էր, որ նա գիտեր, որ չպետք է այդ ֆիլմը դիտեր: Թեև նա անմիջապես զգաց պահի թելադրանքն ու անհանգստությունը, նա ծրագիր ուներ այդ պահի համար: Այդ իրավիճակը հատուկ ծրագրված էր քահանայության իր աշխատանքային գծատետրում:

Խորը շունչ քաշելով և հավաքելով քաջությունը, նա ասաց. «Ինձ չի հետաքրքրում այդ ֆիլմը: Պարզապես իջեցրեք ինձ իմ տան մոտ»,- որը նրանք արեցին: Մի պարզ ռազմավարություն, որը հաղթանակ բերեց: Տարիներ անց, այդ երեկո իր հետ եղած ընկերներից մեկը նկարագրել է, թե ինչպես է այդ օրինակը մեծ ուժ տվել իրեն, որ համարձակորեն դիմակայի իր կյանքի նմանատիպ իրավիճակներին:

Իրավիճակներ աշխատանքային գծատետրից

Եղբայրներից մի քանիսին խնդրել եմ առաջարկել մի քանի ռազմավարություն, որոնք դուք կարող եք ընդգրկել ձեր աշխատանքային գծատետրում: Ահա որոշ ոգեշնչված առաջարկներ.

- Յուրաքանչյուր օր աղոթեք Հիսուս Քրիստոսի մասին ավելի մեծ լույս ու վկայություն ստանալու համար:
- Ուշադիր լսեք ձեր ծնողների, ձեր եպիսկոպոսի, ձեր Երիտասարդ տղաների և քվորումի ղեկավարների ուսմունքները:
- Խուսափեք պոռնոգրաֆիայից և սոցիալական լրատվամիջոցների անբարո բովանդակությունից:
- Հիշեք այն խոստումները, որոնք դուք տվել եք Աստծուն և աշխատեք պահել դրանք:
- Ուսումնասիրեք մեծ մարգարեների սուրբ գրության պատմությունները և ընդօրինակեք նրանց լավ հատկանիշները:
- Օրհնեք Երկնային Հոր զավակներին ծառայության միջոցով:
- Փնտրեք լավ ընկերներ, ովքեր կօգնեն ձեզ դառնալ այն մարդը, որը ցանկանում եք լինել:
- Մասնագիտացեք FamilySearch ծրագրի մեջ և ուսումնասիրեք ձեր ընտանեկան պատմությունը:
- Ապահովության վայրեր մտածեք, որտեղ կարող եք խուսափել չարի ազդեցություններից:

Ջիմմեր Ֆրեդետ

Բրյուս Հարփեր

Դենիել Սորենսեն

Ջերեմի Գաթրի

- Սիրեք և օգնեք զորացնել քահանայության ձեր քվորումի անդամներին:

Ես նաև զրուցել եմ այն մարզիկների հետ, որոնց նկարները սկզբում դիտեցինք: Ինձ համար հետաքրքիր էր, որ լինելով պրոֆեսիոնալ մարզիկներ նրանք իրենց չէին բնութագրում միայն ըստ *իրենց մասնագիտության,* այլ նաև ըստ նրա, թե *ովքեր են իրենք*՝ որպես սիրող Երկնային Հոր որդիներ և Աստծո քահանայություն կրողներ:

Այժմ, եկեք լսենք նրանց մտքերը.

- Ջիմեր Ֆրեդիտը, ով այս նկարում սարկավագ է և սովորում է կապել իր փողկապը, ասում է. «Ես սովորել եմ մեծապես ապավինել ավետարանի ճշմարտացիության մասին իմ գիտելիքին ու հավատքին: Դա առաջնորդել է ինձ լինել . . . քահանայության արժանի կրող և ամենից առավել՝ լինել դրական օրինակ»:
- Բրայզ Հարփերը, ով այս նկարում ամուսնու դերում է, գրում է. «Ես կարծում էի, որ հռչակը, համբավը և լավագույն խաղացողի մրցանակն ինձ երջանիկ կդարձնեն: Ինչ-որ բան պակասում էր: Այսպիսով, ես . . . պատրաստվեցի և [մտա] տաճար: Ես այժմ իմ Երկնային Հոր մոտ [վերադառնալու] ճանապարհին եմ և ունեմ երկնային ընտանիք, որն աշխարհում ամենամեծ ուրախությունն է»:
- Դանիել Սորենսենը, ով այս նկարում միսիոներ է, ասում է. «Լավ աշխատանքային գծատետրն այն ծրագիրն է, որն օգտագործում է թիմի յուրաքանչյուր խաղացողի տաղանդներն ու ուժեղ կողմերը: . . . Երբ ուսումնասիրում և կիրառում եմ Հիսուս Քրիստոսի ավետարանի ուսմունքները, ես իմանում եմ, թե ինչպես օգտագործել իմ ուժեղ կողմերը՝ քահանայությունում ծառայելու համար»:
- Ջերեմի Գուտրին, ով ներկայումս միսիայի նախագահ է, կիսվել է հետևյալ հատվածով. «Երբ 12 տարեկան սարկավագ էի, . . . [Ես զգացի,] որ Հոգին վկայեց ինձ [որ] «այս կյանքը . . . մի ժամանակ է, որ պատրաստվենք հանդիպել Աստծուն»:[2] Խաղի ծրագիրն Աստծո հանդեպ հավատքն է [և] Փրկիչի շնորհիվ ապաշխարության միջոցով այն գործի դնելն է: . . . Աշխատանքային գծատետրը կարելի է գտնել սուրբ գրություններում և ապրող մարգարեների շնորհիվ»:
- Ջաբարի Փարկերը, երեց կարգվելիս, ասում է. «Չեմ կարող պատկերացնել, թե ինչպիսի մարդ կդառնայի, եթե չկայացնեի մկրտվելու այդ որոշումը: . . . Ես շատ երախտապարտ եմ, որ Աստված իմ կյանքում ամեն օր առաջնորդում է ինձ»:
- Ռիկարդո Ռոջասը, ներկայումս ծառայում է որպես ճյուղի նախագահ, ասել է. «[Աստծո] քահանայության միջոցով կարող ենք օգնել Նրա աշխատանքում: Մենք կանչվել ենք, որպեսզի «զորանանք և քաջ լինենք»[3] ճշմարտությունը պաշտպանելիս»: Դա օգնել է նրան հաջողության հասնել ինչպես մասնագիտական կյանքում, այնպես էլ որպես քահանայություն կրող:
- Թայսոմ Հիլը, այս նկարում միսիոներ է և զգում է, որ Հիսուս Քրիստոսի ավետարանն իր կյանքում աշխատանքային գծատետր է ծառայել: Նա կիսվել է. «[Աստծո] ծրագրին հավատալով և անելով ամեն հնարավոր բան այդ գործում իմ դերը կատարելու համար, ես կարողացա մեծ խաղաղություն և երջանկություն զգալ կյանքում և իմանալ, որ Աստված գոհ է իմ ջանքերից»:
- Ուիլյամ Հոպատը, ով այստեղ չորս սերունդների հետ իր մանուկ որդու օրհնությանն է մասնակցում, ասում է, որ ավետարանն օգնել է իրեն «բացահայտել ընդդիմության ռազմավարությունը և ապահովել հոգևոր արդյունավետություն՝ դիմակայելով կրակոտ նետերին և ավելի լավ ծառայել մյուսներին»:

Ի՞նչ կասեք ձեր մասին: Դուք ընդունո՞ւմ եք ձեր *ավելի բարձր* և *ավելի սրբազան* ինքնությունը՝ որպես Աստծո որդի՝ Նրա սուրբ քահանայության կրող: Այդ հավերժական ինքնությունը մտապահելով, ստեղծեք ձեր ռազմավարությունը և քահանայության ձեր աշխատանքային գծատետրը, որոնք կառաջնորդեն ձեզ գայթակղության և ձախորդության ժամանակ: Հաշվի առեք

Ջաբարի Փարքեր

Ռիկարդո Ռոջաս

Թայսոմ Հիլ

Ուիլիամ Հոպեյթ

և՛ հարձակողական և՛ պաշտպանական ռազմավարությունները:

Հարձակողական ռազմավարություններն օգնում են ամրացնել վկայությունները և մեծացնում նեղ և անձուկ արահետում մնալու վճռականությունը: Օրինակներից են՝ կանոնավոր աղոթքը, սուրբ գրությունների ուսումնասիրությունը, եկեղեցի և տաճար հաճախելը, տասանորդ վճարելը և *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի խորհուրդներին հետևելը:

Պաշտպանական ռազմավարությունների ժամանակ նախապես ծրագրվում է, թե ինչպես կդիմակայեք գայթակղությանը: Երբ փորձում են վարկաբեկել ձեր անձնական չափանիշները, դուք նախապես իմանում եք, թե ինչպես վարվել:

Դրա համար ձեզ անհրաժեշտ կլինի աշխատանքային գծատետր:

Իսկ եթե չե՞ք ուզում աղոթել այսօր: Ժամանակն է կիրառել այն ռազմավարությունը, որն արդեն ծրագրել եք:

Դուք զգո՞ւմ եք, որ ձեր վկայությունը նվազում է: Դուք ունեք ռազմավարություն դրա համար: Դուք գիտեք, թե ինչպես վարվել:

Հայտնի աստղերն Աստծո աչքում

Դուք Աստծո սուրբ քահանայության կրողներն եք: Երկաթե ձողն ամուր բռնելու ձեր պարտավորությունը կփոխակերպի և կդարձնի ձեզ երկնային էակ, որի համար դուք ստեղծվել եք:

Աստված ճանաչում և սիրում է ձեզ: Նա կօրհնի ու կառաջնորդի ձեր քայլերը:

Գուցե մտածեք, որ դուք առանձնահատուկ չեք, որ դուք աստղ դառնալու համար չեք: Բայց դա ճիշտ չէ: Չգիտե՞ք, որ Աստված հռչակել է. «Աշխարհի թույլ բաներն առաջ պիտի գան և ջարդեն զորավորներին և ուժեղներին»:[4]

Այսպիսով, դուք թո՞ւյլ եք զգում, աննշա՞ն եք զգում: Շնորհավորում ենք, դուք հենց նոր ձեր հերթը պահեցիք:

Ձեզ զգո՞ւմ եք ոչ կարևոր, ոչ լիարժեք: Գուցե դուք հենց այն մարդն եք, ում կարիքն Աստված ունի:

Ինչպիսի՞ մեծ օրինակ է Դավիթը, ով քայլ արեց դեպի մարտի դաշտ՝ վախեցնող հակառակորդ Գողիաթի դեմ: Ապավինելով Տիրոջը, ունենալով ծրագիր, Դավիթը փրկեց ոչ միայն իրեն, այլև՝ Իսրայելի բանակին:[5] Իմացեք, որ Տերը կլինի ձեզ հետ, երբ դուք հավաքեք ձեր ողջ քաջությունը Նրա կողքին կանգնելու համար: «Եթե Աստուած մեր կողմն է՝ ո՞վ է մեզ հակառակ»:[6]

Նա կարող է դռներ բացել և օգնել մեզ գտնելու այնպիսի ուժեղ կողմեր և հնարավորություններ, որոնց մասին մենք երբեք չենք իմացել:[7]

Լսեք ձեր մարգիչներին, որոնց վստահում եք, ինչպես օրինակ՝ ձեր ծնողներին, եպիսկոպոսին և Երիտասարդ տղամարդկանց ղեկավարներին: Ուսումնասիրեք աշխատանքային գծատետրը: Կարդացեք սուրբ գրքերը: Ուսումնասիրեք ժամանակակից մարգարեների խոսքերը: Ստեղծեք ձեր ռազմավարությունը, թե ինչպես կարդարացնեք ինքներդ ձեզ, որպես Քրիստոսի աշակերտ:

Նախապես իմացեք այն ռազմավարությունները, որոնք դուք կօգտագործեք ձեր հոգին ամրացնելու և հակառակորդի ծուղակներից խուսափելու համար:

Այդպես վարվեք և Աստված իրոք կօգտագործի ձեզ:

Կլինեն մարդիկ, ովքեր կկտրվեն ավետարանից և կհեռանան: Ոմանք կնստեն հանդիսատեսի նստարանին ու հեռվից կդիտեն խաղը: Ոմանք կորոշեն մնալ նստարանին, չնայած մարգիչը փորձել է նրանց ընդգրկել խաղի մեջ: *Ես հրավիրում եմ ձեզ փրկել, աջակցել և սիրել նրանց որպես թիմակիցներ:*

Մյուսներն ուզում են մասնակցել խաղին և *անում* են դա: Կարևորն այն չէ, թե որքան տաղանդավոր են նրանք, այլ կարևորը նրանց ցանկությունն է՝ ընդգրկվելու խաղին: Նրանք չեն ցանկանում, որ իրենց կանչեն, քանի որ իրենց հերթը հասել է, այլ գիտեն սուրբ գրության հատվածը, որտեղ ասվում է. «Եթե դուք ցանկություն ունեք Աստծուն ծառայելու, ապա կանչված եք գործին»:[8]

Դուք կարող եք մասնակցելու համար ձեր հերթը պահել:

Դուք դա անում եք, երբ ուսումնասիրում եք և կիրառում եք քահանայության ձեր աշխատանքային տետրը:

Ճանապարհին դուք, հավանաբար, կսայթաքեք և կձախողվեք, գուցե՝ շատ, շատ անգամներ: Դուք կատարյալ չեք. ձախողումը որակավորման գործընթացի մի մասն է, որը թույլ է տալիս կատարելագործել ձեր բնավորությունը և ծառայել ավելի կարեկից ձևով: Փրկիչը և Նրա անսահման Քավությունը հնարավորություն են տվել անկեղծ ապաշխարության միջոցով մեր սխալները հաղթահարել:

Մեծ մարգիկները հարյուրավոր ժամեր են ծախսում իրենց խաղերի մի փոքրիկ հատվածի կատարելագործման համար: Որպես քահանայություն կրող, դուք պետք է ունենաք նույն մտածելակերպը: Եթե դուք ձախողվեք, ապաշխարե՛ք և դա՛ս քաղեք դրանից: Կիրառեք հմտությունները, որպեսզի ավելի լավ վարվեք հաջորդ անգամ: Վերջապես, դա կախված է ձեզանից: Կուսումնասիրե՞ք աշխատանքային տետրը:

Ես կոչ եմ անում ձեզ. վստահեք Տիրոջը: Հագեք Աստծո ողջ սպառազինությունը[9] և մասնակցեք խաղին:

Քչերն են բարձր մակարդակով պրոֆեսիոնալ սպորտով զբաղվում, սակայն, երբ հարցը աշակերտությանն է վերաբերում, կան շատ օրինակներ, ովքեր որոշում են հետևել Քրիստոսին:

Իրականում, դա ձեր առաքելությունն է այս կյանքում՝ սովորել Տիրոջ ուղիները, մտնել աշակերտության ուղին և ձգտել ապրել Աստծո ծրագրի համաձայն: Աստված կզորացնի ու կօրհնի ձեզ, երբ դուք դիմեք Նրան: Դուք կարող եք դա անել, քանի որ դուք հայտնի աստղ եք Նրա աչքում:

Ես աղոթում եմ, որ դուք պարտավորություն ստանձնեք արժանի ապրել սուրբ քահանայությանը, որը դուք կրում եք և ձգտեք ամեն օր կիրառել ձեր սրբազան դերը: Ես օրհնում եմ, որ դուք հնարավորություն և ցանկություն ունենաք անել դա: Ես ավելացնում եմ իմ վկայությունը քահանայության զորության մասին, որը դուք կրում եք, ապրող մարգարեների, Հիսուս Քրիստոսի և Նրա դերի մասին՝ որպես մեր Փրկիչ և Քավիչ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Երեխաների և երիտասարդների առաջընթացն ըստ տարիքային խմբերի», Առաջին Նախագահության նամակ, դեկտեմբերի 14, 2018թ.:
2. Ալմա 34.32
3. Հեսու 1.9
4. Վարդապետություն և Ուխտեր 1.19
5. Տես Ա Թագավորաց 17:
6. Հռովմեացիս 8.31
7. Տես Եթեր 12.27:
8. Վարդապետություն և Ուխտեր 4.3
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 27.15-18:

ԵՐԵՑ ՔԱՐԼ Բ. ՔՈՒՔ
Յոթանասունի Նախագահությունից

Քվորում. պատկանելության խումբ

Տերը ցանկանում է, որ դուք ամուր քվորում ձևավորեք: Մինչ Նա հավաքում է իր զավակներին, նրանց անհրաժեշտ է մի միջավայր, որը իրենցն է և որտեղ նրանք կաճեն:

2010 թվականին Անդրե Սեբակոն ճշմարտություն փնտրող մի երիտասարդ էր: Նա երբեք սրտաբուխ չէր աղոթել, բայց այս անգամ որոշեց փորձել: Կարճ ժամանակ անց, նա հանդիպեց միսիոներներին: Նրանք Անդրեին Մորմոնի գրքի նկարով մի հուշաթերթիկ նվիրեցին: Անդրեն ինչ-որ բան զգաց և հարցրեց միսիոներներին, թե արդյոք կարող է գնել այդ գիրքը: Նրանք ասացին, որ գիրքը նվեր կտան, եթե Անդրեն այցելի եկեղեցի:[1]

Անդրեն մենակ այցելեց Բոցվանա քաղաքի այն ժամանակ նոր ձևավորված Մոչուդի ճյուղը (Աֆրիկա): Չնայած ճյուղը նոր էր, բայց ամուր համախմբված էր մոտ 40 հաճախող անդամներով:[2] Նրանք զրկաբաց ընդունեցին Անդրեին: Նա անցավ միսիոներական զրույցները և մկրտվեց: Դա հրաշալի փորձառություն էր:

«Եղբայրների խումբը» քահանայության քվորումից, Մոչուդի, Բոտսվանա

Իսկ հետո, ի՞նչ: Ինչպե՞ս էր Անդրեն ակտիվ մնալու: Ո՞վ էր օգնելու նրան իր ուխտի ճանապարհին: Հարցի պատասխաններից մեկն է՝ քահանայության նրա քվորումը:[3]

Քահանայության ամուր քվորումը շահեկան է յուրաքանչյուր քահանայություն կրողի համար, անկախ հանգամանքներից: Ահարոնյան քահանայություն կրող իմ երիտասա՛րդ եղբայրներ, Տերը ցանկանում է, որ դուք ամուր քվորում՝ պատկանելության մի խումբ ձևավորեք յուրաքանչյուր երիտասարդի համար, մի միջավայր, որտեղ Տիրոջ Հոգին ներկա է, մի միջավայր, որտեղ քվորումի բոլոր անդամները ընդունված ու գնահատված են զգում: Տերը հավաքում է իր զավակներին և նրանց անհրաժեշտ է մի միջավայր, որը նրանք կզգան, որ իրենցն է ու կաճեն:

Քվորումի նախագահության յուրաքանչյուր անդամ առաջնորդում է՝ ոգեշնչում փնտրելով[4] և սեր ու եղբայրություն զարգացնելով քվորումի բոլոր անդամների միջև: Դուք հատուկ ուշադրություն եք դարձնում նոր անդամներին, քիչ ակտիվ անդամներին կամ առանձնահատուկ կարիքներ ունեցող անդամներին:[5] Քահանայության զորությամբ դուք ամուր քվորում եք ձևավորում:[6] Եվ ամուր միաբան քվորումը մեծապես փոխում է երիտասարդ տղայի կյանքը:

Երբ Եկեղեցին հայտարարեց, որ ավետարանը սովորելու լավագույն վայրը տունն է,[7] ոմանք մտածեցին Անդրեի նման անդամների մասին ու հարց տվեցին. «Իսկ ի՞նչ կլինի նրանց հետ, ովքեր սերվում են այն ընտանիքներից, որտեղ ավետարանը չեն ուսումնասիրում և որտեղ տանը չկա ավետարանը սովորելու և ապրելու միջավայր»: Մի՞թե նրանք աչքաթող են արվում:

Ո՛չ: Ոչ ոքի չպետք է աչքաթող անել: Տերը սիրում է յուրաքանչյուր պատանու և յուրաքանչյուր աղջկա: Որպես քահանայություն կրողներ՝ մենք Տիրոջ ձեռքերն ենք: Տնակենտրոն ջանքերին

Եկեղեցու կողմից աջակցողը մենք ենք: Երբ տան աջակցությունը սահմանափակ է, քահանայության քվորումը և մյուս ղեկավարներն ու ընկերները հետևում ու աջակցում են յուրաքանչյուր անհատի և ընտանիքի:

Ես տեսել եմ, թե ինչպես է դա գործում: Անձամբ զգացել եմ դա ինձ վրա: Երբ վեց տարեկան էի, ծնողներս բաժանվեցին, և հայրս թողեց մորս հինգ փոքր երեխայի հետ: Մայրս սկսեց աշխատել՝ մեզ ապահովելու համար: Մի ժամանակաշրջան նա ստիպված էր երկրորդ տեղ աշխատել, ինչպես նաև լրացուցիչ կրթություն ստանալ: Մեզ դաստիարակելու համար նա շատ ժամանակ չուներ: Բայց մեր տատն ու պապը, քեռիներն ու մորաքույրները, եպիսկոպոսներն ու տնային ուսուցիչները օգնեցին իմ հրեշտակ մայրիկին:

Եվ ես քվորումի անդամ էի: Անչափ երախտապարտ եմ իմ ընկերներին՝ քվորումի եղբայրներիս, ովքեր սիրել ու աջակցել են ինձ: Իմ քվորումը պատկանելության խումբ էր: Հնարավոր է, ոմանք ինձ երկարաժամկետ հոգս ու անհանգստություն էին համարում իմ ընտանիքի իրավիճակի պատճառով: Գուցե, իսկապես այդպես էր: Բայց քահանայության քվորումը փոխեց այդ կարծրատիպը: Մեր քվորումը հավաքվեց իմ շուրջ և անսահման օրհնեց իմ կյանքը:

Երկարաժամկետ հոգս ու անհանգստություն պատճառող շատ մարդիկ կան մեր շրջապատում: Գուցե բոլորս ինչ-որ առումով այդպիսին ենք: Սակայն յուրաքանչյուրս ունենք քվորում՝ մի միջավայր, որտեղ կարող ենք ուժ ստանալ և զորացնել ուրիշներին: Քվորումում «բոլորը մեկի համար են, մեկը՝ բոլորի»:[8] Դա այն միջավայրն է, որտեղ ծառայելով Աստծուն, մենք ուսուցանում ենք մեկմեկու, ծառայում ենք մարդկանց և միասնություն ու եղբայրություն ենք ձևավորում:[9] Դա մի միջավայր է, որտեղ հրաշքներ են տեղի ունենում:

Կցանկանայի ձեզ պատմել Անդրեի քվորումում՝ Մոչուդի ճյուղում կատարված մի քանի հրաշքների մասին: Մինչ կկիսվեմ այդ օրինակով, փնտրեք սկզբունքներ, որոնք, կիրառելու դեպքում, կամրացնեն քահանայության յուրաքանչյուր քվորում:

Անդրեի մկրտությունից հետո նա սկսեց ուղեկցել միսիոներներին, մինչ նրանք ուսուցանում էին չորս այլ երիտասարդների, որոնք նույնպես մկրտվեցին: Այժմ կար հինգ երիտասարդ տղա: Նրանք սկսեցին ուժեղացնել միմյանց և իրենց ճյուղը:

Շուտով վեցերորդ երիտասարդը՝ Տուսոն մկրտվեց: Տուսոն կիսվեց ավետարանով իր ընկերներից երեքի հետ, և շուտով նրանք դարձան ինը:

Այսպես են հավաքվում Հիսուս Քրիստոսի աշակերտները՝ քիչ-քիչ, իրենց ընկերներին հրավիրելու շնորհիվ: Հին օրերում, երբ Անդրեասը գտավ Փրկիչին, նա շտապ գնաց գտավ իր եղբայր Սիմոնին և «բերաւ նորան Յիսուսի մօտ»:[10] Նույն կերպ, երբ Փիլիպպոսը Քրիստոսի հետևորդ դարձավ, նա հրավեր հղեց իր ընկերոջը՝ Նաթանայելին. «Եկ եւ տես»:[11]

Շուտով Մոչուդի ճյուղում 10-րդ երիտասարդը միացավ Եկեղեցուն: Ապա միսիոներները գտան 11-րդին: Իսկ 12-րդ երիտասարդը մկրտվեց, նկատելով, որ ավետարանը լավ ադեցություն է թողել իր ընկերների վրա:

Մոչուդի ճյուղի անդամները ցնցված էին: Այդ երիտասարդները «դարձի եկան դեպի Տերը և միացան եկեղեցուն»:[12]

Մորմոնի գիրքը նշանակալի դեր ունեցավ նրանց դարձի գործում:[13] Թուսոն հիշում է. «Ես սկսել էի կարդալ Մորմոնի գիրքը.... ամեն անգամ, երբ ազատ էի՝ տանը, դպրոցում, ամենուր»:[14]

Օրաթիլը ավետարանով հետաքրքրվեց իր ընկերների օրինակի շնորհիվ: Նա բացատրում է. «[Նրանք] շատարագ էին փոխվում. . . . Սկսեցի մտածել, որ դա . . . կապված էր մի փոքր. . . . գրքի հետ, որը նրանք սկսել էին բերել. . . . դպրոց: Ես տեսնում էի, որ նրանք լավ տղաներ են դարձել. . . . [Ես] էլ էի ուզում փոխվել»:[15]

Բոլոր 12 երիտասարդները հավաքվել ու մկրտվել էին երկու տարվա ընթացքում: Յուրաքանչյուրը Եկեղեցու միակ անդամն էր իր ընտանիքում: Սակայն նրանց աջակցում էր Եկեղեցու ընտանիքը, որոնց թվում էին նախագահ Ռակվելան՝[16] իրենց ճյուղի նախագահը, երեց և քույր Թեյլորները՝[17] տարեց միսիոներական զույգը և եկեղեցու այլ անդամներ:

Եղբայր Ջունիորը՝[18] քվորումի ղեկավարը, կիրակի ցերեկը հրավիրում էր երիտասարդներին իր տուն և ուսուցանում էր նրանց: Տղաները միասին ուսումնասիրում էին սուրբ գրությունները և կանոնավոր ընտանեկան երեկո անցկացնում:

Եղբայր Ջունիորը նրանց հետ այցելում էր անդամներին, միսիոներների կողմից ուսուցանվող և այցելության կարիք ունեցող այլ մարդկանց: Բոլոր 12 երիտասարդները նստում էին եղբայր Ջունիորի բեռնատարի հետևում: Նա երկու կամ երեք հոգու իջեցնում էր մի տան մոտ, իսկ ավելի ուշ կրկին վերցնում էր նրանց:

Չնայած երիտասարդները նոր էին սովորում ավետարանի մասին և չէին կարծում, որ շատ բան գիտեն, եղբայր Ջունիորը նրանց պատվիրում էր իրենց իմացած մեկ-երկու բանով կիսվել նրանց հետ, ում այցելում էին: Այս պատանի քահանայություն կրողները ուսուցանում էին, աղոթում էին և օգնում էին հսկել եկեղեցին:[19] Նրանք կատարում էին քահանայության իրենց պարտականությունները և վայելում էին ծառայելու բերկրանքը:

Անդրեն ասել է. «Մենք միասին աղոթում էինք, ծիծաղում էինք, արտասվում էինք և դարձել էինք եղբայրներ»:[20] Իրականում նրանք իրենց կոչում էին «Եղբայրության ջոկ»:

Միասին նրանք նպատակ էին դրել, որ բոլորը միսիա ծառայեն: Քանի որ նրանք Եկեղեցու միակ անդամն էին ընտանիքում, բոլորն էլ բազմաթիվ խոչընդոտներ ունեին հաղթահարելու, սակայն նրանք միմյանց օգնում էին դրանք հաղթահարել:

Մեկ առ մեկ այդ երիտասարդ տղաները միսիայի կանչ ստացան: Առաջին գնացածները նամակներ էին գրում նրանց, ովքեր պատրաստվում էին՝ կիսվելով փորձառություններով և քաջալերելով նրանց ծառայել: Տղաներից տասնմեկը ծառայեցին միսիայում:

Երիտասարդները կիսվեցին ավետարանով իրենց ընտանիքների հետ: Դարձի եկան ու մկրտվեցին նրանց մայրերը, քույրերը, եղբայրները, ընկերները, ինչպես նաև շատ մարդիկ, ում նրանք ուսուցանեցին միսիայի ընթացքում: Հրաշքներ տեղի ունեցան և անհամար կյանքեր օրհնվեցին:

Լսում եմ, ինչպես ոմանք մտածում են, թե նման հրաշք հնարավոր է միայն Աֆրիկայի նման վայրում, որտեղ պարարտ հող կա, և որտեղ Իսրայելի հավաքումն արագանում է: Սակայն, ես վկայում եմ, որ Մոչուդի ճյուղում կիրառված սկզբունքները ճշմարիտ են ամեն տեղ: Որտեղ էլ որ լինեք, ձեր քվորումը կարող է աճել ակտիվության և ավետարանով կիսվելու շնորհիվ: Երբ անգամ մեկ աշակերտը ընկերոջը ձեռք է մեկնում, նրանք կարող են երկուսը դառնալ: Երկուսը կարող են դառնալ չորս: Չորսը կարող են դառնալ ութ: Եվ ութը կարող են դառնալ տասներկու: Ճյուղերը կարող են ծխեր դառնալ:

Փրկիչն ուսուցանել է, որ «Ուր որ երկու կամ երեք հոգի իմ անունովը ժողովուած լինին. . .. ես այնտեղ նորանց մէջ եմ»:[21] Երկնային Հայրը նախապատրաստում է մարդկանց մտքերն ու սրտերը մեր ողջ շրջապատում: Մինչ մարդիկ Փրկչին ճանաչելու ճանապարհին են, մենք կարող ենք հետևել Հոգու հուշումներին, ընկերության ձեռք մեկնել, կիսվել ճշմարտությամբ, հրավիրել կարդալ Մորմոնի Գիրքը և սիրել ու աջակցել նրանց:

Արդեն 10 տարի է, որ Մոչուդիի «Եղբայրության ջոկը» միասին սկսել է իր ճամփորդությունը և նրանք դեռևս եղբայրների ջոկատ են:

Կատլեգոն ասել է. «Անգամ հեռավորության վրա մենք պատրաստ ենք մեկմեկու օգնության ձեռք մեկնել»:[22]

Ես աղոթում եմ, որ յուրաքանչյուրս ընդունենք Տիրոջ հետ միանալու հրավերը քահանայության մեր քվորումներում, որպեսզի յուրաքանչյուր քվորում դառնա մի պատկանելիության խումբ, հավաքման մի վայր և աճելու միջավայր:

Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է, և սա Նրա աշխատանքն է: Այդ մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Mark and Shirley Taylor, comp., *The Band of Brothers* (Mochudi Branch conversion stories and testimonies, 2012–13), 4, Church History Library, Salt Lake City:
2. Personal correspondence, Letanang Andre Sebako, Band of Brothers resource files, 2011–19, Church History Library, Salt Lake City.
3. Նախագահ Բոյդ Ք Փաքերն ասել է. «Երբ մարդ քահանայություն է կրում, նա իրենից մեծ մի բանի է պատկանում: Այն իրենից անկախ է, որի հանդեպ նա կարող է լիարժեք նվիրվածություն դրսևորել» (“The Circle of Sisters,” *Ensign,* Nov. 1980, 109–10):
4. Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը բացատրել է, թե ինչպես հայտնություն փնտրենք, և ապա հաստատել է. «Երբ կրկնեք այս գործընթացը օրեցօր, ամիս առ ամիս, տարեց տարի, դուք «կաճեք հայտնության սկզբունքի մեջ» («Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիահոնա,* մայիս 2018, 95. տես նաև *Եկեղեցու նախագահների ուսմունքները. জոզեֆ Սմիթ* [2007], 132):
5. See *Handbook 2: Administering the Church* (2010), 8.3.2.
6. Կան նաև այլ օգնողներ, ներառյալ եպիսկոպոսության անդամները և խորհրդատուները: Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդը նկատել է, որ 2018թ. մարտի 31-ին հայտարարված Մելքիսեդեկյան Քահանայության քվորումների վերակազմավորման օրինություններից մեկը «եպիսկոպոսին հնարավորություն տալն է, որ ավելի շատ պատասխանատվություն պատվիրակեն երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահներին, որպեսզի եպիսկոպոսը և նրա խորհրդականները կարողանան կենտրոնանալ իրենց առաջնային պարտականությունների վրա, մասնավորապես, ղեկավարելով երիտասարդ կանանց և Ահարոնյան Քահանայություն կրող երիտասարդ տղամարդկանց»: («Տե՛ս, արքայական զորքը» *Լիահոնա,* մայիս 2018, 59): Հրեշտակները նույնպես օգնության կիասնեն: Ահարոնյան քահանայությունը կրում է հրեշտակների սպասավորության բանալիները (տես Վարդապետություն և Ուխտեր 13.1, տես նաև Dale G. Renlund and Ruth Lybbert Renlund, *The Melchizedek Priesthood* [2018], 26): Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը ասել է. «Սովորաբար, [սպասավորող հրեշտակները] տեսանելի *չեն:* Երբեմն տեսանելի են: Սակայն, տեսանելի, թե ոչ տեսանելի, նրանք *միշտ* մոտիկ են: Երբեմն նրանց հանձնարարությունները շատ վիթխարի են և կարևորություն ունեն ողջ աշխարհի համար: Երբեմն ուղերձներն ավելի անձնական են: Ժամանակ առ ժամանակ, հրեշտակների նպատակը զգուշացնելն է: Սակայն ավելի հաճախ՝ մխիթարելն է, ցույց տալ գթառատ ուշադրություն, առաջնորդություն դժվար պահերին» (“The Ministry of Angels,” *Լիահոնա,* Nov. 2008, 29): Եթե նմանատիպ օգնության կարիք ունեք, «խնդրեք և կտրվի» (Հովհաննես 16.24):
7. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Ներածական ելույթ», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 7–8:
8. Տես Ալեքսանդր Դյումա, *«Երեք հրացակիրները»* (1844):
9. See *Handbook 2,* 8.1.2.
10. Տես Հովհաննես 1.40-42:
11. Տես Հովհաննես 1.43-46:
12. 3 Նեփի 28.23:
13. See D. Todd Christofferson, “The Power of the Book of Mormon” (address given at the seminar for new mission presidents, June 27, 2017):
14. Thuso Molefe, in Taylor, *The Band of Brothers,* 22.
15. Oratile Molosankwa, in Taylor, *The Band of Brothers,* 31–32.
16. Lucas Rakwela, Mochudi, Botswana.
17. Mark and Shirley Taylor, Idaho, USA.
18. Cilvester Junior Kgosiemang, Mochudi, Botswana.
19. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.46–47, 53–54:
20. Personal correspondence, Letanang Andre Sebako, Band of Brothers resource files.
21. Վարդապետություն և Ուխտեր 6.32:
22. Katlego Mongole, in “Band of Brothers 2nd Generation” (unpublished compilation), 21.



ԵՐԵՑ ՔԻՄ Բ. ՔԼԱՐԿ
Յոթանասունից

Նայեք առ Հիսուս Քրիստոս

Եթե մենք նայենք առ Հիսուս Քրիստոս, Նա կօգնի մեզ ապրել մեր ուխտերով և մեծարել մեր կոչումը՝ որպես Իսրայելի երեցներ:

Երբ Հիսուսը քայլում էր Կափառնայումի մոտ գտնվող մի փողոցով՝[1] Իրեն շրջապատած մարդկանց մի մեծ ամբոխով, մի կին, ով լուրջ հիվանդություն ուներ 12 տարի շարունակ, մեկնեց ձեռքը և դիպավ Նրա հանդերձի ծայրին: Նա անմիջապես բժշկվեց:[2]

Սուրբ գրությունները հաղորդում են, որ Հիսուսը, զգալով «որ [իրանից] [զօրութիւն] դուրս գնաց,[3] «դարձավ ամբոխի մեջ»[4] և նայում էր . . . որ տեսնէ այս բանը անողին»:[5] «Եւ երբոր տեսաւ կինը, որ ծածուկ չմնաց,[6] նա «եկաւ ընկաւ նորա առաջը, եւ բոլոր ճշմարտութիւնն ասեց նորան»:[7]

Հիսուսն ասաց նրան.«Դուստր, քո հաւատքն ազատեց քեզ, գնա խաղաղութեամբ»:[8]

Հիսուս Քրիստոսը փրկեց կնոջը: Նա բժշկվեց ֆիզիկապես, բայց երբ Հիսուսը շրջվեց տեսնելու նրան, նա հայտարարեց իր հավատքը Նրա հանդեպ, և Նա բժշկեց կնոջ սիրտը:[9] Նա խոսեց նրա հետ սիրով, հավաստեց նրան Իր հավանությունը, և օրհնեց նրան Իր խաղաղությամբ:[10]

Եղբայրնե՛ր, որպես սուրբ քահանայություն կրողներ, մենք ներգրավված ենք փրկության աշխատանքի մեջ: Վերջին տարվա ընթացքում Տերը Իր աշխատանքի ղեկավարումը ուղղակիորեն դրեց Իսրայելի երեցների ուսերին:[11] Մենք մի ոգեշնչող հանձնարարություն ունենք Տիրոջից՝ աշխատելով մեր քույրերի հետ, մենք պետք է սպասավորենք ավելի սուրբ ձևով, արագացնենք Իսրայելի հավաքումը վարագույրի երկու կողմում, հաստատենք մեր տները որպես հավատքի և ավետարանը սովորելու սրբավայրեր, և պատրաստենք աշխարհը Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին:[12]

Ինչպես բոլոր բաներում, Փրկիչը մեզ ցույց է տվել ճանապարհը. մենք պետք է նայենք և ծառայենք Հիսուս Քրիստոսին, ինչպես Նա նայեց և ծառայեց Իր Հորը:[13] Փրկիչն այս ձևով ասաց Մարգարե Ջոզեֆին.

«Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք:

Տեսեք խոցվածքը, որ ծակեց իմ կողը, և նաև բևեռների նշանները՝ իմ ձեռքերի ու ոտքերի վրա. եղեք հավատարիմ, պահեք իմ պատվիրանները և դուք կժառանգեք երկնքի արքայությունը»:[14]

Նախամահկանացու արքայությունում Հիսուսը խոստացավ Իր Հորը, որ Ինքը կկատարի Հոր կամքը և կլինի մեր Փրկիչն ու Քավիչը: Երբ Նրա Հայրը հարցրեց. «Ո՞ւմ ուղարկեմ»:[15] Հիսուսը պատասխանեց.

«Ահա ես, ինձ ուղարկիր»:[16]

«Հայր, քո կամքը կատարվի, և փառքը քոնը լինի հավիտյան»:[17]

Իր ողջ մահկանացու կյանքի ընթացքում Հիսուսն ապրեց այդ խոստումով: Համեստությամբ, հեզությամբ և սիրով Նա ուսուցանեց Իր Հոր վարդապետությունը և կատարեց Իր Հոր աշխատանքը այն զորությամբ և իշխանությամբ, որ Իր Հայրը տվել էր Իրեն:[18]

Հիսուսը տվեց Իր սիրտը Իր Հորը: Նա ասել է.

«Ես սիրում եմ Հորը»:[19]

«Ես միշտ նորան հաճելի բաներն եմ անում»:[20]

«Ես իջայ . . . որ ոչ թէ իմ կամքն անեմ, այլ ինձ ուղարկող [Հորի]կամքը»:[21]

Գեթսեմանի այգում՝ Իր հոգեվարքի մեջ Նա աղոթեց. «Ոչ թե իմ կամքը, բայց Քո կամքը լինի»:[22]

Երբ Տերը կոչ է անում երեցներին Իսրայելում «իրեն նայել բոլոր մտորումներում» և «տեսնել վերքերը» Իր հարություն առած մարմնում, դա կոչ է՝ հեռու շրջվել մեղքից ու աշխարհից, դառնալ դեպի Նա, սիրել ու հնազանդվել Նրան: Դա կոչ է՝ ուսուցանել Իր վարդապետությունը և կատարել Իր աշխատանքը Իր ձևով: Ուստի դա կոչ է՝ ամբողջովին վստահել Իրեն, հանձնել մեր կամքը և ենթարկել մեր սիրտը Իրեն և Իր փրկագնող զորության միջոցով Իր նման դառնալ:[23]

Եղբայրնե՛ր, եթե մենք նայենք Հիսուս Քրիստոսին, Նա կօրհնի մեզ լինել *Իր* երեցները Իսրայելում՝ խոնարհ, հեզ, հանդուրժող, լցված Նրա սիրով:[24] Եվ մենք կբերենք Նրա ավետարանի և Նրա Եկեղեցու ուրախությունն ու օրհնությունները մեր ընտանիքներին, մեր եղբայրներին ու քույրերին վարագույրի երկու կողմում:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը կոչ է արել մեզ նայել Հիսուս Քրիստոսին հենց այս ձևով. «Չկա հեշտ կամ ինքնաբերաբար ոչ մի բան՝ այդպիսի հզոր աշակերտներ դառնալիս: Մեր ուշադրությունը պետք է զամված լինի Փրկիչի ու Նրա ավետարանի վրա: Մտավոր առումով հոգնեցուցիչ է՝ ձգտել նայել Նրան *բոլոր* մտորումներում: Սակայն, երբ այդպես ենք վարվում, մեր կասկածներն ու վախերը ցրվում են»:[25]

Գամելը հիանալի բառ է: Դա նշանակում է ամուր բևեռել, գրավել և ամբողջովին պահել:[26] Մենք մեր կիզակետը զամում ենք Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի վրա՝ ապրելով մեր ուխտերով:

Երբ մենք ապրում ենք մեր ուխտերով, դրանք ազդում են այն ամենի վրա, ինչ մենք ասում ենք կամ անում: Մենք ապրում ենք ուխտի կյանքով՝[27] լի ամենօրյա հասարակ հավատքի գործերով, որոնք կենտրոնացնում են մեզ Հիսուս Քրիստոսի վրա, սրտից բխող աղոթքով *Նրա* անունով, սնուցվելով *Նրա* խոսքով, դառնալով դեպի *Նա*՝ ապաշխարելով մեր մեղքերից, պահելով *Նրա* պատվիրանները, ճաշակելով հաղորդությունից և սուրբ պահելով *Նրա* Հանգստության օրը, երկրպագելով *Նրա* սուրբ տաճարում այնքան հաճախ, որքան կարող ենք, և գործադրելով *Նրա* սուրբ քահանայությունը՝ ծառայելու Աստծո զավակներին:

Ուխտին նվիրված լինելու այս գործողությունները բացում են մեր սրտերն ու մտքերը Փրկիչի փրկագնող զորության և Սուրբ Հոգու սրբագործող ազդեցության առջև: Տող առ տող Փրկիչը փոխում է մեր բուն էությունը, մենք ավելի խորն ենք դարձի գալիս դեպի Նա և մեր ուխտերը կենդանանում են մեր սրտերում:[28]

Երկնային Հորը տված մեր խոստումները դառնում են ժայռի պես ամուր պարտավորություններ, որոնք մեր խորունկցանկություններն են: Մեզ տված Երկնային Հոր խոստումները լցնում են մեզ երախտագիտությամբ և ուրախությամբ:[29] Մեր ուխտերը դադարում են կանոններ լինել, որոնց մենք հետևում ենք, և դառնում են սիրելի սկզբունքներ, որոնք ոգեշնչում և առաջնորդում են մեզ ու զամում մեր կիզակետը Հիսուս Քրիստոսի վրա:[30]

Նվիրվածության այդ քայլերը մատչելի են բոլորին՝ թե՛ երիտասարդներին,

և թե՛ մեծահասակներին: Դուք, երիտասարդնե՛ր, ովքեր կրում եք սուրբ Ահարոնյան Քահանայություն, այն ամենը, ինչ ասացի այս երեկո, ձեզ է վերաբերում: Ես շնորհակալություն եմ հայտնում Աստծուն ձեզ համար: Դուք սրբազան արարողություններ եք կատարում և ուխտեր կապում, որոնք մատչելի են միլիոնավոր Վերջին Օրերի Սրբերի համար ամեն շաբաթ: Երբ դուք պատրաստում եք, օրհնում կամ բաժանում հաղորդությունը, սպասավորում, մկրտում տաճարում, միջոցառման եք հրավիրում որևէ ընկերոջ, կամ փրկում ձեր քվորումի որևէ անդամի, դուք կատարում եք փրկության աշխատանք: Դուք ևս կարող եք նայել առ Քրիստոս և ապրել ձեր ուխտերով ամեն օր: Ես խոստանում եմ ձեզ, որ եթե դուք անեք այդ, գալիք օրերում դուք Տիրոջ վստահված ծառաներ կլինեք և Իսրայելի հզոր երեցներ:

Ես գիտեմ, որ այս ամենը կարող է տագնապեցնող լինել: Բայց հիշեք, Փրկիչի այս խոսքերը. «Ես մինակ չեմ, որովհետեւ Հայրն ինձ հետ է»:[31] Դա այդպես է նաև մեզ համար: Մենք միայնակ չենք: Տեր Հիսուս Քրիստոսը և մեր Երկնային Հայրը սիրում են մեզ և նրանք մեզ հետ են:[32] Քանի որ Հիսուսը նայեց Իր Հորը և ավարտեց քավիչ մեծ զոհաբերությունը, մենք կարող ենք նայել առ Հիսուս Քրիստոս վստահությամբ, որ Նա կօգնի մեզ:

Մեզանից ոչ ոք կատարյալ չէ: Երբեմն մենք հայտնվում ենք հիմար իրավիճակներում: Մենք ցրված ենք և հուսահատ: Մենք սայթաքում ենք: Բայց եթե նայենք Հիսուս Քրիստոսին ապաշխարող սրտով, Նա մեզ կբարձրացնի, կմաքրի մեզ մեղքից, կների մեզ և կբժշկի մեր սրտերը: Նա համբերատար է և բարի, Նրա փրկագնող սերը երբեք չի վերջանում և հավերժ է:[33] Նա կօգնի մեզ ապրել մեր ուխտերով և մեծարել մեր կոչումները՝ որպես Իսրայելի երեցներ:

Եվ Հայրը կօրհնի մեզ բոլոր բաներով, որոնք պահանջվում են Նրա նպատակներն իրականացնելու համար. «Բաներ . . . թե՛ երկնքում և թե՛ երկրի վրա, կյանքը և լույսը, Հոգին և զորությունը, առաջ ուղարկված Հոր կամքով, Հիսուս Քրիստոսի՝ նրա Որդու միջոցով»:[34]

Երբ աստվածային լույսը և զորությունը հորդում են մեր կյանք, երեք հրաշագործ բաներ են տեղի ունենում:

Նախ, մենք կարող ենք տեսնել: Հայտնության միջոցով մենք սկսում ենք տեսնել, ինչպես Հիսուսը տեսավ կնոջ սիրտը:[35] Երբ մենք տեսնում ենք այնպես ինչպես Հիսուսն է տեսնում, Նա օրհնում է մեզ սիրել նրանց, ում մենք ծառայում ենք Նրա սիրով: Նրա օգնությամբ, նրանք ովքեր ծառայում են, կտեսնեն Փրկիչին և կզգան Նրա սերը:[36]

Երկրորդը, մենք ունենք քահանայության զորությունը: Մենք ունենք իշխանություն և զորություն՝ գործելու Հիսուս Քրիստոսի անունով, «օրհնելու, առաջնորդելու, պաշտպանելու, զորացնելու և բժշկելու մյուսներին» և բերելու հրաշքներ նրանց, ում մենք սիրում ենք և ապահով պահելու մեր ամուսնությունները ու ընտանիքները:[37]

Երրորդը, Հիսուս Քրիստոսը գնում է մեզ հետ: Ուր մենք ենք գնում, Նա էլ է գնում: Երբ ուսուցանում ենք, Նա էլ է ուսուցանում: Երբ մխիթարում ենք, Նա էլ է մխիթարում: Երբ օրհնում ենք, Նա էլ է օրհնում:[38]

Եղբայրնե՛ր, մի՞թե մենք պատճառ չունենք ցնծալու: Այո՛, ունենք: Մենք կրում ենք Աստծո սուրբ քահանայությունը: Երբ նայում ենք Հիսուս Քրիստոսին, ապրում մեր ուխտերով և զամում մեր կիզակետը Նրա վրա, մենք կմիանանք մեր քույրերին և կսպասավորենք ավելի սուրբ ձևով, կհավաքենք Իսրայելը վարագույրի երկու կողմում, կամրացնենք և կկնքենք մեր ընտանիքները և կնախապատրաստենք աշխարհը Տեր Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին: Դա տեղի կունենա: Ես այդպես եմ վկայում:

Ես ավարտում եմ այս աղոթքով իմ սրտից, որ մենք բոլորս, յուրաքանչյուրս նայենք Հիսուս Քրիստոսին բոլոր մտորումներում: Չկասկածենք: Չվախենանք: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ջեյմս Ի. Թալմիջը դնում է Հիսուսին «Կափառնայումի շրջակայքում», երբ այդ բժշկությունը տեղի ունեցավ (տես *Jesus the Christ* [1916], 313):
2. Տես Ղուկաս 8.43–44, տես նաև Մատթեոս 9.20–21, Մարկոս 5.25–29:
3. Ղուկաս 8.46
4. Մարկոս 5.30
5. Մարկոս 5.32
6. Ղուկաս 8.47
7. Մարկոս 5.33
8. Ղուկաս 8.48
9. Ջեյմս Ի. Թալմիջը գրել է, որ այդ կնոջ համար ավելի մեծ նշանակություն, քան ֆիզիկական բժշկությունը, ուներ այն համոզվածությունը, որ Փրկիչն իրեն շնորհել էր իր սրտի ցանկությունը, և որ իր հավատքն ընդունվեց Նրա կողմից (տես *Jesus the Christ,* 318): Հիսուսը բժշկեց նրան ֆիզիկապես և հոգեպես և նրա առջև բացեց ճանապարհ դեպի փրկություն (տես *Jesus the Christ,* 296):
10. Ուսանելի է, որ Հայրոսը՝ ժողովատան մի իշխանավոր, Հիսուսի հետ էր, երբ այդ բժշկությունը տեղի ունեցավ: Հիսուսը Հայրոսի տուն գնալու ճանապարհին էր, որտեղ Նա մեռածներից վերակենդանացնելու էր Հայրոսի դստերը: Կնոջը, ում Հիսուսը բժշկեց, հավանական է դուրս էին նետել ժողովատնից իր հիվանդության պատճառով: Երբ Հիսուսը բժշկեց նրան, Նա նաև պարզ դարձրեց բոլորին, ովքեր այնտեղ էին, ներառյալ Հայրոսին, որ նա սիրված դուստր էր, հավատքով կին, և առողջ էր մարմնով ու ոգով:
11. Տես Դ. Թոդ Քրիստոֆերսոն. «Երեցների Քվորումը», (*Լիահոնևս,* մայիս 2018, 55–58) ճշգրտումներ կատարելու համար քննարկում անել ծխում՝ մեկ Մելքիսեդեկյան Քահանայության քվորում ստեղծելու նպատակով: Այդ փոփոխության նպատակը նկարագրված է այս ձևով «Հաճախակի հղվող հարցեր» բաժնում Սպասավորության կայքէջում. «Ծխում Մելքիսեդեկյան Քահանայության մեկ քվորում ունենալու շնորհիվ քահանայություն կրողները միավորվում են, որպեսզի իրականացնեն փրկության աշխատանքի բոլոր կետերը, այդ թվում՝ տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը, որը նախկինում համակարգվում էր քահանայապետների խմբի ղեկավարի կողմից» (“This Is Ministering: Frequently Asked Questions,” question 8, ministering.ChurchofJesusChrist.org):

Հետագա ճշգրտումները ծխի միսիայի ղեկավարին և տաճարային և ընտանեկան պատմության ղեկավարին դրել են ծխի երեցների քվորումի նախագահության ղեկավարության ներքո: Ընտանիքներին սպասավորելով արդեն նախագահության ղեկավարության ներքո, այս ճշգրտումները փրկության աշխատանքի ղեկավարումը դնում են երեցների քվորումներում, աջակցվելով Ամփոփող Միությունների կողմից: Իհարկե, եպիսկոպոսը ծխում կրում է փրկության աշխատանքի բանալիները, բայց նա լիազորում է այդ աշխատանքի համար պատասխանատվությունը և իշխանությունը երեցների քվորումի նախագահին, որպեսզի եպիսկոպոսը կարողանա ավելի շատ ժամանակ անցկացնել իր սեփական ընտանիքի հետ, զորացնելով երիտասարդներին և ծառայելով որպես դատավոր Իսրայելում:

12. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Տեր Աստծո գործին բոլորս մասնակցենք», *Լիահոնա,* մայիս 2018, 118–19, Ռասսել Մ. Նելսոն, «Դառնալ օրինակելի Վերջին Օրերի Սրբեր», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 113–14, Քվենթին Լ. Քուք, «Հաստատուն և հարատև դարձ դեպի Երկնային Հայրն ու Տեր Հիսուս Քրիստոսը», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 8–12:
13. Հայրը Հիսուս Քրիստոսին ուղարկեց երկիր (տես Հովհաննես 17.18):
14. Վարդապետություն և Ուխտեր 6.36–37:
15. Աբրահամ 3.27
16. Աբրահամ 3.27
17. Մովսես 4.2
18. Կան բազմաթիվ հղումներ սուրբ գրություններում, որոնք արձանագրում են դրույթներ, որոնք Հիսուսը հաղորդեց Իր Հոր աշխատանքը կատարելու և Իր Հոր վարդապետությունը ուսուցանելու մասին: Տես, օրինակ, Հովհաննես 5.19 (Հիսուսն անում է այն, ինչ Նա տեսնում է Իր Հորն անելիս), Հովհաննես 5.36 (Հայրը աշխատանք տվեց Իր Որդուն անելու), Հովհաննես 8.26 (Հիսուսն ուսուցանեց, թե ինչ էր ստացել Իր Հորից), Հովհաննես 14.28 (Հիսուսը հայտարարեց. «Իմ Հայրն ավելի մեծ է քան ես»), 3 Նեփի 11.32

(Նրա վարդապետությունը Իր Հոր կողմից տրված վարդապետությունն է):
19. Հովհաննես 14.31
20. Հովհաննես 8.29
21. Հովհաննես 6.38, տես նաև Հովհաննես 5.30:
22. Ղուկաս 22.42:
23. *Նայել* բառը այս հատվածում ունի իմաստներ որոնք համապատասխանում են Տիրոջ կոչին. նայել դեպի (տես Վարդապետություն և Ուխտեր 6.36–37) (կամ շրջվել դեպի), ուշադրությունը ուղղել դեպի, ապավինել, փնտրել, սպասել հավատքով, նկատի ունենալ որպես վերջ, սպասել կամ նախազգալ (տես "Look," բառը Merriam-Webster.com-ում):
24. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.41-42: Քրիստոսանման հատկանիշները, որոնք նշվում են սուրբ գրություններում, Հոգու պարգևներն են, որոնք գալիս են Հիսուս Քրիստոսի ողորմածության և շնորհի միջոցով: Դրանք այն են, ինչը Իսրայելի երեցներին դարձնում է *Իր* երեցները:
25. Ռասսել Մ. Նելսոն, «Մեր կյանք հրավիրել Հիսուս Քրիստոսի զորությունը», *Լիահոնա,* մայիս 2017, 41:
26. Տես merriam-webster.com, "rivet."
27. Ուխտի կյանք թեմայով քննարկման համար, տես Դոնալդ Ս. Հոլսթրոմ «Ապրել ուխտի կյանքով», *Ensign,* June 2013, 46–49: Այս հոդվածը հարմարեցվել է ավելի երկար ելույթից, որը տրվել է Բրիգամ Յանգի Համալսարանում, Այդահո, 2011թվականի մայիսին: Ավելի երկար տարբերակի համար, տես Դոնալդ Լ. Հոլսթրոմ, «Ուխտի կյանք» (Բրիգամ Յանգի Համալսարան–Այդահո հոգևոր երեկո, 10 Մայիս, 2011), byui.edu:
28. Տես Երեմիա 31.31-33-ը, որտեղ Տերը հայտարարում է, որ Նա նոր ուխտ կկապի Իսրայելի տան հետ, որը գրված կլինի նրանց սրտերում: Մեր սրտերում գրված ուխտերի կամ դրանց՝ մեր սրտերում կենդանանալու այս պատկերը, գտնվում է նաև Պողոսի գրվածքներում (տես Բ Կորնթացիս 3.3, Եբրայեցիս 8.10): Դարձի և սրտի վերաբերյալ քննարկման համար, տես Դեյվիդ Ա. Բեդնար, «Դարձ դեպի Տերը», *Լիահոնա,* նոյեմբեր 2012, 106–9:
29. Հացի հաղորդության աղոթքը հրաշալի արտահայտում է Երկնային Հոր հետ մեր ուխտի փոխհարաբերության բնույթը: Երկնային Հոր փրկության ծրագրում մենք ուխտեր ենք կապում մեր Երկնային Հոր հետ, բայց ուխտերի նպատակները իրականանում են և մենք որակավորվում ենք խոստացված օրհնությունների համար Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով, Նա է Միջնորդը: Հաղորդության արարողության ժամանակ, մենք վկայում ենք Հորը (արդյունքում նորից ուխտ կապելով Նրա հետ), որ պատրաստ ենք մեզ վրա վերցնել Քրիստոսի անունը, միշտ հիշել Նրան և պահել Նրա պատվիրանները, որպեսզի մենք կարողանանք Նրա Հոգին (Սուրբ Հոգին) միշտ մեզ հետ ունենալ:

    Հոր խոստացած պարգևները գալիս են Հիսուս Քրիստոսի փրկագնող և զորացնող ուժի միջոցով: Օրինակ՝ ինչպես Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն է ուսուցանել, Հիսուս Քրիստոսն է ամեն ուրախության աղբյուրը» (տես «Ուրախություն և հոգևոր գոյատևում», *Լիահոնա,* նոյեմբեր 2016, 82): Այսպիսով, մեր կիզակետը Հիսուս Քրիստոսի վրա գամելը ուրախություն է բերում մեր կյանք՝ անկախ մեր հանգամանքներից:
30. Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը հասկացել էր այս փոփոխության ազդեցությունը վերաբերմունքի և կողմնորոշման վրա, երբ ասել է. «Երբ հնազանդությունը դադարում է լինել գրգռող և դառնում է մեր որոնումը, այդ պահին Աստված օժտում է մեզ զորությամբ» (in Donald L. Staheli, "Obedience—Life's Great Challenge," *Ensign,* May 1998, 82):
31. Հովհաննես 16.32:
32. Հոր և Որդու կողմից մեզ համար մտահոգվելու, հետաքրքրվելու, սիրելու և մեր կյանքին մասնակցելու փաստի վերաբերյալ լրացուցիչ քննարկման համար, տես Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Աստծո վեհությունը», *Լիահոնա,* նոյ. 2003, 70–73, Հենրի Բ. Այրինգ, «Քայլիր ինձ հետ», *Լիահոնա,* մայիս 2017, 82–85: Տես նաև Մատթեոս 18.20, 28.20, Վարդապետություն և Ուխտեր 6.32, 29.5, 38.7, 61.36, 84.88:
33. Տես Հռովմեացիս 8.35–39, Ա Կորնթացիս 13.1–8, Մորոնի 7.46–47:
34. Վարդապետություն և Ուխտեր 50.27 Ուշադրություն դարձրեք, որ Տերը տալիս է յուրաքանչյուրին, ով կարգված է և առաջ ուղարկված, այս խոստումը, որը վերաբերում է այն հատուկ հանձնարարությանը, որը սահմանափակված է և տրված է նրան.

    «Նույնը նշանակված է լինել ամենամեծը, չնայած, նա ամենափոքրն է և բոլորի ծառան:

    Ուստի նա է բոլոր բաների տիրապետողը. քանզի բոլոր բաները ենթակա են նրան՝ թե՛ երկնքում և թե՛ երկրի վրա, կյանքը և լույսը, Հոգին և զորությունը, առաջ ուղարկված Հոր կամքով, Հիսուս Քրիստոսի՝ նրա Որդու միջոցով:

    Բայց ոչ մեկը չի տիրապետի բոլոր բաներին, եթե չմաքրագործվի ու չմաքրվի ամեն մեղքից:

    Եվ եթե դուք մաքրագործված ու մաքրված եք ամեն մեղքից, դուք կխնդրեք, ինչ կամենաք, Հիսուսի անունով, և այն կկատարվի» (Վարդապետություն և Ուխտեր 50.26–29):
35. Տես Ա Թագավորաց 16.7, Ա Կորնթացիս 2.14: Այս օրհնության մի օրինակի համար՝ տեսնել ինչպես Հիսուսն է տեսնում, տես Նախագահ Հենրի Բ.Այրինգի պատմությունը իր փորձառության մասին, ով մի երիտասարդի եպիսկոպոսն էր, ով հանցանք էր գործել: Այդ ժամանակ Եպիսկոպոս Այրինգին Տերն ասաց. «Ես պատրաստվում եմ թույլ տալ քեզ տեսնել նրան, ինչպես որ ես եմ նրան տեսնում» («Քայլիր ինձ հետ», 84):
36. Սա էր այն խոստումը և հանձնարարությունը, որ Փրկիչը տվեց ժողովրդին Լիառատի տաճարի մոտ: Նա պատվիրեց նրանց այնպես ապրել, որ Իր լույսը և Իր օրինակը լինի նրանցում, որպեսզի նրանք կարողանան վեր պահել Իրեն, որպես լույս աշխարհին իրենց կյանքում, և դեպի Իրեն գալու ուրիշներին ուղղված իրենց հրավերներում: Քանի որ Նրա հետևորդներն այդպես ապրեցին և այդպես հրավիրեցին, ուրիշները զգացին Նրան և տեսան Նրան Տիրոջ ծառաների մեջ: (Տես 3 Նեփի 18.24–25:)
37. Ռասսել Մ. Նելսոն, «Քահանայության զորություն ունենալու գինը», *Լիահոնա,* մայիս 2016, 68:
38. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.88:



ՆԱԽԱԳԱՀ ՀԵՆՐԻ Բ. ԱՅՐԻՆԳ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Աջակցող հավատքի զորությունը

Աջակցելու համար ձեռք բարձրացնելով, դուք խոստանում եք Աստծուն, ում ծառաներին աջակցում եք, որ նեցուկ կլինեք նրանց:

Քահանայության ղեկավարները բազմիցս են շնորհակալություն հայտնել անդամների աջակցող հավատքի համար, ում իրենք ծառայում են: Զգացմունքներ արտահայտող ձայնից դուք զգում եք, որ նրանց երախտագիտությունը խորն է և իրական: Այսօր իմ նպատակն է Տիրոջ գնահատանքը հաղորդել ձեզ Իր ծառաներին Իր Եկեղեցում աջակցելու համար: Ինչպես նաև քաջալերել ձեզ, որ գործադրեք ու մեծացնեք այդ զորությունը, որպեսզի աջակցեք նաև այլ մարդկանց:

Նախքան ձեր ծնվելը դուք դրսևորել եք այդ զորությունը: Մտաբերենք անցյալը, թե ինչ գիտենք նախածննդյան հոգևոր աշխարհի մասին: Երկնային Հայրը ծրագիր ներկայացրեց Իր զավակների համար: Մենք ներկա էինք: Լյուցիֆերը՝ մեր հոգևոր եղբայրը, ընդդիմացավ ծրագրին, որը մեզ ընտրելու ազատություն էր տալու: Եհովան՝ Երկնային Հոր սիրելի Որդին, աջակցեց այդ ծրագրին: Լյուցիֆերը ապստամբեց: Եհովայի աջակցող ձայնը անցավ, և Նա Իրեն առաջարկեց լինել մեր Փրկիչը:

Մահկանացու կյանքում ապրելու փաստը հավաստիացնում է, որ դուք աջակցել եք Հորը և Որդուն: Դուք շատ քիչ գիտեիք մահկանացության ընթացքում սպասվելիք մարտահրավերների մասին, ուստի Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք է պահանջվել, որպեսզի դուք աջակցեք երջանկության ծրագրին և ընդունեք Հիսուս Քրիստոսի տեղը նրանում:

Աստծո ծառաներին աջակցելու հավատքը նույնպես առանցքային դեր է կատարել ձեր երջանկության համար այս կյանքում: Երբ ընդունեցիք միսիոներների աղոթելու մարտահրավերը, որպեսզի իմանաք, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է, դուք գործադրեցիք Աստծո ծառաներին աջակցելու հավատքը: Երբ ընդունեցիք մկրտվելու հրավերը, դուք աջակցեցիք Աստծո խոնարհ ծառաներից մեկին:

Երբ թույլ տվեցիք մի մարդու, որ ձեզ ձեռնադրի ու ասի. «Ստացիր Սուրբ Հոգին», դուք աջակցեցիք նրան՝ որպես Մելքիսեդեկյան Քահանայության կրողի:

Այդ օրից ի վեր, հավատարմությամբ ծառայելով, դուք աջակցել եք յուրաքանչյուր անձնավորության, ով ձեզ քահանայություն է շնորհել, և ով կարգել է ձեզ քահանայության պաշտոնի:

Քահանայության ավելի վաղ փորձառության ժամանակ, աջակցության քայլերը Աստծո ծառաներին վստահելու հասարակ քայլեր էին: Այժմ ձեզանից շատերը հասել են այն կետին, երբ աջակցելը ավելին է պահանջում:

Դուք ընտրում եք աջակցել բոլորին, ում Տերն է կանչում և ինչ կոչման է կանչում: Այդ ընտրությունը կատարվում է ամբողջ աշխարհում համաժողովների ժամանակ: Այն կատարվեց նաև այս համաժողովին: Այդ ժողովներին Աստծո ծառաների՝ տղամարդկանց ու կանանց անուններ են կարդում և ձեզ հրավիրում են աջակցության ձեռք բարձրացնել: Դուք կարող եք կա՛մ ձեռնպահ մնալ, կա՛մ էլ ձեր աջակցող հավատքի խոստումը տալ: Աջակցության ձեռք

բարձրացնելով, դուք խոստում եք տալիս: Դուք խոստանում եք Աստծուն, ում ծառաներին աջակցում եք, որ նեցուկ կլինեք նրանց:

Նրանք անկատար մարդիկ են, ինչպես դուք: Ձեր խոստումը պահելու համար անսասան հավատք կպահանջվի, որ նրանք կանչված են Տիրոջ կողմից: Խոստումը պահելը նաև հավերժական երջանկություն կբերի: Չպահելը ձեզ և ձեր հարազատներին թշվառություն ու աներևակայելի կորուստ կբերի:

Հնարավոր է, ձեզ հարց են տվել կամ մի օր կհարցնեն, թե արդյոք աջակցում եք Եկեղեցու ձեր եպիսկոպոսին, ցցի նախագահին, Բարձրագույն Իշխանավորներին ու պաշտոնյաներին: Այն կարող է տեղի ունենալ, երբ ձեզ խնդրում են աջակցել պաշտոնյաներին համաժողովի ժամանակ: Երբեմն այն տեղի է ունենում եպիսկոպոսի կամ ցցի նախագահի հետ առանձնազրույց անցնելիս:

Իմ խորհուրդը կլինի, որ դուք, մանրակրկիտ ու աղոթքով լի խորհելով, նախապես այդ հարցերը տաք ձեզ: Անելով այդ՝ դուք կարող եք վերհիշել վերջերս ունեցած ձեր մտքերի, խոսքերի և գործերի մասին: Փորձեք հիշել ու ձևավորել ձեր պատասխանները, ինչպես որ Տիրոջը կպատասխանեիք, իմանալով, որ մի օր Նա է ձեզ հետ առանձնազրույց անցկացնելու: Կարող եք նախապատրաստվել նմանատիպ հարցեր տալով ձեզ.

1. Ես մտածե՞լ եմ կամ խոսել այն մարդկանց թերությունների մասին, որոնց խոստացել եմ աջակցել:
2. Ես փնտրե՞լ եմ վկայություն, որ Տերն է առաջնորդում նրանց:
3. Ես բարեխղճորեն ու հավատարմորեն հետևե՞լ եմ նրանց առաջնորդությանը:
4. Ես կիսվե՞լ եմ իմ տեսած վկայությունով, որ նրանք Աստծո ծառաներն են:
5. Ես կանոնավոր աղոթո՞ւմ եմ նրանց համար անհատապես և սիրո զգացումով:

Մեզանից շատերին նման հարցերը կարող են շփոթեցնել ու ապաշխարելու զգացում առաջացնել: Աստված մեզ պատվիրել է անարդար չդատել մարդկանց, բայց մենք տեսնում ենք, որ այն դժվար է գործնականում իրագործել: Մարդկանց հետ գրեթե յուրաքանչյուր գործ կատարելիս պետք է գնահատել նրանց: Կյանքի բոլոր երևույթներում մենք մեզ համեմատում ենք ուրիշների հետ: Մենք դա կարող ենք անել տարբեր, երբեմն տրամաբանական պատճառներով, սակայն այն կարող է տանել քննադատության:

Նախագահ Ջորջ Ք. Քենոնը մի նախազգուշացում է հղել, որը իմ կողմից ձեզ եմ փոխանցում: Հավատացած եմ, որ նա ասում էր ճշմարտությունը. «Աստված է ընտրում Իր ծառաներին: Նա պնդում է, որ Իր իրավունքն է դատապարտել նրանց, եթե նրանք դատապարտման կարիք ունեն: Նա մեզ, անհատապես, չի լիազորել, որ պարսավենք ու դատապարտենք նրանց: Ո՛չ ոք, որքան էլ ուժեղ լինի հավատքի մեջ, որքան էլ բարձր լինի Քահանայության մեջ, չի կարող չարությամբ խոսել Տիրոջ օծյալի դեմ ու սխալ փնտրել երկրի վրա Աստծո իշխանության դեմ՝ առանց Նրա դժգոհությունը իր վրա հրավիրելու: Սուրբ Հոգին կհեռանա նման մարդուց և նա կընկղմվի խավարի մեջ: Եթե արդյունքը այսպիսին է, տեսնո՞ւմ եք, թե որքան կարևոր է, որ մենք զգույշ լինենք»:[1]

Ըստ իմ դիտարկումների՝ Եկեղեցու անդամները ողջ աշխարհում, ընդհանուր առմամբ, նվիրված են միմյանց և իրենց ղեկավարներին: Սակայն, մենք կատարելագործվելու ու բարելավվելու տեղ ունենք: Մեկմեկու աջակցելու զորության մեջ մենք աճելու տեղ ունենք: Եվ դրա համար հավատք և ջանք կպահանջվի: Ահա չորս առաջարկ, որոնց վրա կարող ենք աշխատել այս համաժողովից սկսած:

1. Մենք կարող ենք բացահայտել բանախոսների կողմից առաջարկվող կոնկրետ գործողություններ և այսօր սկսենք դրանք իրագործել: Երբ դա անենք, աջակցելու մեր ուժը կաճի:
2. Նրանց ելույթների ժամանակ կարող ենք աղոթել նրանց համար, որ Սուրբ Հոգին նրանց խոսքերը հասցնի մեզ հարազատ մարդկանց սրտերին: Ավելի ուշ, երբ իմանանք, որ Աստված պատասխանել է մեր աղոթքին, աջակցելու մեր ուժը կաճի:

3. Կարող ենք աղոթել կոնկրետ բանախոսների համար, որ իրենց ուղերձները հղելիս նրանք օրհնվեն ու մեծանան մեր աչքում: Երբ նկատենք, որ նրանք մեծացան մեր աչքում, մեր աջակցող հավատքի զորությունը կաճի ու կհարատևի:
4. Մենք կարող ենք լսել բանախոսների ուղերձները, փնտրելով անձնական աղոթքի պատասխաններ՝ որպես օգնություն: Երբ պատասխանները գան, իսկ դրանք կգան, մեր աջակցող հավատքի զորությունը կավելանա, որպեսզի աջակցենք Տիրոջ բոլոր ծառաներին:

Բացի Եկեղեցում ծառայող անձանց աջակցման բարելավումը, մենք կիմանանք, որ կա մեկ այլ տեղ, որտեղ մենք կարող ենք մեծացնել այդ զորությունը: Այնտեղ այդ զորությունը կարող է ավելի մեծ օրհնություններ բերել մեզ: Այդ տեղը տունն է և ընտանիքը:

Ես դիմում եմ քահանայություն կրող երիտասարդին, որը ապրում է տանը՝ իր հոր հետ: Թույլ տվեք պատմել սեփական փորձից, թե Հոր համար ինչ է նշանակում զգալ ձեր աջակցող հավատքը: Հնարավոր է, նա վստահ անձնավորություն է թվում ձեզ: Սակայն, նա անցնում է ավելի շատ փորձություններով, քան դուք պատկերացնում եք: Կան ժամանակներ, երբ նա չի տեսնում իր առջև ծառացած խնդրի լուծումը:

Ձեր հիացմունքը կարող է օգնել նրան այդ հարցում: Ձեր սերը ավելի շատ կարող է օգնել: Բայց մի բան, որ նրան ամենից շատը կօգնի, նմանատիպ անկեղծ խոսքերն են. «Հայրիկ, ես աղոթել եմ քեզ համար և զգացել եմ, որ Տերը օգնելու է քեզ: Ամեն բան լավ կլինի: Գիտեմ, որ լավ կլինի»:

Նմանատիպ խոսքերը զորություն ունեն նաև մյուս ուղղությամբ՝ հորից որդուն: Երբ որդին լուրջ սխալ է գործում, գուցե, հոգևոր հարցում, նա կարող է թերարժեքության զգացում ունենալ: Որպես հայր, այդ պահին, ձեզ համար հնարավոր է անակնկալ լինի, երբ աղոթելուց հետո, որպեսզի իմանաք, թե ինչ անեք, Սուրբ Հոգին ձեր սրտում կդնի հետևյալ խոսքերը. «Որդիս, ես միշտ քեզ հետ եմ: Տերը սիրում է քեզ: Նրա օգնությամբ դու կարող ես վերադառնալ: Ես գիտեմ, որ դու կարող ես, և դու կանես այդ: Ես սիրում եմ քեզ»:

Քահանայության քվորումում և ընտանիքում միմյանց աջակցելու աճող հավատքը այն ուղին է, որով կառուցում ենք Սիոնը, որը Տերը ցանկանում է, որ ստեղծենք: Նրա օգնությամբ մենք կարող ենք և մենք կանենք այդ: Կարող է պահանջվել, որ սիրենք Տիրոջը մեր ողջ սրտով, զորությամբ, մտքով ու ուժով և սիրենք միմյանց՝ ինչպես մեզ:

Քրիստոսի այդ մաքուր սիրո մեջ աճելով՝ մեր սրտերը կփափկեն: Այդ սերը կօգնի մեզ խոնարհվել և կտանի մեզ ապաշխարության: Տիրոջ հանդեպ ու միմյանց հանդեպ մեր վստահությունը կաճի: Որից հետո մենք ավելի շատ մեկ կդառնանք, քանի որ Տերը խոստացել է՝ մենք կարող ենք:[2]

Ես վկայում եմ, որ Երկնային Հայրը ճանաչում ու սիրում է ձեզ: Հիսուսը կենդանի Քրիստոսն է: Սա Նրա Եկեղեցին է: Մենք կրում ենք Նրա քահանայությունը: Նա հարգում է մեր ջանքերը, մինչ ձգտում ենք աճել քահանայության կիրառության և մեկմեկու աջակցելու գործում: Այդ մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Gospel Truth: Discourses and Writings of President George Q. Cannon,* ed. Jerreld L. Newquist (1974), 1:278.
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 35.2:



ՆԱԽԱԳԱՀ ԴԱԼԼԻՆ Հ. ՕՈՒՔՍ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Ինչի՞ կհանգեցնեն մեր ընտրությունները

Մենք ավելի լավ ընտրություններ կկատարենք և ավելի լավ որոշումներ կընդունենք, եթե նայենք այլընտրանքներին և խորհենք, թե ինչի կհանգեցնեն դրանք:

Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը քաջալերում է մեզ մտածել ապագայի մասին: Այն բացատրում է մահկանացու կյանքի նպատակը և գալիք կյանքի իրականությունը: Ավետարանը հրաշալի գաղափարներ է ուսուցանում ապագայի մասին, որպեսզի առաջնորդի մեր գործողություններն այսօր:

Փոխարենը, մենք ճանաչում ենք մարդկանց, ովքեր մտահոգված են միայն ներկայով. ծախսելով այսօր, վայելելով այսօր և չմտածելով ապագայի մասին:

Մեր ներկան և մեր ապագան ավելի երջանիկ կլինեն, եթե մենք միշտ մտածենք ապագայի մասին: Երբ մենք կայացնում ենք ներկայիս որոշումները, միշտ պետք է հարցնենք. «Ինչի՞ կհանգեցնեն մեր ընտրությունները»:

I.

Որոշ որոշումներ ընտրություններ են որևէ բան անելու և ոչինչ չանելու միջև: Շատ տարիներ առաջ Միացյալ Նահանգներում մի ցցի համաժողովի

ժամանակ ես այսպիսի ընտրության մի օրինակ լսեցի։

Դեպքը տեղի էր ունենում համալսարանական մի գեղեցիկ քաղաքում։ Երիտասարդ ուսանողների բազմությունը նստած էր խոտի վրա։ Ելույթ ունեցողը, ով նկարագրում էր այս իրավիճակը, ասաց, որ ուսանողները հետևում էին, թե ինչպես էր մեծ ու թավ պոչով մի սիրունիկ սկյուռիկ խաղում մի գեղեցիկ հաստաբուն ծառի բնի մոտ։ Երբեմն սկյուռիկը գետնին էր, երբեմն էլ բարձրանում էր ու իջնում՝ պտտվելով ծառի բնի շուրջ։ Բայց այդ ծանոթ տեսարանն ինչո՞ւ էր գրավում ուսանողների բազմությանը։

Մոտակայքում խոտի վրա պառկած էր իռլանդական սետտեր տեսակի մի շուն։ Ուսանողները հետաքրքրված էին շնով, իսկ շան հետաքրքրության առարկան սկյուռիկն էր։ Ամեն անգամ, երբ ծառի շուրջը պտտվելիս սկյուռը մի պահ անհետանում էր տեսադաշտից, սետտերը հանգիստ մի փոքր առաջ էր ձգվում, իսկ հետո նորից վերադառնում էր իր անտարբեր դիրքին։ Սա գրավում էր ուսանողների ուշադրությունը։ Լուռ ու անշարժ, նրանց աչքերը կենտրոնացած էին տեղի ունեցողի վրա, որի արդյունքն աստիճանաբար ակնհայտ էր դառնում։

Ի վերջո, սետտերը բավականաչափ մոտեցավ սկյուռիկին, ցատկեց և բերանով բռնեց նրան։ Սարսափից ցնցված, ուսանողների բազմությունը արագ առաջ շարժվեց և փոքրիկ կենդանուն խլեց շնից, բայց չափազանց ուշ էր։ Սկյուռիկը սատկել էր։

Այդ բազմությունից յուրաքանչյուրը ցանկացած պահի կարող էր նախազգուշացնել սկյուռիկին՝ թափահարելով ձեռքերը կամ բացականչելով, բայց ոչ ոք չարեց։ Նրանք պարզապես հետևում էին, մինչ անխուսափելի ելքը ավելի էր մոտենում։ Ոչ ոք չհարցրեց. «Ինչի՞ կհասցնի սա»։ Երբ կանխատեսելին տեղի ունեցավ, բոլորը շտապեցին կանխել արդյունքը, բայց շատ ուշ էր։ Արցունքախառը զղջումը միակ բանն էր, որ նրանք կարող էին առաջարկել։

Այս իրական պատմությունը առակի մի տեսակ է։ Այն վերաբերում է այնպիսի բաների, որոնք մենք տեսնում ենք մեր սեփական կյանքում և մեզ շրջապատողների կյանքում ու հանգամանքներում։ Երբ մենք տեսնում ենք, որ

սպառնալիքը մոտենում է մեր սիրելի մարդկանց կամ իրերին, ունենում ենք ընտրություն՝ խոսել և գործել, կամ լուռ մնալ։ Մենք պետք է հարցնենք ինքներս մեզ. «Ինչի՞ կհանգեցնի սա»։ Երբ հետևանքներն անմիջական են ու լուրջ, մենք չենք կարող ձեռքներս ծալած նստել։ Մենք պետք է պատշաճ արձագանքենք կամ ձեռնարկենք կանխարգելիչ միջոցառումներ, քանի դեռ ժամանակ կա։

Որոշումները, որոնք ես հենց նոր նկարագրեցի, ներառում են ընտրություններ ինչ-որ բան անելու կամ ոչինչ չանելու միջև։ Ավելի շատ տարածված են ընտրությունները այս կամ այն գործողությունը կատարելու միջև։ Սրանք ներառում են ընտրություններ բարու և չարի միջև, բայց ավելի հաճախ դրանք ընտրություններ են երկու լավ գործողությունների միջև։ Նույնիսկ այսպիսի իրավիճակում ցանկալի է կրկին ուղղել հարցը. «Ինչի՞ կհանգեցնի սա»։ Հաճախ մենք ընտրություն ենք կատարում երկու լավ բաների միջև, երբ խոսքը վերաբերում է այն հարցին, թե ինչի վրա ծախսենք մեր ժամանակը։ Ոչ մի վատ բան չկա տեսախաղեր խաղալու, նամակագրվելու, հեռուստացույց դիտելու կամ հեռախոսով խոսելու մեջ։ Բայց սրանցից յուրաքանչյուրը ներառում է «հնարավորության գին» կոչվածը, որը նշանակում է, որ, եթե մենք ժամանակ ծախսենք մի բանը անելու վրա, կկորցնենք մյուսը անելու հնարավորությունը։ Ես համոզված եմ, որ հասկանում եք, որ մենք պետք է խելամտորեն հաշվարկենք, թե ինչ ենք կորցնում այն ժամանակով, որը ծախսում ենք որևէ գործողության վրա, նույնիսկ, եթե այդ գործողությունը կատարելապես լավն է։

Որոշ ժամանակ առաջ ես մի ելույթ տվեցի «Լավ, ավելի լավ, ամենալավ» վերնագրով։ Այդ ելույթում ես ասացի, որ «եթե ինչ-որ բան *լավն* է, բավարար պատճառ չէ, որ անենք այն։ Լավ բաների թիվը, որոնք մենք կարող ենք անել, զերազանցում է այն հասանելի ժամանակը, որն անհրաժեշտ է դրանք իրականացնելու համար։ Որոշ բաներ ավելի լավն են ուղղակի լավը լինելուց, և դրանց պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնենք մեր կյանքում։ . . . Մենք պետք է հրաժարվենք որոշ լավ բաներից, որպեսզի ընտրենք ավելի լավը կամ լավագույնը»։[1]

Մտածեք ձեր ընտրությունների երկարատև հետևանքների մասին։ Մեր ներկայիս ընտրություններն ի՞նչ ազդեցություն ունեն մեր ապագայի վրա։ Հիշեք կրթություն ստանալու, ավետարանի ուսումնասիրության, հաղորդության միջոցով մեր ուխտերի նորոգման և տաճար հաճախելու մասին։

II.

«Ինչի՞ կհանգեցնի սա» հարցը կարևոր է նաև հասկանալու համար, թե մեր ընտրությամբ ինչ ենք մտածում մեր մասին: Ամենակարևորն այն է, որ մեզանից յուրաքանչյուրն Աստծո զավակն է՝ հավերժական կյանքի հնարավոր հեռանկարով: Ցանկացած այլ ոլորտ, նույնիսկ մասնագիտությունը, ռասան, արտաքին հատկանիշները կամ տիտղոսները, ժամանակավոր և անկարևոր են հավերժության տեսանկյունից: Ձեր ընտրությամբ մի մտածեք ձեր մասին այնպիսի եզրույթներով, որոնք սահմանափակում են նպատակը, որին դուք կարող եք ձգտել:

Իմ եղբայրներ և քույրեր, դուք կարող եք կարդալ կամ դիտել իմ ելույթը և հուսով եմ, որ կիմանաք, թե ձեր ղեկավարներն ինչու են ձեզ տալիս այդ ուսմունքներն ու խորհուրդները: Մենք սիրում ենք ձեզ և Մեր Երկնային Հայրը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը նույնպես սիրում են ձեզ: Նրանց ծրագիրը մեզ համար «երջանկության մեծ ծրագիրն է» (Ալմա 42.8): Այդ ծրագիրը և Նրանց պատվիրաններն ու արարողությունները տանում են դեպի մեծ երջանկություն և ուրախություն այս և գալիք կյանքում: Որպես Հոր և Որդու ծառաներ, մենք ուսուցանում և խորհուրդ ենք տալիս այնպես, ինչպես Նրանք են ուղղորդել մեզ Սուրբ Հոգով: Մենք ցանկանում ենք ուսուցանել ձեզ այն, ինչը ճշմարիտ է, և խրախուսել ձեզ անել այն, ինչ Նրանք են ուրվագծել՝ որպես դեպի հավերժական կյանքը տանող ուղի, որը մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից» (Վարդապետություն և Ուխտեր 14.7):

III.

Ահա ներկայումս կայացրած որոշման մեկ այլ օրինակի ազդեցություն ապագայի վրա: Այս օրինակը վերաբերում է ներկայումս զոհաբերություն կատարելու ընտրությանը, որով պիտի հասնենք ապագա կարևոր նպատակի:

Կոլումբիայի Կալի քաղաքում ցցի համաժողովի ժամանակ մի քույր պատմեց, թե ինչպես էին ինքը և իր փեսացուն ցանկանում ամուսնանալ տաճարում, սակայն այդ ժամանակ ամենամոտ տաճարը գտնվում էր հեռավոր Պերու երկրում: Երկար ժամանակ նրանք գումար էին խնայում ավտոբուսի ուղեվարձի համար: Ի վերջո, նրանք նստեցին Բոգոտա տանող ավտոբուսը, բայց երբ հասան այնտեղ, իմացան, որ Պերուի Լիմա քաղաքը մեկնող ավտոբուսում բոլոր տեղերը զբաղված էին: Նրանք կարող էին տուն վերադառնալ առանց ամուսնանալու կամ կարող էին ամուսնանալ տաճարից դուրս: Բարեբախտաբար այլընտրանք կար: Նրանք կարող էին ավտոբուսով գնալ Լիմա, եթե կամենային նստել ավտոբուսի հատակին հինգ օր ու գիշեր տևողությամբ ուղևորության ընթացքում: Նրանք ընտրեցին անել այդ: Քույրն ասաց, որ դժվար էր, չնայած որոշ ուղևորներ երբեմն նրանց թույլ էին տալիս նստել իրենց տեղերում, որպեսզի իրենք կարողանային մեկնվել հատակին:

Նրա ելույթում ինձ շատ տպավորեց այն հայտարարությունը, որ նա երախտապարտ էր ամուսնու հետ այդ եղանակով տաճար գնալու համար, քանի որ դա փոխեց նրանց վերաբերմունքը դեպի ավետարանը և տաճարային ամուսնությունը: Տերը վարձատրել էր նրանց այնպիսի աճով, որը գալիս է զոհաբերությունից: Նա նաև նկատեց, որ իրենց հնգօրյա ուղևորությունը դեպի տաճար ավելի մեծ գործ էր կատարել նրանց հոգևոր վիճակի կառուցման գործում, քան շատ այլ տաճարային ուղևորություններ, երբ զոհաբերություն չէր պահանջվել:

Այս վկայությունը լսելուց հետո երկար տարիներ ես մտածել եմ, թե որքան տարբեր կլիներ այդ

երիտասարդ զույգի կյանքը, եթե նրանք ուրիշ ընտրություն կատարեին՝ հրաժարվելով զոհաբերությունից, որն անհրաժեշտ էր տաճարում ամուսնանալու համար:

Եղբայրնե՛ր, կյանքում մենք անհամար ընտրություններ ենք կատարում, մի քանիսը շատ կարևոր, մյուսները՝ առերևույթ աննշան: Հետ նայելով, մենք տեսնում ենք, թե որոշ ընտրություններ ինչ մեծ փոփոխություն են առաջացրել մեր կյանքում: Մենք ավելի լավ ընտրություններ կկատարենք և ավելի լավ որոշումներ կընդունենք, եթե նայենք այլընտրանքներին և խորհենք, թե ինչի կհանգեցնեն դրանք: Երբ անենք դա, մենք կհետևենք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի խորհրդին՝ սկսել, մտքում ունենալով ավարտը:[2] Մեզ համար վերջը միշտ ուխտի ճանապարհի վրա է՝ տաճարի միջոցով դեպի հավերժական կյանք, իսկ դա մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից:

Ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի, Նրա Քավության ազդեցության և Նրա հավերժական ավետարանի այլ ճշմարտությունների մասին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Dallin H. Oaks, “Good, Better, Best,” *Liahona,* Nov. 2007, 104, 107.
2. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», *Լիահոնա,* ապրիլ 2018, 7:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորները և Բարձրագույն Պաշտոնյաները

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ



Դալլին Հ. Օուքս
Առաջին Խորհրդական

Ռասսել Մ. Նելսոն
Նախագահ



Հենրի Բ. Այրինգ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ

Մ. Ռասսել Բալլարդ

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

Ռոնալդ Ա. Ռասբենդ

Գարի Ի. Սթիվենսոն



Դեյլ Գ. Ռենլանդ

Ջերիթ Վ . Գոնգ



Ուլիսես Սոարես

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Լ. Ուիթնի Քլեյթոն

Պատրիկ Քիրոն

Քարլ Բ. Քուք

Ռոբերտ Ս. Գայ

Տերենս Մ. Վինսոն

Հոսե Ա. Թեքսեյրա

Կառլոս Ա. Գոդոյ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԻԵԽԱՆԱՎՈՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԱԿԱՆՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ



ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ



ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ



ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Ապրիլ, 2019թ.

ՆԱԽԱԳԱՀ ՌԱՍՍԵԼ Մ. ՆԵԼՍՈՆ

Մենք կարող ենք ավելի լավ գործել և ավելի լավը լինել

Ձեր ուշադրությունը դարձրեք ամենօրյա ապաշխարության վրա, որը շատ կարևոր է ձեր կյանքի համար, որ դուք կարողանաք քահանայությունը գործադրել ավելի մեծ զորությամբ, քան երբևէ:

Իմ թանկագի՛ն եղբայրներ, ես ոգեշնչված եմ նայում քահանայություն կրողների Տիրոջ գումարտակի այս մեծ բազմությանը: Բարու ինչպիսի՜ հզոր ուժ եք դուք: Մենք սիրում ենք ձեզ: Մենք աղոթում ենք ձեզ համար: Եվ մենք շատ շնորհակալ ենք ձեզ:

Վերջերս ես մտածում էի Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Տիրոջ ցուցումի մասին. «Ոչինչ մի ասա այս սերնդին, բացի ապաշխարությունից»:[1] Այս հայտարարությունը հաճախ է կրկնվում սուրբ գրություններում:[2] Այն հուշում է մի ակնհայտ հարց. «Արդյո՞ք *բոլորը* ապաշխարելու կարիք ունեն»: Պատասխանն է՝ այո:

Շատ մարդիկ ապաշխարությունը դիտարկում են որպես պատիժ, մի բան, որից պետք է խուսափել, բացառությամբ առավել լուրջ հանգամանքների: Սակայն պատժի ենթարկվելու այս զգացմունքն առաջացնում է սատանան: Նա փորձում է խանգարել մեզ ապավինել Հիսուս Քրիստոսին,[3] ով կանգնած է գրկաբաց՝[4] հուսալով և ցանկանալով բժշկել, ներել, մաքրել, զորացնել, մաքրագործել և սրբացնել մեզ:

Ապաշխարություն բառը հունարեն Նոր Կտակարանում գրված է *metanoeo:* *Meta-* նախածանցը նշանակում է

«փոխել»: *-Noeo* վերջածանցը առնչվում է հունարեն բառերի հետ, որոնք նշանակում են «միտք», «գիտելիք», «ոգի» և «շունչ»:[5]

Այսպես, երբ Հիսուսն ինձ ու ձեզ խնդրում է «ապաշխարել»,[6] Նա հրավիրում է մեզ փոխել մեր միտքը, մեր գիտելիքը, մեր հոգին, նույնիսկ այն, թե ինչպես ենք շնչում: Նա խնդրում է մեզ փոխել այն ձևը, որովմենք սիրում ենք, մտածում, ծառայում, անցկացնում մեր ժամանակը, վերաբերվում մեր կանանց, սովորեցնում մեր երեխաներին և նույնիսկ հոգ տանում մեր մարմինների մասին:

Ոչինչ ավելի ազատագրական, ավելի ազնվացնող կամ ավելի կարևոր չէ մեր անհատական առաջընթացի համար, քան կանոնավոր, ամենօրյա կենտրոնացումն ապաշխարության վրա: Ապաշխարությունը մեկ իրադարձություն չէ, այն գործընթաց է: Այն բանալին է երջանկության և խաղաղ մտքի: Զուգորդվելով հավատքի հետ, ապաշխարությունը հնարավորություն է տալիս օգտվել Հիսուս Քրիստոսի քավության զորությունից:[7]

Մնկախ նրանից, թե դուք ջանասիրաբար շարժվում եք ուխտի ճանապարհով, սայթաքել կամ շեղվել եք ուխտի ճանապարհից, կամ նույնիսկ չեք կարող տեսնել այդ ճանապարհն այն տեղից, որտեղ գտնվում եք, աղաչում եմ ձեզ ապաշխարել: Զգացեք ամենօրյա ապաշխարության ամրացնելու զորությունը, ամեն օր գործելով և լինելով մի փոքր ավելի լավը:

Երբ փորձում ենք ապաշխարել, մենք փոխվելու որոշում ենք կայացնում: Մենք թույլ ենք տալիս Փրկիչին վերափոխելու և դարձնելու մեզ այն անձնավորությունը, որը մեր ներուժի լավագույն տարբերակն է: Մենք որոշում ենք հոգևորապես աճել և ուրախություն ստանալ՝ փրկագնման ուրախությունը Նրանում:[8] Երբ փորձում ենք ապաշխարել, մենք որոշում ենք նմանվել Հիսուս Քրիստոսին:[9]

Եղբայրնե՛ր, մենք պետք է *գործենք* ավելի լավ և *լինենք* ավելի լավը, քանի որ մենք ճակատամարտ ենք մղում: Մեղքի դեմ ճակատամարտն իրական է: Հակառակորդը քառապատկում է իր ջանքերը, որպեսզի քայքայի վկայությունները և խոչընդոտի Տիրոջ աշխատանքը: Նա իր ծառաներին զինում է

շատ զորեղ զենքերով, որ չթողնի մեզ ճաշակել ուրախությունը և Տիրոջ սերը:[10]

Ապաշխարությունը թշնամու թակարդներից տուժած թշվառությունից խուսափելու բանալին է: Տերը մեր հավերժական առաջընթացի այս ժամանակահատվածում չի ակնկալում կատարելություն: Բայց նա ակնկալում է, որ մենք ավելի մաքուր լինենք: Ամենօրյա ապաշխարությունը մաքրության ուղին է, իսկ մաքրությունը ուժ է բերում է: Անհատական մաքրությունը կարող է մեզ ուժեղ գործիքներ դարձնել Աստծո ձեռքում: Մեր ապաշխարությունը՝ մեր մաքրությունը, մեզ հնարավորություն կտա օգնել Իսրայելի հավաքմանը:

Տերն ուսուցանել է Մարգարե Ջոզեֆ Սմիթին, «որ քահանայության իրավունքներն անբաժանորեն կապված են երկնքի զորությունների հետ, և որ երկնքի զորությունները չեն կարող կառավարվել, ոչ էլ գործածվել, բացի միայն արդարության սկզբունքների հիման վրա»:[11]

Մենք գիտենք, թե ինչը մեզ ավելի մեծ հնարավորություն կտա ստանալ երկնքի զորության օգնությունը: Մենք նաև գիտենք, թե ինչն է խոչընդոտում մեր առաջընթացին. մենք ինչ պետք է դադարենք անել, որպեսզի ավելի շատ ստանանք երկնքի զորությունների օգնությունը: Եղբայրնե՛ր, աղոթքով ձգտեք հասկանալ, թե ինչն է կանգնած ձեր ապաշխարության ճանապարհին: Բացահայտեք, թե ինչն է *կանգնեցնում* ձեզ ապաշխարել: Իսկ հետո՝ փոխվե՛ք: Ապաշխարե՛ք: Մենք բոլորս կարող ենք ավելի լավ գործել և լինել ավելի լավը, քան՝ երբևէ:[12]

Կան որոշակի ուղիներ, որոնցում մենք կարող ենք բարելավվել: Մեկն այն է, թե ինչպես ենք մեր մարմիններին վերաբերվում: Ես հիանում եմ մարդկային մարմնի հրաշքից: Դա մի ապշեցուցիչ ստեղծագործություն է, որն անհրաժեշտ է մեր գերագույն աստվածային ներուժի նկատմամբ աստիճանական զարգացման համար: Մենք չենք կարող զարգանալ առանց դրա: Պարգևելով մեր մարմինը, Աստված թույլ է տվել, որ մենք ավելի շատ կենսական քայլեր կատարենք Նրան նմանվելու ուղղությամբ:

Սատանան հասկանում է դա: Նա զայրանում է, որ իր նախաերկրային ուրացությունը մշտապես որակազրկում է նրան այդ արտոնությունից, թողնելով նրան մշտական նախանձի և վրդովմունքի մեջ: Այսպիսով, գայթակղություններից շատերը, եթե ոչ մեծ մասը, նա դնում է մեր ճանապարհին՝ ստիպելով մեզ անարգել մեր մարմինները կամ ուրիշների մարմինները: Քանի որ սատանան *առանց* մարմնի թշվառ է, նա ուզում է, որ մենք թշվառ լինենք մեր մեղքերի *պատճառով*:[13]

Ձեր մարմինը ձեր անձնական տաճարն է, որը ստեղծվել է ձեր հավերժական հոգին բնակեցնելու համար:[14] Այդ տաճարի մասին ձեր հոգածությունը կարևոր է: Այժմ ես հարց եմ տալիս եղբայրնե՛ր. արդյո՞ք դուք ավելի շատ հետաքրքրված եք ձեր մարմինների հագ ու կապով, որ հաճո լինեք աշխարհին, թե՞ Աստծուն: Այդ հարցի ձեր պատասխանն անմիջական ուղերձ է հղում Նրան՝ Նրա տված արտասովոր պարգևի նկատմամբ ունեցած ձեր զգացումների մասին: Եղբայրնե՛ր, ինչ վերաբերում է մեր մարմինները հարգելուն, ես կարծում եմ, որ մենք կարող ենք ավելի լավ գործել և ավելի լավը լինել:

Մեկ այլ եղանակը, որով կարող ենք ավելի լավ գործել և ավելի լավը լինել, այն է, թե ինչպես ենք հարգում մեր կյանքի կանանց, սկսած մեր կանանցից և դուստրերից, մեր մայրերից և քույրերից:[15]

Ամիսներ առաջ ես մի սրտաճմլիկ նամակ ստացա մի սիրելի քրոջից: Նա գրել է. «[Իմ դուստրերն ու ես] մեծ դժվարություններ ունենք մեր ամուսինների և որդիների հետ, որոնք ամեն օր, ողջ օրը շարունակ նայում են սպորտային նորություններ, խաղում են տեսախաղեր, բորսային շուկաների նորություններին են հետևում և անվերջ վերլուծում ու դիտում են բոլոր [երևակայելի] մարզաձևերը: Կարծես թե մենք ոչ կարևոր ենք դառնում մեր ամուսինների ու որդիների համար՝ [մարզաձևերի ու խաղերի հանդեպ] նրանց մշտական ուշադրության պատճառով»:[16]

Եղբայրնե՛ր, քահանայություն կրողի ձեր առաջին և ամենակարևոր պարտականությունն է՝ սիրել իր կնոջը և հոգ տանել նրա մասին: Նրա հետ եղեք մեկ: Եղեք նրա զուգընկերը: Նրա համար դյուրին դարձրեք ձեզ հետ լինելու ցանկությունը: Կյանքում այլ հետաքրքրություն չպետք է առաջնահերթ լինի՝ նրա հետ հավերժական հարաբերություններ կառուցելուց առավել: Հեռուստացույցի, բջջային սարքերի կամ համակարգչի մեջ ոչինչ ավելի կարևոր չէ, քան նրա բարեկեցությունը: Վերանայեք, թե ինչպես եք ծախսում ձեր ժամանակը, և որտեղ եք ներդնում ձեր եռանդը: Դա կհուշի ձեզ, թե որտեղ է ձեր սիրտը: Աղոթեք, որ ձեր սիրտը միավորված լինի ձեր կնոջ սրտին: Ձգտեք նրան ուրախություն պարգևել: Փնտրեք նրա խորհուրդը և լսեք այն: Նրա խորհուրդը կբարելավվի ձեր արդյունավետությունը:

Եթե կարիք ունեք ապաշխարելու ձեր սիրելի կանանց նկատմամբ վերաբերմունքի պատճառով, սկսեք անմիջապես: Եվ հիշեք, որ *ձեր* պատասխանատվությունն է ձեր կյանքի կնոջն օգնել ստանալու այն օրհնությունները, որոնք գալիս են մաքրաբարոյության Տիրոջ օրենքով ապրելու արդյունքում: Երբեք



պատճառ մի հանդիսացեք, որ կինը չկարողանա ստանալ իր տաճարային օրհնությունները:

Եղբայրնե՛ր, մենք բոլորս կարիք ունենք ապաշխարելու: Մենք պետք է բարձրանանք բազմոցից, վար դնենք հեռուստացույցի վահանակը և արթնանանք մեր հոգևոր նիրհից: Ժամանակն է հագնել Աստծո ողջ սպառազինությունը, որ կարողանանք մասնակցել երկրի վրա գոյություն ունեցող ամենակարևոր աշխատանքին: Ժամանակն է «զցելու [մեր] մանգաղները և հնձելու [մեր] ողջ զորությամբ, մտքով և ուժով»:[17] Չարի ուժերը երբեք այդքան ավելի ուժեղ չեն տարածվել, քան այսօր: Որպես Տիրոջ ծառաներ, մենք չենք կարող քնել, մինչ այս ճակատամարտը շարունակվում է:

Ձեր ընտանիքին անհրաժեշտ է ձեր առաջնորդությունը և սերը: Ձեր քվորումին ու ձեր ծխում կամ ճյուղում գտնվողներին անհրաժեշտ է ձեր ուժը: Եվ բոլոր ձեզ հանդիպած մարդիկ պետք է իմանան, թե ինչ տեսք ունի և ինչպես է գործում Տիրոջ ճշմարիտ աշակերտը:

Իմ սիրելի՛ եղբայրներ, դուք ընտրվել եք մեր Հոր կողմից, որ ձեր նախաերկրային հոգևոր գործերի շնորհիվ այս վճռական պահին գաք երկիր: Դուք ամենահիրաշալի և ամենաքաջարի տղամարդիկ եք, որ երբևէ եկել եք Երկիր: Սատանան գիտի, թե ով եք դուք, և ով եք եղել նախաերկրային կյանքում, և հասկանում է այն աշխատանքը, որը պետք է արվի՝ նախքան Փրկիչի վերադարձը: Եվ իր խորամանկ արվեստը հազարամյակներ գործի դնելուց հետո, հակառակորդը փորձառու և անուղղելի է:

Բարեբախտաբար, մեր ունեցած քահանայությունը շատ ավելի ուժեղ է, քան հակառակորդի խորամանկությունները: Ես աղաչում եմ, որ դուք լինեք այն տղամարդիկ և երիտասարդ տղաները, որոնց ցանկանում է տեսնել Տերը: Ձեր ուշադրությունը դարձրեք *ամենօրյա* ապաշխարության վրա, որը շատ կարևոր է ձեր կյանքի համար, որ դուք կարողանաք քահանայությունը գործադրել ավելի մեծ զորությամբ, քան երբևէ: Դա միակ ճանապարհն է, որը ձեզ և ձեր ընտանիքին հոգևորապես ապահով կպահի առաջիկա դժվարին օրերին:

Տիրոջն անհրաժեշտ են անձնազոհ տղամարդիկ, ովքեր ուրիշների բարեկեցությունը վեր են դասում սեփականից: Նա կարիք ունի այն տղամարդկանց, ովքեր գիտակցաբար աշխատում են Հոգու ձայնը հստակությամբ լսելու համար: Նա կարիք ունի ուխտի տղամարդկանց, որոնք շիտակորեն պահպանում են իրենց ուխտերը: Նա կարիք ունի այնպիսի տղամարդկանց, ովքեր վճռականորեն իրենց մաքուր են պահում սեռական մեղքերից, արժանի տղամարդկանց, ում առանց նախազգուշացնելու կարող են խնդրել օրհնություն տալ մաքուր սրտով, մաքուր մտքով և պատրաստակամ ձեռքերով: Տերը կարիք ունի ապաշխարության պատրաստ տղամարդկանց՝ ծառայելու եռանդով և արժանի՝ մասը կազմելու քահանայություն կրողների Տիրոջ գումարտակի:

Ես օրհնում եմ, որ դուք դառնաք այդ տղամարդիկ: Ես օրհնում եմ ձեզ քաջությամբ, որպեսզի ապաշխարեք ամեն օր և սովորեք, թե ինչպես գործադրեք քահանայության լրիվ զորությունը: Ես օրհնում եմ ձեզ, որ Փրկիչի սերը փոխանցեք ձեր կնոջը, ձեր երեխաներին և բոլոր նրանց, ովքեր ճանաչում են ձեզ: Ես օրհնում եմ ձեզ, որ ավելի լավ *գործեք* և ավելի լավը *լինեք*: Եվ օրհնում եմ ձեզ, որ այդ ջանքերը գործադրելիս դուք տեսնեք հրաշքներ ձեր կյանքում:

Մենք ընդգրկված ենք Ամենազոր Աստծո գործին: Հիսուսը Քրիստոսն է: Մենք Նրանց ծառաներն ենք: Այդ մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 6.9, 11.9
2. Տես Մարկոս 1.4, Մոսիա 18.20, Ալմա 37.33, 3 Նեփի 7.23, Մորոնի 3.3, Վարդապետություն և Ուխտեր 19.21, 44.3, 55.2:
3. Տես Վարդապետություն և Ուխտեր 6.36:
4. Տես Երկրորդ Օրինաց 26.8, 2 Նեփի 1.15, Մորմոն 6.17, Վարդապետություն և Ուխտեր 6.20:
5. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Ապաշխարություն և դարձ», *Լիահոնա,* մայիս 2007, 103:
6. Օրինակ, տես՝ Ղուկաս 13.3, 5:
7. Տես 2 Նեփի 9.23, Մոսիա 4.6, 3 Նեփի 9.22, 27.19:
8. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Ապաշխարություն և դարձ»,103–4:
9. Տես 3 Նեփի 27.27
10. Տես Հուդա 1.17–21, 2 Նեփի 2.25, 27, 28.20, տես նաև 1 Նեփի 8.10–12, 21–23, 11.21–22, 12.17, Վարդապետություն և Ուխտեր 10.22, Մովսես 5.13:
11. Վարդապետություն և Ուխտեր 121.36
12. Բառերը, որոնք Տերը ոգեշնչել է հայտնություններում և վերջին օրերի ուսմունքներում, *ավելի բարձր, ավելի սուրբ, արագացնել, մեծացնել, զորացնել, ավելի մեծ, վերափոխել, վերանորոգել, բարելավել, մեծացնել, փոխել, ձգել,*հոգևոր աճի բառեր են (տես Ռասսել Մ. Նելսոն, «Դառնալ օրինակելի Վերջին Օրերի Սրբեր» *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 113–14):
13. Մենք գիտենք, որ «մարդիկ ազատ են՝ ըստ մարմնի: . . . Նրանք ազատ են՝ ընտրելու ազատություն և հավերժական կյանք, բոլոր մարդկանց մեծ Միջնորդի միջոցով, կամ ընտրելու գերություն և մահ, ըստ դևի գերության և զորության. քանզի նա ջանում է, որ բոլոր մարդիկ լինեն թշվառ, ինչպես ինքը»: (2 Նեփի 2.27):
14. Տես Ա Կորնթացիս 3.16–17, 6.18–20:
15. Տես Հակոբ 2.35:
16. Նամակ՝ ստացված 2019 թվականի փետրվարի 4-ին:
17. Վարդապետություն և Ուխտեր 33.7:

Կիրակի առավոտյան նիստ

ԵՐԵՑ ԴԵՅԼ Գ. ՌԵՆԼԱՆԴ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Օրհնությունները շատ են

Օրհնություններից շատերը, որոնք Աստված ցանկանում է մեզ տալ, պահանջում են գործողություն մեր կողմից՝ գործողություն, որը հիմնված է Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատի վրա:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մեր Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ցանկանում են օրհնել մեզանից յուրաքանչյուրին:[1] Այն հարցը, թե *ինչպես* հասնել և ձեռք բերել այդ օրհնությունները, դարեր շարունակ եղել են աստվածաբանական բանավեճերի ու քննարկման առարկա:[2] Ոմանք պնդում են, որ դրանք ամբողջովին վաստակած օրհնություններ են. դրանք ստանում ենք միայն մեր գործերի շնորհիվ: Մյուսները վիճում են, որ Աստված արդեն ընտրել է, թե Ինքը ում կօրհնի, և ինչպես դա կանի, և որ այդ որոշումներն անփոփոխ են: Երկու տեսակետներն էլ սկզբունքորեն սխալ են: Երկնքի օրհնությունները չեն վաստակում ինտենսիվ կերպով հավաքելով «բարի գործերի միավորներ», ոչ էլ անօգնական սպասում են, որ տեսնեն, թե արդյոք հաղթում են օրհնության վիճակախաղը: Ո՛չ, ճշմարտությունը ավելի շատ նրբություններ ունի, բայց ավելի համապատասխան է սիրող Երկնային Հոր և Նրա հնարավոր ժառանգների միջև եղած փոխհարաբերությունների համար: Վերականգնված ճշմարտությունը ցույց է տալիս, որ օրհնությունները երբեք չեն վաստակում, բայց մեր կողմից հավատք ներշնչող նախնական և շարունակական գործողությունները կարևոր են:[3]

Մինչ մենք մտածում ենք, թե ինչպես ենք օրհնություններ ստանում Աստծուց, թույլ տվեք երկնային օրհնությունները նմանեցնել փայտի մի մեծ կույտի: Պատկերացրեք, որ կենտրոնում գտնվում են փոքր տաշեղները, որոնց վրա դրված են փոքր և միջին չափսի փայտեր: Ապա դրված են մեծ կտոր փայտերը, իսկ վերջում՝ մեծ գերանները: Փայտե այդ կույտը պարունակում է հսկայական քանակության վառելիք, որն օրեր շարունակ ունակ է լույս և ջերմություն արտադրել Այդ փայտե կույտի մոտ պատկերացրեք ֆոսֆորի գլխով մի լուցկու հատիկ:[4]

Որպեսզի այդ փայտե կույտը էներգիա արտադրի, լուցկու հատիկով պետք է վառել այդ փոքր տաշեղները: Այդ տաշեղներն արագ կվառվեն և կստիպեն ավելի մեծ կտոր փայտերին վառվել: Երբ այրման այս ռեակցիան մեկնարկի, այն կշարունակվի այնքան ժամանակ, մինչև բոլոր փայտերը վառվեն կամ կրակը զրկվի թթվածնից:

Լուցկին ու տաշեղները վառելը փոքր գործողություններ են, որը թույլ տվեց, որ փայտի հնարավոր էներգիան արտադրվի:[5] Մինչև լուցկին չվառվի, ոչինչ տեղի չի ունենա, անկախ փայտե կույտի չափսից: Եթե լուցկին վառվի, բայց չկիրառվի տաշեղներն այրելու համար, միայն լուցկու հատիկից արտադրված լույսն ու ջերմությունը շատ քիչ են, իսկ փայտի այրման էներգիան չի արտադրվի: Եթե այրման ընթացքում թթվածինը չի մատակարարվում, այրման ռեակցիան կանգ է առնում:

Նմանապես, օրհնություններից շատերը, որոնք Աստված ցանկանում է մեզ տալ, պահանջում է գործողություն մեր կողմից, որը հիմնված է Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատի վրա: Հավատը գործողության և զորության սկզբունք է:[6] Սկզբում մենք գործում ենք հավատքով, ապա ստանում ենք զորություն՝ համաձայն Աստծո կամքի և ժամանակի: Այդ հերթականությունը շատ կարևոր է:[7] Պահանջված գործողությունը միշտ շատ փոքր է, եթե համեմատենք այն օրհնությունների հետ, որոնք մենք, ի վերջո, ստանում ենք:[8]

Մտածեք, թե ինչ պատահեց, երբ կիզող թռչող օձերը հարձակվեցին հնագույն իսրայելացիների վրա, երբ նրանք գտնվում էին խոստումի երկիր տանող ճանապարհին: Թունավոր օձի խայթը ճակատագրական էր: Սակայն խայթված մարդը կարող էր բուժվել, եթե նայեր պղնձե օձին, որը պատրաստել էր Մովսեսը և տեղադրել ձողի վրա:[9] Որքա՞ն եռանդ է պահանջվում որևէ բանին նայելիս: Բոլոր նրանք, ովքեր նայեցին, ստացան երկնքի զորությունները և բժշկվեցին: Մյուս իսրայելացիները, որոնց խայթել էին օձերը, չնայեցին պղնձե օձին և մեռան: Գուցե նրանք չունեին հավատք նայելու համար:[10] Գուցե նրանք չէին հավատում, որ նման պարզ արարքը կարող է առաջ բերել խոստացված բուժումը: Կամ գուցե նրանք ինքնակամ կարծրացրին իրենց սրտերը և մերժեցին Աստծո մարգարեի խորհուրդները:[11]

Աստծուց հոսող օրհնություններն ակտիվացնելու սկզբունքը հավերժական է: Հնագույն իսրայելացիների նման, մենք նույնպես պետք է կիրառենք Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքը և օրհնվենք: Աստված հայտնել է, որ «կա օրենք, որի վրա հիմնված են բոլոր օրհնությունները: Եվ եթե մենք որևէ օրհնություն ենք ստանում Աստծուց, դա այն օրենքին հնազանդվելով է, որի վրա հիմնված է այն»:[12] Սակայն, դուք չեք վաստակում օրհնություն, այդ հասկացությունը կեղծ է, բայց դուք պետք է վաստակեք այն: Մեր փրկությունը գալիս է միայն Հիսուս Քրիստոսի արժանիքների և շնորհի միջոցով:[13] Նրա քավիչ զոհաբերության անսահմանությունը նշանակում է, որ փայտե կույտը անսահման է. դրա հետ համեմատած մեր նվազ գործողությունները գրեթե զրոյական են: Բայց դրանք զրո չեն, և դրանք աննշան չեն. մթության մեջ վառվող լուցկին կարելի է տեսնել մղոններ հեռու գտնվելով: Իրականում, այն կարելի է տեսնել երկնքում, քանի որ հավատքի փոքր գործեր են պահանջվում, որպեսզի բռնկեն Աստծո խոստումները:[14]

Որպեսզի Աստծուց ստանաք ցանկալի օրհնությունը, գործեք հավատքով՝ վառելով փոխաբերական լուցկին, որից կախված է այդ օրհնությունը: Օրինակ, աղոթքի նպատակներից մեկն այն է, որ ստանանք օրհնությունները, որոնք Աստված կամենում է շնորհել միայն այն պայմանով, եթե մենք խնդրենք դրանք նրանից:[15] Ալման աղաղակեց ողորմության համար, և նրա ցավերը անցան. նա այլևս տակնուվրա չէր լինում իր մեղքերի հիշողությունից: Նրա ուրախությունը գերազանցել էր նրա ցավը, և դա նրա շնորհիվ, որ նա աղաղակեց հավատքով առ Հիսուս Քրիստոսը:[16] Մեր ակտիվացման անհրաժեշտ էներգիայի համար պետք է Քրիստոսի հանդեպ բավարար հավատք ունենանք, անկեղծ աղոթքով Աստծուց խնդրենք, իսկ պատասխանի համար ընդունենք Նրա կամքն ու ժամանակը:

Հաճախ, օրհնությունների համար անհրաժեշտ ակտիվացման էներգիան պահանջում է ավելին, քան պարզապես փնտրելը կամ խնդրելը. շարունակական, կրկնվող, հավատով լի գործողություններ են պահանջվում: 19-րդ դարի կեսերին Բրիգամ Յանգը հրահանգեց, որ մի խումբ Վերջին Օրերի Սրբեր հետազոտեն Արիզոնա նահանգը և բնակեցնեն այն, որը Հյուսիսային Ամերիկայի չորային շրջան էր: Արիզոնա հասնելուց հետո այդ խմբի մոտ ջուրը վերջացավ, և նրանք վախեցան, որ կմեռնեն: Նրանք աղերսեցին Աստծուն օգնության համար: Շուտով անձրև և ձյուն տեղաց, թույլ տալով նրանց լցնել իրենց տարաները ջրով և հագեցնել իրենց կենդանիների ծարավը: Շնորհակալ և թարմացած, նրանք վերադարձան Սոլթ Լեյք Սիթի՝ ուրախանալով Աստծո բարությամբ: Վերադառնալուց հետո նրանք պատմեցին իրենց արշավախմբի մանրամասները Բրիգամ Յանգին և հայտնեցին իրենց եզրակացության մասին, որ Արիզոնան բնակեցնելն անօգուտ է:

Զեկույցը լսելուց հետո Բրիգամ Յանգը հարցրեց սենյակում գտնվող մի մարդու, թե նա ինչ էր մտածում արշավախմբի և այդ հրաշքի մասին:

Այդ մարդը, Դանիել Վ. Ջոնսը, ուղղակի պատասխանեց. «Ես կհավաքեի ջուրը, կշարունակեի և նորից կաղոթեի»: Եղբայր Բրիգամը ձեռքը դրեց Եղբայր Ջոնսի ուսին և ասաց. «Սա է այն մարդը, որը պետք է պատասխանատու լինի Արիզոնայի հաջորդ ուղևորության ժամանակ»:[17]

Բոլորս կարող ենք հիշել պահեր, երբ դժվարություններից անկախ մենք առաջ ենք շարժվել և նորից աղոթել ու ստացել օրհնությունները: Մայքլ և Մարիան Հոլմեսների փորձառությունները լուսաբանում են այս սկզբունքները: Մայքլը և ես միասին ծառայել ենք Տարածքային Յոթանասունականներ: Ես միշտ հուզվում էի, երբ նա կանչվում էր աղոթելու մեր ժողովների ժամանակ, քանի որ նրա մեծ հոգևոր ուժն էապես առկա էր. նա գիտեր, թե ինչպես զրուցել Աստծո հետ: Ինձ դուր էր գալիս, երբ նա աղոթում էր: Սակայն, իրենց ամուսնության սկզբում Մայքլը և Մարիան չէին աղոթում կամ հաճախում եկեղեցի: Նրանք զբաղված էին երեք փոքր երեխաներով և շինարարական հաջողակ ընկերությունով: Մայքլը չէր զգում, որ կրոնասեր մարդ էր: Մի երեկո եպիսկոպոսն այցելեց նրանց տուն և խրախուսեց նրանց վերսկսել աղոթել:

Եպիսկոպոսի գնալուց հետո Մայքլը և Մարիանը որոշեցին, որ պետք է փորձեն աղոթել: Քնելուց

առաջ նրանք ծնկի իջան անկողնու մոտ և անհարմար զգալով Մայքլը սկսեց աղոթել։ Մի քանի անիմաստ բառերից հետո Մայքլը կտրուկ կանգ առավ և ասաց. «Մարիան, ես չեմ կարող սա անել»։ Երբ նա կանգնեց և փորձեց գնալ, Մարիանը բռնեց նրա ձեռքը, ստիպեց նրան ծնկի իջնել և ասաց. «Մայք, դու կարող ես դա անել։ Կրկին փորձիր»։ Այդպես խրախուսվելով Մայքլն ասաց մի կարճ աղոթք։

Հոլմեսները սկսեցին կանոնավոր աղոթել։ Նրանք ընդունեցին եկեղեցի հաճախելու մերձավորի հրավերը։ Երբ նրանք մտան հաղորդության սենյակ և լսեցին բացման օրհներգը, Հոգին հուշեց նրանց. «Սա ճշմարիտ է»։ Ավելի ուշ, առանց հարցնելու և աննկատ, Մայքլն օգնեց հեռացնել աղբը հավաքատնից։ Դա անելուց հետո նա ուժեղ տպավորություն ունեցավ. «Սա Իմ տունն է»։

Մայքլը և Մարիանն ընդունեցին Եկեղեցու կոչումները և ծառայեցին իրենց ծխում ու ցցում։ Նրանք կնքվեցին միմյանցհետ, և իրենց 3 զավակները կնքվեցին նրանց հետ։ Նրանք ունեցան ավելի շատ երեխաներ՝ ընդհանուր առմամբ 12 երեխա։ Հոլմեսները երկու անգամ ծառայեցին միսիայի նախագահ և զուգընկեր։

Առաջին անհարմար ասված աղոթքը՝ փոքր, բայց հավատով լեցուն գործողություն էր, որը բռնկեց երկնքի օրհնությունները։ Հոլմեսները հավատի բոցերը սնուցեցին եկեղեցի հաճախելով և ծառայելով։ Տարիներ շարունակ նվիրված աշակերտի նրանց օրինակը հանգեցրեց մոլեգնած հրդեհի, որը ոգեշնչում է մինչ այժմ։

Այնուամենայնիվ, կրակը պետք է սնվի թթվածնի անընդհատ պաշարից, որպեսզի փայտը վերջնականապես թողարկի իր ամբողջ ներուժը։ Ինչպես ցույց տվեցին Մայքլ և Մարիան Հոլմեսները, Քրիստոսի հանդեպ հավատքը պահանջում է շարունակական գործողություն, որպեսզի բոցը շարունակվի վառվել։ Փոքր արարքները մեծացնում են ուխտի ճանապարհով քայլելու մեր ունակությունը և բերում են այն մեծագույն օրհնությունները, որոնք Աստված կարող է առաջարկել։ Սակայն թթվածինը շարունակում է առաջանալ միայն այն ժամանակ, եթե փոխաբերական իմաստով մենք շարունակում ենք քայլեր անել։ Երբեմն մենք պետք է նետ ու աղեղ պատրաստենք, նախքան հայտնություն կստանանք այն մասին, թե որտեղ պետք է ուտելիք փնտրենք։[18] Երբեմն պետք է գործիքներ պատրաստենք, նախքան հայտնություն ստանանք այն մասին, թե ինչպես նավ կառուցենք։[19] Երբեմն, Տիրոջ մարգարեի ցուցումով, մենք պետք է փոքր բաղարջ պատրաստենք այն քիչ յուղից և ալյուրից, որոնք մենք պետք է վերցնենք չպակասող յուղի կուժից և չվերջացող ալյուրի սափորից։[20] Իսկ երբեմն մենք պետք է «հանգիստ լինենք և իմանանք, որ [Աստված] Աստված է» և վստահել Նրա ընտրած ժամանակին։[21]

Երբ որևէ օրհնություն եք ստանում Աստծուց, կարող եք եզրակացնել, որ դուք գործել եք ըստ այն հավերժական օրենքի, որը կարգավորում է այդ օրհնության ստացումը։[22] Բայց հիշեք, որ «անդարձորեն հրամանագրված» օրենքը ժամանակից կախված չէ, որը նշանակում է, որ օրհնությունները գալիս են ըստ Աստծո ժամանակացույցի։ Նույնիսկ հնագույն մարգարեները փնտրեցին իրենց երկնային տունը[23] «մեռան հավատքի մեջ. առանց խոստմունքներն ստանալու, այլ հեռուանց տեսնում էին նորանց եւ բարեւում էին եւ դաւանում»։[24] Եթե ցանկալի օրհնությունը դեռ չեք ստացել Աստծուց, պետք չէ մտահոգվել և մտածել, թե ուրիշ ինչ պետք է անեք։ Փոխարենը, լսեք Ջոզեֆ Սմիթի խորհուրդը «ուրախությամբ անելու ամեն բան, որ [ձեր] ուժի սահմաններում է. և հետո, . . . կանգնեք հանգիստ, ամենայն համոզվածությամբ՝ տեսնելու [Աստծո] բացահայտվող բազուկը»։[25] Որոշ օրհնություններ պահված են ավելի ուշ ժամանակի համար, նույնիսկ, Աստծո ամենախիզախ զավակների համար։[26]

Վեց ամիս առաջ, տանը կենտրոնացած, Եկեղեցուց աջակցվող ծրագիրը ներկայացվեց՝ վարդապետությունը սովորելու, հավատքը զորացնելու և անհատներին ու ընտանիքներին ամրապնդելու համար։ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խոստացավ, որ փոփոխությունները կարող են օգնել մեզ հոգեպես գոյատևել, մեծացնել ավետարանի մեր ուրախությունը և խորացնել մեր դարձը դեպի Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը։[27] Սակայն, մեզանից է կախված այդ օրհնությունների ստացումը։ Յուրաքանչյուրս պարտավոր ենք բացել և ուսումնասիրել *Եկ, հետևիր ինձ. Անհատների և ընտանիքների համար* ծրագիրը, ինչպես նաև սուրբ գրությունները և մյուս *Եկ, հետևիր ինձ* նյութերը։[28] Մենք պետք է քննարկենք դրանք մեր ընտանիքի ու ընկերների հետ և կազմակերպենք մեր հանգստության օրը, որպեսզի վառենք փոխաբերական կրակը։ Կամ կարող ենք այդ նյութերը կիտված թողնել մեր տներում՝ հնարավոր էներգիան թակարդված ներսում։

Ես ձեզ հրավիրում եմ հավատարմորեն ակտիվացնել երկնային զորությունը՝ Աստծո հատուկ օրհնությունները ստանալու համար։ Հավատք գործադրեք՝ լուցկու հատիկը վառելու և կրակը վառելու համար։ Մատակարարեք անհրաժեշտ թթվածինը, մինչ համբերատար սպասում եք Տիրոջը։ Այդ հրավերների հետ մեկտեղ, ես աղոթում եմ, որ Սուրբ Հոգին առաջնորդի և ղեկավարի ձեզ, որ ձեր համար Առակաց գրքում նկարագրված «հավատարիմ մարդու» նման «օրհնությունները շատ» լինեն։[29] Ես վկայում եմ, որ ձեր Երկնային Հայրը և Նրա Սիրելի Որդին՝ Հիսուս Քրիստոսն ապրում են, մտահոգված են ձեր բարօրությամբ և ուրախ են օրհնելու ձեզ, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։ ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 41.1, 78.17, 104.33։
2. Օրինակի համար տես Քրեյգ Հարլին, *A World Ablaze: The Rise of Martin Luther and the Birth of the Reformation* (2017), 20։ Նման բանավեճերից մեկը եղել է Ավգուստինի (մ.թ.354-430) և նրա հակառակորդ Պելագիոսի միջև (մ.թ 354-420)։ Պելագիոսը պնդում էր, որ «մարդիկ, անշուշտ, իրենց

ներսում [ունեին] բարին գործելու ջիղը, և որ նրանք Աստծո շնորհը վաստակում էին, երբ գործում էին ըստ այդ բարության և պահում Աստծո բոլոր պատվիրանները»: Ավգուստինը կտրականապես համաձայն չէր: Տես նաև Էրիկ Մետաքսաս, *Martin Luther: The Man Who Rediscovered God and Changed the World* (2017), 296: Լյութերը սովորեցրեց, որ գործերը երբեք չեն կարող հանգեցնել Աստծո շնորհի. հավատքը հանգեցնում է շնորհի և բարի գործերը կատարվում են. «Անհնար է հավատքից առանձնացնել գործերը, ինչպես անհնար է ջերմությունը և լույսն առանձնացնել կրակից»:

3. Տես Վարդապետություն և Ուխտեր 82.10:
4. Սա ճամբարի համար նախատեսված լուցկի է, որը «վառվում է ցանկացած մակերեսին քսելուց»: Ժամանակակից անվտանգ լուցկիների դեպքում, ինչպես խոհանոցային լուցկին, ֆոսֆորը գտնվում է տուփի ժապավենի վրա, այլ ոչ թե լուցկու ծայրին:
5. Այդ գործողությունները հանդիսանում են «ակտիվացման էներգիա» պայթյունի համար: «Ակտիվացման էներգիա» եզրույթն առաջին անգամ ներկայացվել է 1889 թվականին, Շվեդացի գիտնական Սվանտե Արրենիուսի կողմից:
6. See *Lectures on Faith* (1985), 3.
7. Տես Դեյվիդ Ա. Բեդնար, «Խնդրեք հավատքով», *Լիահոնա,* մայիս 2008, 94:
8. Տես Մոսիա 2.24-25:
9. Տես Թվոց 21.6-9:
10. Տես 1 Նեփի 17.41:
11. Տես 1 Նեփի 17.42:
12. Վարդապետություն և Ուխտեր 130.20-21
13. Տես 2 Նեփի 10.24, 25.23:
14. Տես Ալմա 60.11, 21, Դալլին Հ. Օուքս, «Փոքր և հասարակ բաներ», *Լիահոնա,* մայիս 2018, 89–92, Մ. Ռասել Բալլարդ, «Ջերմեռանդ ներգրավված լինել», *Լիահոնա,* նոյեմբեր 2012, 29–31:
15. See Bible Dictionary, “Prayer”, տես նաև Մորոնի 7.48:
16. Տես Ալմա 36.18–21, տես նաև Ենովս 1.5–8:
17. Daniel W. Jones, *40 Years Among the Indians* (1960), 222.
18. Տես 1 Նեփի 16.23:
19. Տես 1 Նեփի 17.9:
20. Տես Ա Թագավորաց 17.10–16
21. Վարդապետություն և Ուխտեր 101.16
22. Տես Վարդապետություն և Ուխտեր 130.20-21:
23. Տես Եբրայեցիս 11.16:
24. Եբրայեցիս 11.13
25. Վարդապետություն և Ուխտեր 123.17
26. See Jeffrey R. Holland, “An High Priest of Good Things to Come,” *Liahona,* Jan. 2000, 42–45. Երեց Հոլլանդն ասել է. «Որոշ օրհնություններ շուտ են գալիս, մյուսները գալիս են ուշ, իսկ մի մասն էլ չի գալիս, քանի դեռ երկնքում չենք, բայց նրանց համար, ովքեր ընդունում են Հիսուս Քրիստոսի ավետարանը, *դրանք գալիս են*»:
27. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Ներածական ելույթ», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 6-8:
28. Տես Քվենթին Լ. Քուք, «Հաստատուն և հարատև դարձ դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 8–12:
29. Առակաց 28.20:



ՇԵՐՈՆ ՅՈՒԲԵՆԿ
Սփոփող Միության Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական

Քրիստոս. Լույսը, որ շողում է խավարում

Երբ զգում եք, որ ձեր վկայության փարոսը փոշիանում է և խավարն է ներս խուժում, արիացեք: Պահեք Աստծուն տված ձեր խոստումները:

Սփոփող Միության շենքում իմ գրասենյակը Սոլթ Լեյքի Տաճարի մի հիանալի տեսարան ունի: Ամեն գիշեր, ճիշտ աշխատող ժամացույցի նման, տաճարի դրսի լույսերը միանում են մթնշաղի մեջ: Տաճարն ուղիղ իմ պատուհանից դուրս, հաստատուն, հուսալի փարոս է:

Մի երեկո անցած փետրվարին, արևի մայր մտնելուց հետոիմ գրասենյակը բացարձակ մութ մնաց: Երբ դուրս նայեցի պատուհանից, տաճարը մութ էր: Լույսերը չէին միացել: Ես հանկարծ տխրեցի: Ես չէի տեսնում տաճարի ծայրաձողերը, որոնք տարիներ շարունակ տեսել էի ամեն երեկո:

Տեսնելով խավարը, որտեղ ես սպասում էի լույս տեսնել, հիշեցրեց ինձ, որ հիմնական կարիքներից մեկը, որ մենք ունենք, որպեսզի աճենք, մեր լույսի աղբյուրի՝ Հիսուս Քրիստոսի հետ կապված մնալն է: Նա է մեր ուժի աղբյուրը, Լույսը և Կյանքն աշխարհի: Առանց նրա հետ ուժեղ կապի մենք սկսում ենք հոգեպես մահանալ: Գիտենալով, որ սատանան փորձում է շահարկել աշխարհիկ ճնշումները, որոնց դիմակայում ենք մենք բոլորս: Նա փորձում է աղոտացնել մեր լույսը, անջատել միացումը, կտրել էներգիայի մատակարարումը՝ թողնելով մեզ մենակ մթության մեջ: Այդ

ճնշումները ընդհանուր պայմաններ են մահկանացու կյանքում, բայց սատանան տքնաջան աշխատում է մեկուսացնել մեզ և ասել մեզ, թե մենք միակն ենք, որ տանում ենք դրանք:

Մեզանից ոմանք կաթվածահար են լինում վշտից:

Երբ ողբերգություններ են տեղի ունենում մեր կյանքում, երբ կյանքը ցավեցնում է այնքան շատ, որ չենք կարողանում շնչել, երբ ենթարկվում ենք ծեծի այն մարդու նման, ով Երիքովի ճանապարհին էր և թողնում են, որ մեռնենք, Հիսուսը գալիս է և մեր վերքերին յուղ է լցնում, քնքշորեն բարձրացնում է մեզ, տանում է մի իջևանատուն և մեր մասին հոգ տանում:[1] Նրանց, ովքեր վշտի մեջ են, Նա ասում է. «Ես . . . կթեթևացնեմ բեռները, որոնք դրվել են ձեր ուսերին, որպեսզի դուք մինչև անգամ չզգաք դրանք ձեր մեջքին, . . . որպեսզի դուք կարողանաք հաստատ իմանալ, որ ես՝ Տեր Աստվածս, այցելում եմ իմ ժողովրդին իրենց չարչարանքների մեջ»:[2] **Քրիստոսը վերքեր է բժշկում:**

Մեզանից ոմանք ուղղակի այնքան հոգնած են

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ասել է. «Հարկավոր չէ, որ մենք վազենք ավելի արագ, քան մենք ուժ ունենք: . . . Բայց [չնայած դրան], ես գիտեմ . . . ձեզանից շատերը վազում են [շատ], շատ արագ, և որ էներգիա[ն] և հուզական պաշարը սպառվում է»:[3] Երբ սպասումները ճնշում են մեզ, մենք կարող ենք քայլ անել հետ և հարցնել Երկնային Հորը, թե ինչից ազատվենք: Մեր կյանքի փորձառության մի մասն է կազմում սովորելը, թե ինչ չանենք: Բայց նույնիսկ այդ դեպքում, կյանքը երբեմն կարող է հոգնեցուցիչ լինել: Հիսուսը վստահեցնում է մեզ. «Ինձ մոտ եկեք ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ»:[4]

Քրիստոսը կամենում է միանալ մեզ և քաշել լուծը, որպեսզի թեթևացնի մեր բեռները: **Քրիստոսը հանգստություն է:**

Մեզանից ոմանք զգում են, որ մենք չենք համապատասխանում մեր ավանդական կարծրատիպերին

Տարբեր պատճառներով մենք չենք զգում ընդունված կամ ընդունելի: Նոր Կտակարանը ցույց է տալիս այն մեծ ջանքերը, որ Հիսուսն էր գործադրում՝ օգնության հասնելու ամեն տեսակի մարդկանց՝ բորոտներ, հարկահավաքներ, երեխաներ, գալիլեացիներ, պոռնիկներ, կանայք, փարիսեցիներ, մեղավորներ, սամարացիներ, այրիներ, հռոմեացի զինվորներ, շնացողներ, ավանդաբար անմաքուր համարվողներ: Գրեթե ամեն պատմության մեջ Նա հասնում է մեկին, ով ավանդաբար ընդունված չէր հասարակության մեջ:

Ղուկաս 19-ը պատմում է մի դեպք Երիքովում գլխավոր մաքսապետի մասին, որի անունը Զաքէոս էր: Նա բարձրացել էր ծառը, որպեսզի տեսներ Հիսուսին անցնելիս: Զաքէոսը հռոմեական կառավարության վարձկան էր և համարվում էր կաշառակեր ու մեղսավոր: Հիսուսը տեսավ նրան ծառի վրա և կանչեց նրան՝ ասելով.«Զաքէ, շուտ արա իջիր, որովհետեւ ինձ այսօր պետք է քո տանը կենայ»:[5] Եվ երբ Հիսուսը տեսավ Զաքէոսի սրտի բարությունը և այն բաները, որ նա արեց մյուսների համար, Նա ընդունեց նրա զոհաբերությունը, ասելով. «Այսօր փրկութիւն եղավ այս տանը որովհետեւ սա էլ Աբրահամի որդի է»:[6]

Քրիստոսը քնքշորեն ասաց նեփիացիներին. «Ես պատվիրեցի, որ ձեզանից ոչ ոք հեռու չգնա»:[7] Պետրոսն ունեցավ այդ հզոր աստվածահայտնությունը Գործք 10-ում, «Աստուած ինձ ցոյց տուաւ, ոչ մէկ մարդի էլ պիղծ կամ անմաքուր չասել»:[8] Սա անխախտ պահանջ է Քրիստոսի աշակերտներին և Վերջին Օրերի Սրբերին՝ ցույց տալ ճշմարիտ սեր մեկ մեկու հանդեպ:[9] Հիսուսը նույնպիսի հրավեր է հղում մեզ , որը Նա հղեց Զաքեոսին. «Ահա ես դռան առաջին կանգնած եմ եւ թակում եմ. եթե [դուք] լսեք իմ ձայնը եւ դուռը բանաք, կ'մտնեմ [ձեզ] մօտ եւ ընթրիք կ'անեմ [ձեզ] հետ, եւ [դուք] ինձ հետ»:[10] **Քրիստոսը տեսնում է մեզ մեր ծառի վրա:**

Մեզանից մի քանիսին ծանրաբեռնում են հարցերով

Մի քանի տարի առաջ ես ծանրաբեռնված էի և վրդովված էի հարցերից, որոնց չէի կարողանում պատասխանել: Մի շաբաթ օր, վաղ առավոտյան ես մի փոքրիկ երազ տեսա: Երազումս ես տեսա մի շինություն և հասկացա, որ պետք է գնամ և կանգնեմ դրա մեջ: Այն ուներ հինգ կամարներ, որոնք օդակում էին այն, բայց պատուհանները քարից էին: Ես բողոքեցի երազումս, չկամենալով ներս գնալ, որովհետև դա այնքան սոսկալի էր: Ապա մի միտք ծագեց գլխումս, որ Հարեղի եղբայրը համբերատարությամբ քարեր հալեց՝ ստանալով մաքուր ապակի: Ապակին քար է, որը ենթարկվել է վիճակի փոփոխության: Երբ Տերը դիպավ քարերին Հարեղի եղբոր համար, դրանք լույսով փայլեցին մութ նավերում:[11] Հանկարծ ես ավելի լցվեցի այդ շինությունում լինելու ցանկությամբ քան, որևէ այլ տեղ: Դա հենց այն տեղն էր, միակ տեղը ինձ համար, որպեսզի ճշմարտապես «տեսնեի»: Հարցերը, որոնք անհանգստացնում էին ինձ, չէին հեռանում, բայց երբ արթնացա, ավելի պայծառ էր իմ մտքում «Ինչպե՞ս ես պատրաստվում մեծացնել քո հավատքը, Հարեղի եղբոր նման, որպեսզի քո քարերը կարողանան դառնալ լույս» հարցը:[12]

Մեր մահկանացու ուղեղները ստեղծված են հասկացողություն և իմաստ որոնելու կոկիկ կապոցներով: Ես չգիտեմ բոլոր պատճառները, թե ինչո՞ւ է վարագույրն այդքան հաստ մեր մահկանացու կյանքի վրա: Սա մեր հավերժական զարգացման բեմը չէ, որտեղ մենք ունենք բոլոր պատասխանները: Սա բեմ է, որտեղ զարգացնում ենք մեր համոզվածությունը (կամ երբեմն մեր հույսը) չերևացող բաների ապացույցի վերաբերյալ: Համոզվածությունը գալիս է ուղիներով, որոնք միշտ չէ, որ հեշտ են վերլուծվում, բայց կա լույս մեր խավարում: Հիսուսն ասաց. «Ես եմ լույսը և կյանքը և ճշմարտությունն աշխարհի»:[13] Նրանց համար, ովքեր որոնում են ճշմարտություն, կարող է սկզբում հիմար թվալ քարե պատուհաններից առաջացող կլաուստրոֆոբիան: Բայց համբերությամբ և հավատարիմ հարցերով, Հիսուսը կարող է ապակու և լույսի փոխակերպել մեր քարե պատուհանները: **Քրիստոսը լույս է՝ տեսնելու համար:**

Մեզանից ոմանք զգում են, որ մենք երբեք բավականաչափ լավը չենք կարող լինել:

Հին կտակարանի կարմիր ներկը ոչ միայն վառ էր, այլ նաև գունակայուն, որը նշանակում է, որ իր վառ գույնը տալիս էր բրդին և չէր գունաթափվում՝ անկախ նրանից, թե քանի անգամ էր լվացվում:[14] Սատանան օգտագործում է այս պատճառաբանությունը մահակի նման. Կարմիրից ներկոտված ճերմակ բուրդը երբեք չի կարող ճերմակ դառնալ: Բայց Հիսուս Քրիստոսը հայտարարում

Երբ մենք ապաշխարում ենք մեր մեղքերից, Փրկիչի վառ կարմիր արյունը վերադարձնում է մեզ մեր մաքրությունը:



է. «Բարձր [են] իմ ճանապարհները ձեր ճանապարհներից»,[15] և նրա շնորհի հրաշքն այն է, որ երբ մենք ապաշխարում ենք մեր մեղքերից, Նրա կարմիր արյունը վերադարձնում է մեզ դեպի մաքրություն: Տրամաբանական չէ, բայց, այնուամենայնիվ, ճշմարիտ է:

«Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս լինին, ձիւնի պէս պիտի սպիտականան, եթե նորանք որդան կարմիրի պէս լինին, ասրի պէս սպիտակ պիտի դառնան»:[16] Տերն ասում է հաստատակամորեն. նա «ով ապաշխարել է . . . մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք»:[17] Ըստ էության, եկեք միմյանց հետ տրամաբանենք:[18] Դուք սխալներ եք գործել, բոլորն են թերանում:[19] Եկեք ինձ մոտ և ապաշխարեք:[20] Ես այլևս չեմ հիշի ձեր մեղքը:[21] Դուք կարող եք կրկին ողջ լինել:[22] Ես քեզ համար աշխատանք ունեմ անելու»:[23] **Քրիստոսը ճերմակ է դարձնում բուրդը:**

Բայց որո՞նք են գործնական քայլերը: Ո՞րն է Հիսուս Քրիստոսի զորության հետ վերակապվելու բանալին, երբ մենք առկայծում ենք: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը շատ պարզ է ասել. «Բանալին սրբազան ուխտեր կապելն ու պահելն է: . . . Դա բարդ ճանապարհ չէ»:[24] Քրիստոսին դարձրեք ձեր կյանքի կենտրոնը:[25]

Երբ զգում եք, որ ձեր վկայության փարոսը փոշիանում է և խավարն է ներս խուժում, արիացեք: Պահեք Աստծուն տված ձեր խոստումները: Տվեք ձեր հարցերը: Համբերատարությամբ հալեցրեք քարերը և դարձրեք ապակի: Դիմեք Հիսուս Քրիստոսին, ով դեռ սիրում է ձեզ:

Հիսուսն ասաց. «Ես եմ լույսը, որը շողում է խավարում, և խավարը չի ըմբռնում այն»:[26] Դա նշանակում է՝ որքան էլ փորձի, խավարը չի կարող հանգցնել այդ լույսը: Երբեք: Դուք կարող եք վստահել, որ Նրա լույսը կլինի այնտեղ ձեզ համար:

Մենք կամ մեր սիրելի մարդիկ, գուցե, ժամանակավորապես խավարեն: Սոլթ Լեյքի Տաճարի դեպքում, սարքավորումների տնօրենը՝ Եղբայր Վալ Ուայթը, գրեթե անմիջապես զանգ ստացավ: Մարդիկ նկատել էին: Ի՞նչ էր պատահել տաճարի լույսերին: Նախ աշխատակազմը անձամբ գնաց տաճարի յուրաքանչյուր էլեկտրական վահանակի մոտ և ձեռքով միացրեց լույսերը: Ապա նրանք փոխեցին մարտկոցները ավտոմատ հոսանքի աղբյուրում և ստուգեցին դրանք՝ պարզելու, թե ինչն էր փչացել:

Ինքնուրույն դժվար է միացնել լույսերը: Մենք կարիք ունենք ընկերների: Մենք միմյանց կարիքն ունենք: Տաճարի սարքավորումների աշխատակազմի նման, մենք կարող ենք օգնել միմյանց՝ անձնապես ներկայանալով վերալիցքավորելով մեր հոգևոր մարտկոցները, վերանորոգելով այն, ինչը փչացել է:

Մեր անձնական լույսը կարող է լինել միայն մեկ լամպի լույս ծառի վրա: Բայց մենք, այնուամենայնիվ, արձակում ենք մեր փոքրիկ լույսը, և բոլորս միասին՝ Սուրբ Ծննդյան Տաճարային հրապարակի նման, գրավում ենք միլիոնավոր մարդկանց դեպի Տիրոջ տունը: Ամենալավը, ինչպես Նախագահ Նելսոնն է խրախուսել, մենք կարող ենք բերել Փրկիչի լույսը մեզ և այն մարդկանց, ովքեր կարևոր են մեզ համար՝ հասարակ մի գործողությամբ պահելով մեր ուխտերը: Զանազան ուղիներով Տերը պարգևատրում է այդ հավատարիմ գործողությունը զորությամբ և ուրախությամբ:[27]

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ISTOCK.COM/INWBISONO

Ես վկայում եմ, որ դուք սիրված եք: Տերը գիտի, թե որքան տքնաջան եք փորձում: Դուք առաջադիմում եք: Շարունակեք գնալ: Նա տեսնում է ձեր բոլոր թաքուն զոհաբերությունները և հաշվում է դրանք՝ ի օգուտ ձեզ և ի օգուտ նրանց, ում դուք սիրում եք: Ձեր աշխատանքը զուր չէ: Դուք մենակ չեք: Հենց Նրա անունը նշանակում է «Աստված մեզ հետ»:[28] Նա անկասկած ձեզ հետ է:

Կատարեք ևս մի քանի քայլ ուխտի արահետում, նույնիսկ, եթե խիստ մութ է շատ հեռուն տեսնելու համար: Լույսերը կմիանան: Ես վկայում եմ Հիսուսի խոսքերի ճշմարտության մասին, և դրանք լցված են լույսով. «Մոտեցեք ինձ, և ես կմոտենամ ձեզ. փնտրեք ինձ ջանասիրաբար, և կգտնեք ինձ. խնդրեք, և կստանաք. թակեք, և ձեզ կբացվի»:[29] Հիսուս Քրիստոսի անունով. ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ղուկաս 10.30–35:
2. Մոսիա 24.14
3. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Կրելով միմյանց բեռները», *Լիահոնա,* հունիս 2018, 30:
4. Մատթեոս 11.28
5. Ղուկաս 19.5
6. Ղուկաս 19.9
7. 3 Նեփի 18.25
8. Գործք Առաքելոց 10.28
9. Տես Հովհաննես 15.12:
10. Հայտնություն 3.20
11. Տես Եթեր 6.3:
12. Տես Եթեր 4.7:
13. Եթեր 4,12:
14. See "Scarlet, Crimson, Snow, and Wool," *Ensign,* Dec. 2016, 64–65.
15. Եսայիա 55.9
16. Եսայիա 1.18
17. Վարդապետություն և Ուխտեր 58.42
18. Տես Եսայիա 1.18:
19. Տես Հռովմայեցիս 3.23:
20. Տես 3 Նեփի 9.22:
21. Տես Վարդապետություն և Ուխտեր 58.42:
22. Տես Ղուկաս 8.48:
23. Տես Մովսես 1.6:
24. Ռասսել Մ. Նելսոն. «Չորս պարգևներ, որոնք Հիսուսն առաջարկում է ձեզ» (Առաջին Նախագահության Սուրբ Ծննդյան հոգևոր երեկո, դեկ. 2, 2018), broadcasts.ChurchofJesusChrist.org:
25. Ռասսել Մ. Նելսոն, «Ինչո՞ւ հավատք ունենալ այժմ»: ՎՕՍ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը բացատրում է Ֆոնիքսի տարածք այցելության ժամանակ», *Արիզոնա Հանրապետություն,* փետ. 10, 2019, azcentral.com:
26. Վարդապետություն և Ուխտեր 6.21:
27. Տես Մոսիա 27.14:
28. Մատթեոս 1.23:
29. Վարդապետություն և Ուխտեր 88.63:

ԵՐԵՑ ՔՎԵՆԹԻՆ Լ. ՔՈՒՔ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մեծ սեր մեր Հոր զավակների հանդեպ

Սերը հիմնական հատկանիշն է և շարժառիթը այն հոգևոր նպատակների, որոնք մեզ հանձնարարվեց նախաձեռնել մեր սիրելի մարգարեի կողմից:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, սա եզակի և վճռական ժամանակ է պատմության մեջ: Մենք օրհնված ենք՝ ապրելով վերջին տնտեսությունում Փրկիչի Երկրորդ Գալուստից առաջ: 1829 թվականին, այս տնտեսության սկզբին մոտ, Եկեղեցին պաշտոնապես կազմավորվելու տարուց առաջ, մի սիրված հայտնություն ստացվեց, որը հռչակեց, որ «մի զարմանալի գործ» էր «առաջ գալու»: Այս հայտնությունը հաստատեց, որ նրանք, ովքեր ցանկանում են ծառայել Աստծուն, որակավորված են այդպիսի ծառայության համար՝ ունենալով «հավատք, հույս, գթություն և սեր, պարզ աչքով ուղղված Աստծո փառքին»:[1] Գթությունը, որը «Քրիստոսի մաքուր սերն է»,[2] ներառում է Աստծո հավերժական սերը բոլոր Իր զավակների համար:[3]

Այս առավոտ իմ նպատակն է շեշտել այդպիսի սիրո հիմնական դերը միսիոներական աշխատանքում, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքում, տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ընտանիքի կրոնական

ծառայության մեջ: Փրկիչի սերը և մեր ընկերակից տղամարդկանց ու կանանց հանդեպ սերը[4] հիմնական հատկանիշն է և շարժառիթը՝ սպասավորման և հոգևոր նպատակների համար,[5] որոնք մեզ հանձնարարվեց նախաձեռնել մեր սիրելի մարգարե Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի կողմից հայտարարված 2018թվականի փոփոխությունների մեջ:

Ցրված Իսրայելը հավաքելու միսիոներական ջանք

Իմ կյանքի վաղ տարիներից ինձ ծանոթ էր կապը միսիոներական աշխատանքի և սիրո միջև: Երբ ես 11 տարեկան էի, ստացա հայրապետական օրհնություն մի հայրապետի կողմից, ով նաև իմ պապիկն էր:[6] Այդ օրհնությունը մասնավորապես ասում էր. «Ես օրհնում եմ քեզ մեծ սիրով քո մերձավորների հանդեպ, քանի որ դու պիտի կանչվես տանելու ավետարանը աշխարհին . . . որպեսզի Քրիստոսի համար հոգիներ շահես»:[7]

Նույնիսկ այդ վաղ տարիքում ես հասկանում էի, որ ավետարանով կիսվելը հիմնված էր մեր Երկնային Հոր բոլոր զավակների հանդեպ մեծ սիրո վրա:

Երբ 15 տարի առաջ Գերագույն Իշխանավորները հանձնարարեցին աշխատել *Քարոզիր Իմ Ավետարանը* [ուղեցույցի] վրա, մենք եզրակացրինք, որ սիրո հատկանիշը էական է միսիոներական աշխատանքի համար մեր օրերում, ինչպես միշտ է եղել: Գլուխ 6-ը Քրիստոսանման հատկանիշների վերաբերյալ, ներառյալ գթությունն ու սերը, միշտ եղել է ամենաընդունված գլուխը միսիոներների մեջ:

Որպես Փրկիչի պատվիրակներ, միսիոներների մեծ մասը զգում են այդպիսի սեր, և երբ նրանք այդպես են զգում, նրանց ջանքերն օրհնվում են: Երբ անդամները ձեռք են բերում սիրո այդպիսի տեսլական, որը էական է Տիրոջն օգնելիս Իր նպատակի համար, Տիրոջ աշխատանքը կիրականանա:

Ինձ արտոնվեց մի փոքրիկ դեր ունենալ այդպիսի սիրո մի սքանչելի օրինակում: Երբ ծառայում էի որպես Խաղաղօվկիանոսյան Կղզիների Տարածաշրջանի Նախագահ, ես մի կոչում ստացա Նախագահ Ռ. Վեյն Շյութի կողմից: Երիտասարդ տարիքում նա միսիա էր ծառայել Սամոայում: Հետագայում նա վերադարձավ Սամոա, որպես միսիայի նախագահ:[8] Երբ նա ինձ զանգահարեց, ես Էյփիա Սամոա Տաճարի նախագահն էի: Նրա երիտասարդ միսիոներներից մեկը, երբ նա միսիայի նախագահ էր, Երեց Օ. Վինսենթ Հալեքն էր, ով այժմ Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի Նախագահն է: Նախագահ Շյութը մեծ սեր և հարգանք ուներ Վինսի և ողջ Հալեք ընտանիքի հանդեպ: Ընտանիքի մեծ մասը Եկեղեցու անդամներ էին, բայց Վինսի հայրը՝ Օտտո Հալեքը, ընտանիքի հայրապետը (գերմանացու և սամոացու ժառանգը), անդամ չէր: Նախագահ Շյութը գիտեր, որ ես մասնակցում էի ցցի համաժողովին և մյուս ժողովներին Ամերիկյան Սամոայում, և հարցրեց ինձ՝ արդյո՞ք կկամենայի մնալ Օտտո Հալեքի տանը՝ ավետարանը նրա հետ կիսվելու նպատակով:

Կինս՝ Մարին, և ես մնացինք Օտտոյի և նրա կնոջ՝ Դորաթիի հետ նրանց գեղեցիկ տանը: Նախաճաշի ընթացքում ես կիսվեցի մի ավետարանական ուղերձով և հրավիրեցի Օտտոյին հանդիպել միսիոներների հետ: Նա բարի էր, բայց հաստատուն իմ հրավերը մերժելիս: Նա ասաց, որ գոհ էր, որ իր ընտանիքի շատ անդամներ Վերջին Օրերի Սրբեր էին: Բայց նա հաստատակամորեն նշեց, որ իր սամոացի մոր նախնիները եղել էին վաղ քրիստոնեական ծառայողներ Սամոայում, և նա մեծ հավատարմություն էր զգում իրենց ավանդական քրիստոնեական հավատքի հանդեպ:[9] Այնուամենայնիվ, մենք բաժանվեցինք որպես լավ ընկերներ:

Ռ. Վեյն Շյութ

Հետագայում, երբ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին պատրաստվում էր նվիրագործել Սուվա Ֆիջի Տաճարը, Նա հանձնարարեց իր անձնական քարտուղար Եղբայր Դոն Հ. Սթեհելիին[10] կանչել ինձ Նոր Զելանդիա՝ պայմանավորվածություններ ձեռք բերելու համար: Նախագահ Հինքլին ցանկանում էր թռչել Ֆիջիից դեպի Ամերիկյան Սամոա՝ Սրբերին հանդիպելու համար: Առաջարկվեց մի հյուրանոց, որն օգտագործվել էր նախկին այցելության ժամանակ: Ես հարցրի նրան, թե կարող եմ այլ պայմանավորվածություններ ձեռք բերել: Եղբայր Սթեհելին ասաց. «Դուք եք Տարածաշրջանի Նախագահը, դա հիանալի կլինի»:

Ես անմիջապես զանգահարեցի Նախագահ Շյութին և ասացի նրան, որ երևում է երկրորդ հնարավորությունն ունենք հոգևորապես օրհնելու մեր ընկեր Օտտո Հալեքին: Այս անգամ միսիոները լինելու էր Նախագահ Գորդոն Բ. Հինքլին:

Ես հարցրի՝ արդյոք պատշաճ կլիներ Հալեքների համար հյուրընկալել մեզ բոլորիս Նախագահ Հինքլիի ճամփորդական խմբի հետ:[11] Նախագահ և Քույր Հինքլին, նրանց դուստր Ջեյնը և Երեց և Քույր Ջեֆրի Ռ. Հոլլանդը նույնպես այդ ճանապարհորդական խմբի մեջ էին: Նախագահ Շյութը, աշխատելով ընտանիքի հետ, ձեռք բերեց բոլոր պայմանավորվածությունները:[12]

Երբ մենք ժամանեցինք Ֆիջիից տաճարի նվիրագործումից հետո, մեզ ջերմ ընդունելություն ցույց տվեցին:[13] Այդ երեկո մենք խոսեցինք հազարավոր սամոացի անդամների հետ, իսկ հետո ուղևորվեցինք դեպի Հալեքի ընտանիքի կոմպլեքսը: Երբ մենք հավաքվեցինք նախաճաշի հաջորդ առավոտ, Նախագահ Հինքլին և Օտտո Հալեքն արդեն լավ ընկերներ էին դարձել: Ինձ համար հետաքրքիր էր, որ նրանք նույն խոսակցություններն էին ունենում Օտտոյի հետ, ինչ ես էի ունեցել ավելի քան մեկ տարի առաջ: Երբ Օտտոն արտահայտեց իր հիացմունքը մեր եկեղեցու հանդեպ, բայց վերահաստատեց իր նվիրվածությունը իր գոյություն ունեցող եկեղեցուն, Նախագահ Հինքլին դրեց իր ձեռքը Օտտոյի ուսին և ասաց. «Օտտո, դա այնքան էլ լավ չէ, դու պարտավոր ես լինել Եկեղեցու անդամ: Սա Տիրոջ Եկեղեցին է»: Փոխաբերական իմաստով կարելի էր տեսնել, թե դիմադրության զրահն ինչպես ընկավ Օտտոյի վրայից այն անկեղծությունից, որով Նախագահ Հինքլին ասաց այդ:

Սա լրացուցիչ միսիոներական ուսուցման և հոգևոր համեստության սկիզբն էր, որը թույլ տվեց Օտտո Հալեքին մկրտվել և հաստատվել մեկ տարուց մի քիչ ավելի անց: Դրանից մեկ տարի անց Հալեքի ընտանիքը որպես հավերժական ընտանիք կնքվեց տաճարում:[14]

Այն ինչ հուզեց իմ սիրտը այս արտասովոր փոխառության ողջ ընթացքում, Նախագահ Վեյն Շյութի ցուցաբերած զարմանալի սպասավորող սերն էր իր նախկին միսիոներ Երեց Վինս Հալեքի հանդեպ և նրա ցանկությունը՝ տեսնել ողջ Հալեքի ընտանիքը միացած՝ որպես հավերժական ընտանիք:[15]

Երբ խոսքը գնում է Իսրայելի հավաքման մասին, մենք պետք է մեր սրտերը ուղղենք դեպի այս տեսակ սերը և հեռանանք սոսկ պարտականության[16] կամ մեղքի զգացումներից դեպի սիրո և աստվածային ընկերակցության մասնակցության զգացումներ՝ աշխարհի հետ կիսվելով Փրկիչի ուղերձով, սպասավորությամբ և առաքելությամբ:[17]

Որպես անդամներ, մենք կարող ենք սեր ցույց տալ Փրկիչի և մեր եղբայրների ու քույրերի հանդեպ՝ ողջ աշխարհում կատարելով հասարակ հրավերներ: Կիրակնօրյա ժողովների նոր օրակարգը ներկայացնում է մի բացառիկ հնարավորություն անդամների համար հաջողությամբ և սիրով հրավիրել ընկերների և ծանոթների՝ գալ, տեսնել ու զգալ Եկեղեցու մի փոխառություն:[18] Մի հոգևոր հաղորդության ժողով՝ հուսով ենք այնքան սրբազան, ինչպիսին Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը նկարագրեց երեկ, որին կհետևի 50-րոպեանոց ժողով, որը կկենտրոնանա Նոր Կտակարանի և Փրկիչի կամ համաժողովի համապատասխան ելույթների վրա, որոնք նույնպես կենտրոնացած կլինեն Փրկիչի և Նրա վարդապետության վրա:

Սփոփող Միության որոշ քույրեր զարմանում են, թե ինչու է իրենց տրվել «հավաքման» հանձնարարություն՝ քահանայության քվորումի անդամների հետ միասին: Սրա համար կան պատճառներ և դրանցից շատերը Նախագահ Նելսոնը առաջադրեց վերջին գերագույն համաժողովում: Նա եզրափակեց. «Մենք պարզապես, չենք կարող հավաքել Իսրայելն առանց ձեզ»:[19] Մենք մեր օրերում օրհնված ենք, որ մեր լիաժամկետ միսիոներների մոտավորապես 30 տոկոսը քույրեր են: Սա տալիս է լրացուցիչ անհրաժեշտություն և դրդապատճառ Սփոփող Միության քույրերի համար սիրով կիսվել ավետարանով: Մեզանից յուրաքանչյուրից պահանջվում է, որ ընդամենը սիրով, կարեկցանքով, հոգևոր պարտավորվածությամբ տղամարդիկ, կանայք, երիտասարդներն ու երեխաները կիսվեն Հիսուս Քրիստոսի ավետարանով: Եթե մենք ցույց տանք սեր, բարություն և խոնարհություն, շատերը կընդունեն մեր հրավերը: Նրանք, ովքեր որոշեն չընդունել մեր հրավերը, այնուամենայնիվ կմնան մեր ընկերները:

Իսրայելը հավաքելու տաճարային և ընտանեկան պատմության ջանքեր

Մեր տաճարային և ընտանեկան պատմության ջանքերի կենտրոնում նույնպես սերն է, վարագույրի մյուս կողմում Իսրայելը հավաքելու համար: Երբ մենք իմանում ենք մեր նախնիներին հանդիպած փորձությունների և դժվարությունների մասին, մեր սերն ու գնահատանքը նրանց հանդեպ մեծանում է: Տաճարային և ընտանեկան պատմության մեր ջանքերը զորացվել են նշանակալի չափով այդ նոր ճշգրտումների շնորհիվ, թե՛ կիրակնօրյա ժողովի օրակարգում, և թե՛ երիտասարդների առաջընթացում՝ դասերում և քվորումներում: Այդ փոփոխություններն ավելի վաղ և ավելի հզոր ուշադրություն են ապահովում՝ մեր նախնիների մասին սովորելիս և Իսրայելը վարագույրի մյուս կողմում հավաքելիս: Ինչպես տաճարային, այնպես էլ

Ռ. Վեյն Շյութը, սիրով սպասավորելով իր նախկին միսիոներ Երեց Օ. Վինսենթ Հալեքին, օգնում է հավերժ միավորել Հալեքի ընտանիքը:

ընտանեկան պատմության աշխատանքը մեծապես ամրապնդվել է:

Համացանցը հզոր միջոց է, տունը այժմ մեր ընտանեկան պատմության հիմնական կենտրոնն է: Մեր երիտասարդ անդամները բացառապես հմուտ են ընտանեկան պատմության հետազոտությունների մեջ և հոգեպես ոգեշնչված են կատարում մկրտություններ իրենց նախնիների համար, ում նրանք սովորել են սիրել և գնահատել: Փոփոխությունից ի վեր, որը թույլ տվեց բազմաթիվ 11 տարեկանների մկրտություններ կատարել մահացածների համար, տաճարի նախագահները ողջ աշխարհով մեկ հաղորդում են հաճախումների մեծ աճ: Տաճարի մի նախագահ հաղորդում է մեզ, որ «նշանակալի աճ է տեղի ունեցել մկրտության ծիսակատարների մեջ . . . և 11 տարեկաններիի ավելացումը բերում են ավելի շատ ընտանիքներ: . . . Նույնիսկ իրենց [երիտասարդ] տարիքում, նրանք, երևում է, զգում են ակնածանք և նպատակ այն արարողության հանդեպ, որ նրանք կատարում են: Այն գեղեցիկ է դիտվում»:[20]

Ես գիտեմ, որ Երեխաների Միության և երիտասարդների ղեկավարները շարունակում են և դեռ կշարունակեն ընտանեկան պատմությունը՝ տաճարային աշխատանքը դարձնելով գլխավոր գործ: Սփոփող Միության քույրերը և քահանայության եղբայրները կարող են սիրով օգնել կատարել նրանց տաճարային և ընտանեկան պատմության պարտականությունը անհատապես, և նաև աջակցել և ոգեշնչել երեխաներին ու երիտասարդներին՝ հավաքել Իսրայելը վարագույրի մյուս կողմում: Սա հատկապես կարևոր է տանը և կիրակի օրը: Ես խոստանում եմ, որ նախնիների համար սիրով արարողություններ կատարելը կզորացնի և կպաշտպանի մեր երիտասարդներին և ընտանիքներին մի աշխարհում, որը գնալով դառնում է ավելի չար: Ես նաև անհատապես վկայում եմ, որ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ստացել է խորապես կարևոր հայտնություններ՝ կապված տաճարների և տաճարային աշխատանքի հետ:

Պատրաստեք հավերժական ընտանիքներ և անհատներ՝ Աստծո հետ ապրելու համար

Նոր շեշտադրումը ավետարանի տնակենտրոն ուսումնասիրության և ապրելակերպի ու Եկեղեցու կողմից սկզբնաղբյուրների ապահովման վրա մեծ հնարավորություն է ընձեռում սիրով նախապատրաստել ընտանիքներին և անհատներին՝ հանդիպելու և ապրելու Աստծո հետ:[21]

Երբ տղամարդը և կինը կնքվում են տաճարում, նրանք մտնում են ամուսնության սուրբ կարգի մեջ նոր և հավիտենական ուխտով՝ քահանայության կարգով:[22] Քահանայության բանալիները զորություններ են, որոնցով ղեկավարվում է քահանայության իշխանության գործադրումը: Կանայք և տղամարդիկ առանձնահատուկ դերեր ունեն, ինչպես նկարագրված է «Ընտանիք Հայտարարություն աշխարհին»[23] [հռչակագրում], բայց նրանց կառավարումը հավասար է նշանակությամբ և կարևորությամբ:[24] Նրանք հավասար իշխանություն ունեն՝ հայտնություն ստանալու իրենց ընտանիքների համար: Երբ նրանք աշխատում են սիրով և արդարությամբ, նրանց որոշումները օրհնվում են երկնքից:

Նրանք, ովքեր ձգտում են իմանալ Տիրոջ կամքը որպես անհատներ և իրենց ընտանիքների համար, պետք է ձգտեն արդարակեցության, հեզության, բարության և սիրո: Խոնարհությունն ու սերը նրանց առանձնահատկությունն է, ովքեր, որոնում են Տիրոջ կամքը, հատկապես իրենց ընտանիքների համար:

Մեր անհատական պարտականություններն են՝ կատարելագործվել, որակավորվել ուխտերի օրհնությունների համար և պատրաստվել հանդիպելու Աստծուն: Մենք պետք է ինքնապահով լինենք և հոգ տանենք, որ մեր տները դարձնենք ապաստանավայր մեզ շրջապատող փոթորիկներից[25] և «հավատքի սրբավայր»:[26] Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաներին սիրով ուսուցանելու համար: Սիրով լցված տները ուրախություն են և բերկրանք և իսկական երկինք երկրի վրա:[27]

Մայրիկիս սիրելի օրհներգն էր «Մեր տան մեջ»:[28] Երբ նա լսում էր առաջին արտահայտությունը. «Շուրջ բոլորը չքնաղ է, երբ սեր կա տան մեջ», նա նկատելիորեն հուզվում էր և արցունքոտվում: Երբ երեխաներ էինք, մենք տեղյակ էինք, որ մենք ապրում էինք այդպիսի տան մեջ, դա նրա ամենաբարձր առաջնահերթություններից մեկն էր:[29]

Բացի տանը սիրո մթնոլորտին [անդրադառնալուց], Նախագահ Նելսոնը կենտրոնացել է լրատվամիջոցները սահմանափակ օգտագործելու վրա, որը խանգարում է մեր հիմնական նպատակներին:[30] Մի փոփոխություն, որն օգուտ կբերի գրեթե ամեն ընտանիքի, համացանցը, սոցիալական ցանցերը և հեռուստատեսությունը մեզ ծառայեցնելն է է, ոչ թե շեղող հանգամանք կամ նույնիսկ ավելի վատ՝ տեր դարձնելը: Բոլոր հոգիների, բայց հատկապես երեխաների համար պատերազմը, հաճախ տանն է տեղի ունենում: Որպես ծնողներ, մենք պետք է համոզված լինենք, որ լրատվամիջոցների բովանդակությունը օգտակար է, տարիքին համապատասխան և համատեղելի է սիրո մթնոլորտին, որը մենք փորձում ենք ստեղծել:

Ուսուցումը մեր տներում պետք է լինի հստակ և հետաքրքիր,[31] բայց նաև հոգևոր, զվարճալի և սիրով լի:

Ես խոստանում եմ, որ երբ մենք կենտրոնանանք Փրկիչի և Նրա Քավության հանդեպ մեր սիրո վրա, Նրան դարձնենք Իսրայելը վարագույրի երկու կողմում հավաքելու մեր ջանքերի առանցքը, սպասավորենք ուրիշներին և անհատապես պատրաստվենք հանդիպելու Աստծուն, ապա հակառակորդի ազդեցությունը կկրճատվի և ուրախությունը, բերկրանքն ու ավետարանի խաղաղությունը կուժեղացնի մեր տները Քրիստոսանման սիրով:[32] Ես վկայում եմ այս վարդապետական խոստումների մասին և բերում ամուր վկայություն Հիսուս Քրիստոսի և մեզ համար Նրա քավիչ զոհաբերության մասին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 4.1, 5
2. Մորոնի 7.47
3. Տես «Գթություն և սեր», *Քարոզիր Իմ Ավետարանը՝ Միսիոներական ծառայության ուղեցույց,* խմբ. հրատ.(2019), 124:
4. Տես Երկրորդ Օրինաց 6.5, Մատթեոս 22.36–40:
5. Տես. «Երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահությունների պարտականությունները՝ անդամների միսիոներական աշխատանքի և տաճարային ու ընտանեկան պատմության աշխատանքների վերաբերյալ», ծանուցում, հոկտ. 6, 2018:
6. Պապիկս լիազորված էր հայրապետական օրհնություն տալ թոռներին, ովքեր ապրում էին տարբեր ցցերում: Իմ օրհնությունը տրվել է11 տարեկան հասակում, որովհետև նա հիվանդ էր և մտածում էին, որ գուցե մահանար:
7. Հայրապետական օրհնություն՝ տրված Քվենթին Լ. Քուքին, Հայրապետ Քրոզիեր Քիմբալի կողմից, հոկտեմբեր 13, 1951, Դրեյփեր, Յուտա:
8. Նախագահ Ռ. Վեյն Շյութը ծառայել է նաև իր կնոջ՝ Լոռնայի հետ տարբեր միսիաներում Շանհայում, Չինաստանում, Հայաստանում, Սինգապուրում և Հունաստանում: Լոռնայի մահից հետո նա ամուսնացավ Ռիա Մեյ Ռազվալի հետ, և նրանք միսիա ծառայեցին Ավստրալիայի Բրիսբեյնի Միսիայում: Նրա ինը երեխաներից յոթը ծառայել են լիաժամկետ միսիա: Երկու տարիների ընթացքում, երբ նա ծառայում էր Սամոայում որպես միսիայի Նախագահ, երեց Ջոն Հ. Գրոբերզը ծառայում էր որպես Տոնգայի Միսիայի Նախագահ: Փորձառությունները, որոնք նրանք երկուսով ունեցան, առասպելական են:
9. Օտտո Հալեքը Սամոայի Քրիստոնեական Կոնգրեգացիոն Եկեղեցու չձեռնադրված առաջնորդ էր, որի արմատները ծագում էին Լոնդոնի միսիոներական հասարակությունից: Նրա հայրը ծագումով գերմանացի էր՝ Գերմանիայի Դեսսաու քաղաքից:
10. Դոն Հ. Սթեհելին ներկայումս ծառայում է Յուտայի Բաունթիֆուլ Տաճարի Նախագահ:
11. Նախագահ Գորդոն Բ. և Քույր Մարջորի Փ. Հինքլին և նրա դուստրը Ջեյն Հինքլի Դաղլին, Երեց Ջեֆրի Ռ. և Քույր Փաթրիշա Թ. Հոլլանդը, Երեց Քվենթին Լ. և Քույր Մարի Գ. Քուքը և Եղբայր Դոն Հ. Սթեհելին բոլորը ներկա էին:
12. Երեց Օ. Վինսենթ Հալեքը տեղեկացրեց ինձ, որ նրա հայրը հրավիրեց Վինսին և իր եղբորը՝ Դեյվիդին վերադառնալ արտասահմանից՝ տունը ստուգելու կնՆախագահ Հինքլիի այցի ժամանակ ներկա լինելու համար: Երեց Հալեքն ասաց, որ իր հայրը հայտարարեց. «Նրանք կարող են հրեշտակներ լինել, գիտեք»: Նա ասաց իր որդիներին, որ եթե նրանք պատրաստվում էին հյուրընկալել մարգարեին, նրանք պիտի ցանկանային, որ տունը կատարյալ լիներ:
13. Նախագահ Հինքլիին դիմավորեցին Ամերիկյան Սամոայի ազգային ղեկավարությունը և հազարավոր սամոացիներ ֆուտբոլային մարզադաշտում:
14. Ջանասեր միսիոներական աշխատանքի միջոցով ընտանիքների միավորումը հիանալի հատկանիշ է ինչպես սամոացիների, այնպես էլ մյուս պոլինեզյան ժողովուրդների մոտ:
15. Նախագահ Շյութը այնքան սիրված էր և գնահատված, որ նա հրավիրվեց խոսել Օտտո Հալեքի թաղման ծիսակատարության ժամանակ:
16. «Երբեմն մենք կարող ենք ծառայել զուտ պարտականության կամ պարտավորվածության զգացումից ելնելով, սակայն նույնիսկ այդպիսի ծառայությունը կարող է արթնացնել մեր մեջ ավելի բարձր մի բան . . . ծառայել «ավելի գերազանց ճանապարհով» [Ա Կորնթացիս 12.31]» (Ջոյ Դ. Ջոնս, «Նրա համար», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 50):
17. Տես Թադ Ռ. Քալիսթեր, *Անսահման քավություն* (2000), 5-8:
18. Եկեղեցու անդամները պետք է համաձայնեցնեն միսիոներների հետ, երբ կատարում են հրավերներ:
19. Նախագահ Ռասսել Մ. Նելսոն, «Քույրերի մասնակցությունը Իսրայելի հավաքման գործում», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 70:
20. Ձեկույց Նախագահ Բ. Ջեքսոնի և Քույր Ռոզմարի Մ. Վիքսոմի, Սոլթ Լեյք Տաճարի նախագահի և մայրապետի կողմից, Երեխաների Միության Գերագույն Նախագահությանը, մարտ 2019: Վիքսոմները նշել են, որ «պատվիրում են ավելի շատ XXXS չափսի մկրտության հագուստներ՝ պահանջը բավարարելու համար:
21. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Ներածական ելույթ», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 6-8:
22. Տես Վարդապետություն և Ուխտեր 131.1-4:
23. Տես «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2017, 145:
24. «Ամեն հայր իր ընտանիքի համար հայրապետ է և ամեն մայր՝մայրապետ, որպես հավասարներ իրենց որոշակի ծնողական դերերում» (Ջեյմս Ի. Ֆաուստ, "The Prophetic Voice," *Ensign,* May 1996, 6):
25. Տես Վարդապետություն և Ուխտեր 45.26–27, 88.91:
26. Ռասսել Մ. Նելսոն , «Դառնալ օրինակելի Վերջին Օրերի Սրբեր», *Լիահոնա* նոյեմբեր 2018, 113:
27. Տես "Home Can Be a Heaven on Earth," *Hymns,* no. 298:
28. «Մեր տան մեջ», *Հիմներ,* էջ. 44:
29. Եթե պիտի հասնել այդպիսի սիրո, Վարդապետություն և Ուխտեր 121 .41–42-ի ուղղորդումը պիտի լինի նպատակը.

    «Ոչ մի զորություն կամ ազդեցություն չի կարող և չպետք է պահպանվի քահանայության շնորհիվ. միայն համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով:

    Բարությամբ և մաքուր գիտելիքով, որոնք անչափ մեծացնում են հոգին՝ առանց կեղծավորության ու առանց նենգության»:

    Երեխաներին անտեղի քննադատելուց պետք է խուսափել: Սխալները հաղթահարելը և իմաստության պակասը հրահանգավորում է պահանջում, ոչ թե քննադատություն: Մեղքը պահանջում է խրատել (տես Վարդապետություն Ուխտեր 1.25–27):
30. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Քույրերի մասնակցությունը Իսրայելի հավաքման գործում», 69, տես նաև Ռասսել Մ. Նելսոն, «Իսրայելի հույսը» (Երիտասարդների համաշխարհային հոգևոր երեկո, հունիսի 3, 2018), HopeofIsrael.ChurchofJesusChrist.org:
31. Ինչ որ տեղ, տունը նման է մեկ սենյականոց դպրոցի բոլոր տարիքի երեխաների համար: 11 տարեկանին ուսուցանելիս մենք չենք կարող անտեսել 3 տարեկանին:
32. Տես Հովհաննես 17.3, 2 Նեփի 31.20, Մորոնի 7.47:

ԵՐԵՑ Դ. ԹՈԴ ՔՐԻՍՏՈՖԵՐՍՈՆ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Պատրաստվել Տիրոջ վերադարձին

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին արտոնված է հատուկ զորությամբ և լիազորված է իրականացնել անհրաժեշտ նախապատրաստությունները Տիրոջ Երկրորդ Գալուստի համար:

Երկու շաբաթից կտոնենք Զատիկը: Հարությունը հաստատում է Հիսուս Քրիստոսի աստվածային և Հայր Աստծո իրական լինելը: Մեր մտքերն ուղղվում են դեպի Փրկիչը, և մենք խորհում ենք «Նրա անզուգական կյանքի իրականության և Նրա մեծ քավող զոհաբերության անսահման զորության մասին»:[1] Հուսով եմ, որ մենք մտածում ենք նաև Նրա մոտալուտ վերադարձի մասին, երբ «Նա կթագավորի և կկառավարի որպես Թագավորների Թագավոր և . . . Տերերի Տեր»:[2]

Որոշ ժամանակ առաջ Արգենտինայի Բուենոս Այրես քաղաքում ես մասնակցեցի մի համաժողովի, ուր ներկա էին տարբեր կրոնների ղեկավարներ: Մերձավորների հանդեպ նրանց սերը շատ ակնհայտ էր: Նրանք ցանկանում էին թեթևացնել տառապանքը և օգնել մարդկանց ազատվել ճնշումներից ու աղքատությունից: Ես անդրադարձա այս Եկեղեցու մարդասիրական բազմաթիվ նախաձեռնություններին, այդ թվում այն նախագծերին, որոնք պիտի իրականացվեին այս համաժողովին մասնակցող կրոնական խմբերի հետ համագործակցելով: Ես խորը երախտագիտություն զգացի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամների առատաձեռնության համար, որի շնորհիվ հնարավոր է դառնում Քրիստոսանման ծառայությունը:



Այդ պահին Սուրբ Հոգին ինձ երկու բան հաստատեց. Առաջինը՝ որ նյութական կարիքների սպասավորման աշխատանքը կարևոր է և պետք է շարունակվի: Երկրորդն անսպասելի էր, սակայն զորեղ ու հստակ: Դա հետևյալն էր՝ անձնուրաց ծառայությունից առավել կարևոր է պատրաստել աշխարհը Տեր Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին:

Երբ Նա գա, ճնշումներն ու անարդարությունը ոչ միայն կնվազեն, այլև՝ կդադարեն.

«Գայլը նույնպես կբնակվի գառի հետ, և ընձառյուծը կպառկի ուլի հետ, և հորթը, կորյունը և պարարտ զվարակը՝ միասին. և մի փոքր երեխա կառաջնորդի նրանց: . . .

Նրանք չեն վնասի կամ ավերի իմ ողջ սուրբ սարում. քանզի երկիրը Տիրոջ գիտությունով լցված կլինի, ինչպես ջրերն են ծածկում ծովը»:[3]

Աղքատությունն ու տառապանքը ոչ միայն անկում կապրեն, այլև կանհետանան.

«Այլ եւս ոչ կ'սովեն եւ ոչ կ'ծարաւին, եւ չի ընկնիլ նորանց վերայ ոչ արեւը եւ ոչ մի տաքութիւն:

Որովհետեւ Գառը՝ որ աթոռի մէջ է, կ'հովուէ նորանց եւ կ'առաջնորդէ նորանց դէպի կենդանի ջրերի աղբիւրները. Եւ Աստուած կ'սրբէ ամեն արտասուքը նորանց աչքերիցը»:[4]

Նույնիսկ մահվան ցավն ու վիշտը չեն լինի.

«Այդ օրը, մանուկը չի մահանա, մինչ չծերանա. և նրա կյանքը կլինի, ինչպես ծառի տարիքը.

Իսկ երբ նա մահանա, նա չի ննջի, այսինքն՝ հողում, այլ կվերափոխվի մի ակնթարթում, և կհափշտակվի, և նրա հանգիստը կլինի փառահեղ»:[5]

Այսպիսով՝ եկե՛ք այժմ անենք ամեն բան, որ կարողանանք հաղթահարել տառապանքն ու ցավը, *և* եկե՛ք ավելի ջանադրաբար

նվիրվենք նախապատրաստություններին, որոնք անհրաժեշտ են այն օրվա համար, երբ ցավն ու չարիքը իսպառ կվերջանան, երբ «Քրիստոսն անձամբ կթագավորի երկրի վրա. և որ երկիրը կնորանա և կընդունի իր դրախտային փառքը»:[6] Դա լինելու է քավության և դատաստանի օր: Դարեմ քաղաքի անգլիկան եկեղեցու նախկին եպիսկոպոս՝ դոկտոր Ն. Թ. Ռայթը դիպուկ է նկարագրել Քրիստոսի Քավության, Հարության և դատաստանի կարևորությունը՝ անարդարությունը հաղթահարելու և ամեն ինչ ճիշտ դարձնելու գործում:

Նա ասել է. «Աստված որոշել է այն օրը, երբ աշխարհը դատվելու է արդարությամբ մի մարդու կողմից, ում Նա նշանակել է, և այդ մասին Նա վստահեցրել է բոլորին՝ այս մարդուն մեռելներից բարձրացնելով: Նազարեթցի Հիսուսի մասին փաստերը, հատկապես մեռելներից նրա հարության մասին, հավաստիացման հիմք են, որ աշխարհը պատահական չէ: Դա, ի վերջո, քաոս չէ՝ այն, որ ներկայումս արդարություն ենք գործում, մենք չենք սուլում մթության մեջ, փորձելով ամրացնել շինությունը, որը փլուզվելու է, կամ սարքել մի ավտոմեքենա, որն աղբանոց է նետվելու: Երբ Աստված բարձրացրեց Հիսուսին մահացածներից, դա միկրոկոսմիկական իրադարձություն էր, որում դատելու բացառիկ մակրոկոսմիկական գործառույթն ամբողջությամբ ակնհայտ էր՝ ինչպես հույսի մի բացառիկ սերմ: Աստված ամենահզոր ձևով, որը կարելի է պատկերացնել, հայտարարեց, որ Նազարեթցի Հիսուսը իսկապես Մեսիան է: . . . Պատմության ամենադաժան հեգնանքով, [Հիսուսն] ինքը մատնվեց դաժան ու անարդարացի դատաստանի, գալով այն վայրը, որը խորհրդանշում էր և ի մի հավաքում պատմության անհամար դաժանություններն ու անարդարությունները, սեփական անձի վրա վերցնելով այդ քաոսը, այդ խավարը, դաժանությունը, անարդարությունը, և սպառելով դրա ուժը »:[7]

Մինչ գտնվում էի Բուենոս Այրեսում անցկացվող համաժողովում, որի մասին ավելի վաղ նշել էի, Հոգին ինձ հստակեցրեց, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին արտոնված է հատուկ զորությամբ և լիազորված է իրականացնել անհրաժեշտ նախապատրաստությունները Տիրոջ Երկրորդ Գալուստի համար: Իսկապես՝ այն վերականգնվել է այդ նպատակով: Հնարավո՞ր է արդյոք որևէ տեղ գտնել մարդկանց, ովքեր ընդունում են ներկա ժամանակաշրջանը որպես մարգարեացված «ժամանակների լրության տնտեսություն», որտեղ Աստված նպատակ է դրել, «որ ամեն բան բովանդակուի Քրիստոսումը»:[8] Եթե դուք այստեղ չգտնեք այն համայնքը, որը նվիրված է կատարելու այն, ինչ պետք է կատարվի կենդանիների ու մահացածների համար, պատրաստվելով այդ օրվան, եթե այստեղ չգտնեք այն կազմակերպությունը, որը ցանկանում է տրամադրել շատ ու շատ ժամանակ և միջոցներ, որպեսզի հավաքի և պատրաստի ուխտյալ ժողովրդին, որոնք պատրաստ են ընդունել Տիրոջը, ապա դուք այն ոչ մի տեղ չեք գտնի:

1831 թվականին, Եկեղեցուն դիմելով, Տերն ասել է.

«Աստծո արքայության բանալիները վստահված են մարդուն երկրի վրա, և այնտեղից ավետարանը կգլորվի մինչև աշխարհի ծայրերը: . . .

Կանչեք առ Տերը, որ նրա արքայությունն առաջ գնա երկրի վրա, որ նրա բնակիչները ստանան այն և պատրաստ լինեն գալիք օրերի համար, որի ժամանակ Մարդու Որդին կիջնի երկնքի մեջ, իր փառքի պայծառությամբ հանդերձավորված՝ դիմավորելու երկրի վրա հաստատված Աստծո արքայությանը»:[9]

Մենք ի՞նչ կարող ենք անել, որպեսզի այժմ պատրաստվենք այդ օրվան: Մենք կարող ենք ինքներս մեզ պատրաստել, կարող ենք հավաքել Տիրոջ ուխտյալ ժողովրդին, և կարող ենք օգնել, որ կատարվի փրկության խոստումը, որ տրվել է «հայրերին»՝ մեր նախնիներին:[10] Այս ամենը պետք է զգալի չափով տեղի ունենա՝ նախքան Տիրոջ վերադարձը:

Առաջինը, Տիրոջ վերադարձի համար այս երկրի վրա անհրաժեշտ է այն մարդկանց ներկայությունը, ովքեր պատրաստ են ընդունել Նրան Նրա գալուստի օրը: Նա հայտարարել է, որ նրանք, ովքեր կմնան երկրի վրա այդ օրը, «նույնիսկ ամենափոքրից մինչև ամենամեծը, . . . կլցվեն Տիրոջ գիտությամբ, և կտեսնեն դեմ հանդիման, և կբարձրացնեն իրենց ձայնը, և միաձայն կերգեն այս նոր երգը՝ ասելով. Սիոնը կրկին բերել է Տերը: . . . Տերն ի մի է հավաքել բոլոր բաները: Տերը վերևից վար է բերել Սիոնը: Տերը ներքևից վեր է տարել Սիոնը»:[11]

Հին ժամանակներում Աստված Իր մոտ վերցրեց Սիոն քաղաքը:[12] Բայց վերջին օրերում նոր Սիոնը կդիմավորի Տիրոջը՝ Նրա վերադարձի օրը:[13] Սիոնը սրտով մաքուրներն են, մեկ սրտի և մեկ մտքի մարդիկ, ովքեր բնակվում են արդարության

մեջ, և ոչ մի աղքատ չկա նրանց մեջ։[14] Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Մեր ամենամեծ նպատակը պետք է լինի Սիոնի կառուցումը»։[15] Մեր տներում, ծխերում, ճյուղերում և ցցերում մենք կառուցում ենք Սիոնը միասնությամբ, բարեպաշտությամբ և գթությամբ։[16]

Մենք պետք է հասկանանք, որ Սիոնի կառուցումը տեղի է ունենում խառնաշփոթ ժամանակ՝ «ցասման օր, այրման օր, ամայացման, լացի, սգո և ողբի օր. և, ինչպես մի պտուտահողմ, այն պիտի անցնի ողջ երկրի երեսով, ասում է Տերը»։[17] Այսպիսով, ցցերում հավաքվելը դառնում է «պաշտպանություն և ապաստան փոթորկից ու ցասումից, երբ այն անխառն կթափվի ողջ երկրի վրա»։[18]

Ինչպես հին ժամանակներում, այնպես էլ հիմա մենք «հավաքվում [ենք]՝ ծոմ պահելու ու աղոթելու, և խոսելու մեկը մյուսի հետ, [մեր] հոգիների բարօրության վերաբերյալ։ Եվ . . . ճաշակելու] հացից և [ջրից]՝ ի հիշատակ Տեր Հիսուս Քրիստոսի»։[19] Ինչպես ասել է Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը անցած հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ. «Եկեղեցու երկարատև նպատակն է՝ օգնել բոլոր անդամներին մեծացնել իրենց հավատքը մեր Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ, օգնել նրանց Աստծո հետ ուխտեր կապել և պահել դրանք, ինչպես նաև ամրապնդել և կնքել իրենց ընտանիքները»։[20] Նմանապես, նա ընդգծել է տաճարային ուխտերի, Հանգստության օրը սուրբ պահելու և տանն ավետարանով ամեն օր սնուցվելու կարևորությունը, որն աջակցվում է եկեղեցու ուսումնական ծրագրով։ Մենք ցանկանում ենք իմանալ Տիրոջ մասին, և մենք ցանկանում ենք ճանաչել Տիրոջը։[21]

Սիոնի կառուցման հիմնական ջանքը Տիրոջ ուխտյալ ժողովրդի հավաքումն է։[22] «Մենք բառացիորեն հավատում ենք Իսրայելի Տան հավաքմանը և նրա Տասը Ցեղերի վերականգնմանը»։[23] Բոլորը, ովքեր կապաշխարեն, կհավատան Քրիստոսին և կմկրտվեն, Նրա ուխտյալ ժողովուրդն են։[24] Տերն Ինքն է մարգարեացել, որ Իր վերադարձից

առաջ ավետարանը կքարոզվի ամբողջ աշխարհին՝[25] «վերականգնելու [Իր] ժողովրդին, որոնք Իսրայելի տնից են»,[26] «և այն ժամանակ կգա վերջը»։[27] Երեմիայի մարգարեությունն իրականանում է.

«Սորա համար ահա օրեր կ'գան, ասում է Տէրը, որ այլ եւս չի ասուիլ թէ՝ Կենդանի է Տէրը, որ Իսրայէլի որդկանցը վեր հանեց Եգիպտոսի երկրիցը,

Այլ թէ՝ Կենդանի է Տէրը, որ հանեց Իսրայէլի որդկանցը հիւսիսի երկրիցը, եւ այն բոլոր երկիրներիցը, ուր որ նորանց աքսորել էր. Եւ ես պիտի ետ դարձնեմ նորանց դէպի իրանց երկիրը, որ տուել եմ իրանց հայրերին»։[28]

Նախագահ Նելսոնը բազմիցս ընդգծել է, որ «[Իսրայելի] հավաքումն այսօր երկրի վրա տեղի ունեցող ամենակարևոր իրադարձությունն է։ Ոչինչ չի համեմատվի դրա հետ մեծությամբ, կարևորությամբ և փառահեղությամբ։ Եվ եթե ցանկանաք՝ դուք կհանդիսանաք դրա մասը»։[29] Վերջին օրերի սրբերը միշտ միսիոներներ են եղել։ Վերականգնումից սկսած, հարյուր հազարավոր մարդիկ արձագանքել են միսիայի կանչերին։ Ներկայումս ծառայում են տասնյակ հազարավորները։ Եվ, ինչպես Երեց Քվենթին Լ. Քուքն ուսուցանեց՝ *բոլորս* կարող ենք մասնակցել պարզ և անմիջական ձևով, սիրով՝ հրավիրելով մարդկանց միանալ մեզ Եկեղեցում, հյուրընկալվել մեր տներում, դառնալ մեր շրջանակի մի օղակը։ Մորմոնի Գրքի հրատարակումն ազդանշան էր, որ հավաքումը սկսվել է։[30] Մորմոնի Գիրքն ինքնին հավաքման և դարձի գործիք է։

Երկրորդ գալուստի համար էական նախապատրաստական գործիք է նաև մեր նախնիների փրկագնման համար կատարվող մեծ աշխատանքը։ Տերը խոստացել էր ուղարկել Եղիա մարգարեին նախքան Երկրորդ գալուստը՝ «Տիրոջ մեծ և ահեղ օրը»,[31] որպեսզի հայտնի «Քահանայությունը» և «զավակների սրտերում սերմանի հայրերին տված խոստումները»։[32] Եղիան եկել էր՝ համաձայն խոստումի։ Ամսաթիվը՝ 1836 թվականի ապրիլի 3, իսկ վայրը՝ Կիրթլենդ Տաճար։ Այդտեղ և այդ պահին նա իրոք շնորհեց խոստացված քահանայությունը, մահացածների փրկագնման և բոլոր սերունդների ամուսինների, կանանց ու ընտանիքների միության բանալիները՝ ժամանակի և ողջ հավերժության համար։[33] Առանց դրա, արարման նպատակը կխափանվեր և, այդ իմաստով, երկիրը «կանիծվեր» կամ «ամբողջովին կամայանար»։[34]

Հռոմ Իտալիա Տաճարի նվիրագործմանը նախորդող երիտասարդների հոգևոր ժամի ժամանակ ներկա գտնվող հարյուրավոր երիտասարդ տղամարդիկ և կանայք Նախագահ Նելսոնին ցույց տվեցին

իրենց նախնիների անուններով քարտերը: Նրանք պատրաստ էին տաճարի բացման պահից մտնել այնտեղ և փոխարինող մկրտություններ կատարել այդ նախնիների համար: Դա շատ հաճելի պահ էր, բայց և Սիոնի հիմնադրումն արագացնող ջանքերից միայն մեկը, որ արվում է այն սերունդների համար, որոնք եղել են նախկինում:

Մինչ մենք ձգտում ենք ջանասիրաբար աշխատել Սիոնը կառուցելիս, այդ թվում՝ Տիրոջ ընտրյալների հավաքման և մահացածների փրկագնման աշխատանքի մեր մասը կատարելով, մենք պետք է դադար առնենք և հիշենք, որ դա Տիրոջ գործն է, և Նա է կատարում դա: Նա է այգու Տերը, իսկ մենք Նրա ծառաներն ենք: Նա մեզ խնդրում է աշխատել այգում մեր ողջ զորությամբ, այս «վերջին անգամ», և Ինքն էլ մեզ հետ է աշխատում:[35] Ավելի ճիշտ կլինի ասել, որ Նա մեզ թույլ է տալիս աշխատել Իր հետ: Ինչպես Պողոսն է ասել. «Ես տնկեցի, Ապողոսը ջուր տուաւ, բայց Աստուած մեծացրեց»:[36] Այդ Նա է, ով արագացնում է Իր աշխատանքը իր ժամանակին:[37] Գործարկելով մեր ակնհայտ անկատար ջանքերը, մեր «փոքր միջոցները», Տերն իրագործում է մեծ բաներ:[38]

Այս մեծ ու վերջին դարաշրջանը հաստատուն կերպով մոտենում է իր գագաթնակետին՝ երկրի վրա կառուցվող Սիոնին, Փրկիչի փառավոր վերադարձի ժամանակ միավորվելով վերևում գտնվող Սիոնի հետ: Հիսուս Քրիստոսի Եկեղեցին պատվիրակված է պատրաստել և պատրաստում է աշխարհը այդ օրվան: Եվ այսպես, այս Զատիկին, եկեք սրտանց տոնենք Հիսուս Քրիստոսի Հարությունը և դրա հետ կապված բոլոր բաները. Նրա վերադարձը՝ կառավարելու խաղաղության հազար տարիները, արդար դատաստանը և կատարյալ արդարությունը բոլորի համար, այս երկրի վրա երբևէ ապրած բոլոր մարդկանց անմահությունը և հավերժական կյանքի խոստումը: Քրիստոսի Հարությունը գերագույն հավաստիացում է, որ բոլոր բաները ճիշտ կդառնան: Եկեք կառուցենք Սիոնը, որպեսզի արագացնենք այդ օրը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Լիահոնա*, մայիս 2017, շապկի ներսի մասում:
2. «Կենդանի Քրիստոսը»
3. 2 Նեփի 21.6, 9, տես նաև Եսայիա 11.6, 9
4. Հայտնություն 7.16–17
5. Վարդապետություն և Ուխտեր 101.30-31
6. Հավատո Հանգանակներ 1.10
7. N. T. Wright, “Full of the Knowledge of the Lord” (sermon given at matins, Durham, England, Mar. 30, 2016), ntwrightpage.com.
8. Եփեսացիս 1.10
9. Վարդապետություն և Ուխտեր 65.2, 5
10. Վարդապետություն և Ուխտեր 2.2
11. Վարդապետություն և Ուխտեր 84.98-100
12. Սուրբ գրության մեջ հստակ ասվում է. «և եղավ այնպես, որ Սիոնը չկար, քանզի Աստված վերցրեց այն իր ծոցը» (Մովսես 7.69):
13. Աստված հայտարարել է. «Եվ ես արդարություն ցած կուղարկեմ երկնքից. և ճշմարտություն առաջ կուղարկեմ երկրից, որ վկայություն բերի իմ Միածնի մասին. մեռելներից նրա հարության մասին. այո՛, և նաև բոլոր մարդկանց հարության մասին. և արդարությունով ու ճշմարտությունով ես կսրբեմ երկիրը, ասես ջրհեղեղով, որպեսզի հավաքեմ իմ ընտրյալներին աշխարհի չորս կողմերից մի վայրում, որը ես կպատրաստեմ, մի Սուրբ քաղաք, որ իմ ժողովուրդը կարողանա գոտեպնդել իր մեջքը և սպասել իմ գալստի ժամանակին. քանզի այնտեղ կլինի իմ խորանը, և այն կկոչվի Սիոն՝ Նոր Երուսաղեմ: . . . Եվ հազար տարի շարունակ երկիրը կհանգստանա» (Մովսես 7.62, 64):
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 97.21, Մովսես 7.18:
15. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 186
16. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Եկեք Սիոն», *Լիահոնա,* նոյեմբեր 2008, 37-40
17. Վարդապետություն և Ուխտեր 112.24
18. Վարդապետություն և Ուխտեր 115.6
19. Մորոնի 6.5–6, տես նաև Ալմա 6.5–6, 4 Նեփի 1.12
20. Ռասսել Մ. Նելսոն, «Ներածական ելույթ», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 7:
21. Տես Երեմիա 31.34, Հովհաննես 17.3, Վարդապետություն և Ուխտեր 84.98
22. Մեկ առ մեկ, ընտրյալները հավաքվում են Սիոնի ցցերում, «[Աստծո] նշանակման վայրերում» (Վարդապետություն և Ուխտեր 109.39, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 124.36):
23. Հավատո Հանգանակներ 1.10
24. Տես 2 Նեփի 30.2
25. Տես Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.31
26. Վարդապետություն և Ուխտեր 39.11
27. Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.31
28. Երեմիա 16.14-15, տես նաև Երեմիա 23.7-8
29. Russell M. Nelson, “Hope of Israel” (worldwide youth devotional, June 3, 2018), HopeofIsrael.ChurchofJesusChrist.org; see also Russell M. Nelson, “Remnants Gathered, Covenants Fulfilled,” in Paul Y. Hoskisson, ed., *Sperry Symposium Classics: The Old Testament* (2005), 1–17.
30. Տես 3 Նեփի 21.1-7:
31. Մաղաքիա 4.5:
32. Վարդապետություն և Ուխտեր 2.1-2:
33. Տես Վարդապետություն և Ուխտեր 110:
34. Վարդապետություն և Ուխտեր 2.3, տես նաև Մաղաքիա 4.6:
35. Տես Հակոբ 5.71–72:
36. Ա Կորնթացիս 3.6:
37. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.73:
38. Տես 1 Նեփի 16.29:

ԹԵԴ Ռ. ՔԱԼԻՍԹԵՐ
Վերջերս ազատված Կիրակնօրյա դպրոցի գերագույն նախագահ

Հիսուս Քրիստոսի Քավությունը

Փրկիչի քավությունը ոչ միայն անսահման է իր ծավալով, այլ նաև անհատական է իր հասանելիությամբ:

Տարվա այս ժամանակահատվածում մենք առանձնապես ուրախանում ենք և խորհրդածում Փրկիչի Քավության շուրջ: Սա իսկապես այս աշխարհի կամ տիեզերքի երբևէ հայտնի դարձած ամենագերբնական, միտքն ընդարձակող, սիրավառ վարդապետությունն է: Այն իմաստ, նպատակ և հույս է հաղորդում մեր կյանքին:

Ապա ուրեմն ի՞նչ է Հիսուս Քրիստոսի Քավությունը: Ինչ որ առումով դա աստվածային իրադարձությունների մի շարք է, որը սկիզբ առավ Գեթսեմանիում, շարունակվեց խաչի վրա և գագաթնակետին հասավ զերեզմանից Փրկիչի հարությամբ: Այն թելադրվեց մեզանից յուրաքանչյուրի հանդեպ աներևակայելի սիրուց: Այն պահանջեց մի էակ, ով անմեղ էր, անհուն զորություն ուներ տարրերի վրա, նույնիսկ մահվան վրա, ով անսահման կարողություն ուներ տանելու բոլոր մեր մեղքերի և տկարությունների հետևանքները և ով, փաստորեն, իջավ այդ բոլորից ներքև:[1] Այս էր Հիսուս Քրիստոսի առաքելությունը՝ սա էր Նրա Քավությունը:

Ապա ո՞րն էր դրա նպատակը: Այն մեզ հնարավորություն տվեց վերադառնալ Աստծո ներկայություն, ավելի նմանվել Նրան և ունենալ լիարժեք ուրախություն: Սա արվեց՝ հաղթահարելով չորս խոչընդոտ.

1. Ֆիզիկական մահը
2. Ադամի կողմից և մեր մեղքերից առաջացած հոգևոր մահը
3. Մեր չարչարանքներն ու տկարությունները
4. Մեր թուլություններն ու թերությունները

Բայց ինչպե՞ս Փրկիչը կարողացավ իրականացնել այդ՝ առանց խախտելու արդարության օրենքները:

Երբ մենք մեղք ենք գործում, Փրկիչը ապահովում է մեզ հոգևոր անկարգելով՝ Իր Քավության միջոցով:

Պատկերացրեք մի պահ՝ մտածելով զվարճալի ազատ անկման մասին, մարդն անխոհեմ որոշում է ընդունում և ինքնակամ ցատկում է փոքրիկ ինքնաթիռից: Այդ անելուց հետո նա արագ հասկանում է իր գործողությունների անմտությունը: Նա կամենում է ապահով վայրէջք կատարել, բայց մի խոչընդոտ կա՝ ձգողականության օրենքը: Նա շարժում է իր թևերը շշմեցուցիչ արագությամբ, բայց ոչ մի օգուտ: Նա փոխում է իր մարմնի դիրքը լողալու կամ սահելու համար, որպեսզի դանդաղեցնի վայրէջքը, բայց ձգողականության օրենքն անգութ է և անողորմ: Նա փորձում է տրամախոսել բնության այդ հիմնական օրենքի հետ. «Դա սխալ էր: Ես այլևս երբեք չեմ անի այդ»: Բայց նրա աղերսանքները չեն հասնում խուլ ականջներին: Ձգողականության օրենքը չի ճանաչում որևէ կարեկցանք, այն բացառություններ չի անում: Բայց, բարեբախտաբար մարդը հանկարծ իր մեջքին մի բան է զգում: Նրա ընկերը, ինքնաթիռում զգալով անմտության պահը, օդապարիկ էր դրել այնտեղ՝ հենց ցատկելուց առաջ: Նա գտնում է ձգափոկը և քաշում այն: Հանդարտված, նա ապահով լողում է դեպի գետինը: Մենք գուցե հարցնենք. «Միթե՞ ձգողականության օրենքն էր խախտվել, թե այդ օդապարիկը գործեց այդ օրենքի համաձայն՝ ապահովելով ապահով վայրէջք»:

Երբ մենք մեղք ենք գործում, նմանվում ենք այդ հիմար մարդուն, ով ցատկեց ինքնաթիռից: Ինչ էլ որ անենք ինքնուրույն, մեզ միայն վթարային վայրեջք է սպասվում: Մենք ենթակա ենք արդարադատության օրենքին, որը ձգողականության օրենքի նման խստապահանջ է և չներող: Մենք կարող ենք փրկվել միայն Փրկիչի շնորհիվ, Նրա Քավության միջոցով, ով ողորմածաբար ապահովում է մեզ այսպես ասած հոգևոր օդապարիկ կամ անկարգել: Եթե մենք հավատք ունենք առ Հիսուս Քրիստոս և ապաշխարում ենք (նկատի ունեմ անում ենք մեր մասը և քաշում ենք ձգափոկը), ապա Փրկիչի պաշտպանական ուժերը

միջամտում են ի օգուտ մեզ, և մենք կարող ենք հոգևորապես անվնաս վայրէջք կատարել։

Սակայն դա հնարավոր է միայն այն պատճառով, որ Փրկիչը հաղթահարել է չորս խոչընդոտները, որոնք կարող են խանգարել մեր հոգևոր առաջընթացին։

1.Մահը Հիսուս Քրիստոսը հաղթահարեց մահը Իր փառահեղ Հարության միջոցով։ Պողոս Առաքյալն ուսուցանել է. «Քանզի ինչպես Ադամով ամենը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով ամենը կենդանանում են»։[2]

2. Մեղքը Տերը հաղթահարեց մեղքը և հանցանքը բոլոր նրանց համար, ովքեր ապաշխարում են։ Նրա մաքրագործող զորությունն այնքան խորն ու լայնածավալ է, որ Եսայիան խոստացել է. «Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինին, ձյունի պես պիտի սպիտականան»։[3]

Երբեմն ես հանդիպել եմ լավ Սրբերի, ովքեր դժվարություն ունեն իրենց ներելիս, ովքեր անմեղորեն, բայց սխալմամբ սահմաններ են դրել Փրկիչի փրկագնող զորությունների վրա։ Նրանք ակամայից անսահման Քավությունը դարձրել են սահմանափակ, որը ինչ-որ ձևով չի գործում իրենց որոշակի մեղքի կամ թուլության պատճառով։ Բայց սա անսահման Քավություն է, որովհետև այն ներառում է և սահմանագծում է ամեն մեղք և թուլություն, ինչպես նաև ուրիշների կողմից ձեզ պատճառված ամեն վիրավորանք կամ ցավ։

Տրուման Գ. Մադսենը կատարել է այս սփոփիչ դիտարկումը.

«Եթե կան ոմանք, ովքեր մոլորվել են այն համոզմունքով, որ դուք շատ հեռու եք գնացել, . . . որ դուք մեղքի թույնն եք ընդունել, որն անհնար է դարձնում երբևէ կրկին լինել ձեզ այն, ինչ կարող էիք լինել, ապա լսեք ինձ։

Ես վկայություն եմ բերում, որ դուք չեք կարող ավելի խորը սուզվել, քան Հիսուս Քրիստոսի լույսը և մաքրագործող զորությունը կարող է հասնել։ Ես վկայություն եմ բերում, որ քանի դեռ կա ապաշխարելու և ձգտելու կամքի մեկ իսկ կայծ, *Նա այնտեղ է։* Նա, ուղղակի չիջավ *մինչև* ձեր վիճակը, Նա իջավ դրանից *ներքև,* «որպեսզի կարողանար լինել ամենի մեջ և բոլոր բաների միջոցով՝ ճշմարտության լույսը»։[Վարդապետություն և Ուխտեր 88.6։]»[4]

Փրկիչի Քավության և դրա անսահման հետևանքները հասկանալու այդքան կարևոր լինելու պատճառներից մեկն այն է, որ մեծացող ըմբռնման հետ գալիս է ուժգնացող ցանկություն՝ ներել ինքներս մեզ և ուրիշներին։

Չնայած մենք, գուցե, հավատում ենք Քրիստոսի մաքրագործող զորություններին, սակայն հաճախ հարց է առաջանում. «Ինչպե՞ս եմ իմանում, որ իմ մեղքերը ներվել են»։ Եթե մենք զգում ենք Հոգին, ապա դա մեր վկայությունն է, որ մենք ներվել ենք, կամ որ մաքրագործող գործընթաց է տեղի ունենում։ Նախագահ Հենրի Բ. Այրինգն ուսուցանել է. «Եթե դուք զգացել եք Սուրբ Հոգու ազդեցությունը, . . . կարող եք ընդունել դա որպես ապացույց, որ Քավությունը գործում է ձեր կյանքում»։[5]

Ոմանք գուցե հարցնեն. «Բայց, եթե ես ներվել եմ, ինչո՞ւ եմ դեռևս զգում մեղքը»։ Հավանաբար Աստծո ողորմածությամբ այդ մեղքի հիշողությունը նախազգուշացում է, այսպես ասած հոգևոր «կանգառի նշան», առնվազն որոշ ժամանակով, որն աղաղակում է մեզ, երբ լրացուցիչ գայթակղություններ են հանդիպում մեզ. «Մի գնա ներքև այդ ճանապարհով։ Դու գիտես ցավը, որ այն կարող է բերել»։ Այդ առումով, այն ծառայում է որպես պաշտպանություն, ոչ թե պատիժ։

Ուրեմն, հնարավո՞ր է արդյոք հիշել մեր մեղքերը և, այնուամենայնիվ, զերծ լինել մեղքից։

Ալման հիշում էր իր մեղքերը նույնիսկ իր ապաշխարելուց հետո տարիներ շարունակ։ Բայց, երբ նա աղաղակեց առ Հիսուսը ողորմածության համար, նա ասաց. «Ես այլևս չկարողացա հիշել իմ ցավերը. այո, ես այլևս տակնուվրա չէի լինում իմ մեղքերի հիշողությունից»։[6]

Ինչպե՞ս կարող էր նա հիշել իր մեղքերը, բայց չզգալ ցավ կամ մեղք։ Որովհետև, երբ ապաշխարում ենք, «մենք ծնվում ենք Աստծուց»։[7] Մենք դառնում ենք, ինչպես սուրբ գրություններն են ասում «նոր արարածներ»[8] Քրիստոսում։ Կատարյալ ազնվությամբ մենք այժմ կարող ենք ասել. «Ես այն տղամարդը կամ կինը չեմ, ով անցյալում գործել է այդ մեղքերը։ Ես նոր և փոխակերպված էակ եմ»։

3. Չարչարանքներ և թուլություններ Ալման մարգարեացավ, որ Քրիստոսը «պիտի գնա առաջ՝ տանելով ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի»։ Ինչո՞ւ։ Որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, . . . որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների»։[9]

Ինչպե՞ս է Նա իրականացնում այդ։ Երբեմն Նա վերացնում է չարչարանքը, երբեմն Նա ուժեղացնում է մեզ՝ դիմանալու համար, իսկ երբեմն Նա տալիս է մեզ հավերժական հեռանկար՝ ավելի լավ հասկանալու դրանց ժամանակավոր բնույթը։ Լիբերթիի բանտում, գտնվելով խորը տառապանքների մեջ, Մարգարե Ջոզեֆ Սմիթն աղաղակեց. «Ով Աստված, որտե՞ղ ես դու»։[10] Վայրկենական սփոփանք տալու փոխարեն, Աստված պատասխանեց. «Որդիս, խաղաղություն քո հոգուն, քո ձախորդություններն ու քո չարչարանքները կտևեն միայն մի փոքր պահ, և հետո, եթե դու լավ համբերես, Աստված քեզ վեր կբարձրացնի. դու կհաղթես քո բոլոր թշնամիներին»։[11]

Ջոզեֆն այդ ժամանակ հասկացավ, որ այդ դառը փորձառությունը ընդամենը մի կետ էր հավերժության

լուսապատկերում: Այս ընդլայնված տեսլականով, նա գրեց Սրբերին այդ նույն բանտախցից. «Շատ սիրելի՛ եղբայրներ, եկեք ուրախությամբ անենք ամեն բան, որ մեր ուժի սահմաններում է, և հետո, թող մենք կանգնենք հանգիստ, ամենայն համոզվածությամբ՝ տեսնելով Աստծո փրկությունը»:[12] Փրկիչի Քավության շնորհիվ, մենք կարող ենք ունենալ հավերժական հեռանկար, որն իմաստ է տալիս մեր փորձություններին և հույս՝ մեր մխիթարության համար:

4. Թուլություններ և թերություններ Իր Քավության շնորհիվ Փրկիչն ունի իրավազորող ուժեր, որոնք երբեմն կոչվում են շնորհ,[13] որոնք կարող են օգնել մեզ հաղթահարել մեր թուլությունները և անկատարությունները, և այդպիսով օգնել մեզ Նրա նման դառնալու մեր ձգտումներում:

Մորոնին այսպես է ուսուցանել. «Այո, եկեք Քրիստոսի մոտ, և կատարելագործվեք նրանում, . . . որպեսզի նրա շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում»:[14] Թվում է, առնվազն կան երկու ուղիներ կամ միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս մեզ օգտվել այդ իրավազորող ուժերից, որոնք կարող են զտել, նույնիսկ, կատարյալ դարձնել մեզ:

Առաջինը փրկարար արարողություններն են: Սուրբ գրություններն ասում են մեզ. «Նրա արարողություններում է բացահայտվում աստվածայնության զորությունը»:[15] Երբեմն, մենք գուցե մտածենք արարողությունների մասին, որպես մի ստուգացուցակի, որն անհրաժեշտ է վեհացման համար, բայց իրականում յուրաքանչյուրը բացահայտում է աստվածային մի ուժ, որն օգնում է մեզ ավելի նման դառնալ Քրիստոսին: Օրինակ.

- Երբ մկրտվում ենք, և ստանում Սուրբ Հոգու պարգևը, մենք մաքուր ենք դառնում, այդպիսով դառնալով Աստծո նման ավելի սուրբ:
- Բացի այդ, Սուրբ Հոգու միջոցով, մեր մտքերը կարող են լուսավորվել և մեր սրտերը փափկել, որպեսզի կարողանանք Նրա նման մտածել և զգալ:
- Եվ երբ մենք կնքվում ենք որպես կողակիցներ, մենք իրավունք ենք ունենում ժառանգել «զահեր, իշխանություններ և զորություններ»՝[16] որպես պարգևներ Աստծուց:

Երկրորդ ուղին այդ իրավազորող ուժերի համար Հոգու պարգևներն են: Քրիստոսի Քավության շնորհիվ մենք իրավունք ունենք ստանալ Սուրբ Հոգու պարգևը և նրան ուղեկցող հոգևոր պարգևներ: Այդ պարգևները բարեպաշտության հատկանիշներ են, ուստի ամեն անգամ, երբ մենք ձեռք ենք բերում Հոգու պարգև, մենք ավելի ենք նմանվում Աստծուն: Անկասկած, ահա թե ինչու են սուրբ գրությունները պատվիրում մեզ բազմաթիվ առիթներով ձգտել այդ պարգևներին:[17]

Նախագահ Ջորջ Ք. Քենոնն ուսուցանել է. «Ոչ մի մարդ չպիտի ասի. «Օհ, ես չեմ կարող վերահսկել ինձ, իմ էությունն է այդպիսին»: Դա նրան չի արդարացնում այն պատճառով որ Աստված խոստացել է . . . տալ պարգևներ, որոնք արմատախիլ կանեն [մեր թուլությունները]: . . . Եթե մենք թերանում ենք ինչ-որ բանում, ապա մենք պարտավոր ենք աղոթել պարգևի համար, որը մեզ կատարյալ կդարձնի:[18]

Այսպիսով, Փրկիչի Քավությունը մեզ կյանք է տալիս՝ մահվան փոխարեն, «գեղեցկություն՝ մոխրի փոխարեն»[19] բժշկություն՝ցավի փոխարեն և կատարելություն՝ թուլության փոխարեն: Սա երկնքի հակաթույնն է այս աշխարհի խոչընդոտների և մաքառումների դեմ:

Փրկիչի մահկանացու կյանքի վերջին շաբաթվա ընթացքում, Նա ասաց. «Աշխարհքում նեղություն կունենաք. բայց քաջացեք, ես հաղթել եմ աշխարհքին»:[20] Քանի որ Փրկիչն իրականացրեց Իր Քավությունը, չկա ոչ մի արտաքին ուժ, իրադարձություն կամ անձնավորություն, որը կարողանա խանգարել մեզ հասնել վեհացման, եթե միայն պահենք Աստծո պատվիրանները: Այդ գիտելիքով մենք կարող ենք առաջ մղվել

արիացած և բացարձակ վստահությամբ, որ Աստված մեզ հետ է այս երկնային որոնումներում:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Փրկիչի Քավությունը ոչ միայն անսահման է ծավալով, այլ հասանելի է նաև անհատապես, որ այն կարող է ոչ միայն մեզ վերադարձնել Աստծո ներկայություն, այլ նաև հնարավորություն ընձեռել մեզ դառնալ Նրա նման, որը Քրիստոսի Քավության բարձրագույն նպատակն է: Սրա վերաբերյալ ես բերում եմ իմ երախտապարտ և վստահ վկայությունը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.6:
2. Ա Կորնթացիս 15.20-22:
3. Եսայիա 1.18:
4. Truman G. Madsen, *Christ and the Inner Life* (1978), 14.
5. Հենրի Բ. Այրինգ, «Հոգու պարգևները դժվարին ժամանակներում», *Ensign,* June 2007, 23:
6. Ալմա 36.19, տես նաև Ալմա 36.20-21:
7. Ալմա 36.23, տես նաև Ալմա 36.24-26:
8. Մոսիա 27.26:
9. Ալմա 7.11–12:
10. Վարդապետություն և Ուխտեր 121.1:
11. Վարդապետություն և Ուխտեր 121.7-8:
12. Վարդապետություն և Ուխտեր 123.17:
13. Տես Bible Dictionary, “Grace”, տես նաև Սուրբ Գրքերի ուղեցույց, “Grace,” scriptures.ChurchofJesusChrist.org:
14. Մորոնի 10.32:
15. Վարդապետություն և Ուխտեր 84.20:
16. Վարդապետություն և Ուխտեր 132.19:
17. Տես Ա Կորնթացիս 12.31, Մորոնի 10.30, Վարդապետություն և Ուխտեր 46.8:
18. Ջորջ Ք. Քենոն, «Ձգտել հոգևոր պարգևների», *Լիահոնա,* ապրիլ 2016, 80:
19. Եսայիա 61.3:
20. Հովհաննես 16.33:

ՆԱԽԱԳԱՀ ՌԱՍՍԵԼ Մ. ՆԵԼՍՈՆ

«Եկ, հետևիր ինձ»

Հիսուս Քրիստոսը հրավիրում է մեզ կանգնել դեպի մեր Երկնային Հոր տուն տանող ուխտի ճանապարհին և լինել նրանց հետ, ում մենք սիրում ենք:

Իմ սիրելի եղբայրներ ու քույրեր, ես և իմ կինը՝ Վենդին, ուրախ ենք, որ ձեզ հետ ենք այս Հանգստության օրվա առավոտյան: Շատ իրադարձություններ են տեղի ունեցել վերջին համաժողովից սկսած: Նոր տաճարներ են նվիրագործվել Կոնսեփսիոնում (Չիլի), Բարանգվիլայում (Կոլումբիա) և Հռոմում (Իտալիա): Այդ սրբազան իրադարձությունների ժամանակ մենք զգացինք Հոգու անհաղթահարելի զորությունը:

Ես շնորհավորում եմ այն կանանց ու տղամարդկանց, ովքեր վերջերս կարդացել են Մորմոնի Գիրքը և գտել են ուրախություն ու անգին գանձեր: Ես ոգեշնչված եմ տեղի ունեցած հրաշքների մասին լուրերով:

Ես հիանում եմ 11-ամյա սարկավագ պատանիներով, ովքեր այժմ արժանավոր են կիրակի օրվա հաղորդությունը բաժանելու: Նրանք տաճար են գնում մեր 11 տարեկան երիտասարդ կանանց հետ, ովքեր այժմ ջանասիրաբար սովորում և ծառայում են որպես Մեղվիկներ: Երիտասարդ տղամարդիկ և կանայք հստակ համոզումով քարոզում են ավետարանի ճշմարտությունները:

Ես հրճվում եմ այն երեխաներով ու երիտասարդներով, ովքեր օգնում են ուսուցանել ավետարանն իրենց տներում, երբ աշխատում են իրենց ծնողների հետ՝ հետևելով տնակենտրոն և Եկեղեցու կողմից հաստատված ուսումնական ծրագրին:

Մենք ստացել ենք 4-ամյա Բլեյքի այս նկարը, ով կիրակի վաղ առավոտյան վերցրել է Եկեղեցու գրքերից մեկը և բացականչել. «Ես պետք է սնուցեմ իմ հոգին»:

Բլեյք, մենք հիացած ենք քեզանով և մյուսներով, ովքեր նախընտրում են սնուցել իրենց հոգիները Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ճշմարտություններով: Մենք նաև ուրախանում ենք՝ իմանալով, որ շատերն են ստանում Աստծո զորությունն իրենց կյանքում՝ երկրպագելով և ծառայելով տաճարում:

Ինչպես շատերդ գիտեք, երեք ամիս առաջ մեր ընտանիքը ապրեց բաժանման մեծ ցավ, երբ մեր դուստր Վենդին հեռացավ այս մահկանացու կյանքից: Քաղցկեղի դեմ նրա պայքարի վերջին օրերին ես հնարավորություն ունեցա նրա հետ ունենալ հայր-դուստր հրաժեշտի զրույցը:

Չորս տարեկան Բլեյքը, որը «սնուցեց իմ հոգին»:

Ես բռնեցի նրա ձեռքը և ասացի, թե որքան շատ եմ սիրում նրան, և որքան երախտապարտ եմ նրա հայրը լինելու համար: Ես ասացի. «Դու ամուսնացել ես տաճարում և հավատարմորեն պատվել ես քո ուխտերը: Դու և քո ամուսինը ունեցել եք յոթ զավակ և մեծացրել եք նրանց որպես Հիսուս Քրիստոսի նվիրյալ աշակերտներ, Եկեղեցու արդարակյաց անդամներ և պիտանի քաղաքացիներ: Եվ նրանք ընտրել են նույն արժանիքներով մարդկանց: Քո հայրը շատ, շատ հպարտ է քեզանով: Դու մեծ ուրախություն ես պարգևել ինձ»:

Նա հանդարտ պատասխանեց. «Շնորհակալություն, Հայրի՛կ»:

Դա քնքուշ ու հուզումնալից պահ էր մեզ համար: Նրա կյանքի 67 տարիների ընթացքում մենք աշխատել ենք միասին, երգել ենք միասին և հաճախ միասին դահուկներով սահել: Բայց այդ երեկո մենք հիշեցինք այն ամենն, ինչ կարևոր էր մեզ համար, օրինակ՝ ուխտերը, արարողությունները, հնազանդությունը, հավատքը, ընտանիքը, հավատարմությունը, սերը և հավերժական կյանքը:

Ես շատ եմ կարոտում իմ դստերը: Սակայն Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի շնորհիվ մենք չենք անհանգստանում նրա համար: Երբ մենք շարունակում ենք պատվել մեր ուխտերն Աստծո հետ, անհամբեր սպասում ենք, թե երբ պիտի կրկին հանդիպենք նրան: Միաժամանակ, մենք այստեղ ծառայում ենք Տիրոջը, իսկ նա ծառայում է Նրան այնտեղ՝ դրախտում:[1]

Ես և կինս Կալիֆորնիայի Փարադայզ այցելեցինք այս տարվա սկզբին: Պատահականորեն, մեր նախատեսված այցելությունն այնտեղ տեղի ունեցավ մեր դստեր մահից 40 ժամ անց: Մենք, Երեց Քեվին Վ. Փիրսոնն ու նրա կինը՝

Ջունը, զորացանք Չիկո Կալիֆորնիա ցցի անդամների հետ հանդիպման ժամանակ: Մենք իմացանք նրանց մեծ հավատքի, ծառայության ու հրաշքների մասին, որոնք կատարվեցին, երբ նրանք կործանարար կորուստներ կրեցին Կալիֆորնիայի պատմության մեջ ամենամեծ անտառային հրդեհների պատճառով:

Այնտեղ մենք երկար զրուցեցինք մի երիտասարդ ոստիկանի՝ Ջոնի հետ, ով առաջիններից մեկն էր, որ քաջաբար օգնության հասավ: Նա հիշեց անթափանց խավարը, որն իջել էր Փարադայզի վրա 2018թ. նոյեմբերի 8-ին: Կրակն ու մոխիրը պատուհասի նման արագորեն տարածվում էին քաղաքում, կործանելով մարդկանց ունեցվածքն ու սեփականությունը, իրենց ետևից թողնելով մոխիր և մերկ աղյուսե ծխնելույզներ:

15 ժամ Ջոնը վարում էր մեքենան անթափանց խավարում, որտեղ ածուխի մեծ կտորները սպառնալից արագությամբ տարածվում էին: Իր կյանքի գնով նա օգնում էր մարդկանց և ընտանիքներին հերթով թաքնվել ապահով վայրերում: Սակայն այդ լարված ծանր փորձության ընթացքում Ջոնին ամենից շատ սարսափեցնում էր իր ամենակարևոր հարցը. «*Որտե՞ղ է իմ* ընտանիքը»: Սոսկալի տառապանքների երկար ժամերից հետո նա վերջապես իմացավ, որ նրանք ապահով էվակուացվել էին:

Իր ընտանիքի համար ունեցած Ջոնի մտահոգության պատմությունը հուշեց ինձ այսօր խոսել նրանց հետ, ովքեր, մոտենալով իրենց

Փարադայզ (Կալիֆորնիա) այցելության ժամանակ Նախագահ Նելսոնը սովորեց մեծ հավատքի, սպասավորության և հրաշքների մասին:

մահկանացու կյանքի ավարտին, կարող են հարցնել. «*Որտե՞ղ է իմ* ընտանիքը»: Ապագայի այդ օրը, երբ դուք կավարտեք ձեր մահկանացու փորձաշրջանը և կմտնեք հոգիների աշխարհ, կառնչվեք այս սրտատանջ հարցին. «*Որտե՞ղ է իմ* ընտանիքը»:

Հիսուս Քրիստոսն ուսուցանում է դեպի տուն տանող մեր ետդարձի ճամփան: Նա բոլորից լավ է հասկանում մեր Երկնային Հոր հավերժական առաջընթացի ծրագիրը: Ի վերջո, Նա այդ ամենի հիմնաքարն է: Նա մեր Քավիչն է, մեր Ամոքիչն ու մեր Փրկիչն է:

Այն ժամանակից ի վեր, երբ Ադամն ու Եվան դուրս քշվեցին Եդեմի պարտեզից, Հիսուս Քրիստոսն առաջարկել է Իր հզոր բազկի զորությունը, որպեսզի օգնի բոլոր նրանց, ովքեր իրենց ընտրությամբ հետևում են Իրեն: Սուրբ գրություններում բազմիցս կրկնվում է, որ չնայած մարդկանց կողմից գործած տարբեր մեղքերի, Նա դեռևս մեկնում է Իր բազուկները:[2]

Մեզանից յուրաքանչյուրի մեջ գտնվող հոգին բնականորեն մեծ ցանկություն ունի, որ իր ընտանիքը հավերժ գոյատևի: Սիրո երգերը հավերժացնում են մի կեղծ գաղափար, որ սերն այն ամենն է, ինչի կարիքը դուք ունեք, եթե ցանկանում եք հավերժ միասին լինել: Իսկ ոմանք սխալմամբ կարծում են, որ Հիսուս Քրիստոսի Հարությունը տալիս է մի խոստում, որ բոլոր մարդիկ իրենց սիրելիների հետ կլինեն մահից հետո:

Փաստորեն, Փրկիչն Ինքը ակնհայտորեն հստակեցրել է, որ չնայած Իր Հարությունը վստահեցնում է, որ երբևէ ապրած յուրաքանչյուր մարդ իսկապես հարություն կառնի ու կապրի հավերժ,[3] սակայն շատ ավելին է պահանջվում, եթե մենք ցանկանում ենք ունենալ վեհացման մեծ արտոնությունը: Փրկությունը անձնական հարց է, մինչդեռ վեհացումը ընտանեկան հարց է:

Լսեք այս խոսքերը, որոնք Հիսուս Քրիստոսն ասել է Իր մարգարեներին. «Բոլոր ուխտերը, պայմանագրերը, մուրհակները, պարտավորությունները, երդումները, խոստումները, կատարումները, կապերը, ընկերակցությունները կամ ակնկալիքները, որոնք չեն կապվել և հաստատվել ու կնքվել խոստումի Սուրբ Հոգով, . . . չունեն ազդեցություն, զորություն կամ ուժ մեռելների հարության ժամանակ և հետո. քանզի բոլոր պայմանագրերը, որոնք չեն կնքվել այդ վախճանի համար, վերջանում են մարդկանց մահվան հետ»:[4]

Ուստի, ի՞նչ է անհրաժեշտ, որպեսզի ընտանիքը հավերժ

վեհացվի: Մենք արժանանում ենք *այդ* արտոնությանը՝ ուխտեր կապելով Աստծո հետ, պահելով այդ պատվիրանները և ստանալով անհրաժեշտ արարողությունները:

Սա ճիշտ է եղել ժամանակների սկզբից ի վեր: Ադամն ու Եվան, Նոյն ու նրա կինը, Աբրահամն ու Սարան, Լեքին ու Սարիան և Հիսուս Քրիստոսի այլ նվիրված աշակերտներ աշխարհի ստեղծումից ի վեր Աստծո հետ կապել են *նույն* ուխտերը: Նրանք ստացել են *նույն* արարողությունները, որոնք մենք, որպես Աստծո վերականգնված Եկեղեցու անդամներ, ներկայումս ստանում ենք մկրտության ժամանակ և տաճարներում:

Փրկիչը հրավիրում է բոլորին հետևել Իրեն և մտնել մկրտության ջրերը, ժամանակի ընթացքում տաճարում լրացուցիչ ուխտեր կապել Աստծո հետ, ստանալ ու հավատարիմ մնալ այդ հետագա կարևոր ուխտերին: Այս ամենը պահանջվում է, եթե մենք ցանկանում ենք ընդմիշտ վեհացում ստանալ մեր ընտանիքների և Աստծո հետ:

Սիրտս տագնապում է, երբ շատ մարդիկ, ում ես սիրում եմ, հիանում և հարգում եմ, մերժում են Նրա հրավերը: Նրանք անտեսում են Հիսուս Քրիստոսի խնդրանքները, երբ Նա կանչում է. «Եկ, հետևիր ինձ»:[5]

Ես հասկանում եմ, թե ինչու է Աստված արտասվում:[6] Ես նույնպես արտասվում եմ այդպիսի ընկերների և ազգականների համար: Նրանք հրաշալի այրեր ու կանայք են՝ նվիրված իրենց ընտանիքին ու քաղաքացիական պարտականություններին: Նրանք շռայլորեն նվիրաբերում են իրենց ժամանակը, եռանդը և միջոցները: Եվ աշխարհն ավելի լավն է դառնում նրանց ջանքերից: Բայց նրանք նախընտրում են ուխտեր *չկապել* Աստծո հետ: Նրանք չեն ստացել արարողությունները, որոնք կվեհացնեն նրանց իրենց ընտանիքների հետ և ընդմիշտ միասին կկապեն իրենց:[7]

Որքան կկամենայի այցելել և հրավիրել նրանց լրջորեն խորհել Տիրոջ արտոնող օրենքների մասին: Հետաքրքիր է, թե ես ինչ կասեի, որպեսզի նրանք հասկանային, թե որքան շատ է Փրկիչը սիրում իրենց, թե որքան եմ ես սիրում իրենց, և իմանային, թե ուխտեր պահող տղամարդիկ ու կանայք ինչպես կարող են ստանալ «ուրախության լիությունը»:[8]

Նրանք պետք է հասկանան, որ չնայած իրենց համար ապագայում տեղ *կա* այն հրաշալի տղամարդկանց ու կանանց հետ, ովքեր նույնպես ընտրում են ուխտեր *չկապել* Աստծո հետ, սակայն դա այն տեղը *չէ,* որտեղ ընտանիքները կմիավորվեն և նրանց արտոնություն կտրվի ապրել ու առաջ ընթանալ միասին: Դա այն արքայությունը *չէ,* որտեղ նրանք կզգան անվերջ առաջընթացի ու երջանկության ուրախության լիությունը:[9] Այդ լավագույն օրհնությունները կարող են գալ միայն, երբ վեհացված սելեստիալ արքայությունում ապրենք մեր Աստծո՝ մեր Երկնային Հոր, Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի և մեր ընտանիքի հրաշալի ու արժանավոր անդամների հետ:

Ես ոգեշնչված դիմում եմ իմ անվճռական ընկերներին.

«Երկրի վրա այս կյանքում դուք չեք հայտնվել երկրորդ տեղում գտնվող, ոչ լավագույնը ընտրելու համար: Սակայն, երբ դուք դիմադրում եք և լիովին չեք ընդունում Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը, դուք ընտրում եք երկրորդը, ոչ թե առաջինը՝ լավագույնը:

Փրկիչն ասել է. «Իմ Հօր տանը շատ բնակարաններ կան»:[10] Սակայն, երբ դուք ընտրում եք ուխտեր *չկապել* Աստծո հետ, դուք ընտրում եք ամենախղճուկ տանիքը ձեր գլխավերևում ողջ հավերժության համար»:

Ապա ես կխնդրեմ իմ անվճռական ընկերներին.

«Բացեք ձեր սիրտը Աստծո առաջ: Հարցրեք Նրան՝ արդյո՞ք այս բաները ճշմարիտ են: Ժամանակ հատկացրեք և ուսումնասիրեք Նրա խոսքերը: Անկեղծորեն ուսումնասիրեք: Եթե դուք իսկապես սիրում եք ձեր ընտանիքը, և եթե դուք ցանկանում եք նրանց հետ վեհացում ստանալ ողջ հավերժության համար, ապա հիմա՛ վճարեք դրա գինը՝ ուսումնասիրությամբ ու ջերմեռանդ աղոթքով, որպեսզի իմանաք այս հավերժական ճշմարտությունները, իսկ հետո ապրեք դրանցով:

Եթե դուք անգամ վստահ չեք՝ հավատու՞մ եք Աստծուն, թե՞ ոչ, սկսեք այդտեղից: Հասկացեք, որ Աստծո հետ փոխառությունների բացակայությամբ կարող եք կասկածի տակ դնել Աստծո գոյությունը: Ուստի, սկսեք ձեր փոխառությունները Նրա հետ: Խոնարհեցրեք ինքներդ ձեզ: Աղոթեք, որ ունենաք աչքեր, որպեսզի տեսնեք Աստծո ձեռքը ձեր կյանքում և ձեզ շրջապատող աշխարհում: Խնդրեք Նրան ասել ձեզ՝ արդյո՞ք Նա իրոք այնտեղ է և ճանաչում է ձեզ: Հարցրեք Նրան՝ ինչպե՞ս է նա վերաբերվում ձեզ: Իսկ հետո լսեք»:

Իմ թանկագին ընկերներից մեկը սահմանափակել էր իր փոխառությունները Աստծո հետ: Նա փափագում էր միանալ իր մահացած կնոջը: Ուստի նա խնդրեց ինձ օգնել իրեն: Ես քաջալերեցի նրան հանդիպել մեր միսիոներների հետ, որպեսզի հասկանար Քրիստոսի վարդապետությունը և սովորեր ավետարանի ուխտերը, արարողություններն ու օրհնությունները:

Նա հանդիպեց նրանց հետ: Բայց հետո զգաց, որ դասընթացը, որ պետք է անցներ նրանց խորհրդով, շատ փոփոխություններ կպահանջեր կատարել իր կյանքում: Նա ասաց. «Այդ պատվիրաններն ու ուխտերը շատ բարդ են ինձ համար»: Հնարավոր է, ես չկարողանամ տասանորդ վճարել և ես ժամանակ չունեմ ծառայելու Եկեղեցում»: Ապա նա

հարցրեց ինձ. «Երբ ես մահանամ, դու կանե՞ս անհրաժեշտ տաճարային աշխատանքը իմ և իմ կնոջ համար, որպեսզի մենք կարողանանք կրկին միասին լինել»:

Բարեբախտաբար ես այս մարդու դատավորը չեմ: Բայց ես կասկածի տակ եմ առնում փոխարինող տաճարային աշխատանքի արդյունավետությունը մի մարդու համար, ով հնարավորություն է ունեցել մկրտվել այս կյանքում, կարգվել քահանա և ստանալ տաճարային օրհնությունները այստեղ, բայց ով գիտակցաբար որոշում է կայացրել հրաժարվել այդ հնարավորությունից:

Իմ թանկագին եղբայրներ և քույրեր, Հիսուս Քրիստոսը հրավիրում է մեզ կանգնել դեպի մեր Երկնային Հոր տուն տանող ուխտի ճանապարհի վրա և լինել նրանց հետ, ում մենք սիրում ենք: Նա հրավիրում է մեզ. «Եկ հետևիր ինձ»:

Այժմ, որպես Նրա Եկեղեցու Նախագահ, ես խնդրում եմ նրանց, ովքեր հեռացել են Եկեղեցուց, և նրանց, ովքեր դեռ իսկապես չեն ձգտել իմանալ, որ Փրկիչի Եկեղեցին վերականգնվել է: Կատարեք հոգևոր աշխատանք, որպեսզի պարզեք դա ձեզ համար, և խնդրում եմ, արեք դա հիմա: Քիչ ժամանակ է մնացել:

Ես վկայում եմ, որ Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Նրա Եկեղեցին և Նրա ավետարանի լրիվությունը վերականգնվել են, որպեսզի օրհնեն մեր կյանքը այստեղ և ապագայում: Ես վկայում եմ այդ մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ալմա 40.12-14:
2. Տես Երեմիա 27.5, Մատթեոս 23.37, Ղուկաս 13.34, Ալմա 5.33, 3 Նեփի 9.14:
3. Բոլորը Հարություն կառնեն, քանի որ Քրիստոսը հաղթեց մահին (տես Ալմա 11.41–45, 40, Վարդապետություն և Ուխտեր 76, Մովսես 7.62):
4. Վարդապետություն և Ուխտեր 132.7
5. Ղուկաս 18.22:
6. Տես Հովհաննես 11.35, Մովսես 7.28-29:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 76.50-70:
8. Վարդապետություն և Ուխտեր 138.17:
9. Տես Մոսիա 2.41, Ալմա 28.12:
10. Հովհաննես 14.2:



Կիրակի ցերեկային նիստ

ՆԱԽԱԳԱՀ ԴԱԼԼԻՆ Հ. ՕՈՒՔՍ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Մաքրված ապաշխարությամբ

Աստծո ծրագրի և Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք մաքրվել ապաշխարության գործընթացի միջոցով:

Մահկանացու կյանքում մենք ենթակա ենք մարդկային օրենքներին և Աստծո օրենքներին: Ես մի անսովոր փորձառություն եմ ունեցել, դատելով լրջագույն մի սխալ արարք այդ երկու օրենքներով, ավելի վաղ լինելով Յուտայի Գերագույն Դատարանի դատավոր, իսկ այժմ՝ Առաջին Նախագահության անդամ: Մարդկային օրենքների և Աստծո օրենքների իմ տեսած տարբերությունը մեծացրել է Հիսուս Քրիստոսի քավության իրականության և զորության մասին իմ գնահատանքը: Մարդկային օրենքների համաձայն, ամենալուրջ հանցագործությունների համար մեղավոր անձը կարող է դատապարտվել բանտարկության՝ առանց վաղաժամկետ ազատվելու հնարավորության: Բայց դա տարբեր է սիրող Երկնային Հոր ողորմած ծրագրի դեպքում: Ես ականատես եմ եղել, որ այդ նույն լուրջ մեղքերը կարող են ներվել մահկանացու կյանքում՝ մեր Փրկիչի քավող զոհաբերության շնորհիվ «բոլոր նրանց [մեղքերը], ովքեր ունեն կոտրված սիրտ ու փշրված հոգի» (2 Նեփի 2.7): Քրիստոսը փրկագնում է և Նրա Քավությունն իրական է:

Մեր Փրկիչի գթասիրտ կարեկցանքն արտահայտվեց նոր կատարած օրհներգի մեջ՝

Եկեք Հիսուսի մոտ, Նա կլսի,
Մեղքի խավարից ձեզ կփրկի:
Սերը Նրա ձեզ մթից կհանի,
Դեպ լույսը կտանի, կտանի:[1]

Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերությունը դռներ է բացում, որ «բոլոր մարդիկ ապաշխարեն և գան իր մոտ» (Վարդապետություն և Ուխտեր 18.11, տես նաև Մարկոս 3.28, 1 Նեփի 10.18, Ալմա 34.8, 16)։ Ալմայի գիրքը նկարագրում է նույնիսկ այն մարդկանց ապաշխարությունն ու ներումը,, ովքեր եղել են ամբարիշտ և արյունռուշտ ժողովուրդ (տես Ալմա 25.16, 27.27, 30)։ Այսօր իմ ուղերձը հույսի մասին է բոլորիս համար, այդ թվում այն մարդկանց համար, ովքեր կորցրել են Եկեղեցում իրենց անդամակցությունը՝ Եկեղեցուց հեռացվելու կամ անունը հեռացնելու արդյունքում։ Մենք բոլորս մեղավորներ ենք, որոնք կարող են մաքրվել ապաշխարության միջոցով։ «Մեղքի համար ապաշխարելը հեշտ չէ»,- Երեց Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է նախորդ գերագույն համաժողովի ժամանակ։ Բայց այդ պարգևի համար արժե ջանք գործադրել»։[2]

I. Ապաշխարություն

Ապաշխարությունը սկսվում է մեր Փրկիչից և այն ուրախություն է, ոչ թե բեռ։ Նախորդ դեկտեմբեր ամսվա Սուրբ Ծննդյան հոգևոր երեկոյի ժամանակ, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է. «Իրական ապաշխարությունը մեկ իրադարձություն չէ»։ Դա անվերջանալի արտոնություն է։ Դա առաջընթացի, մտքի խաղաղության, մխիթարության և ուրախության *գրավականն* է»։[3]

Ապաշխարության մասին ամենամեծ ուսմունքները գտնվում են Մորմոնի Գրքում՝ Եկեղեցու անդամներին ուղղված Ալմայի քարոզում, որոնց նա ավելի ուշ նկարագրում է, որ գտնվում են «մեծ անհավատության վիճակում», «բարձրամտացած . . . հպարտությունից» և սրտերը դրած «հարստությունների ու աշխարհի ունայն բաների վրա» (Ալմա 7.6)։ Այս վերականգնված Եկեղեցու յուրաքանչյուր անդամ շատ բան կարող է սովորել Ալմայի ոգեշնչված ուսմունքներից։

Մենք սկսում ենք Հիսուս Քրիստոսի հավատքից, քանի որ «դա նա է, որ գալիս է վեր առնելու աշխարհի մեղքերը» (Ալմա 5.48)։ Մենք պետք է ապաշխարենք, քանի որ ինչպես Ալման է ուսուցանել՝ «մինչև դուք չապաշխարեք, ոչ մի ձևով չեք կարող ժառանգել երկնքի արքայությունը» (Ալմա 5.51)։ Ապաշխարությունն Աստծո ծրագրի կարևոր մասն է։ Քանի որ մեր մահկանացու փորձառության ժամանակ բոլորս մեղք կգործենք և կկտրվենք Աստծո ներկայությունից, մարդը չի կարող «փրկվել» առանց ապաշխարության (Ալմա 5.31, տես նաև Հելաման 12.22)։

Այդ մասին ուսուցանվել է ամենասկզբից։ Տերը պատվիրել է Ադամին. «Ուսուցանեք ձեր երեխաներին, որ բոլոր մարդիկ, ամենուրեք, պետք է ապաշխարեն, այլապես նրանք ոչ մի կերպ չեն ժառանգի Աստծո արքայությունը, քանզի ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել այնտեղ, կամ բնակվել նրա ներկայության մեջ» (Մովսես 6.57)։ Մենք պետք է ապաշխարենք մեր բոլոր մեղքերի համար՝ բոլոր մեր գործողություններից և անգործությունից, որոնք հակասում են Աստծո պատվիրաններին։ Ոչ ոք բացառություն չէ։ Հենց անցյալ երեկոյան Նախագահ Նելսոնը կոչ արեց մեզ. «Եղբայրնե՛ր, մենք բոլորս ապաշխարելու կարիք ունենք»։[4]

Ապաշխարությամբ մաքրվելու համար մենք պետք է թողնենք մեր մեղքերը և խոստովանենք դրանք Տիրոջը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Նրա մահկանացու դատավորին (տես Վարդապետություն և Ուխտեր 58.43)։ Ալման ուսուցանեց, որ մենք պետք է նաև «առաջ բերենք արդարության գործեր» (Ալմա 5.35)։ Այդ բոլորը կազմում է Քրիստոսի մոտ գալու սուրբ գրքերում գրված հրավերի մասը։

Յուրաքանչյուր շաբաթ մենք պետք է ճաշակենք հաղորդությունը։ Այդ արարողության ժամանակ մենք ուխտեր ենք կապում և օրհնություններ ենք ստանում, որոնք օգնում են մեզ հաղթահարել բոլոր արարքներն ու ցանկությունները, որոնք մեզ խանգարում են այն կատարելագործումից, որին մեր Փրկիչը հրավիրում է մեզ հասնել (տես Մատթեոս 5.48, 3 Նեփի 12.48)։ Երբ մենք «հրաժարվենք ամեն անաստվածությունից և սիրեք Աստծուն, [մեր] ողջ զորությամբ, մտքով և ուժով», ապա «կատարյալ կլինենք Քրիստոսում»

և Նրա թափած արյան շնորհիվ «կսրբագործվենք» ու «կդառնանք սուրբ, առանց բծի» (Մորոնի 10.32–33)։ Ինչպիսի՜ խոստում։ Ինչպիսի՜ հրաշք։ Ինչպիսի՜ օրհնություն։

II. Պատասխանատվություն և մահկանացու դատաստաններ

Աստծո ծրագրի նպատակներից մեկն այս մահկանացու փորձառության համար մեզ «ստուգելն է», որպեսզի «տեսնի, թե արդյոք [մենք] կանենք ամենը, ինչ Տերը՝ [մեր] Աստվածը, կպատվիրի [մեզ]» (Աբրահամ 3.25)։ Այդ ծրագրի համաձայն, մենք պատասխանատվություն ենք կրում Աստծո և Նրա ընտրյալ ծառաների առաջ, և այդ պատասխանատվությունը ներառում է ինչպես մահկանացու, այնպես էլ աստվածային դատաստանները։

Տիրոջ Եկեղեցում անդամների կամ ապագա անդամների մահկանացու դատաստանները պաշտոնավարվում են ղեկավարների կողմից, որոնք աստվածային ուղղորդում են փնտրում։ Նրանց պարտականությունն է դատել այն մարդկանց, ովքեր ձգտում են մոտենալ Քրիստոսին, որպեսզի ստանան Նրա Քավության զորությունը հավերժական կյանք տանող ուղու վրա։ Մահկանացու դատաստանները որոշում են, թե արդյո՞ք անձը պատրաստ է մկրտության։ Արդյո՞ք անձը արժանի է տաճար այցելելու երաշխավորագրին։ Արդյո՞ք անձը, որի անունը հանվել է Եկեղեցու գրառումներից, բավականաչափ ապաշխարել է Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, որ փրկագնվի մկրտության միջոցով։

Երբ Աստծո կողմից կանչված մահկանացու դատավորը հավանություն է տալիս մարդու հետագա առաջընթացին, ինչպես տաճարային արտոնությունները, նա չի մատնանշում այդ մարդուն որպես կատարյալ, և նա չի ներում որևէ մեղք։ Երեց Սպենսեր Վ. Քիմբալն ուսուցանել է, որ մահկանացու «տուգանքներից հրաժարվելու» համար, անձը պետք է «փնտրի և երկնքի Աստծուց ստանա վերջնական ապաշխարություն, և միայն Նա կարող է ներում շնորհել»։[5] Եվ եթե մեղսավոր արարքներն ու ցանկությունները մնում են չապաշխարված Վերջին դատաստանի ժամանակ, չապաշխարած անձը չի մաքրվի։ Ապաշխարության վերջնական պատասխանատվությունը, այդ թվում վերջնական մաքրման ազդեցությունը, մեր և Աստծո միջև է։

III. Հարություն և Վերջին դատաստան

Դատաստանը սուրբ գրություններում հիմնականում նկարագրված է Վերջին դատաստան, որը գալիս է հարությունից հետո (տես 2 Նեփի 9.15)։ Բազմաթիվ սուրբ գրություններ նշում են, որ «ամենս Քրիստոսի ատեանի առաջին պիտի կանգնենք» (Հռովմեացիս 14.10, տես նաև 2 Նեփի 9.15, Մոսիա 27.31) «դատվելու համաձայն այն գործերի, որոնք արվել են մահկանացու մարմնում» (Ալմա 5.15, տես նաև Հայտնություն 20.12, Ալմա 41.3, 3 Նեփի 26.4)։ Բոլորը կդատվեն «համաձայն իրենց գործերի» (3 Նեփի 27.15) և «համաձայն իրանց սրտերի ցանկությունների» (Վարդապետություն և Ուխտեր 137.9, տես նաև Ալմա 41.6)։

Այդ վերջին դատաստանի նպատակը կլինի որոշել՝ արդյո՞ք մենք հասել ենք նրան, ինչն Ալման նկարագրել է որպես «սրտի հզոր փոփոխություն» (տես Ալմա 5.14, 26), որտեղ մենք դարձել ենք նոր արարածներ

«այլևս հակված չենք գործելու չարիք, այլ շարունակ գործելու բարիք» (Մոսիա 5.2)։ Դրա դատավորը մեր Փրկիչն է, Հիսուս Քրիստոսը (տես Հովհաննես 5.22, 2 Նեփի 9.41)։ Նրա դատաստանից հետո բոլորը կխոստովանեն, «որ նրա դատաստաններն արդար են» (Մոսիա 16.1, տես նաև Մոսիա 27.31, Ալմա 12.15), Նրա ամենագիտության շնորհիվ (տես 2 Նեփի 9.15, 20) Նրան տրվել է մեր բոլոր արարքների ու ցանկությունների, թե՛ արդար կամ ապաշխարած ցանկությունների, և թե՛ անարդար և չապաշխարված կամ չփոխված ցանկությունների մասին կատարյալ գիտելիք։

Սուրբ գրություններն *այդ գործընթացը* նկարագրում են որպես Վերջին դատաստան։ Ալման ուսուցանում է, որ մեր Աստծո արդարադատությունը պահանջում է, որ Հարության ժամանակ, «բոլոր բաները վերականգնվեն իրենց ճիշտ կարգով» (Ալմա 41.2)։ Դա նշանակում է, որ «եթե նրանց գործերը բարի են եղել այս կյանքում, և նրանց սրտերի ցանկությունները բարի են եղել, . . . վերջին օրը նրանք ևս պիտի վերականգնվեն դեպի այն, ինչը բարի է» (Ալմա 41.3)։ Նմանապես, «եթե նրանց գործերը [կամ նրանց ցանկությունները] չար են, դրանք պետք է վերականգվեն նրանց՝ չարի համար» (Ալմա 41.4–5, տես նաև Հելաման 14.31)։ Նմանապես, Հակոբ մարգարեն ուսուցանեց, որ վերջին դատաստանի ժամանակ «նրանք, ովքեր արդար են, արդար էլ կլինեն, և նրանք, ովքեր կեղտոտ են, կեղտոտ էլ կլինեն» (2 Նեփի 9.16, տես նաև Մորմոն 9.14, 1 Նեփի 15.33)։ Այդ գործընթացը կնախորդի նրան, երբ մենք կանգնենք նրա առաջ, ինչը Մորոնին կոչում է «մեծ Եհովայի՝ թե՛ ողջերի, թե՛ մեռածների Հավերժական Դատավորի հաճելի դատարան» (Մորոնի 10.34, տես նաև 3 Նեփի 27.16)։

Որպեսզի հավաստիանանք, որ մաքուր կլինենք Աստծո առաջ, մենք պետք է ապաշխարենք Վերջին դատաստանից *առաջ* (տես Մորմոն 3.22)։ Ինչպես Ալման ասել է իր մեղավոր որդուն, մենք չենք կարող մեր մեղքերը թաքցնել Աստծո առաջ

«և *եթե դու չապաշխարես,* դրանք կկանգնեն, որպես վկայություն քո դեմ վերջին օրը»: (Ալմա 39.8, շեղագիրն ավելացված է): Հիսուս Քրիստոսի Քավությունը շնորհում է ապաշխարության միջոցով անհրաժեշտ մաքրության հասնելու միակ միջոցը, և այս մահկանացու կյանքը դա իրականացնելու ժամանակն է: Չնայած մեզ ուսուցանվել է, որ որոշ ապաշխարության կարելի է հասնել հոգևոր աշխարհում (տես Վարդապետություն և Ուխտեր 138.31, 33, 58), դա այնքան էլ միանշանակ չէ: Երեց Մելվին Ջ. Բալլարդն ուսուցանել է. «Ավելի հեշտ է հաղթահարել և ծառայել Տիրոջը, երբ մարմինը և հոգին համակցված են որպես մեկ: Սա է այն ժամանակը, երբ մարդիկ ավելի ներգործվող և ենթարկվող են: . . . Այս կյանքն է ապաշխարելու ժամանակը»:[6]

Երբ մենք ապաշխարենք, մենք կունենանք Տիրոջ հավաստիացումը, որ մեր մեղքերը, ներառյալ մեր արարքներն ու ցանկությունները, մաքրվելու են, և մեր ողորմած դատավորը «այլևս չի հիշի դրանք» (Վարդապետություն և Ուխտեր 58.42, տես նաև Եսայիա 1.18, Երեմիա 31.34, Եբրայեցիս 8.12, Ալմա 41.6, Հելաման 14.18–19): Մաքրված ապաշխարությամբ, մենք բոլորս էլ կարող ենք որակավորվել հավերժական կյանքի համար, որը Բենիամին թագավորը նկարագրել է որպես «բնակվել Աստծո հետ երբեք չվերջացող երջանկության վիճակում» (Մոսիա 2.41, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 14.7):

Որպես Աստծո «վերականգնման ծրագրի» մեկ այլ մաս, (Ալմա 41.2) Հարությունը կվերականգնի «բոլոր բաները . . . իրենց ճիշտ և կատարյալ կառուցվածքով» (Ալմա 40.23): Դա ներառում է մահկանացու կյանքի մեջ ձեռք բերված մեր բոլոր *ֆիզիկական* թերությունների և թուլությունների կատարելագործում, ներառյալ՝ ծնվելու, վնասվելու կամ հիվանդանալու պատճառով առաջացած թերությունները:

Արդյո՞ք այս վերականգնումը կատարելագործում է մեր բոլոր անսուրբ կամ անվերահսկելի ցանկությունները կամ հակումները: Ոչ, դա չի կարող լինել: Ժամանակակից հայտնության միջոցով մենք գիտենք, որ կդատվենք մեր *ցանկությունների* և մեր արարքների համար (տես Ալմա 41.5, Վարդապետություն և Ուխտեր 137.9) և նույնիսկ մեր *մտքերը* կմեղադրեն մեզ (տես Ալմա 12.14): Մենք չպետք է «հետաձգենք [մեր] ապաշխարության օրը» մինչև մահը, (Ալմա 34.33) քանի որ Ամուղեկն ուսուցանել է, որ այն նույն ոգին, որը տիրում է մեր մարմնին, լինի դա Տիրոջ, թե դևի ոգին, «կունենա զորություն՝ տիրելու [մեր] մարմնին այն հավերժական աշխարհում» (Ալմա 34.34): Մեր Փրկիչը պատրաստակամ է և ունի մեզ չարից մաքրագործելու զորություն: Այժմ է ժամանակը փնտրելու Նրա օգնությունը, որ ապաշխարենք մեր ամբարիշտ կամ անվայել ցանկություններից ու մտքերից և մաքուր ու պատրաստված լինենք Աստծո առաջ կանգնելու վերջին դատաստանի ժամանակ:

IV. Ողորմության բազուկները

Աստծո ծրագիրը և Նրա պատվիրանները պարփակում են Նրա սերը մեզանից յուրաքանչյուրի հանդեպ, որը «ամենաբաղձալին է բոլոր բաներից ավելի . . . և հոգու համար ամենաբերկրալին» (1 Նեփի 11.22–23): Եսայիա մարգարեն վստահեցրեց, որ երբ նույնիսկ ամբարիշտները «դառնան Տերը . . . նա կողորմե . . . [և] շատ կների» (Եսայիա 55.7): Ալման ուսուցանեց. «Ահա նա ուղարկում է մի հրավեր բոլոր մարդկանց, քանզի ողորմության բազուկները մեկնված են դեպի նրանց» (Ալմա 5.33, տես նաև 2 Նեփի 26.25–33): Հարություն առած Տերն ասել է նեփիացիներին. «Ահա, իմ ողորմության բազուկը մեկնված է դեպի ձեզ, և ով որ գա, նրան ես կընդունեմ» (3 Նեփի 9.14): Սուրբ գրությունների այս և մյուս ուսմունքներից մենք իմանում ենք, որ մեր սիրող Փրկիչը իր ձեռքերն է բացում բոլոր տղամարդկանց և կանանց ընդունելու համար այն սիրալիր պայմաններով, որոնք Նա հաստատել է՝ վայելելու Աստծո մեծագույն օրհնությունները, որոնք Նա պահել է Իր զավակների համար:[7]

Աստծո ծրագրի և Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ ես վկայում եմ «հույսի կատարյալ պայծառությամբ», որ Աստված սիրում է մեզ և մենք *կարող ենք* մաքրվել ապաշխարության գործընթացի միջոցով: Մեզ խոստացված է, որ «եթե [մենք] առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք» (2 Նեփի 31.20): Թող որ մենք բոլորս այդպես վարվենք, ես խնդրում և աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. “Come unto Jesus,” *Hymns,* no. 117.
2. Ռասսել Մ. Նելսոն, «Ապաշխարություն և դարձ», *Լիահոնա,* մայիս 2007, 102:
3. Ռասսել Մ. Նելսոն, «Զորս պարգև, որոնք Հիսուս Քրիստոսն առաջարկում է ձեզ», (2018 թվականի Առաջին Նախագահության Սուրբ Ծննդյան հոգևոր հավաք), broadcasts.ChurchofJesusChrist.org:
4. Ռասսել Մ. Նելսոն, «Մենք կարող ենք ավելի լավ գործել և ավելի լավը լինել», *Լիահոնա,* մայիս, 2019թ., 69:
5. *The Teachings of Spencer W. Kimball,* ed. Edward L. Kimball (1982), 101.
6. Melvin J. Ballard, in Melvin R. Ballard, *Melvin J. Ballard: Crusader for Righteousness* (1966), 212–13.
7. Տես Թադ Ռ. Քալիսթեր, Անսահման քավություն (2000), 27–29:



ԵՐԵՑ ԽՈՒԱՆ ՊԱԲԼՈ ՎԻԼԱՐ
Յոթանասունից

Վարժեցնելով մեր հոգևոր մկանները

Ինչպես մկանների մասին կարդալն ու սովորելը բավարար չէ մկան կառուցելու համար, այնպես էլ հավատ կառուցելիս բավարար չէ միայն կարդալ ու սովորել հավատի մասին, պետք է ավելացնել նաև գործողություն:

Ես երախտապարտ եմ մարմին ունենալու օրհնության համար, որը զարմանալի նվեր է մեր Երկնային Հորից: Մեր մարմինը կազմված է ավելի քան 600 մկաններից:[1] Մկաններն անհրաժեշտ է վարժեցնել, որպեսզի ի վիճակի լինենք կատարել մեր առօրյա գործողությունները: Մենք կարող ենք մտավոր զգալի ջանքեր թափել՝ կարդալով և սովորելով մեր մկանների մասին, բայց եթե մտածենք, որ այդպիսով մկանները կզարգանան, մեզ հիասթափություն է սպասվում: Մեր մկանները զարգանում են միայն այն ժամանակ, երբ դրանք գործի ենք դնում:

Ես սկսել եմ հասկանալ, որ հոգևոր պարզևները նույն կերպ են աշխատում: Դրանք նույնպես պետք է գործադրվեն, որպեսզի աճեն: Հավատքի հոգևոր պարզևը, օրինակ, պարզապես զգացմունք կամ տրամադրություն չէ: Դա գործողության սկզբունք է, որը հաճախ է հանդիպում սուրբ գրքերում *գործադրել* բայի հետ:[2] Ինչպես մկանների մասին կարդալն ու սովորելը բավարար չէ մկան կառուցելու համար, այնպես էլ հավատ կառուցելիս բավարար չէ միայն կարդալ ու սովորել հավատի մասին, պետք է ավելացնել նաև գործողություն:

Երբ ես 16 տարեկան էի, իմ ավագ եղբայրը՝ Իվանը, որը 22 տարեկան էր այդ ժամանակ, մի օր տուն եկավ և որոշ նորություններով կիսվեց ընտանիքի հետ: Նա որոշել էր

մկրտվել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Մեր ծնողները դրան մի քիչ թերահավատորեն նայեցին, և ես հիշում եմ, որ լավ չէի հասկանում, թե ինչ էր կատարվում: Մեկ տարի անց նա մեզ ավելի զարմացնող նորություն ասաց՝ որ որոշել էր ծառայել որպես Եկեղեցու միսիոներ, ինչը նշանակում էր, որ շուրջ երկու տարի մենք նրան չէինք տեսնելու: Ծնողներս ուրախ չէին այդ նորության համար, սակայն եղբորս մեջ ես տեսա մի հստակ վճռականություն, որը մեծացրեց իմ հիացմունքը նրա և նրա կատարած որոշման հանդեպ:

Ամիսներ անց, երբ Իվանը ծառայում էր միսիայում, ես հնարավորություն ունեցա իմ մի քանի դասընկերների հետ ծրագրել մեր արձակուրդը: Մենք ուզում էինք նշել մեր ավագ դպրոցի ավարտը և մի քանի օր անցկացնել լողափում:

Ես նամակ գրեցի իմ միսիոներ եղբորը՝ տեղեկացնելով իմ ամառային արձակուրդի ծրագրերի մասին: Պատասխան նամակով նա ասաց, որ քաղաքը, որտեղ նա ծառայում է, իմ ուղևորության ճանապարհին է: Ես որոշեցի, որ լավ կլիներ կանգ առնել այդ քաղաքում և հանդիպել նրան: Այդ ժամանակ ես չգիտեի, որ ընտանիքի անդամները չեն այցելում միսիոներներին:

Ես կատարեցի բոլոր պատրաստությունները: Հիշում եմ, որ ավտոբուսում նստած մտածում էի, թե ինչ զվարճալի ժամանակ կանցկացնեինք ես ու Իվանը միասին այդ գեղեցիկ արևոտ օրը: Մենք կնախաճաշեինք, կզրուցեինք, կխաղայինք ավազի վրա, արևային լոգանք կընդունեինք՝ ի՜նչ հրաշալի ժամանակ կանցկացնեինք:

Երբ ավտոբուսը ժամանեց կայարան, ես տեսա Իվանին մի ուրիշ երիտասարդի կողքին կանգնած, երկուսն էլ սպիտակ վերնաշապիկներով ու փողկապներով: Երբ իջա ավտոբուսից, մենք գրկախառնվեցինք, և նա ծանոթացրեց ինձ իր զուգընկերոջ հետ: Առանց բոպե կորցնելու ես եղբորս հետ կիսվեցի օրվա հետ կապված իմ ծրագրերով, բայց չգիտեի, թե Իվանն ինչ էր

ծրագրել: Նա նայեց ինձ, ժպտաց և ասաց. «Բիա՛րկե: Բայց մենք պետք է նախ որոշ գործեր անենք: Կգա՞ս մեզ հետ»: Ես համաձայնվեցի, մտածելով, որ դրանից հետո մենք բավական ժամանակ կունենանք վայելելու լողափը:

Այդ օրը, 10 ժամից ավել, եղբորս ու նրա զուգընկերոջ հետ ես քայլել եմ այդ քաղաքի փողոցներով: Ես ողջ օրը ժպտում էի մարդկանց: Ես ողջունում էի մարդկանց, ում կյանքումս առաջին անգամ էի տեսնում: Մենք զրուցում էինք բոլորի հետ, թակում օտարների դռները և այցելում այն մարդկանց, ում եղբայրս ու նրա զուգընկերը ուսուցանում էին:

Այդ այցելություններից մեկի ժամանակ եղբայրս ու նրա զուգընկերը ուսուցանում էին Հիսուս Քրիստոսի և փրկության ծրագրի մասին: Հանկարծ, Իվանը կանգ առավ ու նայեց ինձ: Ի զարմանս ինձ, նա մեղմորեն խնդրեց ինձ կիսվել ուսուցանվող նյութի վերաբերյալ իմ կարծիքով: Մենյակում լռություն տիրեց և բոլորի հայացքներն ուղղվեցին իմ կողմը: Որոշ դժվարությամբ, ես վերջապես խոսքեր գտա և կիսվեցի Փրկիչի մասին իմ զգացմունքներով: Ես չգիտեի, թե այն, ինչ ասում եմ, ճի՞շտ է, թե՝ սխալ: Եղբայրս բոլորովին չուղղեց ինձ, հակառակը՝ շնորհակալություն հայտնեց մտքերս արտահայտելու համար:

Միասին անցկացրած այդ ժամերի ընթացքում եղբայրս ու նրա զուգընկերը ոչ մի րոպե չտրամադրեցին, որ հատուկ ինձ ուսուցանեն, բայց ես ավելի շատ գիտելիք ստացա, քան նախկինում եղբորս հետ ունեցած բոլոր շփումներից: Ես տեսնում էի, թե ինչպես էր փոխվում մարդկանց դեմքի արտահայտությունը, երբ նրանք ընդունում էին հոգևոր լույսը: Ես տեսել եմ, թե ինչպես էին շատերը հույս գտնում այդ ուղերձներում, սովորել եմ ծառայել մարդկանց ու մոռանալ ինքս ինձ և իմ ցանկությունների մասին: Ես անում էի այն, ինչ Փրկիչն ասել էր. «Եթե մէկը կամենում է իմ ետևից գալ, թող իր անձն ուրանայ»:[3]

Հետադարձ հայացք գցելով, հասկանում եմ, որ իմ հավատքն աճեց այդ օրը, որովհետև եղբայրս ինձ հնարավորություն տվեց այն գործի դնել: Ես գործադրեցի այն, երբ կարդում էինք սուրբ գրություններից, փնտրում էինք մարդկանց՝ ուսուցանելու համար, վկայություն էինք բերում, ծառայում ուրիշներին և այլն: Այդ օրը ոչ մի կերպ չստացվեց արևի տակ պառկել՝ թխանալ, բայց սիրտս թխացել էր երկնային լույսից: Աչքիս նույնիսկ չէր երևում լողափի ավազահատիկը, բայց ես զգացի, թե ինչպես հավատքս աճեց մանանեխի մի փոքրիկ սերմի նման:[4] Այդ արևոտ, պայծառ օրը ես անցկացրի ոչ թե որպես զբոսաշրջիկ, այլ ձեռք բերեցի հիանալի փորձառություններ, և առանց դա գիտակցելու միսիոներ էի դարձել, չլինելով նույնիսկ Եկեղեցու անդամ:

Հոգևոր մկաններն ամրապնդելու հնարավորությունները

Ավետարանի վերականգնման շնորհիվ մենք կարող ենք հասկանալ, թե Երկնային Հայրն ինչպես է օգնում մեզ զարգացնել մեր հոգևոր պարգևները: Ավելի հավանական է, որ Նա մեզ հնարավորություններ կտա զարգացնելու այդ պարգևները, քան պարզապես կշնորհի դրանք, առանց մեր կողմից հոգևոր ու ֆիզիկական ջանքերի գործադրման: Եթե ներդաշնակ լինենք Նրա Հոգու հետ, մենք կսովորենք բացահայտել այդ հնարավորությունները և ապա՝ գործել համաձայն դրանց:

Եթե ձգտում ենք ավելի համբերատար լինել, մենք պետք է փորձենք դա անել, մինչ կտեսնենք արդյունքը: Եթե ուզում ենք ավելի շատ սեր ունենալ մեր մերձավորի հանդեպ, մենք կարող ենք խթանել դա, Եկեղեցում նստելով մի նորեկի կողքին: Նույնը հավատքի դեպքում է՝ երբ կասկածներ են սողոսկում մեր միտքը, առաջ շարժվելու համար պահանջվում է վստահել Տիրոջ խոստումներին: Այսպես ենք մենք վարժեցնում հոգևոր մկանները և դարձնում դրանք ուժի աղբյուր մեր կյանքում:

Հավանաբար, հեշտ չի լինի սկզբում, նույնիսկ, կարող է շատ դժվար լինել: Մորոնի մարգարեի միջոցով ասված Տիրոջ խոսքերը մեզ են վերաբերում այսօր. «Եվ եթե մարդիկ գան ինձ մոտ, ես նրանց ցույց կտամ իրենց թուլությունը: Ես մարդկանց թուլություն եմ տալիս, որպեսզի նրանք խոնարհ լինեն. և իմ շնորհը բավական է բոլոր մարդկանց համար, ովքեր իրենց խոնարհեցնում են իմ առջև. քանզի, եթե նրանք խոնարհեցնեն իրենց իմ առջև, և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ»:[5]

Ես երախտապարտ եմ եղբորս՝ Իվանին, ով ոչ միայն ինձ հետ կիսվեց ավետարանով, այլև անուղղակիորեն հրավիրեց ինձ ապրել դրանով ու ճանաչել իմ թուլությունները: Նա օգնեց ինձ ընդունել Վարդապետի «Ե՛կ, հետեւիր ինձ» հրավերը՝[6] քայլել այնպես, ինչպես Փրկիչն է քայլել, փնտրել այնպես, ինչպես Փրկիչն է փնտրել և սիրել այնպես, ինչպես Փրկիչը մեզ է սիրում: Իմ միսիոներական փորձից ամիսներ անց ես որոշեցի մկրտվել և ծառայել իմ սեփական միսիան:

Եկեք ընդունենք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հրավերը և գանք դեպի Փրկիչը,[7] բացահայտելով այն մկանները, որոնք առավել կարիք ունեն հոգևոր վարժությունների, և

սկսենք գործի դնել դրանք: Սա երկար տարածության մրցավազք է՝ մարաթոն, ոչ թե կարճ վազք, այնպես որ չմոռանանք այն փոքր, բայց մշտական հոգևոր վարժությունները, որոնք կուժեղացնեն այդ կարևոր հոգևոր մկանները: Եթե ցանկանում ենք ավելացնել մեր հավատքն, ուրեմն, եկեք կատարենք բաներ, որոնք հավատք են պահանջում:

Ես վկայում եմ, որ մենք սիրող Երկնային Հոր զավակներն ենք: Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, սիրում է մեզ: Նա եկել էր այս աշխարհ, որպեսզի ցույց տար մեզ ճանապարհը, այնուհետև, կամավոր տվել էր Իր կյանքը՝ մեզ հույս տալու համար: Փրկիչը հրավիրում է մեզ հետևել Իր կատարյալ օրինակին, գործադրել մեր հավատքն Իր և Իր Քավության հանդեպ և կատարելագործել բոլոր հոգևոր պարգևները, որոնցով մենք օրհնվում ենք: Նա է ճանապարհը: Սա է իմ վկայությունը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Encyclopedia Britannica,* s.v. “Human Muscle System,” last modified Apr. 26, 2018, britannica.com/science/human-muscle-system.
2. Տես, օրինակ, Ալմա 5.15, 32.27, 34.17, Մորոնի 7.25, Վարդապետություն և Ուխտեր 44.2:
3. Մատթեոս 16.24
4. Տես Ղուկաս 17.6:
5. Եթեր 12.27
6. Ղուկաս 18.22
7. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Եկեք առաջ շարժվենք», *Լիահոնա,* մայիս 2018թ., 118-19:

ԵՐԵՑ ՋԵՐԻԹ Վ. ԳՈՆԳ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Բարի Հովիվ, Աստծո Գառ

Հիսուս Քրիստոսը կանչում է մեզ Իր ձայնով և Իր անունով: Նա որոնում է ու հավաքում մեզ: Նա սովորեցնում է, թե ինչպես սպասավորենք սիրով:

Միրելի եղբայրնե՛ր և քույրե՛ր, երբևէ քնե՞լ եք դժվարությամբ և փորձել եք հաշվել երևակայական ոչխարներ: Երբ փափկամազ ոչխարները ցատկում են ցանկապատի վրայով, դուք հաշվում եք. 1, 2, 3, . . . 245, 246, . . . 657, 658 . . .[1]

Իմ դեպքում ոչխարներ հաշվելը չի օգնում: Ես անհանգստանում եմ նրանցից մեկի բացակայությունից կամ մեկին կորցնելուց, և դա ինձ արթուն է պահում:

Հովիվ տղայի հետ, ով դարձավ թագավոր, մենք հայտարարում ենք.

«Տէրն է իմ հովիւը, եւ կարոտութիւն չեմ ունենալ:

Նա կանաչ տեղերում հանգստացնում է ինձ, եւ հանդարտ ջրերի մոտ՝ տանում է ինձ:

[Նա վերականգնում է իմ հոգին:]»:[2]

Այս Զատիկին մենք փառաբանում ենք Բարի Հովիվին, ով նաև Աստծո Գառն է: Նրա աստվածային բոլոր տիտղոսներից ոչ մեկն այդքան քնքուշ և ավելի խոսուն չէ: Մենք շատ բան ենք սովորումորպես Բարի Հովիվ Իր վերաբերյալ Փրկիչի վկայակոչումներից և Իր վերաբերյալ որպես Աստծո Գառ՝ մարգարեական վկայություններից:

Այդ դերերն ու խորհրդանիշները կատարելապես լրացնում են միմյանց՝ ո՞վ ավելի լավ կսատարի յուրաքանչյուր թանկարժեք գառին, քան Բարի Հովիվը, և ո՞վ ավելի լավ Բարի Հովիվ կլինի մեզ համար, քան Աստծո գառը:

«Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուաւ» և Աստծո Միածին Որդին վայր դրեց Իր կյանքը Իր Հոր հանդեպ կամավոր հնազանդությամբ:[3] Հիսուսը վկայում է. «Ես եմ բարի հովիւը, և ես իմիններին ճանաչում եմ. . . . իմ անձը դնում եմ ոչխարների համար»:[4] Քրիստոսը զորություն ուներ վայր դնելու Իր կյանքը և զորություն՝ կրկին վերցնելու այն:[5] Իր Հոր հետ միասին, մեր Փրկիչը յուրահատուկ ձևով օրհնում է մեզ, թե՛ որպես մեր Բարի Հովիվ, թե՛ որպես Աստծո Գառ:

Որպես Բարի Հովիվ, Հիսուս Քրիստոսը կանչում է մեզ Իր ձայնով և Իր անունով: Նա որոնում է ու հավաքում մեզ: Նա սովորեցնում է, թե ինչպես սպասավորենք սիրով: Եկեք քննարկենք այդ երեք թեմաները, սկսելով Իր ձայնով և Իր անունով մեզ կանչելուց:

Առաջինը, մեր Բարի Հովիվը «կանչում է իր սեփական ոչխարներին անունով: . . . Նրանք ճանաչում են նրա ձայնը»:[6] Եվ «իր իսկ անունով է նա կանչում ձեզ, որն անունն է Քրիստոսի»:[7] Երբ ձգտում ենք անկեղծ միտումով հետևել Հիսուս Քրիստոսին, ոգեշնչում է գալիս «բարիք անել և սիրել Աստծուն և ծառայել Նրան»:[8] Երբ ուսումնասիրում ենք, խորհրդածում և աղոթում, երբ կանոնավոր նորոգում ենք հաղորդության և տաճարային ուխտերը, և երբ հրավիրում բոլորին գալ դեպի Նրա ավետարանը և արարողությունները, մենք ականջ ենք դնում Նրա ձայնին:

Մեր օրերում Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խորհուրդ է տալիս մեզ կոչել վերականգնված Եկեղեցին այն անունով, որը Հիսուս Քրիստոսն է հայտնել՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի:[9] Տերն ասել է. «Հետևաբար, ինչ որ դուք անեք, դուք դա պիտի անեք *իմ անունով,* հետևաբար, դուք պիտի կոչեք եկեղեցին *իմ անունով.* և դուք պիտի կանչեք առ Հայրն *իմ անունով,* որպեսզի նա օրհնի եկեղեցին՝ հանուն ինձ»:[10] Ողջ աշխարհում, մեր սրտերում և տներում, մենք կանչում ենք Հորը Հիսուս Քրիստոսի անունով: Մենք երախտապարտ ենք մեր տնակենտրոն, Եկեղեցուց աջակցվող երկրպագության, ավետարանի ուսումնասիրության և ընտանեկան օգտակար միջոցառումների այդպիսի շռայլ օրհնության համար:

Երկրորդը, մեր Բարի Հովիվը որոնում է և հավաքում մեզ Իր մեկ փարախում: Նա հարցնում է. «Ձեզանից ո՞վ է այն մարդը, որ հարիւր ոչխար ունենայ, և նորանցից մէկը կորցնէ. չի՞ թողիլ իննսուն և ինը անապատումը, և այն կորածի ետեւից գնալ, *մինչեւ որ գտնէ նորան*:[11]

Մեր Փրկիչը հասնում է մեկին և իննսունիններին, հաճախ միևնույն ժամանակ: Երբ սպասավորում ենք, մենք ընդունում ենք իննսունիններին, ովքեր կայուն են և անսասան նույնիսկ այն ժամանակ, երբ թախծում ենք այն մեկի համար, ով շեղվել է: Մեր Տերը որոնում է և ազատում «մեզ բոլոր տեղերից»,[12] «երկրի չորս ծայրերից»:[13] Նա հավաքում է մեզ սուրբ ուխտի համաձայն և Իր քավիչ արյամբ:[14]

Հիսուսն ասաց Իր Նոր Կտակարանի աշակերտներին. «Ես ուրիշ ոչխարներ էլ ունիմ, որ այս գաւիթիցը չեն»:[15] Ամերիկա մայրցամաքում հարություն առած Տերը վկայեց Լեքիի ուխտի ժողովրդին. «Դուք իմ ոչխարներն եք»:[16] Եվ Հիսուսն ասաց, որ դեռ ուրիշ ոչխարներ էլ կլսեն Իր ձայնը:[17] Ինչպիսի՜ օրհնություն է Մորմոնի Գիրքը՝ որպես մեկ ապացույց ևս, որ վկայում է Հիսուս Քրիստոսի ձայնի մասին:

Քրիստոսը հրավիրում է Եկեղեցուն ընդունել բոլորին, ովքեր լսում են Նրա ձայնը[18] և պահում Նրա պատվիրանները: Քրիստոսի վարդապետությունը ներառում է ջրով և կրակով ու Սուրբ Հոգով մկրտությունը:[19] Նեփիին հարցնում է. «Եվ ահա, եթե Աստծո Գառը, լինելով սուրբ, պիտի կարիք ունենար մկրտվել ջրով՝ կատարելու ամեն արդարություն, Օ՜, ուրեմն՝ լինելով անսուրբ, որքա՜ն ավելի շատ կարիք ունենք մենք՝ մկրտվելու, այո՛, հենց ջրով»:[20]

Այսօր մեր Փրկիչը կամենում է, որ այն, ինչ անենք և այն, ինչ դառնանք, հրավիրի ուրիշներին գալ և հետևել Իրեն: Եկեք և գտեք սեր, բժշկություն, կապվածություն և Նրան պատկանելու ուխտ՝ ներառյալ Աստծո սուրբ տաճարում, որտեղ փրկության սրբազան արարողությունները կարող են օրհնել ընտանիքի բոլոր անդամներին, այսպիսով հավաքելով Իսրայելը վարագույրի երկու կողմերում:[21]

Երրորդը, որպես «Իսրայելի Հովիվը»,[22] Հիսուս Քրիստոսը օրինակ է հանդիսանում, թե ինչպես են հովիվները Իսրայելում սիրով սպասավորում: Երբ մեր Տերը հարցնում է՝ արդյոքե սիրում ենք Իրեն, ինչպես Նա արեց Սիմոն Պետրոսի հետ, մեր Փրկիչն աղերսում է. «Արածեցրու իմ

գառները: . . . Արածեցրու իմ ոչխարները: . . . Արածեցրու իմ ոչխարները»:[23] Տերը խոստանում է, որ երբ Նրա հովիվները արածեցնեն Իր գառները և ոչխարները, նրանք ովքեր Նրա հոտում են «նորանք այլ եւս պիտի չվախենան եւ չզարհուրեն, եւ պիտի չպակասեն»:[24]

Մեր Բարի Հովիվը զգուշացնում է, որ Իսրայելի հովիվները չպիտի նիրհեն,[25] ոչ էլ ցրեն կամ ստիպեն ոչխարներին շեղվել,[26] ոչ էլ մեր իսկ շահի համար փնտրենք մեր սեփական ճանապարհը:[27] Աստծո հովիվները պիտի զորացնեն, բժշկեն, կապեն, այն ինչ կոտրված է, կրկին բերեն այն, ինչ հեռու է քշվել, որոնեն այն, ինչ կորել է:[28]

Տերը զգուշացնում է վարձկաններից, ովքեր «չեն հոգում ոչխարների մասին»[29] և «կեղծ մարգարեներից, ովքեր գալիս են ձեզ մոտ ոչխարների հանդերձներով, բայց ներսից նրանք հոշոտող գայլեր են»:[30]

Մեր Բարի Հովիվն ուրախանում է, երբ մենք գործադրում ենք անձնական բարոյական ազատ կամքը կանխամտածված և հավատքով: Նրանք, ովքեր Նրա փարախում են, նայում են դեպի մեր Փրկիչը երախտագիտությամբ Նրա քավիչ զոհաբերության համար: Մենք ուխտում ենք հետևել Նրան ոչ թե անտարբեր, կուրորեն կամ «ամաչկոտ», այլ փոխարենը ցանկանալով մեր ողջ սրտով ու մտքով սիրել Աստծուն և մեր մերձավորին, կրել մեկս մյուսի բեռները և ուրախանալ մեկս մյուսի ուրախություններով: Ինչպես Քրիստոսը պատրաստակամ նվիրաբերեց Իր կամքը Հոր կամքին, այնպես էլ մենք ակնածանքով մեզ վրա ենք վերցնում Նրա անունը: Մենք ուրախությամբ ձգտում ենք միանալ Աստծո բոլոր զավակներին հավաքելու և սպասավորելու Նրա աշխատանքին:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, Հիսուս Քրիստոսն է մեր կատարյալ Բարի Հովիվը: Քանի որ Նա վար է դրել Իր կյանքը մեզ համար, և այժմ փառահեղորեն հարություն է առել, Հիսուս Քրիստոսը նաև Աստծո կատարյալ Գառն է:[31]

Աստծո զոհաբերվող Գառը նախանշված էր սկզբից ի վեր: Հրեշտակն ասաց Ադամին, որ նրա զոհաբերությունը «Հոր Միածնի զոհաբերության նմանությունն է», որը հրավիրում է մեզ «ապաշխարել և կանչել առ Աստված առհավետ՝ Որդու անունով»:[32]

Հայր Աբրահամը, ով ուխտի օրհնություններ հաստատեց երկրի բոլոր ազգերի համար, ճաշակեց, թե ինչ էր նշանակում զոհաբերել իր ծնած որդուն:

«Եւ Իսահակը խօսեց իր հայր Աբրահամի հետ եւ ասեց. Հայր իմ. Եւ նա ասեց. Ահա ես, որդիս: «Եւ նա ասեց. Ահա կրակը եւ փայտը, բայց ո՞ւր է գառը . . .

Եվ Աբրահամն ասեց. Աստուած կը տեսնէ իր գառը, որդեակս»:[33]

Առաքյալներն ու մարգարեները կանխատեսեցին և ուրախացան Աստծո Գառի նախասահմանված առաքելությամբ: Հովհաննեսը հին աշխարհում և Նեփիին նոր աշխարհում վկայեցին «Աստծո Գառի»,[34] «այո, հիրավի, հավերժական Հոր Որդու[,] . . . աշխարհի Քավիչի» մասին:[35]

Աբինադին վկայեց Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերության մասին. «Մենք բոլորս ոչխարների նման մոլորվեցինք. մենք՝ յուրաքանչյուրս դարձանք դեպի մեր սեփական ճանապարհը. և Տերը նրա վրա դրեց մեր բոլորի [անօրինությունները]»:[36] Ալման կոչեց Աստծո Որդու մեծ և վերջին զոհաբերությունը «մի բան, որն ավելի մեծ կարևորության է, քան

մնացած բոլորը»: Ալման խրախուսում է. «Ունեցեք հավատք առ Աստծո Գառը», «եկեք և մի վախեցեք»:[37]

Իմ լավ ծանոթուհիներից մեկը կիսվեց, թե ինչպես նա ձեռք բերեց իր թանկարժեք վկայությունը Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Նա մեծացել էր հավատալով, որ մեղքը միշտ բերում է մեծ պատիժ, որը մենք միայնակ ենք տանում: Նա աղերսել էր Աստծուն՝ հասկանալու աստվածային ներման հնարավորության մասին: Նա աղոթել էր, որ հասկանար և իմանար, թե ինչպես Հիսուս Քրիստոսը կարող է ներել նրանց, ովքեր ապաշխարում են, ինչպես ողորմածությունը կարող է բավարարել արդարադատությանը:

Մի օր նա ստացավ իր աղոթքի պատասխանը հոգևորապես փոխակերպող փորձառության ընթացքում: Մի հանդունգն երիտասարդ դուրս վազեց մթերային խանութից տանելով երկու պայուսակ գողացած ուտելիք: Նա վազեց բանուկ փողոցով, իսկ նրան հետապնդում էր խանութի տնօրենը, ով բռնեց նրան և սկսեց բղավել ու կռվել: Վախեցած երիտասարդի՝ որպես գողի հանդեպ դատապարտություն զգալու փոխարեն, իմ ծանոթուհին անսպասելիորեն լցվեց մեծ կարեկցանքով նրա հանդեպ: Առանց վախենալու կամ մտահոգվելու իր սեփական անվտանգության համար, նա ուղիղ քայլեց դեպի երկու վիճաբանող տղամարդիկ: Նա անսպասելի ասաց. «Ես կվճարեմ ուտելիքի համար: Խնդրում եմ թողեք, որ գնա: Խնդրում եմ թույլ տվեք վճարել ուտելիքի համար»:

Հուշում ստանալով Սուրբ Հոգուց և լցված մի սիրով, որը Նա երբեք չէր զգացել նախկինում, իմ ծանոթուհին ասաց. «Այն ամենը, ինչ ցանկանում էի անել, երիտասարդին օգնելնու փրկելն էր»: Իմ ծանոթուհին ասաց, որ ինքը սկսեց հասկանալ Հիսուս Քրիստոսին և նրա Քավությունը, թե ինչպես և ինչո՞ւ Հիսուս Քրիստոսը մաքուր և կատարյալ սիրով կամեցավ զոհաբերվել, որպեսզի լիներ իր Փրկիչն ու Քավիչը, և ինչու էր ինքը կամենում, որ Նա լիներ:[38]

Զարմանալի չէ, որ մենք երգում ենք.

Տես, Բարի Հովիվը փնտրում է,
Փնտրում կորած գառներին,
Ներս բերելով նրանց ցնծությամբ,
Փրկված այդպիսի անսահման
զնով:[39]

Որպես Աստծո Գառ, մեր Փրկիչը գիտի՝ երբ ենք զգում միայնակ, նվաստացած, անվստահ կամ վախեցած: Տեսիլքում Նեփին տեսավ Աստծո Գառի զորությունը՝ «Գառի եկեղեցու սրբերի վրա և Տիրոջ ուխտյալ ժողովրդի վրա [իջնելիս]»: Չնայած «ցրված ողջ երկրի երեսին, . . . նրանք զինված էին արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով»:[40]

Հույսի և մխիթարության այս խոստումը ներառում է մեր օրը:

Արդյո՞ք դուք Եկեղեցու միակ անդամն եք ձեր ընտանիքում, դպրոցում, աշխատավայրում, կամ համայնքում: Արդյո՞ք ձեր ճյուղը երբեմն փոքր է թվում կամ մեկուսացած: Արդյո՞ք նոր վայր եք տեղափոխվել՝ անծանոթ լեզվով կամ ավանդույթներով: Գուցե ձեր կյանքի պայմաններն են փոխվել և բանները, որոնք երբեք հնարավոր չէիք համարում, այժմ հակադրվում են ձեզ: Ովքեր էլ լինենք, ինչպիսին էլ լինեն մեր պայմանները, մեր Փրկիչը հավաստիացնում է մեզ Եսայիայի խոսքերով. «[Նա Իր բազկով է] ժողովելու գառնուկներին, եւ իր գրկումը կրելու է նորանց, եւ կամաց քշելու է ծիծ տուողներին»:[41]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մեր Բարի Հովիվը կանչում է մեզ Իր ձայնով և Իր անունով: Նա որոնում է, հավաքում և գալիս Իր ժողովրդի մոտ: Իր ապրող մարգարեի և մեզանից յուրաքանչյուրի միջոցով Նա հրավիրում է բոլորին գտնել խաղաղություն, նպատակ, բժշկություն, ուրախություն Իր վերականգնված ավետարանի և Նրա ուխտի արահետում: Օրինակով Նա սովորեցնում է Իսրայելի հովիվներին՝ սպասավորել Իր սիրով:

Որպես Աստծո Գառ՝ Հիսուսի աստվածային առաքելությունը նախասահմանված էր և առաքյալների ու մարգարեների կողմից գովաբանված: Նրա քավությունը անսահման և հավերժական ու առանցքային է երջանկության ծրագրի և արարչագործության նպատակի համար: Նա հավաստիացնում է մեզ, որ Նա կրում է մեզ Իր սրտին մոտիկ:

Սիրելի եղբայրնե՛ր և քույրե՛ր, թող որ մենք ցանկանանք «Աստծո և Գառի խոնարհ հետևորդներ լինել»,[42] գուցե մի օր մեր անունները գրվեն Գառի կյանքի գրքում,[43] երգելու Գառի երգը,[44] հրավիրվելու Գառի ընթրիքին:[45]

Որպես Հովիվ և Գառ, Նա կանչում է. Եկեք կրկին «դեպի . . . [ձեր] Քավիչի, . . . [ձեր] մեծ ու ճշմարիտ հովիվի ճիշտ գիտելիքը»:[46] Նա խոստանում է, որ «նրա շնորհով [մենք] կարող ենք կատարյալ [դառնալ] Քրիստոսում»:[47]

Այս Զատիկի ընթացքում, մենք գովաբանում ենք Նրան.

«Արժանի է Գառը»:[48]

Օվսաննա Աստծուն ու Գառին»:[49]

Ես վկայում եմ Նրա մասին՝ մեր կատարյալ Բարի Հովիվի, Աստծո կատարյալ Գառի մասին: Նա կանչում է մեզ մեր անունով, Նրա անունով, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի սրբազան և սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մի հանրաճանաչ երգ ասում է.
   Երբ անհանգիստ եմ և չեմ կարողանում քնել,
   Ես հաշվում եմ իմ օրհնությունները՝
   ոչխարների փոխարեն:
   Եվ ես քնով եմ անցնում՝ հաշվելով
   օրհնություններս:
   (Իրվինգ Բեռլին, «Ես հաշվում եմ օրհնություններս ոչխարների փոխարեն» [1952])
2. Սաղմոս 23.1-3
3. Հովհաննես 3.16
4. Հովհաննես 10.11
5. Տես Հովհաննես 10.15, 17-18:
6. Հովհաննես 10.3-4
7. Ալմա 5.38, տես նաև Ալմա 5.37, 39, 59–60
8. Տես Մորոնի 7.13, Վարդապետություն և Ուխտեր 8.2-3:
9. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Եկեղեցու ճիշտ անունը», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 87-89:
10. 3 Նեփի 27.7, շեշտադրումն ավելացված է:
11. Ղուկաս 15.4, շեշտադրումն ավելացված է, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 18.15:
12. Եզեկիել 34.12, տես նաև Երեմիա 31.10, Եզեկիել 34.6, 11–14, Միքիա 5.8, Մատթեոս 10.6, 15.24: Ցրելու վերաբերյալ այդ մարգարեությունները և ուխտով հավաքման մարգարեությունները ու խոստումները մարգարեների հետևողական թեման է, ներառյալ՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը:
13. 1 Նեփի 22.25
14. Տես Եբրայեցիս 13.20:
15. Հովհաննես 10.16, տես նաև 3 Նեփի 15.21, 16.1, 3, Վարդապետություն և Ուխտեր 10.59–60:
16. 3 Նեփի 15.24, տես նաև 3 Նեփի 15.17, 21:
17. Տես 3 Նեփի 16.1, 3, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 10.59–60:
18. Տես Մոսիա 26.21:
19. Տես 2 Նեփի 31.13-14, 21:
20. 2 Նեփի 31.5, տես նաև Ալմա 7.14:
21. Տես Մաղաքիա 4.5–6, Հովհաննես 15.9–13,, Մոսիա 25.18, Հելաման 11.21, տես նաև Ռասսել Մ. Նելսոն, «Իսրայելի Հույսը» (համաշխարհային հոգևոր հավաք, հունիս 3, 2018), HopeofIsrael.ChurchofJesusChrist.org, Ռասսել Մ. Նելսոն, «Ցրված Իսրայելի հավաքումը», *Լիահոնա,* նոյ. 2006, 79–82:
22. Սաղմոս 80.1
23. Հովհաննես 21.15–17, տես նաև ամբողջ գլուխը:
24. Երեմիա 23.4:
25. Տես Նաում 3.18:
26. Տես Երեմիա 23.1, 50.6, 44:

ԵՐԵՑ ԴԵՅՎԻԴ Ա. ԲԵԴՆԱՐ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Պատրաստվել ստանալու ամեն անհրաժեշտ բան

Օրհնությունները կգան, երբ ձգտենք կատարել մեր անհատական պատասխանատվությունը՝ սովորել և սիրել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ծրագրերն ու միջոցառումները դառնում են ավելի տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող, ինչի մասին վկայում են վերջին գերագույն համաժողովներում հայտարարված մի շարք փոփոխությունները: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը մեզ ասել է. «Սպասվում են ավելի շատ փոփոխություններ: . . . Ընդունեք ձեր վիտամինները: Լավ հանգստացեք: Հետաքրքիր է լինելու»:[1]

Ես աղոթում եմ և հրավիրում Սուրբ Հոգու օգնությունը, երբ մենք միասին դիտարկում ենք Տիրոջ վերականգնված Եկեղեցու այս շարունակական ճշգրտումների հիմնական գործոնները:

Տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող ավետարանի ուսումնասիրություն

Վերջերս տեղի ունեցած քահանայության ղեկավարների համաժողովում ես և Երեց Քրեյգ Ք. Քրիսթենսենը

27. Տես Եսայիա 56.11, Եզեկիել 34.2–6:
28. Տես Եզեկիել 34.2-6:
29. Հովհաննես 10.13
30. 3 Նեփի 14.15, տես նաև Մատթեոս 7.15, Ալմա 5.60:
31. Տես 2 Նեփի 9.10-12: Հաղթահարելով ֆիզիկական մահը և հոգևոր առանձնացումը, Աստծո Գառը հնարավոր է դարձնում բոլորի հավաքումը, այսպիսով ժամանակի և հավերժության մեջ կա մեկ Հովիվ:
32. Մովսես 5.7–8
33. Ծննդոց 22.7-8, տես նաև Հակոբ 4.5:
34. Հովհաննես 1.29, 1 Նեփի 11.21
35. 1 Նեփի 11.21, 27
36. Մոսիա 14.6, տես նաև Եսայիա 53.6:
37. Ալմա 7.7, 14-15
38. Conversation with Pornthip “Tippy” Coyle, Feb. 2019, used with permission.
39. Dear to the Heart of the Shepherd», *Hymns,* no. 221: Այլ հիմներ, որոնք լուսաբանում են մեր Հովիվին և Նրա ոչխարներին, ներառում են հետևյալը. «Տերը կպատրաստի իմ արոտավայրը» *Օրհնեցք,* հ. 109:
Տերը կպատրաստի իմ արոտավայրը
Եվ կարածեցնի հովվի խնամքով:
Նրա ներկայությունը կապահովի իմ կարիքները,
Եվ կիսկի ինձ զգուշավոր աչքով:
Կեսօրվա քայլերիս կհետևի նա
Եվ բոլոր իմ լուռ կեսգիշերվա ժամերը կպաշտպանի:
«Օգնիր ինձ ուսուցանել ոգեշնչումով», *Hymns,* no. 281:
Օգնիր գտնել քո թափառող գառներին,
Օգնիր բերել նրանց քո պահոցը:
Տեր, ինձ սովորեցրու հովիվ լինել,
Հայր, օգնիր ինձ արածեցնել քո ոչխարներին:
«Եկեք բոլոր Աստծո որդիներ», *Hymns,* no. 322:
Վերջին օրերի աշխատանքը սկսվել է,
Հավաքել ցրված Իսրայելը
Եվ բերել նրանց Սիոն գովերգելու Գառին:
Եկեք, դուք բոլոր ցրված ոչխարներ, և լսեք ձեր Հովիվին:
40. 1 Նեփի 14.14, տես նաև 1 Նեփի 13 .35, 37. «Պարզ և արժեքավոր [գրվածքներ] . . . ի հայտ կգան . . . Գառի պարգևով և զորությամբ: . . . Եթե [մենք] համբերենք մինչև վերջ, . . . [մենք] կփրկվենք Գառի հավիտենական արքայությունում:
41. Եսայիա 40.11
42. Հելաման 6.5
43. Տես Հայտնություն 21.27:
44. Տես Հայտնություն 15.3, Վարդապետություն և Ուխտեր 133.56:
45. Տես Հայտնություն 19.9, Վարդապետություն և Ուխտեր 58.11, տես նաև Հայտնություն 7.17. «Գառը . . . կհովուէ նորանց եւ կառաջնորդէ նորանց դէպի կենդանի ջրերի աղբիւրներ. եւ Աստուած կսրբէ ամեն արտասուքը նորանց աչքերիցը», Հայտնություն 22.1. Մի «մաքուր գետ, կենդանի ջրի ակնվանու նման փայլուն, որ դուրս էր գալիս Աստուծոյ եւ Գառի աթոռիցը»:
46. Հելաման 15.13
47. Տես Մորոնի 10.32–33:
48. Հայտնություն 5.12
49. Վարդապետություն և Ուխտեր 109.79

զուգընկերներ էինք, և նա երկու պարզ հարցերի օգնությամբ շեշտեց տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող սկզբունքին անցնելու կարևորությունը: Նա առաջարկեց, որ փոխանակ Եկեղեցու կիրակնօրյա ժողովներից տուն վերադառնալիս հարցնենք. «Այսօր Եկեղեցում ի՞նչ եք սովորել Փրկիչի և Նրա ավետարանի մասին», ճիշտ կլինի, որ Եկեղեցու ժողովների ժամանակ հարցնենք. «Այս շաբաթ ի՞նչ եք սովորել Փրկիչի և Նրա ավետարանի մասին ձեր տանը»: Հանգստության օրվա պատշաճ երկրպագությունը, նոր ուսումնական ծրագիրը և ժողովների ճշգրտված ժամանակացույցը մեզ կօգնեն սովորել ավետարանն ինչպես մեր տներում, այնպես էլ՝ Եկեղեցում:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու յուրաքանչյուր անդամը կրում է անձնական պատասխանատվություն՝ սովորել Տիրոջ ուսմունքները, ապրել ըստ դրանց և պատշաճ իշխանությամբ ստանալ փրկության ու վեհացման արարողությունները: Մենք չպետք է ակնկալենք, որ Եկեղեցին որպես կազմակերպություն ուսուցանի կամ պատմի մեզ այն ամենը, ինչ մենք պետք է իմանանք և անենք, որպեսզի նվիրյալ աշակերտ դառնանք և քաջաբար համբերենք մինչև վերջ:[2] Այլ դա մեր անձնական պատասխանատվությունն է՝ սովորել այն, ինչ պետք է սովորենք, ապրել այնպես, ինչպես գիտենք, որ պետք է ապրենք, և դառնալ այնպիսին, ինչպիսին Վարդապետն է ցանկանում, որ դառնանք: Սովորելու, ապրելու և այդպիսին դառնալու լավագույն միջավայրը մեր տներն են:

Մանուկ հասակում Ջոզեֆ Սմիթն Աստծո մասին լսեց իր ընտանիքից: Աստծո կամքն իմանալու ցանկությունը ստիպեց Ջոզեֆին որոնել ճշմարտությունը քրիստոնեական տարբեր դավանանքներում, ջանասիրաբար խորհել սուրբ գրությունների շուրջ և անկեղծորեն աղոթել Աստծուն: Այն բանից հետո, երբ Սրբազան Պուրակում պատանի Ջոզեֆ Սմիթին հայտնվեցին Հայրն ու Որդին, նա տուն վերադարձավ և առաջինը խոսեց մոր հետ: Երբ նա «հակվել [էր] բուխարուն, մայրը[ը] հարցրեց, թե ինչ է պատահել: [Ջոզեֆը պատասխանեց]. «Ոչինչ, ամեն ինչ լավ է, ես լավ եմ»: Այնուհետև, [նա] ասաց մորը[ը]. «Ինձ հայտնի է դարձել»:[3] Ջոզեֆի փորձառությունը մի հզոր օրինակ է, որին մեզանից յուրաքանչյուրը պետք է հետևի: Մենք նույնպես պետք է անձամբ իմանանք:

Երկնային Հոր համապարփակ ծրագրի նպատակն այն է, որ Իր զավակներն ավելի նմանվեն Իրեն: Հետևաբար, Նա մեզ հնարավորություն է տալիս զարգանալու և առաջադիմելու: Ճշմարտությունը սովորելու և ըստ դրա ապրելու պարտավորվածությունը գնալով ավելի կարևոր է դառնում աշխարհում, որը «խառնաշփոթի» մեջ է[4] և առավել, քան երբևէ մոլորված ու չարացած է: Մենք չենք կարող ակնկալել, որ պարզապես այցելելով Եկեղեցու ժողովներին և մասնակցելով ծրագրերին, կստանանք ողջ հոգևոր կրթությունն ու պաշտպանությունը, որոնք մեզ հնարավորություն կտան «հակառակ կենալ չարութեան օրումը»:[5]

«Ծնողները սրբազան պարտականություն ունեն դաստիարակել իրենց երեխաներին սիրո և արդարակեցության մեջ»:[6] Եկեղեցու ոգեշնչված ղեկավարները, ուսուցիչներն ու միջոցառումները սատարում են հոգևորապես աճելու անհատների և ընտանիքների ջանքերին: Եվ չնայած մենք բոլորս օգնության կարիք ունենք ուխտի ճանապարհով առաջ գնալիս, հոգևոր ուժի և տոկունության զարգացման հիմնական պատասխանատվությունը յուրաքանչյուրիս վրա է:

Հիշենք, թե ինչպես Նեփին՝ մարգարե Լեքիի որդին, ցանկացավ Սուրբ Հոգու զորությամբ անձամբ տեսնել, լսել և իմանալ այն բաները, որոնք նրա հայրն էր իմացել կյանքի ծառի տեսիլքը տեսնելով: Նեփին կարիք ուներ և օրհնված էր երիտասարդ հասակում իր «լավ ծնողների» օրինակով և ուսմունքներով:[7] Այնուամենայնիվ, Ջոզեֆ Սմիթի նման նա ձգտում էր անձամբ սովորել և գիտելիք ունենալ:

Եթե Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված ավետարանի մասին իմ և ձեր գիտելիքը սահմանափակվում է նրանով, ինչ ուրիշներն են ուսուցանում կամ ասում մեզ, ապա Նրա և վերջին օրերի Նրա փառահեղ գործի մասին մեր վկայության հիմքը կառուցված է ավազի վրա:[8] Մենք չենք կարող բացառապես հենվել այլ մարդկանց ունեցած լույսի և գիտելիքի վրա կամ վարձակալել դա նրանցից, նույնիսկ այն մարդկանց, ում մենք սիրում և վստահում ենք:

Նշանակալից է, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ յուրաքանչյուր վերջին օրերի սուրբ պետք է անձամբ հասկանա «աշխարհ գալու Աստծո ծրագրերն ու նպատակները մեր համար»:[9]

«Կարո՞ղ ենք կարդալ և հասկանալ այն ամենն, ինչ Ադամի օրերից գրվել է Աստծո հետ մարդու և հրեշտակների հարաբերության ապագա վիճակի մասին: Մենք շատ քիչ բան պետք է իմանանք այդ մասին: Ուրիշների փորձառությունների

մասին կարդալը կամ *նրանց* տրված հայտնությունը երբեք չի կարող տալ *մեզ* բազմակողմանի հեռանկար մեր վիճակի և Աստծո հետ մեր իսկական հարաբերության մասին: *Այս բաների մասին գիտելիքը կարող է ձեռք բերվել միայն փորձառությամբ, Աստծո արարողությունների միջոցով, որոնք սահմանված են այդ նպատակի համար»*:[10]

Անհատների և ընտանիքների համար այս հոգևոր մեծ նպատակի իրականացումը հիմնական պատճառներից մեկն է, թե ինչու են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ծրագրերն ու միջոցառումները դառնում ավելի տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող ժամանակների լրության այս հատուկ տնտեսությունում:

Տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող ուսումնասիրության կիրառում

Թույլ տվեք ամփոփել ավետարանի ուսումնասիրման մի քանի հիմնական կիրառումներ, որոնք դառնում են ավելի տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող:

Միսիոներական ուսուցման գլխավոր կենտրոնը մեր տներում է, իսկ միսիոներական ուսուցման երկրորդական կենտրոնները գտնվում են Պրովոյում, Մանիլայում, Մեխիկոյում և այլ վայրերում: Կիրակնօրյա դպրոցի ամենաարդյունավետ դասարանը պետք է լինի անհատական և ընտանեկան ուսումնասիրությունը մեր բնակավայրերում, իսկ Կիրակնօրյա դպրոցի օգտակար, բայց երկրորդական դասերն անցկացվում են մեր հավաքատներում:

Ընտանեկան պատմության կենտրոններն այժմ մեր տներում են: Ընտանեկան պատմությանը վերաբերող աշխատանքների համար լրացուցիչ աջակցություն կա նաև մեր հավաքատներում:

Տաճարի նախապատրաստման հիմնական դասերը առաջին հերթին տեղի են ունենում մեր տներում, իսկ երկրորդ հերթին՝ այդ կարևոր դասերը կարող են ժամանակ առ ժամանակ անցկացվել նաև մեր հավաքատներում:

Մեր տները սրբավայր դարձնելը, որտեղ մենք կարող ենք «կանգնել սուրբ տեղերում»,[11] էական է այս վերջին օրերում: Եվ որքան այսօր է կարևոր տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող ուսումը մեր հոգևոր ուժի և պաշտպանության համար, այն նույնիսկ ավելի կարևոր է լինելու ապագայում:

Տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող ուսում և տաճարի նախապատրաստում

Դիտարկեք, թե որքանով է «տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող» ծրագիրը վերաբերում մեր անհատական պատրաստվածությանն ու արժանավորությանը Տիրոջ տանը սուրբ արարողություններն ու ուխտերը ստանալու համար:

Իրոք, տաճարի նախապատրաստությունն ամենաարդյունավետն է մեր տներում: Բայց Եկեղեցու անդամներից շատերը տարակուսում են, թե տաճարից դուրս տաճարային փորձառության մասին ինչը կարելի է ասել, իսկ ինչը՝ ոչ:

Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը մեկնաբանել է, թե որտեղից այս տարակուսանքը.

«Տաճարը սրբազան վայր է, և տաճարային արարողությունները սրբազան բնույթ ունեն: Դրանց սրբազանության պատճառով մենք երբեմն դժկամությամբ ենք ասում որևէ բան մեր երեխաներին և թոռներին:

Դրա հետևանքով, շատերի մոտ տաճար գնալու իրական ցանկություն չի առաջանում, կամ երբ գնում են այնտեղ, նրանք դա անում են առանց պատկերացում ունենալու, ինչը կպատրաստեր նրանց պարտականությունների և ուխտերի համար, որոնք պիտի կապեն:

Ես հավատում եմ, որ *պատշաճ ըմբռնումը կամ պատկերացումը* անչափ կօգնի պատրաստվել մեր երիտասարդներին տաճարի փորձառությանը . . . [և] նրանց մեջ կառաջացնի ցանկություն՝ ձգտել իրենց քահանայության օրհնություններին, ճիշտ ինչպես Աբրահամն էր ձգտում իրենին»:[12]

Երկու հիմնական ուղեցույցները կօգնեն մեզ պատշաճ

հասկացողություն ձեռք բերել այն մասին, ինչն ընդգծել է Նախագահ Բենսոնը:

Ուղեցույց #1 *Քանի որ մենք սիրում ենք Տիրոջը, Նրա սուրբ տան մասին մենք միշտ պետք է ակնածանքով խոսենք: Մենք չպետք է բացահայտենք կամ նկարագրենք տաճարային սուրբ արարողությունների ժամանակ ստացած ուխտերին վերաբերող հատուկ խորհրդանիշները: Ոչ էլ պիտի քննարկենք այն սուրբ տեղեկությունները, որոնք տաճարում խոստանում ենք չբացահայտել:*

Ուղեցույց #2 *Տաճարը Տիրոջ տունն է: Տաճարում ամեն ինչ մատնանշում է մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Մենք կարող ենք քննարկել տաճարի արարողություններին և ուխտերին վերաբերող հիմնական նպատակները, սկզբունքներն ու վարդապետությունը:*

Նախագահ Հովարդ Վ. Հանթերն ասել է. «Եկեք մեր երեխաների հետ կիսվենք տաճարում ունեցած մեր հոգևոր զգացողություններով: Եվ եկեք ավելի լուրջ ու հանգիստ սովորեցնենք նրանց այն բաները, որոնք պատշաճ է ասել Տիրոջ տան նպատակների մասին»:[13]

Մերնդե-սերունդ՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթից մինչև Նախագահ Ռասսել Մ. Նելսոն, տաճարային արարողությունների և ուխտերի վարդապետական նպատակները լայնորեն լուսաբանվել



են Եկեղեցու ղեկավարների կողմից:[14] Գոյություն ունի նյութերի հարուստ աղբյուր՝ տպագիր, առդիո, վիդեո և այլ ձևաչափերով, որոնք օգնում են մեզ սովորել նախապատրաստական արարողությունների, օժտումների, ամուսնությունների և կնքման այլ արարողությունների մասին:[15] Նույնպես մատչելի է տեղեկատվությունը, թե ինչպես հետևել Փրկիչին, ստանալով և պահելով ուխտերը՝ կապված հնազանդության օրենքի, զոհաբերության օրենքի, ավետարանի օրենքի, մաքրաբարոյության օրենքի և նվիրաբերման օրենքի հետ:[16] Եկեղեցու բոլոր անդամները պետք է ծանոթանան հրաշալի նյութերի հետ, որոնք առկա են temples.ChurchofJesusChrist.org կայքում:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը կարևորել է հավասարակշռությունը, որը կա տաճարային արարողությունների սրբազան բնույթի և տաճարների մասին Եկեղեցու հրատարակած արժեքավոր տեղեկատվության միջև, որը ճշգրիտ է, պատշաճ և հանրամատչելի: Նա բացատրել է. «Ես խորհուրդ եմ տալիս . . . անդամներին կարդալ Սուրբ գրքերի ուղեցույցի այն մասերը, որոնք կապված են տաճարի հետ, օրինակ՝ «Օծում», «Ուխտ», «Զոհաբերություն», և «Տաճար»: Կարող եք կարդալ նաև Ելից 26–29 գլուխները և Ղևտացոց, գլուխ 8-ը: Հին Կտակարանը, ինչպես նաև Թանկագին Մարգարիտում Մովսեսի և Աբրահամի գրքերը ընդգծում են տաճարային աշխատանքի հնությունը և տաճարային ծեսերի հարատև բնույթը»:[17]

Այսպիսով, պատկերացրեք, որ ձեր որդին կամ դուստրը հարցնում է. «Դպրոցում մեկն ինձ ասաց, որ տաճարում տարօրինակ հագուստ են կրում: Դա ճի՞շտ է»: Temples.ChurchofJesusChrist.org կայքէջում կա մի կարճ տեսանյութ, վերնագրված՝ «Տաճարային սուրբ հագուստ»: Այդ հոյակապ նյութը բացատրում է, թե ինչպես են հին ժամանակներում տղամարդիկ և կանայք կիրառել սրբազան երաժշտություն, աղոթքի տարբեր ձևեր, խորհրդանշական կրոնական հագուստ, շարժումներ և ծեսեր՝ Աստծո հանդեպ իրենց սրտաբուխ զգացմունքներն արտահայտելու համար: Այսպիսով, պարզ հրահանգավորման և հրաշալի նյութերի միջոցով, որոնցից է այս տեսանյութը, Եկեղեցին աջակցում է տաճարի փառահեղ օրհնությունների համար տարվող տնակենտրոն նախապատրաստությանը: Ձեզ համար առկա է օգտակար բազմաթիվ տեղեկատվություն:[18]

Զգտելով քայլել Տիրոջ Հոգու հեզությամբ,[19] մենք կօրհնվենք, որպեսզի հասնենք մեր տներում անհրաժեշտ հավասարակշռությանը՝ հասկանալով, թե ինչն է պատշաճ, իսկ ինչը պատշաճ չէ քննարկել տաճարային սուրբ արարողությունների ու ուխտերի մասին:

Խոստում և վկայություն

Ենթադրում եմ, որ ձեզանից շատերն են մտածում, թե ավետարանի ձեր ուսումնասիրությունն արդյո՞ք կդառնա տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող: Գուցե դուք Եկեղեցու միակ անդամն եք ձեր տանը կամ ունեք այնպիսի ամուսին կամ կին, ով ձեզ չի աջակցում այս հարցում, կամ միայնակ ծնող եք, գուցե մենակ եք ապրում կամ ամուսնալուծված վերջին օրերի սուրբ եք և կունենաք հարցեր, թե այս սկզբունքներն ինչպես են գործելու ձեր դեպքում: Դուք կարող եք ամուսիններ լինել, ովքեր միմյանց նայելով ասում են. «Արդյոք կարո՞ղ ենք դա անել»:

Այո՜, դուք կարող եք դա անել: Ես խոստանում եմ, որ քաջալերող օրհնությունները կհոսեն ձեր կյանք և ակնհայտ կլինեն ձեր կյանքում: Դռները կբացվեն: Լույսը կծագի: Ձեր կարողությունները կավելանան, որ առաջ շարժվեք ջանասիրությամբ և համբերատարությամբ:

Ես ուրախությամբ վկայում եմ, որ փոխհատուցող օրհնությունները կգան, երբ ձգտենք կատարել մեր անհատական պատասխանատվությունը՝ սովորել և սիրել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը: Մենք իսկապես կարող ենք «պատրաստվել ստանալու ամեն անհրաժեշտ բան»:[20] Ես սա խոստանում և վկայում եմ Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Russell M. Nelson, in “Latter-day Saint Prophet, Wife and Apostle Share Insights of Global Ministry,” Newsroom, Oct. 30, 2018, newsroom.ChurchofJesusChrist.org.
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.29
3. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.20
4. Վարդապետություն և Ուխտեր 45.26
5. Եփեսացիս 6.13
6. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2017, 145:
7. 1 Նեփի 1.1
8. Տես Մատթեոս 7.24–27, 3 Նեփի 14.24–27, 18.13
9. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 211
10. *Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ,* 419, շեշտադրումն ավելացված է
11. Վարդապետություն և Ուխտեր 101.22
12. *Teachings of Presidents of the Church: Ezra Taft Benson* (2014), 174; emphasis added; see also Ezra Taft Benson, “What I Hope You Will Teach Your Children about the Temple,” *Ensign,* Aug. 1985, 8.
13. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Հոսպոդ Վ. Հանթեր* (2015), 184:
14. See, for example, James E. Talmage, *The House of the Lord* (1912), 99–101.
15. See James E. Talmage, *The House of the Lord,* 89–109; Russell M. Nelson, “Personal Preparation for Temple Blessings,” *Liahona,* July 2001, 37–39; Boyd K. Packer, *The Holy Temple* (1980), 153–55.
16. See *The Teachings of Ezra Taft Benson* (1988), 121; James E. Talmage, *The House of the Lord,* 100; *Preparing to Enter the Holy Temple* (pamphlet, 2002).
17. Ռասսել Մ.Նելսոն, «Պատրաստվեք տաճարի օրհնություններին», *Լիահոնա,* հոկտեմբեր 2010, 47:
18. Օրինակ, դիտեք Հռոմ Իտալիա Տաճարի տեսատուրը կամ ուսումնասիրեք մարգարեական ուսմունքներ տաճարների մասին (տես temples.ChurchofJesusChrist.org):
19. Տես Վարդապետություն և Ուխտեր 19.23:
20. Վարդապետություն և Ուխտեր 109.15:

ԵՐԵՑ ՔԱՅԼ Ս. ՄԱԿՔԵՅ
Յոթանասունից

Աստծո անմիջական բարությունը

Նույնիսկ, երբ մենք համբերությամբ ապավինում ենք Տիրոջը, կան որոշակի օրհնություններ, որոնք մենք անմիջապես ենք ստանում:

Մի քանի տարի առաջ մեր հինգամյա որդին եկավ ինձ մոտ և հայտարարեց. «Հայրի՛կ, ես մի բան եմ իմացել: Ես պարզել եմ, որ այն, ինչ քեզ համար *շուտով* է, ինձ համար շատ երկար ժամանակ է»:

Երբ Տերը կամ Նրա ծառաներն ասում են. «Ոչ թէ շատ օրեր սորանից հետո» կամ «Ոչ շատ օրեր հետո», դա կարող է բառացիորեն նշանակել՝ ամբողջ կյանքի ընթացքում կամ ավելի երկար:[1] Նրա ժամանակը, իսկ ավելի հաճախ Նրա ժամանակացույցը, տարբերվում է մեր ժամանակացույցից: Այստեղ կարևորը համբերությունն է: Առանց համբերության մենք չենք կարող հավատ զարգացնել կամ հավատ ցույց տալ առ Աստված, որն էլ տանում է դեպի կյանք և փրկություն: Սակայն իմ ուղերձն այսօր այն մասին է, որ նույնիսկ, երբ մենք համբերությամբ ապավինում ենք Տիրոջը, կան որոշակի օրհնություններ, որոնք մենք անմիջապես ենք ստանում:

Երբ Ալման և նրա ժողովուրդը գերեվարվեցին լամանացիների կողմից, նրանք աղոթեցին ազատության համար: Նրանք անմիջապես չազատվեցին, բայց մինչ նրանք համբերությամբ սպասում էին ազատմանը, Տերն Իր բարությունը ցույց տվեց որոշակի անմիջական օրհնությունների միջոցով: Նա անմիջապես փափկացրեց լամանացիների սրտերը, որպեսզի նրանք չկոտորեին նեփիացիներին: Նա նաև զորացրեց Ալմայի ժողովրդին և թեթևացրեց նրանց բեռները:[2] Երբ նրանք վերջապես ազատվեցին, ճամփորդեցին Զարահեմլա, որտեղ իրենց փորձառությունների մասին պատմեցին մարդկանց, ովքեր զարմանքից ապշել էին: Զարահեմլայի ժողովուրդը հիացել էր, և «երբ նրանք մտածում էին *Աստծո անմիջական բարության* և նրա զորության մասին՝ Ալմային ու նրա եղբայրներին Լամանացիների ձեռքից և ճորտությունից ազատելիս, նրանք բարձրացնում էին իրենց ձայնն ու գոհություն հայտնում Աստծուն»:[3]

Աստծո անմիջական բարությունը գալիս է բոլոր նրանց, ովքեր դիմում են Նրան իսկական վճռականությամբ և սրտի ողջ նվիրվածությամբ: Սա ընդգրկում է նրանց, ովքեր աղերսում են անկեղծ վիհատությամբ, երբ ազատումը թվում է այնքան հեռու, իսկ տառապանքը՝ երկար, անգամ ավելի ուժգին:

Այդպես էր նաև երիտասարդ մարգարեի հետ, ով անսահման տառապում էր խոնավ զնդանում, երբ, ի վերջո, աղաղակեց. «Ո՜վ Աստված, ո՞րտեղ ես դու: . . . Որքա՞ն պիտի քո ձեռքը ետ պահվի . . . Այո, ո՜վ Տեր, որքա՞ն . . .»[4] Ի պատասխան, Տերն անմիջապես չազատեց Զոզեֆին, այլ անմիջապես խաղաղություն տվեց նրան:[5]

Աստված նաև անմիջական հույս ուղարկեց վերջնական ազատման համար:[6] Կարևոր չէ՝ ինչպես, կարևոր չէ՝ որտեղ, Քրիստոսով և Քրիստոսի միջոցով հույսը միշտ էլ պայծառ ժպտում է մեր առաջ:[7] Անմիջապես մեր առաջ:

Դեռ ավելին, Նա խոստացել է. «Իմ *ողորմությունը* քեզանից չի քաշուիլ»:[8]

Նախևառաջ, Աստծո սերն անմիջական է: Պողոսի հետ, ես վկայում եմ, որ ոչինչ չի կարող «մեզ բաժանել Աստծո սերից՝ որ մեր Տեր Հիսուս Քրիստոսումն է»:[9] Չնայած մեր մեղքերը կարող են որոշ ժամանակով բաժանել մեզ Նրա Հոգուց, սակայն դրանք չեն կարող բաժանել մեզ Նրա աստվածային հայրական սիրո հաստատունությունից և անմիջականությունից:

Սրանք են այն մի քանի եղանակներն ու միջոցները, որոնցով «նա անմիջապես օրհնում է [մեզ]»:[10] Այժմ, որպեսզի ցույց տամ, թե որքանով են այս սկզբունքներն առնչվում միմյանց, ես ձեզ հետ կկիսվեմ երկու մարդկանց փորձառությամբ, ում կյանքը Աստծո անմիջական բարության վկայությունն է:

Իր պատանեկության տարիներից սկսած, Էմիլին տառապում էր թմրանյութերից կախվածությամբ: Փորձարկումը հանգեցրեց սովորության, որն, ի վերջո, դարձավ կախվածություն, որի դեմ նա մաքառում էր երկար տարիներ, չնայած դա երբեմն ընդհատվում էր առողջացման կարճ ընդմիջումներով: Էմիլին ամեն կերպ թաքցնում էր իր խնդիրը, հատկապես, երբ ամուսնացավ ու երեխա ունեցավ:

Նրա բուժման գործընթացը բոլորովին հույս չէր ներշնչում: Մի օր Էմիլին անցնում էր սովորական բժշկական զննում, իսկ հաջորդ օրը շտապ օգնության մեքենան նրան տանում էր հիվանդանոց: Նա խուճապի էր մատնվում, երբ մտածում էր իր երեխաներից, ամուսնուց և տնից բաժանվելու մասին:

Այդ գիշեր Էմիլին մենակ էր ցուրտ ու մութ սենյակում, նա կծկվել էր իր անկողնում և հեկեկում էր: Անհանգստությունը, վախը, սենյակում և նրա հոգում տիրող ճնշող խավարը այլևս սպառել էին դատելու նրա ունակությունը, և Էմիլին իսկապես մտածում էր, որ ինքը կմահանա այդ գիշեր: Մենակ կմահանա:

Այդ հուսահատ վիճակում, Էմիլին ինչ-որ կերպ հավաքեց ուժերը, դուրս եկավ անկողնուց ու ծնկի իջավ: Առանց ձևականությունների, որոնք նախկինում ուղեկցում էին նրա աղոթքները, Էմիլին, իր կյանքը լիովին հանձնելով Տիրոջ տնօրինությանը, հուսահատ աղերսեց. «Թանկագի՛ն Տեր, ես քո կարիքն ունեմ: Խնդրու՛մ եմ, օգնի՛ր ինձ: Ես չեմ ցանկանում մենակ լինել: Խնդրում եմ, ինձ հետ եղիր այս գիշեր»:

Եվ ինչպես Պետրոսի դեպքում էր, Հիսուսն անմիջապես պարզեց Իր ձեռքը և բռնեց նրա խորտակվող հոգին:[11] Այդ պահին Էմիլիի հոգին լցվեց զարմանալի հանգստությամբ, քաջությամբ, հավատիացումով և սիրով: Սենյակն այլևս ցուրտ չէր թվում, և Էմիլին գիտեր, որ մենակ չէ: 14 տարեկանից ի վեր, առաջին անգամ նա հասկացավ, որ ամեն ինչ լավ է լինելու: Երբ Էմիլին «զարթնեց առ Աստված»,[12] նա խաղաղ քուն մտավ: Եվ այսպիսով մենք

տեսնում ենք, որ «եթե դուք կամենաք ապաշխարել և չկարծրացնեք ձեր սրտերը, փրկագնման մեծ ծրագիրն անհապաղ պիտի իրագործվի ձեզ համար»:[13]

Երկար ժամանակ պահանջվեց Էմիլիի վերջնական բուժման և կախվածությունից ազատվելու համար. ամիսներ տևող բուժում, ուսուցում և խորհրդատվություն, որի ընթացքում նրան ուղեկցում և աջակցում էր Աստծո անմիջական բարությունը: Եվ այդ բարությունն էր աջակցում Էմիլիին, երբ նա տաճար մտավ իր ամուսնու և երկու զավակների հետ՝ հավերժ միասին կնքվելու համար: Զարահեմլայի ժողովրդի նման այժմ Էմիլին զարմանում է, երբ մտածում է Աստծո անմիջական բարության և Նրա զորության մասին, որն ազատեց իրեն կախվածության կապանքներից:

Այժմ մեկ այլ պատմություն ևս մեկ հավատավոր մարդու մասին: 2013թ.-ի դեկտեմբերի 27-ին Ալիշա Շրոդերը ուրախությամբ դիմավորեց իր սիրելի ընկերներին՝ Շեն և Շարլա Չիլկոտներին, ովքեր անսպասելի հայտնվեցին նրա դռան շեմքին: Շենը, ով նաև Ալիշայի եպիսկոպոսն էր, նրան տվեց իր բջջային հեռախոսը և վշտահար ասաց. «Ալիշա, մենք սիրում ենք քեզ: Դու պետք է պատասխանես այս զանգին»:

Զանգահարողը Ալիշայի ամուսինն էր՝ Մարիոն: Նա իրենց մի քանի երեխաների հետ մեկնել էր մի մեկուսի վայր՝ ձյունազնաց մեքենայով ճամփորդելու համար, որին բոլորը շատ էին սպասում: Մարսափելի վթար էր պատահել: Մարիոն լուրջ վնասվածք էր ստացել, իսկ նրանց տասնամյա որդի Քալեբը մահացել էր: Երբ Մարիոն արտասվելով Ալիշային ասաց Քալեբի մահվան մասին, կինն այնպիսի ցնցում և վիշտ տարավ, որ մեզանից քչերը երբևէ կիմանան, թե ինչ է դա: Նա վայր ընկավ: Մարսափելի վշտից կաթվածահար եղած Ալիշան չէր կարողանում խոսել ու շարժվել:

Եպիսկոպոս և քույր Չիլկոտները արագ, բարձրացրին նրան և պահեցին: Որոշ ժամանակ նրանք միասին վշտալից արտասվում էին: Ապա եպիսկոպոս Չիլկոտն առաջարկեց օրհնություն տալ Ալիշային:

Այն, ինչ պատահեց դրանից հետո, անըմբռնելի է առանց Հիսուս Քրիստոսի Քավության և Աստծո անմիջական բարության մասին որոշակի հասկացողության: Եպիսկոպոս Չիլկոտը իր ձեռքերը դրեց Ալիշայի գլխին և դողացող ձայնով սկսեց խոսել: Ալիշան լսեց երկու բան, որոնք, կարծես, Աստված էր ասում Իր բերանով: Նախ, նա լսեց իր անունը՝ Ալիշա Սյուզան Շրոդեր: Հետո նա լսեց, որ եպիսկոպոսը օգնության է կանչում Ամենակարող Տիրոջը: Այդ պահին, երբ պարզապես նշվեց նրա անունը և Աստծո զորությունը, անասելի խաղաղությունը, սերը, հանգստությունը, սփոփանքը և, ինչ-որ առումով, *ուրախությունը* պարուրեցին Ալիշային: Եվ այդ զգացումները երբեք չլքեցին նրան:

Իհարկե այժմ Ալիշան, Մարիոն և նրանց ընտանիքը շարունակում են սգալ Քալեբի մահը և կարոտել նրան: *Դժվար է:* Երբ ես խոսում եմ Ալիշայի հետ, նրա աչքերը լցվում են արցունքներով, և նա պատմում է ինձ, թե որքան է սիրում ու կարոտում իր փոքրիկ տղային: Եվ նրա աչքերը դեռևս թաց են, երբ նա պատմում է ինձ, թե Մեծ Փրկարարն Իր անմիջական բարությամբ ինչպես է նեցուկ եղել իրեն իր փորձության և հուսահատության ամենավատ պահերին, և հիմա էլ շարունակում է՝ քաղցր միավորման պայծառ

հույսով, որը «շատ օրեր սորանից հետո» է լինելու:

Ես գիտեմ, որ փորձությունները դժվարություններ ու խառնաշփոթ են բերում մեր կյանք, որոնք խոչընդոտում են ընդունել կամ հասկանալ այն թեթևացումը, որը ստացան Էմիլին ու Ալիշան: Ես անցել եմ այդպիսի ժամանակների միջով: Ես վկայում եմ, որ այդպիսի ժամանակներում մեր պաշտպանությունն արտահայտվում է Աստծո անմիջական բարության նուրբ ու զորավոր դրսևորմամբ: Հիշեք, որ հին Իսրայելը վերջնականապես ազատվեց «այն նույն Աստծո կողմից, որը պահպանել էր նրանց»[14] ամեն օր:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Հիսուս Քրիստոսը Մեծ Փրկարարն է, և Նրա անունով ես խոստանում եմ, որ երբ դուք փնտրեք Նրան իսկական վճռականությամբ և սրտի ողջ նվիրվածությամբ, Նա կազատի ձեզ այն ամենից, ինչը սպառնում է թուլացնել կամ կամ կործանել ձեր կյանքն ու ուրախությունը: Այդ ազատումը կարող է ավելի երկար տևել, քան դուք կկամենաք, գուցե՝ ամբողջ կյանքի ընթացքում կամ ավելի երկար: Ուստի, որպեսզի ձեզ սփոփանք, վստահություն ու հույս տամ, որպեսզի աջակցեմ ու զորացնեմ ձեզ մինչև այդ վերջնական ազատումը, ես ձեզ եմ հանձնում և վկայում եմ *Աստծո անմիջական բարության մասին,* Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես, օրինակ, Ալմա 7.7, 9.26, Վարդապետություն և Ուխտեր 88.87:
2. Տես Մոսիա 23.28–29, 24.14–15:
3. Մոսիա 25.10, շեշտադրումն ավելացված է
4. Վարդապետություն և Ուխտեր 121.1–3
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.7:
6. Տես Ալմա 58.11. «Այո, և եղավ այնպես, որ Տերը՝ մեր Աստվածը, այցելեց մեզ հավաստիացումներով, որ նա կազատի մեզ. այո, . . . և այնպես արեց, որ մենք հուսացինք մեր ազատմանը նրանով»: Տես նաև Վարդապետություն և Ուխտեր 121.7-8:
7. Տես «Փառք քեզ Տեր, Մարգարեի համար», *Հիմներ և մանկական երգեր,* հմր. 35:
8. Եսայիա 54.10, շղագիրն ավելացված է:
9. Հռովմեացիս 8.39
10. Մոսիա 2.24:
11. Տես Մատթեոս 14.31:
12. Ալմա 5.7
13. Ալմա 34.31
14. 1 Նեփի 5.15

ԵՐԵՑ ՌՈՆԱԼԴ Ա. ՌԱՍԲԵՆԴ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հոգևորության և պաշտպանության ամրոց կառուցեք

Երբ ապրում ենք Հիսուս Քրիստոսի ավետարանով, երբ օգտվում ենք Փրկիչի Քավությունից և առաջ ենք գնում հավատքով, մենք ամրապնդվում ենք հակառակորդի դեմ պայքարում:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, այս համաժողովի ավարտին ես շնորհակալություն եմ հայտնում մեր Երկնային Հորը վերջին երկու օրվա ընթացքում այս ամբիոնից հնչած խորհուրդների, ճշմարտությունների և հայտնությունների համար: Մեզ ուսուցանել են Աստծո ծառաները, որոնք կանչված են Նրա սուրբ խոսքերը խոսելու: Վերջին օրերի հայտնությունում Տերը մեզ հիշեցրել է. «Լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է»:[1]

Նայելով Սրբերի այս մեծ ժողովին ու պատկերացնելով անդամներին ողջ աշխարհում գերագույն համաժողովը դիտելիս, ես հիշում եմ Մորմոնի Գրքի մի հավաք, երբ Հիսուս Քրիստոսը երևաց նեփիացիներին Իր խաչելությունից հետո: Նա

սովորեցրեց նրանց ավետարանը և ապա քաջալերեց. «Գնացեք ձեր տները, և խորհեք այն բաների վրա, որոնք ես ասացի, և հարցրեք Հորը՝ իմ անունով, որպեսզի դուք կարողանաք հասկանալ»:[2]

«Գնացեք ձեր տները, և խորհեք». սա հաջորդ քայլն է, որպեսզի մարգարեների ու Եկեղեցու ղեկավարների այս սրբազան միջավայրում ասված խոսքերը հասնեն ձեր սրտերին: Քրիստոսակենտրոն տները Աստծո արքայության համար ամրոցներ են երկրի վրա այն օրերում, երբ, ըստ մարգարեության, դևը «կմոլեգնի մարդկանց զավակների սրտերում և կդրդի նրանց բարկության ընդդեմ նրա, ինչը բարի է»:[3]

Պատմության ընթացքում մարդիկ ամրոցներ են կառուցել, որպեսզի թշնամուն ներս չթողնեն: Հաճախ այդ ամրոցները ներառում էին դիտարան՝ աշտարակ, որտեղ դետերը՝ մարգարեների պես, զգուշացնում էին սպառնացող ուժերից և վրա հասնող հարձակումներից:

Յուտայի վաղ ռահվիրաների ժամանակաշրջանում իմ նախապապ Թոմաս Ռասբանդը և նրա ընտանիքը այստեղ՝ Յուտայի Վոսաչ գեղեցիկ լեռների Հեբեր հովիտ մտած առաջին բնակիչներից էին:

1859 թվականին Թոմասը օգնեց կառուցել Հեբեր ամրոցը, որը կառուցվել էր նրանց պաշտպանության համար: Այն պարզ շինություն էր կաղամախի գերաններից, որոնք մեկմեկու կցված էին ամրոցի ողջ շրջագծով: Ամրոցի ներսում, օգտագործելով ընդհանուր պատը, գերանե հյուղակներ էին կառուցվել: Կառուցվածքը ապահովում էր ինչպես պաշտպանություն, այնպես էլ անվտանգություն այդ ռահվիրա ընտանիքների համար, մինչ նրանք արմատներն էին զցում ու երկրպագում էին Տիրոջը:

Այդպես է նաև մեզ հետ: Մեր տները ամրոց են աշխարհի չարությունների դեմ: Մեր տներում մենք մոտենում ենք Քրիստոսին, սովորելով հետևել Նրա պատվիրաններին, ուսումնասիրելով սուրբ գրությունները և միասին աղոթելով ու օգնելով միմյանց մնալ ուխտի ճանապարհին: *Եկ, հետևիր ինձ* ուսումնական ծրագրի միջոցով անձնական և ընտանեկան ուսումնասիրության վրա կատարված նոր շեշտադրումը նախատեսված է «խորացնել մեր դարձը, որպեսզի ավելի շատ նմանվենք Հիսուս Քրիստոսին»:[4] Այդպես մենք կդառնանք Պողոսի ասած «նոր արարածը»,[5] Աստծո հետ ներդաշնակ դարձնելով մեր սիրտն ու հոգին: Մեզ անհրաժեշտ է այդ ուժը, որպեսզի դիմակայենք ու չեզոքացնենք հակառակորդի հարձակումները:

Ապրելով նվիրվածությամբ, որ ծնունդ է առել Հիսուս Քրիստոսի հավատքից, մենք զգում ենք Սուրբ Հոգու խաղաղ ներկայությունը, որը մեզ առաջնորդում է ճշմարտության, ոգեշնչում է մեզ արժանի ապրել Տիրոջ օրհնություններին և վկայում է, որ Աստված ապրում և սիրում է մեզ: Այս բոլորը՝ մեր իսկ տան ամրոցի պատերից ներս: Բայց հիշեք, մեր տների հզորությունը այնքան է, որքան պատերի ներսում յուրաքանչյուրիս հոգևոր ուժն է:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ուսուցանել է. «Գալիք օրերում հնարավոր չի լինի հոգևորապես գոյատևել առանց Սուրբ Հոգու առաջնորդության, ուղղորդման և մշտապես սփոփող ազդեցության»:[6] Որպես Տիրոջ մերօրյա կենդանի մարգարե, տեսանող և հայտնող և մեր ամրոցի՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու դիտարանի ժամապահ, նա տեսնում է թշնամու առաջընթացը:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք պատերազմում ենք սատանայի դեմ մարդկանց հոգիների համար: Պատերազմի ճակատը ձևավորվել է նախաերկրային կյանքում: Սատանան և մեր Երկնային Հոր զավակների մեկ երրորդ մասը վեհացման Նրա խոստումներից երես շրջեցին: Այդ ժամանակից ի վեր հակառակորդի խամաճիկները պայքարում են հավատացյալների դեմ, ովքեր ընտրել են Հոր ծրագիրը:

Սատանան գիտի, որ իր օրերը հաշվված են, և իրեն քիչ ժամանակ է մնում: Չնայած որ նա խելահեղ ու խորամանկ է, նա չի հաղթելու: Այնուամենայնիվ, նա պայքար է մղում հոգիներից յուրաքանչյուրի համար:

Մեր անվտանգության՝ մեր հոգիների պաշտպանության համար, մենք պետք է հոգևորության և պաշտպանության ամրոց կառուցենք՝ ամրոց, ուր չարի ներթափանցման համար տեղ չկա:

Սատանան խորամանկ օձ է, որը մեր մտքերն ու սրտերն է սողոսկում, երբ կորցնում ենք մեր զգոնությունը, տրվում ենք հիասթափությանը կամ կորցնում ենք հույսը: Նա մեզ գայթակղում է շողոքորթելով, հեշտ, հարմարավետ կամ ժամանակավոր բարձր բաներ խոստանալով, երբ մենք ցածր ենք: Նա արդարացնում է հպարտությունը, անխիղճ, անազնիվ, դժգոհ վերաբերմունքն ու անբարոյականությունը և ժամանակի ընթացքում մենք «անզգայանում» ենք:[7] Հոգին կարող է լքել մեզ: «Եվ այդպես դևը խաբում է նրանց հոգիները և զգուշորեն հեռացնում նրանց՝ իջեցնելով դժոխք»:[8]

Մյուս կողմից, մենք հաճախ Հոգին այնքան ուժեղ ենք զգում, երբ Աստծուն գովերգում ենք նման բառերով.

Աստված մեր ամրոց է անսասան,
Երբեք վայր չընկնող ամուր
դիտարան:
Աստված զորեղ է ու մեզ օգնական,
Որ կյանքը մեր անցնենք
հաղթական:[9]

Երբ հոգևոր ուժի ամրոց կառուցենք, մենք կարող ենք հետ մղել հակառակորդի գրոհները, մեջքով դեպի նա շրջվենք ու զգանք Հոգու խաղաղությունը: Մենք կարող ենք հետևել մեր Տիրոջ և Փրկիչի օրինակին, որը, երբ գայթակղվում էր անապատում, ասաց. «Գնա յետս, սատանայ»:[10] Յուրաքանչյուրս պետք է կյանքի փորձառությունների միջոցով սովորենք, թե ինչպես դա անենք:

Նման մի արդար նպատակ լավ նկարագրվել է Մորմոնի Գրքում, երբ հրամանատար Մորոնին նեփիացիներին պատրաստում էր դիմակայել նենգաբարո, արյունռուշտ, փառատենչ Ամաղիկիայի հարձակումներին: Մորոնին ամրոցներ էր կառուցում նեփիացիների պաշտպանության համար, «որ նրանք կարողանային ապրել Տիրոջ՝ իրենց Աստծո համար, և որ նրանք կարողանային պահպանել այն, ինչը նրանց թշնամիների կողմից կոչվում էր Քրիստոնյաների գործ»:[11] Մորոնին «հաստատուն էր Քրիստոսի հավատքում»[12] և հավատարիմ էր՝ «Աստծո պատվիրանները պահելով. . . . և անօրինությանը դիմակայելով»:[13]

Երբ լամանացիները եկան ճակատամարտելու, նրանք ապշած էին նեփիացիների նախապատրաստությունից ու պարտվեցին: Նեփիացիները գոհություն էին հայտնում

«Տիրոջը՝ իրենց Աստծուն, իրենց թշնամիների ձեռքից իրենց ազատելում նրա անզուգական զորության համար»:[14] Դրսից նրանք ամրություններ էին կառուցել պաշտպանության համար, իսկ ներսից՝ հոգու խորքում, հավատք էին կառուցել Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Որո՞նք են այն մի քանի եղանակները, որով կարող ենք ամրապնդվել անհանգիստ ժամանակներում, որպեսզի «գործիքներ դարձվենք՝ իրականացնելու այս մեծ աշխատանքը»:[15] Եկեք կարդանք սուրբ գրություններում:

Մենք հնազանդ ենք: Տերը պատվիրել էր հայր Լեքիին, որ ուղարկի իր որդիներին հետ՝ դեպի Երուսաղեմ, ու ասի. «գտեք հիշատակարանները և բերեք դրանք այստեղ՝ անապատ»:[16] Լեքին հարցեր չէր տվել. նա չէր զարմացել, թե ինչու կամ ինչպես: Նմանապես նաև Նեփիին, ով պատասխանեց. «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է»:[17]

Մեր գործերը նմա՞ն են Նեփիի պատրաստակամ հնազանդությանը: Թե՞ մենք հակված ենք կասկածի տակ դնելու Աստծո պատվիրանները, ինչպես արեցին Նեփիի եղբայրները, ում հավատքի պակասը, ի վերջո, հեռացրեց նրանց Տիրոջից: Հնազանդությունը, որ գործում է «սրտի սրբությամբ»,[18] այն է, ինչ Տերը խնդրում է մեզանից:

Մենք վստահում ենք Տիրոջը, ով ասաց Հեսուին, երբ պատրաստվում էր իսրայելացիներին խոստացված երկիրը առաջնորդել. «զօրացիր և քաջ եղիր, մի վախենար և մի զարհուրիր. որովհետև քո Տէր Աստուածը քեզ հետ է ամեն տեղ ուր որ գնաս»:[19] Հեսուն վստահեց այդ խոսքերին և խորհուրդ տվեց իր ժողովրդին. «Սրբեցէք ձեր անձերը. որովհետև Տէրը էգուց ձեր միջումը հրաշքներ է անելու»:[20] Տերը բաժանեց Հորդանանի ջրերը, և իսրայելացիների 40 տարվա դեգերումը անապատում ավարտվեց:

Մենք պաշտպանում ենք ճշմարտությունը, ինչպես Աբինադի մարգարեն Մորմոնի Գրքում: Երբ Աբինադիին ձերբակալեցին և բերեցին Նոյ թագավորի ու նրա

ամբարիշտ քահանաների առաջ, նա ուսուցանեց Տասը պատվիրանները և զորությամբ քարոզեց, որ Քրիստոսը «պիտի գա ներքև՝ մարդկանց զավակների մեջ և պիտի փրկագնի իր ժողովրդին»:[21] Այնուհետև, խորը հավատքով, նա բացականչեց. «Ո՜վ Աստված, ընդունիր իմ հոգին»,[22] և Աբինադին «մահ տարավ կրակով»:[23]

Մենք ուխտ ենք կապում ու թարմացնում ենք ուխտերը՝ ճաշակելով հաղորդությունը և երկրպագելով տաճարում: Հաղորդությունը մեր կիրակնօրյա պաշտամունքի կենտրոնն է, որտեղ մենք խոստում ենք ստանում «միշտ ունենալ Նրա Հոգին [մեզ] հետ»:[24] Այդ սուրբ արարողությամբ մենք պարտավորվում ենք վերցնել մեզ վրա Հիսուս Քրիստոսի անունը, հետևել Նրան և Նրա պես գործակցել այս աստվածային աշխատանքի մեր պարտականություններում: Տաճարում մենք կարող ենք «մի կողմ դնել այս աշխարհի բաները»[25] և զգալ Տիրոջ ներկայությունն ու Նրա գերմարդկային խաղաղությունը: Մենք կարող ենք կենտրոնանալ մեր նախնիների, մեր ընտանիքների և Հոր ներկայությամբ ակնկալվող հավերժական կյանքի վրա: Պատահական չէ, որ Նախագահ Նելսոնը վերջերս Հռոմում

հայտարարեց. «Բարիքը, որ կբխի այս տաճարից, անչափ մեծ է»:[26]

Մենք պետք է շիտակ լինենք բոլոր բաներում, որ անում ենք: Մենք պետք է խորաթափանցություն ու կարգապահություն զարգացնենք, որպեսզի շարունակ չկասկածենք, թե ինչն է ճիշտ, ինչը սխալ: Պետք է սրտով ընդունենք Պետրոսի՝ վաղ Եկեղեցու Առաքյալի խոսքերը. «Արթուն եղէք, հսկում արէք. որովհետև ձեր ոսոխ թշնամին՝ սատանան՝ զոռոզ առիւծի պէս ման է գալիս և որոնում է թէ որին կուլ տայ»:[27]

Ջանասիրաբար ամրապնդելով մեր ամրոցները, մենք նմանվում ենք Հիսուս Քրիստոսին՝ որպես Նրա ճշմարիտ աշակերտներ, Նրա պաշտպանությանը հանձնելով մեր հոգիները:

Հիսուս Քրիստոսի մասին ձեր վկայությունը ձեր անձնական ամրոցն է՝ ձեր հոգու անվտանգությունը: Երբ իմ նախապապը և նրա ընկեր ռահվիրաները կառուցում էին Հեբեր ամրոցը, նրանք դնում էին մի գերանը մյուսի վրա, մինչև որ «բոլոր շինուածքը միասին յարմարուած»[28] էր, ու նրանք պաշտպանված էին: Այդպես է նաև վկայության հետ: Մեկ առ մեկ մենք վկայություն ենք ստանում Սուրբ Հոգուց, երբ Նա խոսում է մեր հոգու հետ, ուսուցանելով «ճշմարտութիւնը երիկամունքներում»:[29] Երբ ապրում ենք Հիսուս Քրիստոսի ավետարանով, երբ օգտվում ենք Փրկիչի Քավությունից և առաջ ենք մղվում հավատքով, ոչ թե վախով, մենք ամրապնդվում ենք հակառակորդի հնարքների դեմ: Մեր վկայությունները մեզ կապում են երկինքների հետ, և մենք օրհնվում ենք՝ իմանալով «ճշմարտությունը բոլոր բաների մասին»:[30] Եվ ինչպես ամրոցն էր պաշտպանում ռահվիրաներին, նմանապես մենք ապահով օղակված ենք Փրկիչի սիրո բազուկներում:

Եթեր մարգարեն ուսուցանել է. «Ուստի, ով որ հավատում է Աստծուն, կարող է անկասկած հուսալ ավելի լավ աշխարհի համար, այո, նույնիսկ մի տեղի՝ Աստծո աջ կողմում, հույս, որը գալիս է հավատքից, դառնում է խարիսխ մարդկանց հոգիների համար, ինչը դարձնում է նրանց կայուն և հաստատուն, միշտ հարստացնում բարի գործերով, առաջնորդում՝ փառաբանելու Աստծուն»:[31]

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես թողնում եմ ձեզ իմ օրհնությունը՝ առաջ գնալ վստահելով Տիրոջը և Նրա ավետարանին: Ձեր գիրկն առեք նրանց, ովքեր գայթակղվել են և ձեր մեջ եղած Հոգու զորությամբ սիրալիր առաջնորդեք նրանց դեպի հոգևորության և պաշտպանության ամրոց: Ձգտեք բոլոր բաներում Հիսուսին նմանվել.[32] հետ վանեք չարին ու նրա գայթակղությունները. ապաշխարեք, ինչպես որ երեկ մեզ հորդորեց մեր թանկագին մարգարեն. սրտով ազնիվ եղեք, շիտակ ու մաքուր եղեք գթություն ու կարեկցանք ցուցաբերեք և ճշմարիտ հետևորդի նվիրվածությամբ սիրեք Տիրոջը՝ ձեր Աստծուն:

Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին մեր վկայությունները, մեր տները, մեր ընտանիքները և մեր անդամակցությունը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում, բոլորը կլինեն մեզ շրջապատող պաշտպանական ամրոցները և մեզ անվնաս կպահեն չարի զորությունից: Այս մասին ես բերում եմ իմ հանդիսավոր վկայությունը մեր Տիրոջ և Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 1.38
2. 3 Նեփի 17.3
3. 2 Նեփի 28.20
4. *Եկ, հետևիր ինձ. Անհատների և ընտանիքների համար. Նոր Կտակարան 2019,* v:
5. Բ Կորնթացիս 5.17
6. Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիահոնա,* մայիս 2018, 96:
7. 1 Նեփի 17.45
8. 2 Նեփի 28.21
9. “A Mighty Fortress Is Our God,” *Hymns,* no. 68.
10. Ղուկաս 4.8
11. Ալմա 48.10
12. Ալմա 48.13
13. Ալմա 48.16
14. Ալմա 49.28
15. Ալմա 26.3
16. 1 Նեփի 3.4
17. 1 Նեփի 3.7
18. Վարդապետություն և Ուխտեր 46.7
19. Հեսու 1.9
20. Հեսու 3.5
21. Մոսիա 15.1
22. Մոսիա 17.19
23. Մոսիա 17.20
24. Վարդապետություն և Ուխտեր 20.77
25. Վարդապետություն և Ուխտեր 25.10
26. Russell M. Nelson, in Tad Walch, “President Nelson Refers to Apostles Peter, Paul during Rome Temple Dedication,” *Deseret News,* Mar. 10, 2019, deseretnews.com.
27. Ա Պետրոս 5.8
28. Եփեսացիս 2.21
29. Սաղմոս 51.6
30. Մորոնի 10.5
31. Եթեր 12.4
32. “I’m Trying to Be like Jesus,” *Children’s Songbook,* 78.

ՆԱԽԱԳԱՀ ՌԱՍՍԵԼ Մ. ՆԵԼՍՈՆ

Ամփոփիչ ելույթ

Թող մենք նվիրաբերենք և վերանվիրաբերենք մեր կյանքը՝ ծառայելով Աստծուն և Նրա զավակներին վարագույրի երկու կողմում:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մոտենալով այս պատմական համաժողովի ավարտին, մենք շնորհակալություն ենք հայտնում Տիրոջը Իր ոգեշնչման և պաշտպանության համար: Ուղերձները ուսուցանեցին և կատարելագործեցին մեզ:

Թեմաները չէին հանձնարարվել խոսնակներին: Այդ ուղերձները պատրաստելիս նրանցից ամեն մեկն աղոթել էր անձնական հայտնության համար: Ինձ համար ուշագրավ է, թե ինչպես են այդ թեմաները իրար լրացնում: Երբ ուսումնասիրեք դրանք, ձգտեք սովորել այն, թե ինչ է Տերը փորձում ուսուցանել *ձեզ* Իր ծառաների միջոցով:

Երաժշտությունը փառահեղ էր: Մենք խորապես երախտապարտ ենք այն բազմաթիվ երաժիշտներին, ովքեր իրենց տաղանդները միավորել են՝ Տիրոջ Հոգին յուրաքանչյուր նիստին հրավիրելու համար: Եվ Նա օրհնել է յուրաքանչյուր նիստի աղոթքներն ու հավաքվածներին: Իրոք, համաժողովը դարձյալ հոգևոր տոն էր բոլորիս համար:

Մենք հուսով ենք և աղոթում ենք, որ յուրաքանչյուր անդամի տունը դառնա հավատքի ճշմարիտ սրբավայր, որտեղ Տիրոջ Հոգին կարող է բնակվել: Չնայած մեզ շրջապատող հակառակությանը, մեր տունը կարող է դառնալ երկնային վայր, որտեղ ուսումնասիրությունը, աղոթքը և հավատքը կարող են միավորվել սիրով: Մենք կարող ենք իսկապես դառնալ Տիրոջ աշակերտները, պաշտպանել և ներկայացել Նրան, ուր էլ որ լինենք:

Աստծո նպատակը պետք է լինի մեր նպատակը: Նա ցանկանում է, որ Իր զավակներն *ընտրեն* վերադառնալ Իր մոտ՝ պատրաստ, որակավորված, օժտում ստացած, կնքված և հավատարիմ այն ուխտերին, որոնք կապել են սուրբ տաճարներում:

Ներկայումս մենք ունենք 162 նվիրագործված տաճարներ: Ամենահին տաճարները կանգնած են որպես մեր սիրելի ռահվիրաների հավատքի և տեսլականի հուշարձաններ: Նրանց կողմից կառուցված յուրաքանչյուր տաճար արդյունք է նրանց մեծ անձնական զոհաբերության և ջանքերի: Յուրաքանչյուր տաճար գոյություն ունի որպես ռահվիրաների ձեռքբերումների ուշագրավ մի զարդ:

Մենք սուրբ պարտականություն ունենք նրանց մասին հոգ տանել: Հետևաբար, այս ռահվիրա տաճարները շուտով կենթարկվեն նորացման և թարմացման, իսկ մի մասը կենթարկվեն հիմնական վերականգնման: Ջանքեր են ներդրվելու յուրաքանչյուր տաճարի եզակի պատմականությունը պահպանելու համար, պահպանելով ոգեշնչող գեղեցկությունը և վաղուց վախճանված սերունդների եզակի արհեստագործությունը:

Սենթ Ջորջ Յուտա տաճարի մանրամասներն արդեն լույս են տեսել: Սոլթ Լեյքի տաճարի, Տաճարային հրապարակի և Եկեղեցու գրասենյակի շենքի հարևանությամբ գտնվող պլազայի վերանորոգման ծրագրերը կհրապարակվեն 2019 թվականի ապրիլի 19-ին, ուրբաթ օրը:

Մանթիի և Լոգանի (Յուտա) տաճարները նույնպես կվերանորոգվեն առաջիկա տարիներին: Երբ այդ ծրագրերը պատրաստ լինեն, դրանք նույնպես կհրապարակվեն:

Այդ աշխատանքների պատճառով յուրաքանչյուր տաճար կփակվի որոշ ժամանակով: Եկեղեցու անդամները կարող են շարունակել վայելել տաճարային երկրպագությունը և ծառայությունը մոտակա մյուս տաճարներում: Երբ բոլոր նախագծերն ավարտվեն, յուրաքանչյուր պատմական տաճար կվերանվիրագործվի:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք տաճարը համարում ենք Եկեղեցու ամենասուրբ կառույցը: Երբ հայտարարում ենք *նոր* տաճարի կառուցման ծրագրերը, այն դառնում է մեր սրբազան պատմության մասը: Այժմ, լսեք ուշադիր և ակնածալից:

Եթե ես տաճար հայտարարեմ ձեզ համար կարևոր վայրում, կարո՞ղ եմ առաջարկել, որ դուք պարզապես ձեր գլուխը խոնարհեք և ձեր սրտում երախտագիտության լուռ աղոթք ասեք: Մենք չենք ուզում, որ բանավոր պոռթկումները շեղեն մեզ այս համաժողովի սուրբ բնույթից և Տիրոջ սուրբ տաճարներից:

Այսօր, մենք ուրախ ենք հայտարարել ավելի շատ տաճարների կառուցման ծրագրերի մասին, որոնք կկառուցվեն հետևյալ վայրերում.

Պագո Պագո (Ամերիկյան Սամոա), Օկինավա Միթի (Օկինավա), Նեյաֆու (Տոնգա), Տուելի հովիտ (Յուտա), Մոզես լիճ (Վաշինգտոն), Սան Պեդրո Սուլա (Հոնդուրաս), Անտաֆագաստա (Չիլի), Բուդապեշտ (Հունգարիա):

Շնորհակալություն, իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր:

Խոսելով մեր հին ու նոր տաճարների մասին, թող ամեն մեկս մեր արարքով կարևորենք, որ մենք Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն ենք: Թող որ մեր կյանքը վերանորոգենք Նրա հանդեպ մեր հավատքի և վստահության միջոցով: Թող որ ամեն օր մեր ապաշխարությամբ ստանանք Նրա Քավության զորությունը: Եվ թող մենք նվիրաբերենք և վերանվիրաբերենք մեր կյանքը՝ ծառայելով Աստծուն և Նրա զավակներին վարագույրի երկու կողմում:

Ես թողնում եմ իմ սերը և օրհնությունը ձեր վրա, հավաստիացնելով ձեզ, որ հայտնությունները շարունակվում են այս՝ Տիրոջ Եկեղեցում Այն կշարունակվի, մինչև «Աստծո նպատակներն իրականացվեն, և Մեծ Եհովան ասի՝ աշխատանքը կատարված է»:[1]

Ես օրհնում եմ և բերում եմ իմ վկայությունը, որ Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Սա Նրա Եկեղեցին է: Մենք Նրա ժողովուրդն ենք: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄ

1. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 142

Վիճակագրական հաշվետվություն, 2018

Ի գիտություն Եկեղեցու անդամների, Առաջին Նախագահությունը հրապարակել է Եկեղեցու աճի և կարգավիճակի վերաբերյալ հետևյալ վիճակագրական հաշվետվությունը՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՎՈՐՆԵՐ	
Ցցեր	3,383
Միսիաներ	407
Շրջաններ	547
Ծխեր և ճյուղեր	30,536
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ	
Անդամների ընդհանուր թիվը	16,313,735
Նոր գրանցված երեխաներ	102,102
Նորադարձների մկրտությունների թիվը	234,332
ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐ	
Լիաժամկետ միսիոներներ	65,137
Եկեղեցում ծառայող միսիոներներ՝	37,963
ՏԱՃԱՐՆԵՐ	
2018թ. նվիրագործված տաճարներ (Կոնսեփսիոն Չիլի, Բարանգվիլա Կոլումբիա)՝	2
2018թ. վերանվիրագործված տաճարներ (Հյուստոն Տեխաս, Ջորդան Ռիվեր Յուտա)՝	2
Գործող տաճարներ տարեվերջին՝	161

Ստորև տրվում է գերագույն համաժողովի ելույթներից ընտրված փորձառությունների մի ցանկ, որը կարելի է օգտագործել անձնական ուսումնասիրության, ընտանեկան երեկոների և ուսուցումների ժամանակ: Համարը ցույց է տալիս ելույթի առաջին էջը:

Նիլ Լ. Անդերսեն	(34) Նույն սեռի հանդեպ համակրանք ունեցող մարդը մնում է հավատարիմ իր ուխտերին: Կինը, որը երբեք չէր ամուսնացել, կենտրոնանում է ծառայության վրա:
Դ. Թոդ Քրիստոֆերսոն	(81) Իտալիայի երիտասարդները Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին ցույց են տալիս իրենց նախնիների տաճարային քարտերը:
Քարլ Բ. Քուք	(51) «Եղբայրության ջոկի» անդամները, ովքեր Բոցվանայում ամրացնում և օգնում են դարձի բերել միմյանց, միսիոներական ծառայության շնորհիվ օրհնում են բազմաթիվ կյանքեր: Քահանայության քվորումներն իսկապես աջակցում և օրհնում են երիտասարդ Կարլ Բ. Քուքին:
Քվենթին Լ. Քուք	(76) Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հրավերն առաջնորդում է Երեց Օ. Վինսենթ Հալեքի հորը մկրտվել:
Բեքի Քրեյվեն	(9) Ականատեսը դժգոհում է, որ գնացքի ինժեները չի փորձել թեքել ճանապարհը՝ գծերի մեջ խրված մեքենային բախվելուց առաջ:
Շերոն Յուբենկ	(73) Սոլթ Լեյք տաճարի արտաքին գիշերային լույսերը չէին միացել: Երազը Շերոն Յուբենկին տալիս է հավատը մեծացնելու ցանկություն:
Ջերիթ Վ . Գոնգ	(97) Խանութից գողություն անող մարդու հանդեպ կարեկցանք զգալուց հետո Ջերիտ Վ. Գոնգի ընկերը սկսում է հասկանալ Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությունը:
Բրուք Պ. Հեյլս	(11) Բրուք Պ. Հեյլսի երկու որդիները սովորում են, որ աղոթքներին պատասխանելիս Աստված ի սկզբանե գիտի ամեն բան: «Սա նույնպես կանցնի» դառնում է մի հավատարիմ կնոջ նշանաբանը, ով հաշտվում է իր կուրության հետ:
Մաթիաս Հելդ	(31) Մաթիաս և Իռեն Հելդերները միացան Եկեղեցուն այն բանից հետո, երբ հասկացան ճշմարտությունը ուսումնասիրության և Հոգու շնորհիվ:
Դեյվիդ Փ. Հոմեր	(41) Լինելով փոքրիկ ինքնաթիռի ուղևորը, Դեյվիդ Փ. Հոմերը սովորում է ճիշտ ձայնը լսելու կարևորությունը: Դեյվիդ Փ. Հոմերը և նրա կինը սովորում են, որ աղոթքի պատասխանները կարող են դանդաղ ստանալ: Դեյվիդ Փ. Հոմերի եղբայրն, ի հեճուկս ձախորդության, համբերում է մինչև վերջ:
Քայլ Ս. Մակքեյ	(105) Թմրամոլության դեմ պայքարող մի կին և դժբախտ պատահարի ժամանակ որդուն կորցրած մի մայր, մխիթարվում և հաստատվում են Մեծ Ազատարարի կողմից:
Ռասսել Մ. Նելսոն	(67) Մայրը և նրա դուստրերը պայքարում են սպորտի և խաղերի դեմ՝ իրենց ընտանիքի տղամարդկանց ուշադրությունը գրավելու համար: (88) Ռասսել Մ. Նելսոնը և նրա դուստր Վենդին իրենց «հայր-դուստր հրաժեշտի զրույցի» ժամանակ զրուցում են «այն ամենի մասին, ինչը կարևոր է»: Ուսուցիչների մի աշխատակից, ով օգնում է մարդկանց փախչել անտառային հրդեհից, մտածում է. «*Որտե՞ղ* է *իմ* ընտանիքը»: Ռասսել Մ. Նելսոնի ընկերը հրաժարվում է փոփոխություններ կատարել՝ ավետարանի օրհնություններին արժանանալու համար:
Դալլին Հ. Օուքս	(60) Քոլեջի ուսանողները, ովքեր դիտում են, թե ինչպես է մի շուն գաղտագողի մոտենում սկյուռիկին, չեն հարցնում, թե «ինչի՞ կհասցնի սա»: Կոլումբիացի զույգի հինգ օր և հինգ գիշեր տևող ավտոբուսի ուղևորությունը տաճարում ամուսնանալու համար փոխում է տաճարի ամուսնության և ավետարանի մասին նրանց մտածելակերպը:
Դեյլ Գ. Ռենլանդ	(70) «Առաջին անհարմար ասված աղոթքը» օգնում է քիչ ակտիվ մի անդամի Եկեղեցում տպավորություն ստանալ, որ «սա իմ տունն է»:
Ուլիսես Սոարես	(6) Միայնակ մայրը ավետարանի օրհնությունները սերմանում է իր երեխաների սրտերում:
Գարի Ի. Սթիվենսոն	(47) Ավագ դպրոցում լինելով քահանա, ապագա Առաքյալը մերժում է դիտել ոչ պատշաճ մի ֆիլմ, դրանով քաջալերելով ընկերոջը:
Խուան Պաբլո Վիլար	(95) Իր միսիոներ եղբոր հետ մեկ օր քարոզելուց հետո Խուան Պաբլո Վիլարը որոշում է մկրտվել և ծառայել միսիայում:
Տակաշի Վադա	(38) Տակաշի Վադայի մայրը միանում է Եկեղեցուն, երբ Տերը դիպչում է նրա սրտին մի տղայի բարի գործի միջոցով:
Վ. Քրիստոֆեր Վադել	(19) Ընտանիքի և ընկերների սպասավորող ջանքերի շնորհիվ Վ. Քրիստոֆեր Վադելի եղբայրն իր մահից առաջ ընդունում է ավետարանը:

Երեց Ռուբեն Վ. Ալիո

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Ռուբեն Ալիոն 14 տարեկան էր, երբ հեռացավ Արգենտինայից և մեկ տարի անցկացրեց Միացյալ Նահանգներում իր քեռու մոտ: Նրա հայրը՝ Ռուբեն Ռեյնալդո Ալիոն, վաղուց էր մահացել, իսկ Ռուբենը «ապստամբ հոգի» ուներ:

Նրա մտահոգ մայրը՝ Մարիան, նրան ուղարկեց Հյուսթոն (Տեխաս), որպեսզի նա ապրի իր եղբոր՝ Մանուել Բուստոսի և նրա ընտանիքի մոտ: Նա իր եղբոր ընտանիքի առաջ մի պայման դրեց. «Վերջին Օրերի Սրբերի ձեր հավատքով չկիսվեք իմ որդու հետ»:

Սակայն, ավետարանի հոգին դիպավ պայքարող դեռահասին: Նա նկատեց, թե ինչպես է Եկեղեցին աղոթքի և ծառայության շնորհիվ միավորում Բուստոսների ընտանիքը, և նա չէր կարող չնկատել իր սենյակի դարակներում շարված Մորմոնի Գրքի բազմաթիվ օրինակները:

Հետաքրքրասիրությունից դրդված նա վերցրեց մեկ օրինակ և գտավ Մորոնիի խոստումը՝ աղոթքի միջոցով նա կարող էր իմանալ, որ Մորմոնի Գիրք ճշմարիտ է:

«Այդ խոստումը հուզեց ինձ»,- ասում է նոր կանչված Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունականը: «Ես ցանկանում էի կարդալ գիրքը»:

Նա լուրջ մոտեցավ Մորոնիի հրավերին, ստացավ հաստատող պատասխանը և իր զարմացած քեռուն ասաց, որ ցանկանում է մկրտվել: Մանուել քեռին Ռուբենին անմիջապես հետ ուղարկեց Արգենտինա՝ մոր թույլտվությունը ստանալու համար Շուտով նա մկրտվեց: Այդ օրվանից ի վեր վերականգնված ավետարանը խարսխվել է Երեց Ալիոյի կյանքում:

Ռուբեն Վիսենտ Ալիոն ծնվել է 1966 թվականի հունվարի 8-ին Բուենոս Այրեսում: 1992 թվականի դեկտեմբերի 17-ին նա ամուսնացել է Ֆաբիանա Բենետ Լամասի հետ Բուենոս Այրես Արգենտինայի տաճարում: Նրանք ունեն վեց զավակ:

Երեց Ալիոն իրավագիտության աստիճան է ստացել Բուենոս Այրեսի Բելգրանոյի Համալսարանում և ունեցել է լայնածավալ իրավաբանական կարիերա՝ մասնագիտանալով քրեական օրենքի ոլորտում: 1998 թվականից նա եղել է Alliaud & Asociados ընկերության գործադիր գործընկերը:

Նա ծառայել է Տարածքային Յոթանասունական, Արգենտինա Կորդոբա միսիայի նախագահ, ցցի նախագահ, բարձրագույն խորհրդական, եպիսկոպոս, երեցների քվորումի նախագահ և միսիոներ՝ Ուրուգվայի Մոնտեվիդեո միսիայում: Ծառայության կանչվելու պահին նա ծառայում էր ինստիտուտի ուսուցիչ, Արգենտինայի միսիոներական ուսումնական կենտրոնի նախագահության առաջին խորհրդական և հանրային կապերի տնօրեն: ■

Երեց Խորխե Մ. Ալվարադո

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Միգել և Այրիս Ալվարադոները Եկեղեցուն միացան Պուերտո Ռիկոյում 1977 թվականին, երբ նրանց որդի Խորխեն վեց տարեկան էր: Երիտասարդ Խորխեն մկրտվեց երկու տարի անց և երբեք բաց չթողեց հանգստության օրվա ծառայությունները:

«Սակայն իմ անձնական դարձը տեղի ունեցավ 16 տարեկանում»,- ասում է նոր կանչված Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունականը:

Ավագ դպրոցում նա իր ծննդավայր Պոնսում սկսեց ծառայել որպես սեմինարիայի դասի նախագահ: Այդ տարի ուսանողներն ուսումնասիրում էին Մորմոնի Գիրքը: Նրա նոր պարտականությունը ստիպեց նրան ինքնավերլուծությամբ զբաղվել:

«Ես ստիպված էի ինքս ինձ հարցնել. «Ես իսկապե՞ս գիտեմ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է»: Ինչպե՞ս կարող էի լինել սեմինարիայի դասի նախագահ, եթե նույնիսկ չգիտեի՝ արդյո՞ք այդ գիրքը ճշմարիտ է»:

Նա վերցրեց Մորմոնի Գրքի իր օրինակը և կյանքում առաջին անգամ սկսեց ջանասիրաբար կարդալ այն:

«Ես ծնկի իջա և աղոթեցի և այդ ժամանակ իմացա, որ այն ճշմարիտ է»,- ասում է նա:

Մորմոնի Գիրքը շարունակում է վճռորոշ ներգործություն ունենալ Երեց Ալվարադոյի կյանքում:

Ֆլորիդայի Տամպա միսիայում լիաժամկետ միսիոներ ծառայելիս նա Մորմոնի Գրքով կիսվեց բոլոր նրանց հետ, ում սովորեցնում էր: Ավելի ուշ, նա այդ գիրքն ուսումնասիրում էր իր կնոջ և երեք երեխաների հետ: Պուերտո Ռիկո Սան Խուան միսիայի նախագահ ծառայելու ժամանակ իր միսիոներներին կոչ արեց սիրել և կիսվել Մորմոնի Գրքով:

Այժմ, որպես Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական, Երեց Ալվարադոն ոգեշնչված շարունակում է հրավիրել ուրիշներին՝ բացահայտել Մորմոնի Գրքի կյանք փոխող ճշմարտությունները:

Խորխե Միգել Ալվարադո Պացոն ծնվել է 1970 թվականի նոյեմբերի 21-ին: 1992 թվականի դեկտեմբերի 19-ին նա ամուսնացավ Կարի Լու Ռիոսի հետ Վաշինգտոն Կ.Շ. տաճարում:

Պուերտո Ռիկոյի համալսարանում բիզնեսի կառավարում սովորելուց հետո նա աշխատել է բիզնեսի կառավարման տարբեր հաստիքներում՝ Պուերտո Ռիկոյում և Միացյալ Նահանգներում: Վերջերս աշխատել է Սոլթ Լեյք Սիթիի Եկեղեցու գլխավոր գրասենյակում՝ որպես Ինքնապահովման ծառայությունների միջազգային կառավարիչ:

Երեց Ալվարադոն ծառայել է Տարածքային Յոթանասունական, ցցի նախագահ, բարձրագույն խորհրդական, ճյուղի նախագահ և ծխի միսիայի ղեկավար: ■

Երեց Հանս Թ. Բում

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Երբ Երեց Հանս Թ. Բումը ութ տարեկան էր, ընտանիքն Ամստերդամից տեղափոխվեց Նիդերլանդների հարավային մասում գտնվող Բրեդա քաղաքը: Նրա հոլանդացի հայրը, ով մեծացել էր Ինդոնեզիայում և Եկեղեցու նորադարձ էր, հասկացավ, որ իր ընտանիքը պետք է լքի մեծ քաղաքը և վերադառնա իր նախնիների արմատներին:

Ընտանիքի հետ այդ փոքրիկ ճյուղում անցկացրած Երեց Բումի ժամանակը վերապատրաստման հիմք հանդիսացավ Եկեղեցում ծառայելու համար. նա ծառայել է իր ամբողջ կյանքի ընթացքում և շարունակելու է ծառայել իր նոր կոչման մեջ՝ որպես Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական:

Նա ասում է. «Այն, թե ով եմ ես, և այն ամենի համար ինչ ես ունեմ, պարտական եմ Տիրոջը, և հնարավորությունների համար, որ Նա է տվել ինձ սովորելու և աճելու համար»:

Ծնվել է 1963 թվականի հուլիսի 13-ին Ամստերդամում, Հանս և Անկիե Բումերների ընտանիքում. Հանս Թեոդորոս Բումը չորս երեխաներից երկրորդն է: Նրա ծնողներն ավետարանն ուսուցանել են իրենց տանը և խրախուսել են երեխաներին ջանասիրաբար աշխատել:

18 տարեկանում Երեց Բումը ծառայել է Անգլիա Լոնդոն Արևելյան միսիայում: Միսիան ավարտելուց մի քանի ամիս անց չափահաս երիտասարդների համաժողովի ժամանակ հանդիպել է իր ապագա կնոջը՝ Արիենա Յոհաննա «Մարջան» Բրուկզիտերին: Զույգն ամուսնացավ 1984 թվականի հուլիսի 27-ին, Ռուն գյուղում (Նիդեռլանդներ) և երեք օր անց կնքվեց Լոնդոն Անգլիա տաճարում: Նրանք ունեն երեք որդի:

Երեց Բումն աշխատել է Markenhage College-ի տնօրենի քարտուղար և Franchise Development Benelux-ի հավաքագրող: Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական կանչվելու պահին նա վաճառքի մենեջեր էր աշխատում MacLean Agencies-ի համար:

Երեց Բումը ծառայել է Տարածքային Յոթանասունական, ցցի նախագահության խորհրդական, ցցի երիտասարդ տղամարդկանց նախագահ, ճյուղի նախագահ և ճյուղի նախագահության խորհրդական: Ծառայության կանչվելու պահին նա ծառայում էր ինստիտուտի ուսուցիչ և տաճարային արարողության ծառայող՝ Հաագա Նիդեռլանդներ տաճարում: ■

Երեց Լ. Թոդ Բաղջ

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Փոքր տարիքից Թոդ Բաղջի ծնողները սովորեցրել են նրան, թե ինչպես փնտրել Տիրոջ կամքը: Իր կյանքի ընթացքում նա փորձել է կիրառել դա յուրաքանչյուր որոշման մեջ:

Տարիներ անց, երբ կնոջ և հինգ երեխաների հետ նստած էին տանը, նա հոգևոր տպավորություն ստացավ՝ թողնել բանկային և ֆինանսական իր կարիերան: Փոփոխության համար նշանակալից զոհաբերություն կպահանջվեր, որպեսզի ստեղծեր նոր կարիերա:

Կարիերան փոխելու մեծ ջանքերից և նախապատրաստությունից հետո, Երեց Բաղջը հանդիպեց մի բացառիկ պատրաստված անձնավորության, որը նրան խորհուրդ տվեց: Այդ մարդն առաջարկեց, որ Երեց Բաղջը պահպանի իր բանկային կարիերան, հիշեցնելով, որ նա շատ հնարավորություններ կունենա խորհրդատվություն մատուցել և օգնել մարդկանց: «Մենք ազնիվ մարդկանց կարիքն ունենք բիզնեսում»,- այդ մարդն ասաց նրան:

Երեց Բաղջը համարեց, որ այդ հանդիպումը Տիրոջ կողմից գորովագութ ողորմություն էր: «Կարծում եմ Նա ցանկանում էր իմանալ, թե որտեղ է իմ սիրտը»,- ասաց նա: «Երբ Տերը ճանաչեց իմ սիրտը, Նա չպահանջեց զոհաբերություն, և ես վստահեցի, որ Նա կարող է ինձ օգտագործել իր նպատակների համար՝ առանց կարիերայի փոփոխության»:

Նրա կարիերան թույլ տվեց, որ նա գործարար աշխարհում բարի ազդեցություն ունենա, նույնիսկ, դռներ բացի Ճապոնիայում ավետարանը քարոզելու համար:

Երեց Լորենս Թոդ Բաղջը ծնվել է 1959 թվականի դեկտեմբերի 29-ին Պիտսբուրգում (Կալիֆորնիա, ԱՄՆ), Լոուել Ջենսենի և Դին Փրայս Բաղջերի ընտանիքում: Բրիգամ Յանգի համալսարանում իր առաջին տարեդարձի ժամանակ նա հանդիպեց Լորի Քափեների հետ: Ճապոնիայի Ֆուկուոկա միսիայից վերադառնալուց ութ ամիս հետո նրանք ամուսնացան Լոգան Յուտա Տաճարում: Նրանք ունեն վեց զավակ:

1984 թվականին ավարտելով ԲՅՀ-ի տնտեսագիտության բաժինը և ստանալով բակալավրի աստիճան, Երեց Բաղջն աշխատել է Բեյն & (Ճապոնիա), Citibank, N.A. և GE Capital ընկերությունների համար: 2003 թվականին նա դարձավ Tokyo Star Bank Limited- ի նախագահը և գլխավոր գործադիր տնօրենը, և բանկի խորհրդի նախագահ աշխատեց 2008-2011 թվականներին:

Երեց Բաղջը ծառայել է Տարածքային Յոթանասունական, Ճապոնիա Տոկիո միսիայի նախագահ, ցցի նախագահ, եպիսկոպոս, երեցների քվորումի նախագահ և ցցի Երիտասարդ տղաների նախագահ: ■

Երեց Ռիկարդո Պ. Խիմենես

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Չիլիի Անտաֆագաստա Եկեղեցու անդամները երկար կհիշեն 2019 թվականի ապրիլի գերագույն համաժողովում հնչած իրենց ապագա տաճարի մասին հայտարարությունը և իրենց հայրենակից՝ Երեց Ռիկարդո Պ. Խիմենեսի Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունականի կոչման մասին հայտարարությունը:

Երբ մտածում է իր նոր կոչման պարտականությունների մասին, Երեց Խիմենեսը հավատ ու քաջություն է գտնում «Ում Տերը կանչում է, Տերը նրան որակավորում է» խոսքերի մեջ (Thomas S. Monson, “Duty Calls,” *Ensign,* May 1996, 44):

«Այդ խոսքերն անցյալում շատ անգամներ եմ սովորեցրել, իսկ հիմա փորձում եմ դրանք կիրառել իմ դեպքում»,- ասում է նա: «Երկնային Հայրը կանչում է ձեզ: Նա ճանաչում է ձեզ: Այնպես որ, գնացեք և կատարեք այն, ինչ Նա ցանկանում է, և ամեն ինչ լավ կլինի»:

Ռիկարդո Պատրիսիո Խիմենես Սալազարը ծնվել է 1971 թվականի նոյեմբերի 28-ին, Ռիկարդո Բենջամին Խիմենես Գիմենոյի և Միրտո Լյուցիսկա Ամալիա Սալազար Սիգնորինիի երկու որդիներից ավագն է: Նա Եկեղեցուն է միացել 11 տարեկան հասակում և ծնողների ամուսնալուծությունից հետո իր մոր ու քրոջ հետ տեղափոխվել է Սանտյագո, Չիլի:

1995 թվականին Սանտյագոյում նա հանդիպեց Քեթրին Իվոն Կարրազանա Զունիգայի հետ, երբ վերջինս հորեղբոր տանը մնալիս սկսեց այցելել իր ծոխը: Նրանք կնքվել են Սանտյագո Չիլի Տաճարում 1997 թվականի սեպտեմբերի 12-ին և ունեն երկու զավակ:

1997 թվականին Երեց Խիմենեսը հաշվապահական հաշվառման և աուդիտի բակալավրի աստիճան է ստացել Սանտյագոյի Համալսարանում, իսկ 2003 թվականին բիզնեսի կառավարման աստիճան է ստացել Չիլիի Համալսարանում: Իր մասնագիտական կարիերան սկսել է հանքարդյունաբերության ոլորտում և, ի վերջո, տեղափոխել է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ՝ աշխատելով Computer Sciences Corporation-ի ֆինանսական տնօրեն Լատինական Ամերիկայում: 2012 թվականին նա վերադարձել է հանքարդյունաբերության ոլորտ՝ սկզբում աշխատելով Sierra Gorda Mining, որից հետո՝ Robinson Nevada Mining Company ընկերություններում:

Այս ծառայության կանչվելու պահին Երեց Խիմենեսը ծառայում էր ցցի նախագահության խորհրդական: Նա ծառայել է նաև Տարածքային Յոթանասունական Հարավային Ամերիկայի հարավային տարածքում, ցցի նախագահ, բարձրագույն խորհրդական, եպիսկոպոս, եպիսկոպոսության խորհրդական, ծխի Երիտասարդ տղաների նախագահությունում և լիաժամկետ միսիոներ Չիլի Կոնսեպսիոն միսիայում: ■

Երեց Պիտեր Մ. Ջոնսոն

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Բրիգամ Յանգ Համալսարանում (Հավայան կղզիներ) բասկետբոլի կրթաթոշակ ստանալով, շինությունների վերահսկիչի և տաքսու վարորդի որդին՝ Պիտեր Մ. Ջոնսոնը, մի օր կանգնեց ինստիտուտի ուսուցչի առաջ:

«[Կամ] դուք կմիանաք Եկեղեցուն անմիջապես, կամ դա տեղի կունենա որոշ ժամանակ անց», - կանխատեսեց ուսուցիչը:

Ուսուցիչը ճիշտ էր: Ավելի քան մեկ տարի անց Պիտերը «ծոմ պահեց, աղոթեց և ստացավ պատասխան»: Նա մկրտվեց 1986թ. օգոստոսի 16-ին:

Պիտեր Մեթյու Ջոնսոնը՝ հինգ երեխաներից չորրորդը, ծնվել է 1966 թվականի նոյեմբերի 29-ին Քուինսում (Նյու Յորք, ԱՄՆ), Մակքինլի Ջոնսոն և Ժենևա Փարիս Լոնգերի ընտանիքում:

Նրա ծնողները բաժանվեցին, երբ նա 11 տարեկան էր, իսկ մայրը տեղափոխվեց Հավայան կղզիներ: Մեկ տարի անց Պիտերը միացավ Իսլամական պետությանը և դարձավ մուսուլման: Այս զուգորդումն առաջնորդություն ու աջակցություն ցուցաբերեց և պատրաստեց նրան ընդունելու Հիսուս Քրիստոսի ավետարանը:

15 տարեկանում Պիտերը տեղափոխվեց Հավայան կղզիներ և ապրեց իր մոր հետ: Այնտեղ նա ծանոթացավ սպորտաձևերի՝ հատկապես բասկետբոլի հետ, և սկսեց ճանապարհ հարթել դեպի՝ համալսարանական կրթություն, անդամակցություն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում, Ալաբամա Բիրմինգհամ միսիայում միսիոներական ծառայության և տաճարային ամուսնության Ստեֆանի Լին Չադվիկի հետ՝ 1990 թվականին: Հյուսիսային Յուտայի համալսարանում բասկետբոլի խաղի ժամանակ հանդիպած զույգն ունի 4 զավակ:

«Ես այստեղ եմ՝ ծառայելու Տիրոջը», - ասում է Երեց Ջոնսոնը Յոթանասունի իր կոչման մասին: «Անկախ ազգությունից, մշակույթից կամ ծննդավայրից, իմ հանձնարարությունն է Տիրոջը ծառայել իմ ողջ սրտով, մտքով ու զորությամբ և Տիրոջը ներկայացնել Իր ժողովրդին: Փրկիչը սիրում է բոլորիս: Մենք Աստծո որդիներն ու դուստրերն ենք»:

Երեց Ջոնսոնը հաշվապահական հաշվառման բակալավրի և մագիստրոսական աստիճան է ստացել Հարավային Յուտայի Համալսարանում և հաշվապահական հաշվառման դոկտորի աստիճան է ստացել Արիզոնայի Պետական Համալսարանում: Նա եղել է թղթակից պրոֆեսոր Հավայան կղզիների Բրիգամ Յանգ Համալսարանում, աշխատել է պրոֆեսորի օգնական Բրիգամ Յանգ Համալսարանում և եղել է թղթակից պրոֆեսոր Ալաբամայի համալսարանում: Նա ծառայել է Տարածքային Յոթանասունական, ցցի նախագահ, ցցի ֆինանսական գործավար և ծխի միսիայի ղեկավար: ■

Երեց Ջոն Ա. Մակքյուն

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Իր աշխատանքային կարիերայի սկզբում Երեց Ջոն Ա. Մակքյուն զրուցում էր իր ղեկավարի հետ, որի ընթացքում ակնհայտ դարձավ, որ այդ մարդը շատ բան չգիտեր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մասին: Նրա ղեկավարը հարցրեց Երեց Մակքյունին, թե ինչու Վերջին Օրերի Սրբերը չեն պարում կամ թխվածք ուտում:

«Միանշանակ ես ուտում եմ բլիթներ»,- Երեց Մակքյունը ժպիտով ասաց իր ղեկավարին, տրորելով իր որովայնը: «Կարծում եմ, դուք մեզ մեկ ուրիշի հետ եք շփոթել»:

Զրույցի ընթացքում Երեց Մակքյունը պարզաբանեց Եկեղեցու մասին թյուրըմբռնումը: Այդ զրույցը հանգեցրեց այլ խոսակցությունների Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին, և Երեց Մակքյունի համար վերահաստատեց այն փաստը, թե որքան կարևոր է միշտ պատրաստ լինել ավետարանով կիսվելու համար:

«Մենք Փրկիչ Հիսուս Քրիստոսի աշակերտներն ենք, ուր էլ որ լինենք, ցանկացած պարագայում, ցանկացած առիթի ժամանակ»,- ասում է Երեց Մակքյունը: «Մենք ունենք աշխատանք և կարիերա, բայց դրանք կան, որպեսզի աջակցեն մեր ընտանիքներին և օգնեն մեզ հայտնվել այնպիսի իրավիճակներում, երբ կարող ենք կիսվել ավետարանով: Դա մեր առաջնային պարտականությունն է, որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ»:

Ջոն Ալեն Մակքյունը ծնվել է 1963 թվականի հունիսի 20-ին, Սանտա Կրուզ քաղաքում (Կալիֆորնիա, ԱՄՆ), Քլիֆորդ և Ջոան Շուլթիս Մակքյունների ընտանիքում: Նա հիմնականում մեծացել է Նիսսում (Օրեգոն, ԱՄՆ):

Ֆուկուոկայում (Ճապոնիա) լիաժամկետ միսիա ծառայելուց հետո, Երեց Մակքյունը Սոլթ Լեյքի տաճարում ամուսնացել է Դեբրա Էլեն Քինգսբուրիի հետ՝ 1984 թվականին: Նրանք ունեն չորս երեխա և ապրում են Միդվեյում (Յուտա, ԱՄՆ):

Երեց Մակքյունը ստացել է գիտությունների բակալավրի աստիճան ֆինանսների գծով Բրիգամ Յանգ Համալսարանից, իսկ ավելի ուշ բիզնես կառավարման մագիստրոսի կոչում ֆինանսների գծով՝ Կալիֆորնիայի Լոս Անջելեսի (ԼԱԿՀ) համալսարանից: 1997-2012 թթ. աշխատել է որպես Capital Investment Advisors-ի ավագ փոխնախագահ և գործադիր տնօրեն: Այնուհետև նա ծառայել է Յուտա Պրովո միսիայի նախագահ, որից հետո դարձել է նվիրատուների միջնորդ LDS բարեգործական հիմնադրամի հիմնական նվերների համար:

Երեց Մակքյունը իր նոր կոչումը ստանալուց առաջ ծառայում էր Տարածքային Յոթանասունական: Նա նաև ծառայել է ցցի նախագահ, եպիսկոպոս, եպիսկոպոսության և ճյուղի խորհրդական և երեցների քվորումի նախագահ: ■

Երեց Ջեմս Ռ. Ռասբանդ

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Երբ Երեց Ջեմս Ռ. Ռասբանդը տարիներ առաջ կանչվեց ցցի նախագահություն, նա անպատրաստ էր զգում: «Սա պետք է որ սխալմունք լինի»,- մտածում էր նա:

Նման անհամապատասխանություն էր զգացել 19 տարեկանում Պրովոյի միսիոներական ուսումնական կենտրոն մուտք գործելիս՝ Սեուլում (Հարավային Կորեա) լիաժամկետ միսիա ծառայությանպատրաստվելու համար: «Ես ինչպե՞ս պետք է անեմ սա»,- մտածում էր նա:

Երկու դեպքում էլ պատասխանը նույնն էր. «Մնա այդտեղ: Ուրախությունը մոտենում է»: Կամ ինչպես իր մայրն էր ասում. «Տերը չունի կատարյալ մարդկանց պաշար: Պարզապես գնա աշխատելու»:

Երեց Ռասբանդը մի քիչ տատանվում է այժմ, երբ մոտենում է Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական իր կոչմանը, բայց նա գիտի պատասխանը. «Մեր Երկնային Հայրը պարզապես ցանկանում է, որ մենք գնանք աշխատելու և կիսվելու Նրա Որդու քավիչ զոհաբերության բժշկող և ուրախալի ուղերձով»:

Ջեյմս Ռիչարդս Ռասբանդը ծնվել է 1963 թվականի մարտի 20-ին, Սիեթլ քաղաքում (Վաշինգտոն), Ջեյմս Ի. և Եսթեր Ռասբանդների ընտանիքում: Նա մեծացել է Փեբլ Բիչում (Կալիֆորնիա, ԱՄՆ), մի տանը, որն օվկիանոսի ափից ընդամենը 180 մետր էր հեռու գտնվում:

Երեց Ռասբանդը ծանոթացավ Մերի Դիան Վիլյամսի հետ Բրիգամ Յանգ Համալսարանի առաջին կուրսում: Նրանք գրում էին իրար, երբ նա հինգ ամսով գնացել էր սովորելու Իսրայելում, իսկ դրանից հետո՝ Կորեայի Սեուլ միսիայի ողջ ընթացքում: Նրանք ամուսնացել են Լոս Անջելես Կալիֆորնիա տաճարում՝ 1984 թվականի օգոստոսի 11-ին: Նրանք ունեն չորս զավակ:

Իր միսիայից վերադառնալուց հետո 1986 թվականին նա ստացել է անգլերենի և Մերձավոր արևելագիտության բակալավրի աստիճան ԲՅՀ-ում, որից հետո 1989 թվականին ստացել է իրավագիտության դոկտորի աստիճան՝ Հարվարդի իրավաբանական ֆակուլտետից: Սիեթլ քաղաքում հինգ տարի օրենքի ոլորտում աշխատելուց հետո 1995 թվականին վերադարձել է ԲՅՀ՝ Ջ. Ռուբեն Քլարկի անվան իրավաբանական ֆակուլտետի աշխատակազմին միանալու համար: 2009–2016 թվականներին աշխատել է իրավաբանական ֆակուլտետի դեկան, որտեղ դարձել է ԲՅՀ-ի ուսումնական գծով փոխնախագահ:

Երեց Ռասբանդը ծառայել է Տարածքային Յոթանասունական, ցցի նախագահ, ցցի նախագահության խորհրդական, բարձրագույն խորհրդական, եպիսկոպոս և ծխի Երիտասարդ տղաների նախագահ: ■

Երեց Բենիամին Մ. Զ. Թայ

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Երեց Բենիամին Մ. Զ. Թայի հայրական պապին ճապոնական զորքերը Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Հոնկոնգը զավթելուց հետո գերի են վերցրել, բանտարկել և մահապատժի ենթարկել:

Դրանից տասնամյակ անց Երեց Թայը հանդիպել է իր ապագա կնոջ՝ ճապոնացի Նաոմի Թոմայի հետ, երբ ծառայում էր Երեցների Քվորումի նախագահ Բրիգամ Յանգի համալսարանի իր ուսանողական ծխում: Նաոմին ծառայում էր Սփոփող Միության նախագահ:

Երբ Բենիամինը հայտնեց իր հորը՝պատվավոր Բարձրագույն Իշխանավոր Երեց Կվոկ Յուեն Թային, որ ինքը ժամադրվում է և մտածում է ամուսնանալ Նաոմիի հետ, նրա հայրը դժգոհություն չարտահայտեց: Իրականում, Նաոմիի ծնողները, Ռիկուո և Ֆումիկո Թոմաները, ժամանեցին Հոնկոնգ՝ այցելելու Բենիամինի ծնողներին: Նրա ծնողները նշեցին, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը նրանց ամուսնությունը հնարավոր դարձրեց: Զույգն ամուսնացավ Սոլթ Լեյքի Տաճարում, 1995 թվականի դեկտեմբերի 31-ին: Նրանք ունեն վեց երեխա:

«Մենք սերում ենք տարբեր մշակույթներից, բայց կան հավատքի և զոհաբերության ընդհանուր թելեր», - ասում է Երեց Թայը: Երեց Թայը գիտի, որ հավատքի և զոհաբերության այդ թելերն այժմ աշխարհով մեկ կապում են իրեն Վերջին Օրերի Սրբերի հետ:

Բենիամին Մինգ Զե Թայը ծնվել է 1972 թվականի մայիս 20-ին, Հոնկոնգում՝ Կվոկ Յուեն և Հուի Հուա Թայերի ընտանիքում: Հոր աշխատանքի բերումով նրանց ընտանիքը շրջել է աշխարհով մեկ՝ նախքան նրանք ներգաղթել են Հարավային Կալիֆորնիա (ԱՄՆ), որտեղ Երեց Թայն անցկացրել է իր պատանեկության տարիները: Նրանց տանը չինարեն գեղագրությամբ մագաղաթի վրա ծնողները փակցրել են հետևյալ բառերը. «Բայց ես եւ իմ տունը Եհովային ենք պաշտելու» (Հեսու 24.15): Դա եղել է Թայ ընտանիքի նշանաբանը:

Ավստրալիայի Մելբուրնի միսիայում ծառայելուց հետո Երեց Թայը 1996 թվականի ԲՅՀ-ում ստացավ կիրառական գիտությունների բակալավրի աստիճան, իսկ 2003 թվականին Կալիֆորնիայի Լոս Անջելեսի (ԼԱԿՀ) համալսարանից ստացավ բիզնեսի կառավարման աստիճան: Նա Ճապոնիայում և Հոնկոնգում աշխատել է ներդրումային բանկային գործի և անշարժ գույքի զարգացման ոլորտում:

Երեց Թայը ծառայել է Տարածքային Յոթանասունական, շրջանի նախագահ, շրջանի նախագահության խորհրդական, շրջանի գործադիր քարտուղար, երեցների քվորումի նախագահ, ճյուղի նախագահ և Կիրակնօրյա դպրոցի ուսուցիչ: ■

Երեց Ալան Ռ. Ուոքեր

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Նոր մշակույթների ուսումնասիրությունը և դրանց մեջ ներգրավվածությունը դարձել է կյանքի հոբբի Երեց Ալան Ռ. Ուոքեր համար, որը նրան կծառայի Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունականի իր կոչման մեջ:

Ծնվել է 1971 թվականի հունվարի 2-ին Արգենտինայի Բուենոս Այրես քաղաքում, Վիկտոր Ադրիան Ուոքերի և Կրիստինա Օֆելիա Սփարոու Ուոքերների ընտանիքում. Ալան Ռոյ Ուոքերը մեծացել է Հյուսիսային և Հարավային Ամերիկայի տարբեր մասերում:

Իր մանկության տարիներն անցկացրել է Արգենտինայում, նախքան ընտանիքը կտեղափոխվեր Բոստոն (Մասաչուսեթս, ԱՄՆ), իսկ հետո իր հոր աշխատանքային հանձնարարությամբ՝ Մեքսիկո Սիթի (Մեքսիկա):

«Անգլերեն լեզվի ուսուցումը հսկայական օրհնություն էր», - ասում է նա: Ավետարանում աճելով, նա կարողացավ զարգացնել իր վկայությունը և վաղ հասակում նախապատրաստվեց միսիա գնալու համար: Մեկ տարի Բրիգամ Յանգի համալսարան հաճախելուց հետո Երեց Ուոքերը լիաժամկետ միսիա ծառայեց Թենեսի Նաշվիլ միսիայում:

Լուրջ վթարից հոր ապաքինմանն աջակցելու համար Երեց Ուոքերը հետաձգեց միսիայից հետո համալսարան վերադառնալը և վերադարձավ Արգենտինա: Այդ ընթացքում, ինստիտուտի պարերի ժամանակ, նա ծանոթացավ Ինես Մարսելա Սուլի հետ: Ութ ամիս անց, 1993 թվականի օգոստոսի 12-ին, նրանք ամուսնացան Բուենոս Այրեսի (Արգենտինայի) տաճարում: Հաջորդ օրը, երիտասարդ զույգը տեղափոխվեց Պրովո (Յուտա, ԱՄՆ», որտեղ 1996 թվականին Երեց Ուոքերը ստացավ տնտեսագիտության բակալավրի աստիճան:

Երեց Ուոքերը երեք տարի աշխատել է Citibank- ի կորպորատիվ բանկիր, վեց տարի Հարավային Ամերիկայի Հարավային տարածքում աշխատել է Եկեղեցու վերահսկիչ, 11 տարի աշխատել է Մեքսիկայի տարածքում, իսկ վերջերս՝ որպես Հարավային Ամերիկայի Հարավային տարածքների նյութական գործերի տնօրեն: 2010 թվականին Երեց Ուոքերը կանչվեց նախագահելու Մեքսիկայի Մոնտերեյ Արևելյան միսիայում:

Ուոքերները, իրենց դստեր հետ միասին, սիրում են ծառայել ուրիշներին, սիրում են ճանապարհորդել և ծանոթանալ նոր վայրերի և մարդկանց հետ:

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական կանչվելուց առաջ Երեց Ուոքերը ծառայել էր Եկեղեցու տարբեր կոչումներում, այդ թվում՝ Տարածքային Յոթանասունական, ցցի նախագահության խորհրդական, բարձրագույն խորհրդական, եպիսկոպոս, եպիսկոպոսի խորհրդական և ծխի միսիայի ղեկավար: ■

Մարկ Լ. Փեյս

Կիրակնօրյա դպրոցի գերագույն նախագահ

Եկեղեցու նոր Կիրակնօրյա Դպրոցի Գերագույն Նախագահ ծառայելու համար նախատեսված հարցազրույցի գնալուց առաջ Եղբայր Մարկ Լ. Փեյսը աղոթքով պարտավորություն ստանձնեց:

«Երկնային Հայր, ինչ էլ ցանկանաս, ես ուրախությամբ կանեմ դա»,- աղոթեց նա: «Պարզապես իմացիր, որ ես պատրաստ եմ»:

Եղբայր Փեյսն ասում է, որ իր նոր կոչման մեջ հիմնական ցանկությունն է օրհնել, աջակցել և խրախուսել Եկեղեցու անդամներին: «Մենք ցանկանում ենք տալ այն ամենն, ինչ ունենք»,- ասել է նա Կիրակնօրյա դպրոցի նոր նախագահության մասին:

Մարկ Լեոնարդո Փեյսը ծնվել է 1957 թվականի հունվարի 1-ին Բուենոս Այրեսում (Արգենտինա), Լորին Նելսոն և Մերիլին Հայմոն Փեյսերի ընտանիքում: Այդ ժամանակ Եղբայր Փեյսի հայրը Արգենտին միսիայի նախագահն էր:

Եղբայր Փեյսը հանդիպեց իր ապագա կնոջը՝ Էն Մարի Լանգելլենին, երբ երկուսով միասին սովորում էին երկրորդ դասարանում Սոլթ Լեյք Սիթիում (Յուտա, ԱՄՆ): Ավելի ուշ, քաղաքի տարբեր ավագ դպրոցներում սովորելիս, նրանք վերամիավորվեցին սեմինարիայի միասնական միջոցառման ժամանակ: Հաջորդող մի քանի տարիների ընթացքում նրանք գրում էին իրար, երբ նա ընտանիքին ուղեկցում էր Նորվեգիա, որտեղ նրա հայրը նախագահում էր Նորվեգիա Օսլո միսիան, իսկ այդ ժամանակ Եղբայր Փեյսը ծառայում էր Իսպանիա Մադրիդ միսիայում: Նրանք ամուսնացան 1978 թվականի նոյեմբերի 21-ին Սոլթ Լեյք Տաճարում և ունեն յոթ զավակ:

Եղբայր Փեյսը 1980 թվականին ավարտել է Յուտայի համալսարանը և ստացել տնտեսագիտության բակալավրի աստիճան, իսկ 1982 թվականին Հարվարդի բիզնես համալսարանում ստացել է բիզնեսի կառավարման աստիճան: Նյու Յորքում Price Waterhouse-ի հետ կարճ ժամանակ աշխատելուց հետո նա միացել է Սոլթ Լեյք Սիթիի Boyer Company-ին՝ 1984-2012 թվականներին աշխատելով առևտրային անշարժ գույքի զարգացման ոլորտում: Երեք տարի Իսպանիա Բարսելոնա միսիայի նախագահ լինելուց հետո 2015 թվականին նա միացել է Gardner Company-ին՝ աշխատելով անշարժ գույքի զարգացման ոլորտում:

Նոր կոչումը ստանալու պահին Եղբայր Փեյսը ծառայում էր Տարածքային Յոթանասունական: Եկեղեցում նրա նախորդ կոչումներն ընդգրկում են՝ ցցի նախագահություն, բարձրագույն խորհրդական, եպիսկոպոս, եպիսկոպոսության խորհրդական, երեցների քվորումի նախագահ, ծխի Երիտասարդ տղաների նախագահ և Սկաուտների ղեկավար: ■

Միլթոն Կամարգո

Գերագույն Նախագահության Կիրակնօրյա Դպրոցի Առաջին Խորհրդական

Հելիո դը Ռոչա Կամարգոյից, ով նախկինում մեկ ուրիշ եկեղեցու սպասավոր էր, պահանջվեց մոտ մեկ տարի, որպեսզի որոշի մկրտվել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Կարճ ժամանակ անց նրա կինը՝ Նաիր Բելմիրա դը Ռոչա Կամարգոն, որոշեց հետևել ամուսնու օրինակին և նույնպես մկրտվել:

Այդ ժամանակ Նաիրը հղի էր այդ զույգի որդով, ում նրանք կանվանակոչեին Միլթոն: Եկեղեցուն միանալու Կամարգոների միասնական որոշումը հավիտյան օրհնեց նրանց ընտանիքի ապագա սերունդներին:

Եղբայր Միլթոն դը Ռոչա Կամարգոն ծնվել է 1958 թվականի մարտի 10-ին, Սան Պաուլոյում (Բրազիլիայում): Եղբայր Կամարգոն, ով 2019 թվականի ապրիլի 6-ին հաստատվել է Կիրակնօրյա Դպրոցի Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական, ասում է, որ օրհնված է, որ մեծացել որպես Եկեղեցու անդամ:

«Տերը գիտի մեզ անհատապես»,- ասում է նա: «Մեզանից յուրաքանչյուրի համար նրա ծրագրերն ավելի մեծ են, քան մենք կարող ենք պատկերացնել»:

Եղբայր Կամարգոն իր կնոջ՝ Պատրիսիայի հետ հանդիպեց 1970-ականների վերջերին, երբ իր հայրը Բրազիլիա Ռիո դե Ժանեյրո միսիայի նախագահն էր: Զույգն ամուսնացավ 1980 թվականի հունվարի 4-ին, մոտ մեկ տարի անց նրանից հետո, երբ Եղբայր Կամարգոն, ծառայելով լիաժամկետ միսիոներ, տուն վերադարձավ Պորտուգալիա Լիզբոն միսիայից: Նրանք ունեն երեք զավակ:

Իրենց ամուսնության սկզբնական տարիներին Կամարգոներն ապրել են Ռիո դե Ժանեյրոյում, որտեղ եղբայր Կամարգոն ստացել է քաղաքացիական ինժեներիայի բակալավրի աստիճան «Instituto Militar de Engenharia» համալսարանում: Ավելի ուշ նա բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան ստացավ Բրիգամ Յանգ Համալսարանում:

Իր կարիերայի ընթացքում եղբայր Կամարգոն իր ժամանակն ու եռանդը ներդրել է ուրիշներին կրթելու գործում: Նա աշխատել է մի քանի համալսարաններում, այդ թվում՝ Laureate Brazil Online Education, Universidad Tecnológica de México, իսկ վերջերս BYU-Pathway Worldwide -ում՝ որպես ուսումնական ծրագրի փոխնախագահ:

Եղբայր Կամարգոն ծառայել է Տարածքային Յոթանասունական, Բրազիլիա Պորտո Ալեգրի Հարավային Միսիայի (1997-2000) նախագահ, Բրազիլիայի միսիոներական ուսումնական կենտրոնի (2002-2005) նախագահության խորհրդական, եպիսկոպոս, ցցի միսիայի նախագահ և երեցների քվորումի նախագահ: ■

Ժան Է. Նյուման

Կիրակնօրյա Դպրոցի Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդական

Երբ Ժան Է. Նյումանը Ստրասբուրգում (Ֆրանսիա) երիտասարդ միսիոներ էր, հատուկ հոգևոր փորձառություն ունեցավ, որն ամրապնդեց նրա վկայությունը և թույլ տվեց, որ նա զգա Երկնային Հոր սերը: Այդ փորձառությունը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ նա Մորմոնի Գրքում կարդում էր ավետարանի սերմերը մեր սրտերում սերմանելու մասին Ալմայի խոսքերը (տես Ալմա 32.28, 33.22–23):

«Ես կարդացի, որ եթե ձեր սրտում տեղ տաք այդ սերմին, ապա այն կաճի, և դուք իրականում կզգաք այդ ուռչելու շարժումները»,- ասել է եղբայր Նյումանը: «Ես հիշում եմ, որ կարդալիս Հոգին պարզապես այնքան ուժեղ էր վկայում, որ դա ճշմարիտ է: Ես զգում էի այդ ուռչելու շարժումները: Ես երբեք չեմ մոռանա դա, քանի դեռ ողջ եմ»:

Այդ և այլ փորձառությունները ամրապնդեցին եղբայր Նյումանի վկայությունը ավետարանի մասին և պատրաստեցին նրան կյանքի ծառայության համար՝ որպես ամուսին, հայր և Հիսուս Քրիստոսի աշակերտ:

Ժան Էրիկ Նյումանը ծնվել է 1960 թվականի ապրիլի 16-ին Ժերոմում (Այդահո, ԱՄՆ), Ջորջ Ռայմոնդի և Դորա Ուոքեր Նյումանների ընտանիքում: Նա մեծացել է Օվերտոնում (Նեվադա, ԱՄՆ): Նրա հայրը նորադարձ էր, իսկ մայրը բազմասերունդ Վերջին Օրերի Սուրբ էր:

Երիտասարդ տարիքում նա վկայությունը զարգացրեց և լիաժամկետ միսիա ծառայեց Ֆրանսիայում և Բելգիայում: Միսիան ավարտելուց հետո Եղբայր Նյումանը ստացավ ֆրանսերեն լեզվի բակալավրի աստիճան Բրիգամ Յանգ Համալսարանում: Նա այնքան էր սիրում իր մասնագիտությունը, որ մտածում էր դառնալ ֆրանսերենի ուսուցիչ, այնուամենայնիվ, նա որոշեց կարիերան շարունակել ծրագրային ապահովման ոլորտում: Ավելի քան 30 տարի աշխատել է որպես շարքային ձեռնարկատեր և հիմնադրել է մի շարք հաջողակ ծրագրային ընկերություններ: Ներկայումս նա համագործակցում է SageCreek Partners-ի հետ, որը տեխնոլոգիական խորհրդատվական ընկերություն է Ալպինում, Յուտա:

Եղբայր Նյումանը 1984 թվականի օգոստոսի 18-ին ամուսնացել է Լյուսիա Փրայսի հետ Օքլենդ Կալիֆորնիա տաճարում: Նրանք ունեն վեց զավակ և բնակվում են Էլկ Ռիդջում, Յուտա:

Եղբայր Նյումանը ծառայել է ցցի նախագահ, եպիսկոպոս, ծխի երիտասարդ տղաների նախագահ, սկաուտների ղեկավար և տաճարային ծառայող: 2006-2009 թվականներին նա եղել է Նեբրասկա Օմահա միսիայի նախագահ: ■

Նախագահ Նելսոնի սպասավորությունը շարունակվում է

2018թ. հոկտեմբերի գերագույն համաժողովից շատ չանցած Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ճամփորդեց **Պերու, Բոլիվիա, Պարագվայ, Ուրուգվայ** և **Չիլի,** որտեղ նա այցելեց անդամներին և միսիոներներին և անցկացրեց հոգևոր հավաքներ, այդ թվում՝ Չիլիի երիտասարդների հոգևոր հավաքը, որին մասնակցում էր 1500 մարդ և հեռարձակվում էր երկրով մեկ: Նա անդամների հետ խոսեց իսպաներենով, նվիրագործեց Կոնսեպսիոն Չիլիի տաճարը և հանդիպեց կառավարության նոր ղեկավարների հետ:

ՁԼՄ-ում հազարավոր կանայք արձագանքեցին Նախագահ Նելսոնի հրավերին և ներկայացրին իրենց փորձառությունները 2018թ. հոկտեմբերի գերագույն համաժողովում տրված չորս մարտահրավերների մասին. (1) 10 օր ծոմ պահել սոցիալական լրատվամիջոցներից և բացասական լրատվամիջոցներից, (2) կարդալ Մորմոնի Գիրքը մինչև 2018թ. ավարտը, 3) պարբերաբար այցելել տաճար և (4) լիարժեք մասնակցել Սփոփող Միության աշխատանքներին: «Կցանկանայի շնորհակալություն հայտնել բոլորիդ, իմ հրավերներին արձագանքելու համար»,- ասել է Նախագահ Նելսոնը, հույս հայտնելով, որ «այս հրավերներից յուրաքանչյուրը ձեզ մոտեցրել է Փրկիչին»:

Նախագահ Նելսոնը նախագահեց իր դստեր, Վենդի Նելսոն Մաքսֆիլդի հուղարկավորության ժամանակ,

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին և Յոթանասունից Երեց Էնրիկե Ռ. Ֆալաբելլային ողջունում են Լիմա Պերուի հոգևոր հավաքին

ով մահացավ քաղցկեղի դեմ խիզախ պայքարից հետո: «Վշտի մեր արցունքները կդառնան սպասելիքի արցունքներ, երբ մենք ձեռք բերենք հավերժական հեռանկար»,- ասաց նա: Անդամների հետ նա խոսեց իր դստեր մասին Չիկո Կալիֆոռնիա ցցի հատուկ համաժողովի ժամանակ, որը ներառում էր հրդեհից մոխրացած Paradise քաղաքի երկու միավոր: «Դուք գիտեք եք, որ բոլորը մարտահրավերներ ունեն»,- ասաց նա: «Եթե ցանկանում եք ավելի լավ զգալ, մոռացեք ինքներդ ձեզ և ծառայեք ուրիշին»:

Արիզոնայում (ԱՄՆ) Նախագահ Նելսոնը սպորտային մարզադաշտում հավաքված 65,000 անդամներին հրավիրեց «օգնել հավաքել Իսրայելը վարագույրի երկու կողմերում»: Նախագահ Նելսոնը նաև *Arizona Republic* լրագրում տպագրված հյուրերի էջում գրել է՝ խրախուսելով մարդկանց՝ «նայեք [Տիրոջը] և դարձրեք նրան ձեր կյանքի կենտրոնը»: Նա մասնակցել է պետական հեռուստաընկերությունների հարցազրույցներին, ընդունելություն է ունեցել քաղաքացիական, կրթական և հավատացյալ ղեկավարների հետ և ասուլիս է անցկացրել երիտասարդ ամուրիների հետ:

Նախագահ Նելսոնը 2018 թվականի հունվարի 14-ին կարգվելուց հետո այցելել է 5 մայրցամաք, 16 ազգերի և տարածքներ, 24 քաղաքներ, ճանապարհորդելով 55 հազար մղոն (88.515 կմ): ■

Ոգեշնչված ղեկավարում

Մինչ օրս նախագահ Ռասսել Մ. Նելսոնի նախագահության ընթացքում.

- Քահանայության քվորումները վերակազմավորվել են:
- Սպասավորությունը փոխարինել է տնային ուսուցմանը և այցելությամբ ուսուցմանը:
- Երեխաների և երիտասարդների համար անձնական զարգացման նոր ծրագիր է մշակվում:
- Պատրաստվում են օրհներգերի և *Երեխաների երգարանի* նոր հրատարակությունները:
- Նոր ուղեցույցներ են ստեղծվել եպիսկոպոսների հետ երիտասարդների հարցազրույցների համար:
- Շեշտ է դրվել Եկեղեցին իր լրիվ անունով կոչելու վրա:
- Միսիայի կանչերը հասանելի են առցանց՝ ԱՄՆ-ում և Կանադայում:
- Մորմոնական Թաբերնաքլի երգչախումբը վերանվանվել է Տաճարային Հրապարակի Թաբերնաքլի երգչախումբ:
- Տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող ավետարանի ուսումնասիրությունը սկսվել է, այդ թվում՝ կիրակնօրյա ժողովների ժամերը փոխվել են երկժամյա ժամանակացույցի:
- Հայտարարվել են քսանյոթ նոր տաճարներ:
- Բացի երեքից, Եկեղեցու մյուս բոլոր դիմակահանդես-ներկայացումները դադարեցվել են:
- Երեխաների Միության և երիտասարդների զարգացումը, երիտասարդ տղաների քահանայության կարգումը և երիտասարդների տաճարային երաշխավորագրերը կարելի է ծննդյան տարեդարձի փոխարեն տրամադրել հունվարին:
- Քույր միսիոներներն այժմ կարող ենշալվար կրել:
- Տաճարային աշխատանքի հետ կապված մանրամասները ճշգրտվել են:
- Նոր միսիաներ են ստեղծվել և կատարվել են սահմանների փոփոխություններ, իսկ երկու միսիոներական ուսումնական կենտրոններ փակվել են:
- ԼԳԲՏ ծնողների երեխաներն այժմ կարող են օրհնվել և մկրտվել, իսկ նույն սեռի ամուսնությունների վերաբերյալ քաղաքականությունը հստակեցվել է:

Եվ ինչպես Նախագահ Նելսոնն է խոստացել, քանի որ Տերը ղեկավարում է, ավելի շատ բան է սպասվում: ■

Սեմինարիայի ուսումնական ծրագիրը համապատասխանեցնել *Եկ, հետևիր ինձ* ծրագրի հետ

Սեմինարիայի ուսումնասիրությունը ամբողջ աշխարհում շուտով կհամապատասխանեցվի *Եկ, հետևիր ինձ* ուսումնական ծրագրի և ժամանակացույցի հետ և այդ փոփոխության արդյունքում՝ տանը, կիրակնօրյա դպրոցում և սեմինարիայում միասնական ուսումնասիրության միջոցով կբարելավվի տանը կենտրոնացած, Եկեղեցու կողմից աջակցվող ավետարանի ուսուցման մոտեցումը:

Սկսած 2020 թվականից, սեմինարիայի դասերի ժամանակ կուսումնասիրվեն այն սուրբ գրությունները, որոնք յուրաքանչյուր տարի օգտագործվում են *Եկ, հետևիր ինձ* ուսումնական ծրագրի ժամանակ: Ուսումնական տարվա օրացույցի փոխարեն սեմինարիայի դասընթացները կհետևեն տարեկան օրացույցին:

Թեև սեմինարիայի դասերը կշարունակեն հիմնվել սուրբ գրությունների վրա, ուսումնական ծրագիրն ավելի շատ կհիմնվի վարդապետության վրա և կօգնի ամրապնդել, պաշտպանել և պատրաստել Երիտասարդներին միսիայի, ամուսնությունների և Եկեղեցում ծառայելու համար: ■

*Հոդվածի մասին ավելի մանրամասն կարդացեք **ChurchofJesusChrist.org/go/519122** կայքում, որը ներառում է Եկեղեցու ղեկավարների, այդ թվում՝ Երեց Հոլանդի տեսանյութի հղումը, որը քննարկում է այդ փոփոխությունը:*

Նվիրագործումը ցույց է տալիս «Աննախադեպ ապագան»

«Եկեղեցուն սպասվում է աննախադեպ, անզուգական ապագա»,- ասել է Նախագահ Ռասել Մ. Նելսոնը 2019 թվականի մարտին Հռոմ Իտալիա տաճարի նվիրագործման ժամանակ: «Այժմ մենք ապագայի հիմքն ենք դնում»:

Նվիրագործման ժամանակ Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներն առաջին անգամ էին հավաքվել Միացյալ Նահանգներից դուրս մեկ վայրում: «Որպես Հիսուս Քրիստոսի ժամանակակից Առաքյալներ»,- ասաց Նախագահ Նելսոնը,- մենք այսօր հղում ենք նույն ուղերձը, որը շատ տարիներ առաջ հղել են Առաքյալները՝ Աստված ապրում է և Հիսուսը Քրիստոսն է»:

Տաճարը նվիրագործելուց բացի, Նախագահ Նելսոնը տաճարի շրջանում խոսեց երիտասարդների հետ և հանդիպեց Հռոմի Ֆրանցիսկոս Պապի հետ. առաջին անգամ Եկեղեցու Նախագահը պաշտոնական ընդունելության արժանացավ Հռոմի կաթոլիկ եկեղեցու առաջնորդի կողմից: ■

*Հռոմ Իտալիա տաճարի մասին մեկնաբանությունները կարդացեք և Հռոմի նկարները դիտեք **ChurchofJesusChrist.org/prophets-and-apostles** կայքում:*

Նոր քաղաքականություններ, ընթացակարգեր, նյութեր

Հայտարարություն տաճարների մասին Առաջին Նախագահությունը հայտարարություն է տարածել 2019 թվականի հունվարի 2-ին՝ մասնավորապես նշելով. «Այս դարերի ընթացքում տաճարի աշխատանքի հետ կապված մանրամասները պարբերաբար ճշգրտվել են, այդ թվում՝ լեզուն, շինարարության, հաղորդակցության և գրառումների հաշվառման եղանակները: Մարգարեներն ուսուցանել են, որ Տիրոջ կողմից Նրա ծառաներին ուղղված նման ճշգրտումները չեն ավարտվելու»:

Երեխաների և երիտասարդների առաջադիմություն Երեխաներն այժմ Երեխաների Միությունն ավարտում են և երիտասարդները մի տարիքային խմբի դասարանից մյուսը փոխադրվում են հունվար ամսին և չեն սպասում իրենց ծննդյան օրվան: Դա նաև նշանակում է, որ երիտասարդներն առաջին անգամ կարող են ստանալ սահմանափակ օգտագործման տաճարային երաշխավորագիրն այն տարվա հունվար ամսին, երբ լրանում է նրանց 12 տարեկանը, իսկ երիտասարդ տղաները կարող են կարգվել Ահարոնյան Քահանայության այն ամսվա հունվար ամսին, երբ լրանում է նրանց 12 տարեկանը:

Ծառայելու ավելի շատ հնարավորություններ: ՎՕՍ Բարեգործական ծառայությունը հայտարարել է JustServe.org- ի հետ իր համագործակցության մասին, որպեսզի մեկնարկեն #YouCanDoSomething նախաձեռնությունը՝ հրավիրելով մարդկանց ծառայել տեղում և նվիրաբերություն կատարել բարի գործերի համար ողջ աշխարհով մեկ, որպեսզի օգնեն փոխել աշխարհը: Սկսելու համար այցելեք LDSCharities.org կայքի «Ինչպես օգնել» էջը:

Սպասավորման նոր նյութեր This Is Ministering (Սա սպասավորություն է)(ministering.ChurchofJesusChrist.org) կայքը թարմացվել է լրացուցիչ հոդվածներով և տեսանյութերով: Կայքի նյութերը կարող են օգնել ընթերցողին՝ կարեկցանքով հասնել մյուսներին, ստեղծել ավելի իմաստալից հարաբերություններ, բարելավել նրանց լսողական հմտությունները և ավելին: Նոր բովանդակությունը պարունակում է Սպասավորման Սկզբունքների հոդվածներ, որոնք լույս են տեսել *Ensign* և *Լիահոնա* ամսագրերում, սպասավորության մասին հղումներ գերագույն համաժողովի ելույթներից, տեսանյութեր, մեջբերումներ և սուրբ գրությունների հատվածներ, որոնցով կարելի կիսվել ուրիշների հետ

Հույս և ապաքինում բռնության զոհերի համար Եկեղեցու նոր՝ abuse.ChurchofJesusChrist.org կայքն առաջարկում է նյութեր և կիրառական գործիքներ բռնության զոհերի և նրանց համար, ովքեր ցանկանում են օգնել կանխարգելել բռնությունները: Առաջին Նախագահությունը նաև նամակ է գրել 2019 թվականի մարտի 26-ին, հորդորելով Եկեղեցու ղեկավարներին սիրով օգնության հասնել բռնությունից տուժողներին: Նամակին կից տրված էին փաստաթղթի թարմացված ցուցումներ, թե ինչպես են եպիսկոպոսները և ցցի նախագահությունները խորհուրդ տալիս սեռական բռնության զոհերին, և ինչպես են հարցազրույցներ անցկացնում Եկեղեցու անդամների հետ: Եկեղեցին նաև թողարկել է «Protect the Child (Պաշտպանեք երեխային)» տեսահոլովակը և թարմացրել է բռնության մասին Ավետարանի թեմաների հոդվածը:

Նոր հնարավորություններ և հավելվածներ Gospel Library հավելվածի վերջին թարմացման Study Plans գործառույթը հնարավորություն է տալիս ստեղծել հավելվածի ցանկացած բովանդակության ուսումնասիրման ժամանակացույց: Ordinances Ready-ն FamilySearch նոր գործիք է, որը հեշտացնում է տաճարի համար անունների որոնումը, թույլ տալով ավելի շատ ժամանակ հատկացնել ձեր ընտանիքին ծառայելու և տաճարի օրհնությունները վայելելու համար: Եվ FamilySearch կայքն ունի շուրջ երեք տասնյակ նոր տնային վարժություններ, ինչպես օրինակ՝ «Walk Where They Walked (Քայլել, որտեղ նրանք քայլել են)», որը կօգնի երիտասարդ անդամներին ընդգրկվել ընտանեկան պատմության մեջ: Վարժությունները հասանելի են 10 լեզուներով:

Մեծ ներկայացումները չեն խրախուսվում: Թեև մշակույթային և պատմական տեղական տոնակատարությունները կարող են պատշաճ լինել, Եկեղեցին այժմ չի խրախուսում ավելի մեծ ներկայացումների անցկացումը, ինչպիսիք են՝ դիմակահանդես-ներկայացումները: Երեք դիմակահանդես-ներկայացումներ կշարունակվեն. Եկեղեցու գլխավոր գրասենյակի աջակցությամբ՝ Նավուի դիմակահանդես-ներկայացումը (Իլինոյս, ԱՄՆ), տարածաշրջանի ղեկավարության ներքո՝ Մեսայի դիմակահանդես-ներկայացումը (ԱՄՆ) և տարածաշրջանի ղեկավարության ներքո՝ Բրիտանիայի դիմակահանդես-ներկայացումը, որը տեղի կունենա յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ: Եկեղեցին նաև դադարեցրել է երիտասարդական մշակութային տոնակատարությունները տաճարային նվիրագործումներից առաջ՝ հոգուտ Եկեղեցու այցելող ղեկավարների մասնակցությամբ երիտասարդների հոգևոր հավաքների: ■

Երեխաները և երիտասարդները հունվարին կփոխադրվեն մի դասարանից մյուսը, կամ քվորումի մի տարիքային խմբի դասարանից մյուսը, առանց սպասելու իրենց ծննդյան օրվան:

Կվերանորոգվեն ռահվիրաների դարաշրջանի տաճարներ, որոնց թվում է Սոլթ Լեյք Տաճարը, և ևս 8 նոր տաճարներ կկառուցվեն:

Հայտարարվեց ութ նոր տաճարների պատմական վերանորոգումների մասին

Նախագահ Ռասել Մ. Նելսոնն ամփոփել է 2019 թվականի ապրիլ ամսվա գերագույն համաժողովը՝ հայտարարելով ութ նոր տաճարների և չորս ռահվիրաների դարաշրջանի տաճարների վերանորոգման մասին, այդ թվում՝ ավելի շատ մանրամասներ է հաղորդել Սոլթ Լեյք տաճարի վերանորոգման մասին:

Նոր տաճարներ կկառուցվեն Պագո Պագո (Ամերիկյան Սամոա), Օկինավա Սիթի (Օկինավա), Նեյաֆու (Տոնգա), Տուելի հովիտ (Յուտա, ԱՄՆ), Մոզես Լեյք (Վաշինգտոն, ԱՄՆ), Սան Պեդրո Սուլա (Հոնդուրաս), Անտաֆագաստա (Չիլի) և Բուդապեշտ (Հունգարիա):

Սոլթ Լեյք տաճարի վերանորոգման հիմնական ծրագրերը կներառեն Տաճարային հրապարակի և Եկեղեցու գրասենյակի շենքի հարևանությամբ գտնվող պլազայի վերանորոգումը Սոլթ Լեյք Սիթիում (Յուտա, ԱՄՆ): Սենթ Ջորջի (Մանթի) և Լոգանի (Յուտա, ԱՄՆ) տաճարները նույնպես կվերանորոգվեն մոտ ապագայում: «Այդ աշխատանքների պատճառով յուրաքանչյուր տաճար կփակվի որոշ ժամանակով»,- ասել է Նախագահ Նելսոնը: «Եկեղեցու անդամները կարող են շարունակել վայելել տաճարային երկրպագությունը և ծառայությունը մոտակա մյուս տաճարներում: Երբ բոլոր նախագծերն ավարտվեն, յուրաքանչյուր պատմական տաճար կվերանվիրագործվի»:

2018 թվական հունվար ամսին Եկեղեցու Նախագահ դառնալուց հետո Նախագահ Նելսոնը հայտարարել է 27 նոր տաճարներ: Վերջին՝ 2018 թվականի հոկտեմբեր ամսվա գերագույն համաժողովից հետո տաճարներ են նվիրագործվել Հռոմում (Իտալիա), Բարանգվիլայում (Կոլումբիա) և Կոնսեպսիոնում (Չիլի): ■

Տաճարների ամբողջական ցուցակի համար այցելեք ***temples.ChurchofJesusChrist.org*** *կայքը:*

Քաղաքականություն ԼԳԲՏ ծնողների և համասեռամոլ ամուսնության անդամների երեխաների համար

Գերագույն Համաժողովի ղեկավարների նիստի ժամանակ Առաջին նախագահության առաջին խորհրդական՝ Նախագահ Դալլին Հ. Օուքսը հայտարարել է, որ այն ծնողները, որոնք իրենց համարում են լեսբուհի, գեյ, բիսեքսուալ կամ տրանսգենդեր, այժմ կարող են խնդրել, որ իրենց երեխաները որպես նորածին օրհնվեն արժանի Մելքիսեդեկյան Քահանայություն կրողի կողմից, և նրանց երեխաները 8 տարեկանում կարող են նաև մկրտվել առանց Առաջին Նախագահության հաստատման:

Բացի այդ, չնայած միասեռ ամուսնությունը դեռևս համարվում է «լուրջ օրինազանցություն», Եկեղեցին դրան այլևս չի վերաբերվի որպես «ուրացություն»՝ Եկեղեցու կարգապահական նպատակների համար: «Հետերոսեքսուալ կամ հոմոսեքսուալ հարաբերությունների մեջ անբարո արարքին կվերաբերվենք նույն կերպ», - ասել է նախագահ Օուքսը:

Այս քաղաքականության փոփոխությունները «չեն ներկայացնում մաքրաբարոյությանը կամ բարոյականությանը վերաբերող ամուսնության կամ Աստծո պատվիրանների Եկեղեցու վարդապետության փոփոխություն»,- գրել է Առաջին Նախագահությունը պաշտոնական հայտարարության մեջ: «Փրկության ծրագրի և մաքրաբարոյության կարևորության վարդապետությունը չի փոխվի»:

Նախագահ Օուքսը նշել է, որ քաղաքականությունը պետք է օգնի տուժած ընտանիքներին, և «բացի այդ, ավելի շատ հասկացողություն, կարեկցանք և սեր ցուցաբերելու մեր անդամների ջանքերը պետք է մեծացնեն բոլոր բարյացակամ մարդկանց հարգանքը և ըմբռնումը»: ■

Կարևորել ճիշտ անունը

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին պատշաճ անունով վկայակոչելու համար իրականացվում են հաղորդակցման ուղիների փոփոխություններ:

Փոփոխություններ կայքերում

- ChurchofJesusChrist.org կայքը փոխարինում է LDS.org կայքին և հանդիսանում է Եկեղեցու պաշտոնական կայքի անունը:
- Մի քանի ամիս անց Newsroom .ChurchofJesusChrist.org կայքը կփոխարինի MormonNewsroom. org-ին:
- Ի վերջո, ComeUntoChrist.org կայքը կփոխարինի Mormon.org-ին, որը վերակառուցվում է՝ իր հիմնական լսարանին (Եկեղեցուց դուրս) ավելի անհատական փորձառություն տրամադրելու նպատակով:

Փոփոխություններ սոցիալական մեդիայի կապուղիներում

- Եկեղեցու հիմնական սոցիալական մեդիայի բոլոր հաշիվները փոխվել են՝ Փրկիչի Եկեղեցու անունը կարևորելու համար:
- Անդամները կարող են միանալ նոր Ֆեյսբուքյան խմբին, որը կոչվում է «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի. ոգեշնչում և նորություններ», որտեղ կտեղեկացվեն եկեղեցու նորությունների և թարմացումների մասին և Եկեղեցում կստեղծեն համայնքներ և կապեր:

Փոփոխություններ բջջային հավելվածներում

- Sacred Music-ը փոխարինում է LDS Music-ին:
- Gospel Library հավելվածը կմնա անփոփոխ:

Կարելի է ակնկալել լրացուցիչ փոփոխություններ, քանի որ բոլորս միասին աշխատում ենք, որպեսզի կարևորենք Փրկիչի Եկեղեցու՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անունը: ■

Մարդասիրական ջանքերն օգնում են հազարավորների

Եկեղեցու մարդասիրական ձեռքը՝ ՎՕՍ Բարեգործական ծրագիրն անցյալ տարի 141 երկրում մասնակցել է 2,885 ծրագրերի՝ աշխատելով 1900 մարդասիրական գործընկեր կազմակերպությունների հետ: Համաձայն 2019 թվականի փետրվարի 19-ին ՎՕՍ Բարեգործականն ծրագրի հրատարակած 2018 տարեկան զեկույցի, 1985 թվականից սկսած ՎՕՍ Բարեգործականն ծրագիրը տրամադրել է ավելի քան 2,2 միլիարդ ԱՄՆ դոլարի աջակցություն, այդ թվում՝ դրամական միջոցներ, ապրանքներ և նվիրատվություններ 197 երկրներում և տարածքներում:

Եկեղեցու մարդասիրական ջանքերի շարժառիթը կարեկցանքն ու սերն է Աստծո բոլոր զավակների հանդեպ և ընդգծում է երեք առաջնորդող սկզբունքներ՝ հոգ տանել ամենամեծ կարիք ունեցողների մասին, ոգեշնչել ինքնապահովում և խթանել կամավորություն ու ծառայություն: Այս սկզբունքները, որոնք հիմնված են Հիսուս Քրիստոսի հավատքի վրա, զորացնում են անհատներին և ընտանիքներին, անկախ ռասայից, կրոնից կամ ազգությունից:

Եկեղեցին օգնում է արտակարգ իրավիճակների արձագանքման (ներառյալ կամավորական ջանքերը), տեսողական խանգարումների, մոր և նորածնի խնամքի ծառայությունների, մաքուր ջրի և ախտահանման, պատվաստումների, անվասայլակների և քայլողական պիտույքների մատչելիության հարցով, օգնում է մարդկանց տեղական լուծումների և միջոցների օգնությամբ սնունդ հայթայթել և փախստականներին տրամադրել անմիջական և երկարաժամկետ օգնություն: Եկեղեցին նաև մասնակցում է տեղական համայնքային ծրագրերին, ԱՄՆ-ի և Կանադայի 43 նահանգներում և մարզերում՝ օգնելով անօթևան մարդկանց, փախստականների վերաբնակեցմանը և այլ կարիքներին:

«Մենք մեծ երախտագիտություն և բարեկամական կապ ենք զգում ուրաքանչյուր մարդու հանդեպ, ով նպաստել է մարդասիրական աշխատանքի հաջողությանը 2018 թվականին», - ասում է ՎՕՍ Բարեգործական ծրագրի նախագահ և Սփոփող Միության Նախագահության Առաջին Խորհրդական Քույր Շերոն Յուբենկը: Նա ասել է, որ զեկույցը ներկայացնում է տասնյակ հազարավոր մարդկանց բարությունը: ■

*Ամբողջական զեկույցը կարդացեք **ldscharities.org** կայքում:*

Ինդոնեզիայում բուժքույրը կանգնած է նոր ծննդաբերած մոր կողքին: Այս ծննդաբերական կենտրոնում բուժքույրերն ավարտեցին «Օգնել մանուկներին շնչել» ծրագիրը, որը կազմակերպել էր ՎՕՍ բարեգործական ծրագիրը:

Գանայում երիտասարդ տղան ժպտում է, երբ ՎՕՍ Բարեգործական ծրագրի տեխնիկի օգնությամբ տեղավորվում է անվասայլակի վրա:

Միսիոներական նորություններ

Շփում ընտանիքի հետ Միսիոներներին այժմ թույլատրվում է յուրաքանչյուր շաբաթ իրենց պատրաստության օրը հաղորդակցվել ընտանիքների հետ՝ տեքստային հաղորդագրությունների, առցանց հաղորդագրությունների, հեռախոսազանգերի և տեսազանգերի միջոցով՝ ի լրումն նամակների և էլեկտրոնային նամակների:

Պլանավորման գործիք ապագա միսիոներների համար Եկեղեցու միսիոներական բաժանմունքի կողմից հասանելի միսիայի պլանավորման նոր առցանց գործիքը կարող է օգնել ապագա միսիոներներին ավելի զգույշ և խորամիտ լինել, երբ որոշում են, թե երբ լավագույնս պատրաստված կլինեն՝ Տիրոջը որպես միսիոներ ծառայելու համար:

Ծառայության միսիաներ 2019 թվականի հունվարից Եկեղեցում ծառայող միսիոներները կկոչվեն «ծառայող միսիոներներ»: Բոլոր չափահաս երիտասարդները, ովքեր կդիմեն միսիոներական ծառայության, դա կանեն նույն կերպ, առցանց պորտալի միջոցով, և միսիայի բոլոր կանչերը՝ լինենք դրանք քարոզչական միսիաներ, թե ծառայության միսիաներ, կգան մարգարեից: Արժանավոր չափահաս երիտասարդները, ովքեր տարբեր պատճառներով ազատված են քարոզչական միսիայից, կարող են կանչվել ծառայության միսիաներ:

Քույր միսիոներները կարող են շալվար կրել: Քույր միսիոներներն այժմ օրվա սովորական միջոցառումներին շալվար կրելու ընտրություն ունեն, թեև քույրերը պետք է շարունակեն կրել զգեստ կամ կիսաշրջազգեստ տաճար հաճախելիս, կիրակնօրյա երկրպագության ծառայությունների ժամանակ, ղեկավարների և տարածաշրջանի համաժողովներին, մկրտության արարողություններին և միսիոներների ուսուցման կենտրոնի հոգևոր ժամերի ժամանակ: Ազատ շալվարները կարող են պաշտպանել քույրերին մոծակների կողմից տարածվող վիրուսային հիվանդություններից, ցուրտ կլիմայի դեպքում՝ պաշտպանել ցրտից և նրանց համար դյուրին դարձնել հեծանիվ վարելը:

Ստեղծված միսիաներ, վերափոխված սահմաններ Ստեղծվել են չորս նոր միսիաներ, իսկ տասներկու միսիաներ կընդգրկվեն առկա միսիաների մեջ: Նման փոփոխությունները պարբերաբար տեղի են ունենում՝ ծառայող միսիոներների թիվը հարմարեցնելու համար: Նոր միսիաներն են՝ Կոնգոյի դեմոկրատական հանրապետություն Արևելյան Կինշասա, Գվատեմալա Անտիգուա, Պերու Լիմատամբո և Ֆիլիպիններ Անտիպոլո: Տվյալ միսիաներում ծառայող միսիոներների ծնողները, լինեն դրանք ստեղծված կամ լուծարված միսիաներ, կստանան լրացուցիչ տեղեկություններ իրենց միսիաների նախագահներից:

Միսիոներական ուսուցման կենտրոնի թվերը ճշգրտվել են: Աշխարհում միսիոներական ուսումնական կենտրոնների ավելի լավ օգտագործման համար փակվում են Արգենտինայի, Իսպանիայի, Չիլիի և Դոմինիկյան Հանրապետության կենտրոնները: Փակվելուց հետո Եկեղեցում կգործեն 11 միսիոներական ուսուցման կենտրոններ, որոնք տեղակայված կլինեն՝ Բրազիլիայում, Կոլումբիայում, Անգլիայում, Գանայում, Գվատեմալայում, Մեքսիկայում, Նոր Զելանդիայում, Պերուում, Ֆիլիպիններում, Պրովոյում, Յուտայում (ԱՄՆ) և Հարավային Աֆրիկայում:

Անվտանգության տեսանյութեր Նոր 12 մասից բաղկացած *The Safety Zone (Անվտանգության գոտին)* վերնագրով տեսանյութերի շարքը նախատեսված է ներկայումս ծառայող 65,000 լիաժամկետ միսիոներների և ապագա միսիոներների անվտանգությունը բարձրացնելու համար: Առաջին տեսանյութը նախատեսված է ապագա միսիոներների և նրանց ծնողների հետ դիտման համար՝ միսիայի կոչը ստանալուց և նախքան միսիոներական ուսումնական կենտրոն մուտք գործելուց առաջ: ՄՈՒԿ-ում միսիոները կրկին կդիտի առաջին տեսանյութը, ինչպես նաև կդիտի մյուս 11 տեսանյութերը: Միսիոներներին անվտանգության պարբերական հիշեցումներ կտրվեն նաև իրենց միսիայի ընթացքում: ■

Քուվեյթը պաշտոնապես ճանաչում է Եկեղեցին

Եկեղեցին իր տեղական ղեկավարների և կազմակերպությունների համար պաշտոնական ճանաչում է ստացել Քուվեյթի պետության կողմից: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու շուրջ 300 անդամներ ապրում և աշխատում են Քուվեյթում. նրանք աշխարհի տարբեր երկրներից են: Կառավարության կողմից պաշտոնական ճանաչումը թույլ է տալիս տեղական ղեկավարներին ավելի լավ ծառայել Քուվեյթի անդամներին:

Քուվեյթի ծխի (Մանամա Բահրեյն Ցից) եպիսկոպոս Թերրի Հարադինը շնորհակալություն հայտնեց Քուվեյթի կառավարությանը՝ Քուվեյթում երկրպագության ազատության համար, մասնավորապես, արտերկրյա աշխատուժի համար և երկրում կրոնական հանդուրժողականության խթանման համար: ■

Եկ, հետևիր ինձ

Սովորել գերագույն համաժողովի ելույթներից

Երբ մենք ձգտում ենք մասնակցել Տիրոջ գործին, ապրող մարգարեների և Եկեղեցու մյուս բարձրագույն ղեկավարների ուսմունքները ոգեշնչող առաջնորդություն են տրամադրում մեզ: Յուրաքանչյուր ամսվա երկրորդ և չորրորդ կիրակի օրերին, քվորումը և Սփոփող Միության նախագահությունները ընտրում են համաժողովի որևէ ուղերձ ուսումնասիրման համար՝ ելնելով անդամների կարիքներից և հիմնվելով Հոգու առաջնորդության վրա: Երբեմն եպիսկոպոսը կամ ցցի նախագահը նույնպես կարող են խորհուրդ տալ ուսումնասիրել որոշակի ուղերձ: Ընդհանուր առմամբ, ղեկավարները պետք է շեշտը դնեն Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամների ուղերձների վրա: Սակայն վերջին համաժողովի ցանկացած ուղերձ կարող է քննարկվել:

Ղեկավարները և ուսուցիչները պետք է ուղիներ փնտրեն՝ խրախուսելու անդամներին ժողովը սկսելուց առաջ կարդալ ընտրված ուղերձները:

Երեցների քվորումի և Սփոփող Միության ժողովների մասին լրացուցիչ տեղեկության համար տես *Ձեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում,* 7.8.1, 9.4.1, ChurchofJesusChrist.org:

Ծրագրել ուսուցումը

Հետևյալ հարցերը կարող են օգնել ուսուցիչներին, երբ նրանք ծրագրեն ուսուցանել գերագույն համաժողովի ուղերձը:

1. Ելույթ ունեցողն ի՞նչ է կամենում, որ մենք հասկանանք: Ավետարանի ի՞նչ սկզբունքներ է նա ցանկանում ուսուցանել: Ինչպե՞ս է այն վերաբերում մեր քվորումին կամ Սփոփող Միությանը:

2. Իր ելույթը լրացնելու համար սուրբ գրության ի՞նչ հատված օգտագործեց ելույթ ունեցողը: Կա՞ն արդյոք ուրիշ հատվածներ, որոնք կարդալով ավելի լավ կհասկանանք սկզբունքը: (Հատվածների որոշ հղումներ կարող եք գտնել ծանոթագրություններում կամ Թեմաների ուղեցույցում:)

3. Ի՞նչ հարցեր կարող եմ տալ, որոնք կօգնեն անդամներին խորհել սկզբունքի մասին: Ի՞նչ հարցեր կօգնեն նրանց հասկանալ ուղերձի կարևորությունն իրենց կյանքում, իրենց ընտանիքներում և Տիրոջ աշխատանքում:

4. Ուրիշ ի՞նչ կարող եմ անել, որպեսզի հրավիրեմ Հոգին մեր ժողովների ժամանակ: Ի՞նչ կարող եմ օգտագործել քննարկումն ընդլայնելու համար, ներառյալ՝ պատմությունները, համանմանությունները, երաժշտությունը և նկարները: Ի՞նչ էր օգտագործում ելույթ ունեցողը:

5. Արդյո՞ք ելույթ ունեցողը որևէ հրավերի կոչ հղեց: Ինչպե՞ս կարող եմ օգնել անդամներին՝ ըստ այդ հրավերի գործելու ցանկություն ունենալ:

Միջոցառման գաղափարներ

Կան շատ եղանակներ, որոնցով կարող եք օգնել անդամներին սովորել գերագույն համաժողովի ելույթներից: Սհա մի քանի օրինակներ. դուք կարող եք ունենալ այլ գաղափարներ, որոնք ավելի լավ կգործեն ձեր քվորումում կամ Սփոփող Միությունում:

- *Քննարկեք խմբերով*
  Անդամներին փոքր խմբերի բաժանեք և յուրաքանչյուր խմբին հանձնարարեք համաժողովի տարբեր ուղերձներ՝ կարդալու և քննարկելու համար: Ապա, խնդրեք յուրաքանչյուր խմբին կիսվել իրենց սովորած ճշմարտությունով: Կամ կարող եք խմբեր ձևավորել այն մարդկանցով, ովքեր տարբեր բաժիններ են ուսումնասիրել, ապա թույլ տվեք նրանց միմյանց հետ կիսվել իրենց գրածով:

- *Պատասխանեք հարցերին։*
  Հրավիրեք անդամներին պատասխանել հարցերին՝ համաժողովի ուղերձի վերաբերյալ հետևյալ հարցի նման: Այս ուղերձում ավետարանի ի՞նչ ճշմարտություններ ենք գտնում: Ինչպե՞ս կարող ենք կիրառել այդ ճշմարտությունները: Ի՞նչ հրավերներ և խոստացված օրհնություններ տրվեցին: Ի՞նչ է այս ուղերձն ուսուցանում մեզ այն , աշխատանքի մասին, որն Աստված է կամենում, որ անենք:

- *Կիսվեք մեջբերումներով*
  Հրավիրեք անդամներին կիսվել համաժողովի այն ուղերձների մեջբերումներով, որոնք ոգեշնչում են նրանց կատարել փրկության աշխատանքի իրենց պարտականությունները: Հորդորեք նրանց մտածել, թե ինչպես կարող են կիսվել այդ մեջբերումներով, որպեսզի օրհնեն որևէ մեկին, այդ թվում՝ իրենց սիրելիներին և այն մարդկանց, ում նրանք սպասավորում են:

- *Կիսվեք առարկայական դասերով*
  Հրավիրեք մի քանի անդամների տնից նախօրոք բերել որևէ առարկա, որի օգնությամբ կարող են ուսուցանել համաժողովի ուղերձի մասին: Ժողովի ընթացքում խնդրեք անդամներին բացատրել, թե ինչպես են այդ առարկաները վերաբերում ուղերձին:

- *Դաս պատրաստեք տանը ուսուցանելու համար*
  Խնդրեք անդամներին աշխատել զույգերով և համաժողովի ուղերձի թեմայով ընտանեկան երեկոյի համար մի դաս ծրագրել: Ինչպե՞ս կարող ենք ուղերձը հարմարեցնել մեր ընտանիքներին: Ինչպե՞ս կարող ենք այդ ուղերձով կիսվել այն մարդկանց հետ, ում սպասավորում ենք:

- *Կիսվեք փորձառություններով*
  Միասին կարդացեք մի քանի հայտարարություններ գերագույն համաժողովից: Խնդրեք անդամներին կիսվել օրինակներով սուրբ գրություններից և իրենց կյանքից, որոնք լուսաբանում կամ ամրապնդում են այն վարդապետությունը, որն ուսուցանվել է այս հայտարարություններում:

- *Սովորեք սուրբ գրության որևէ հատված։*
  Հրավիրեք անդամներին կարդալ սուրբ գրության որևէ հատված, որի մասին հղում է արված համաժողովի ուղերձում: Կոչ արեք նրանց քննարկել, թե այդ ուղերձի ուսմունքներն ինչպես են օգնում նրանց ավելի լավ հասկանալ այդ հատվածը:

- *Գտեք պատասխանը*
  Ժամանակի ընթացքում ստեղծեք մի քանի հարցեր, որոնց կարելի է պատասխանել՝ օգտագործելով համաժողովի ուղերձը: Կենտրոնացեք այն հարցերի վրա, որոնք խորությամբ մտածելու և ավետարանի սկզբունքները կիրառելու հնարավորություն են տալիս (տես Ուսուցանել Փրկիչի ձևով, 31–32): Ապա անդամներին թույլ տվեք ընտրել որևէ հարց և գտնել այդ հարցի պատասխանը ուղերձում: Հրավիրեք նրանց քննարկել իրենց պատասխանները փոքր խմբերում:

- *Գտեք արտահայտությունը*
  Հրավիրեք անդամներին քննել համաժողովի ուղերձը և ուշադրություն դարձնել այն արտահայտություններին, որոնք կարևոր են նրանց համար: Խնդրեք նրանց կիսվել այդ արտահայտություններով և կիսվել, թե ինչ են սովորել դրանցից: Ինչպե՞ս են այդ ուսմունքներն օգնում մեզ իրագործել Տիրոջ աշխատանքը:

- *Ստեղծեք որևէ գործ։*
  Հրավիրեք անդամներին պատրաստել պաստառ կամ էջանիշ, որի վրա գրված է որևէ համաժողովի ուղերձից մի կարճ ոգեշնչող հայտարարություն: Նրանց հնարավորություն տվեք կիսվել իրենց պատրաստած գործերով: ■

Ապահով գրկում (Իմ միակ որդին նրանց մեջ էր),
Ջուլի Ռոջերս

«Այս աշխարհում տառապանքի պակաս չկա, լինի դա Եկեղեցու ներսում, թե դրսում, այնպես որ նայեք ցանկացած ուղղությամբ, և դուք կգտնեք այն մարդուն, որի ցավը, կարծես, չափազանց ծանր է, և ում կսկիծը, կարծես, թե ավարտ չունի։ «Միշտ հիշելու Նրան»10 եղանակներից մեկը կլինի այն, որ միանանք Մեծ Բժշկին Իր անվերջանալի գործը կատարելիս՝ բարձրացնելու նրանց բեռը, ովքեր բեռնավորված են, և թեթևացնելու նրանց ցավը, ովքեր վշտահար են»։

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Տասներկու Առաքյալների Քվորում, «Ահա՛ Աստծո Գառը», 46

© JULIE ROGERS, ՉԲԱԶՄԱՑՆԵԼ

«Խոսելով մեր հին ու նոր տաճարների մասին, թող ամեն մեկս մեր արարքով կարևորենք, որ մենք Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն ենք», - ասաց Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը Եկեղեցու 189-րդ ամենամյա գերագույն համաժողովի փակման նիստին: «Թող որ մեր կյանքը վերանորոգենք Նրա հանդեպ մեր հավատքի և վստահության միջոցով: Թող որ մենք ամեն օր մեր ապաշխարությամբ ստանանք Նրա Քավության զորությունը: Եվ թող մենք նվիրաբերենք և վերանվիրաբերենք մեր կյանքը՝ ծառայելով Աստծուն և Նրա զավակներին վարագույրի երկու կողմում»:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021860 05201 7